



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ԶԱՔՄԱՐԻՎ ՀԱԳԵՑՈՒ ՕՐԵՐԸ





~~334 m.~~ 868 m

6 NOV

# ԶԱՔԱՐԻԱ ԶԱԳԵՑՈՒ ՕՐԵՐԸ

891.99

**Պատմ. կէպ. (849—889)**

$$m=27$$

4 w

1001  
13929



## ՀԵԽՈՆ ԽԱՆՍԱՆԱՄԵԱՆ

Հրատ Ստ. Պողոսեակը,

ԽՈՎ ԿՈՒՅ

06.05.2013

Հայով

340.



Սիրասնունդ և քաղցրանոց

Ա թ Տ Ա հ Ա գ Պ,

Անգին զաւակս,

Այսօր, երկար անխոնչ աշխատութիւնից յետոյ,  
հաղիւ կարողացայ վախճան տալ այս պատմական  
առաջի վէպիս՝ «Զաքարիա Զագեցու օրերը», որը  
տառապեալ հայրդ քեզ է նւիրում. այս, միայն  
քեզ, որը միայն կարող է որոշակի զգալ հոգեւանչ  
հօր մռայլ հոգու անհուն վերքերը: 0՝, այդ գաժան  
վերքերը, զիտե՞ս, ի՞մ սիրատունկ զաւակ, որ-  
քան խոր խոցեր են բացել տարաբաղդ հօրդ  
կրծքում. զիտե՞ս, որքան արիւն-արտասուը են  
քամւել նրա մելամաղմուա աչերից, երբ նա տոչորւած  
իր տարաբաղդ հայրենիքի դառնազին անցեալով՝

«Պушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.

գրի էր առնում այս վէպը, ուր անվերջ վոյում են սուզ ու շիւանի, լաց ու հառաջանքի և խռովայուղ կեանքի աղեսարշ հեծեծանքներ...

Քանի՛ երկար օր ու դիշերներ եմ անքուն անցկացրել, մինչև կարողացել եմ թող ոյժերիս այս արդիւնքը քեզ համար պատրաստել: Եթէ ոչ դու՛ ով կարող է անքան հասկանալ ինձ, ըմբռունել ինձ: Զէ՞ որ այն սիրար, որը երկար-երկար նւիրական բարախմունքներով էր երերւած, երբ զրի էր առնում այս վէպը, այժմ քո մատաղ կրքումն է կատարւում կեանքի խորհրդաւոր բարախմունքները: Մի՛թէ ի՞նչ վսեմ զաղափարներով, ի՞նչ երազելի բազմանքով և վեհ զգացմունքներով տոգորւած՝ մօտիկ ապագայում, երբ դու քաղես գէպի կեանքի խորհրդաւոր սեամբ, չը պիտի նրանք մըրկայուզ ալիքներով ծփան քո մատաղ կրքում և անվերջ ալէկոծութիւն ու տագնապալի խռովութիւն առաջ բերեն անլտեղ, բարձրացնելով նրա խորշերում հուժկու փոթորիկների ահազնազղորդ մի շփոթ: Այս, հաւատացած եմ, որ այդ բոլորը կը լինեն, որովհետեւ այն արիւնը, որը այժմ հոսում է տառապեալ մարմնիս բիւրաւոր անկիւններում, վազում է և քո փափկասուն երակներում:

Եւ այսպէս, զաւակս, իմ հոգու հատոր, դու պարտական ես, և դու պիտի զգաս հօրդ: Գրելով «Զաքարիա Զագեցու օրերը», ես ցանկութիւն չեմ ունեցել մի առ մի նկարագրել այդ ժամանակների— 849—889 թ.—բոլոր աչքի ընկնող և խոշոր պատմական անցքերը, այլ աշխատել եմ կարելին չափ

թռուցիկ ակնարկով ըմբռնել այն անցքերի մի մասը և տալ նրանց թռղած տպաւորութիւնը: Ոյո՛, միայն տպաւորութիւն... Անցնում էնք ահա ամբարտաւան ձեռքերով բալքայւած, աւերւած և մոխրի կոյտեր զառած մի դերեզմանոցի աւերակների մօտով՝ մի՛թէ մեր բոլորիս սրտերը այդ ժամանակ մի և նոյն և միաչափ զգացմունքներով են բռնկւում և երերւում: Իսկ որբան առտել հայրենի երկրի աւերակների մօտով, որոնք անլեզու արծաններ են, բայց անսասան վկաներ խռոժագուժ ժամանակների, որոնք լեզու են առնում այդ ըոտէներին իւրաքանչիւր անհատի կրքում: Հէնց այդ լեզւի ծայներն եմ ես արծանազրել այստեղ, սիրելի Արտաւազդ, լսի՛ր դրանց:

Հագարացին կողոպտել, սպանել, աւերել, թալանել, տանջել, այրել, առևանգել, բռնաբարել, իսլամացրել, բանտել, կապել, կաշկանդել է. սակայն բացի պատմական մի քանի չոր ու ջամաք տողերից և կործանւած աւերակներից մեզ հասել են նրանց պատճառած այդ անթիւ չարեաց մըմունչները, որոնք, չեմ սխալում, եթէ ասեմ, որ այդ ժամանակներում արծագանք առած՝ թնդացրել են հայրենի երկրի սար ու ծորը, գար ու զաշար, քար ու թուփը:

Հէնց այդ մըմունչներն եմ ես ըմբռնել...

Անցնել այդ ժամանակների առօրեայ նիստ ու կացը, մշտօրեայ կենցաղը, բնակարանների մուտքը, նրանց մանրամասն նկարագրութիւնը, ժողովրդի վարք ու բարքը՝ դուրս են եղել իմ նպատակից և

բարձր իմ ովքերից: Այդ թողել ենք աւելի ծեռնատհաս անհատներին: Եւ ի՞նչպէս կարող էին գրանք ժամանակի անխախտ կնիքը կրել իրանց վրայ, երբ այդ տարաբաղդ ժամանակներից զրեթէ ոչինչ չէ մնացել մեղանում, երբ գրանք դրեթէ դուրիկ պիտի լինէին ժամանակի անխախտ դրոշմից. այդ պատճառով էլ անուշադիր են առնւած:

Բուղան, հագարացու այդ բնորոշ տիպարը, այս ու այն կողմն է շարժել իմ ամբարտաւան և անարդ մանգաղը մեր ահաւոր հայրենիքում առանց աջ ու ահեակ դիտելու և ամենուրեք ներկել է այդ հողը նրա հարազատների արիւնով՝ առանց խնայելու ոչ ցեղի, ոչ սեռի, ոչ հասակի, ոչ իշխանի և ոչ հոգեւորականի: Նա իր արիւնաներկ սրի զօրութեամբ մեր թշւառ հայրենիքում նոյնիսկ ամենահեռաւոր և ամենախուլ վայրերումն էլ բացել է իր համար ասպնջականութեան դռները. բայց թէ որքան են պղտորւել նրա անթիւ զոհերի անբիծ սրտերը տանջանքների բովում, ինչ աւանդ են իւղել նրանք մեզ. դրա մանրամասն նկարագիրը մեռել է ժամանակի սե փոշիների մէջ:

Ահա այդ փոշիներն ենք մենք ծդտել բարձրացնելու:

Բազրատունի սպարապետ իշխան Խոստովանողը, իբրև հայր, իբրև ընտանիքի և հայրենիքի զուրի՝ հրաժեշտ է տալիս իւրաքիններին իբրև ծնող և երկրի պետ և անապարում է Բուղայի

բանակը, իսկ այնտեղից գէպի Բաբիլոն, ամիրապետի դիւանը ու բանար: Բայց ի՞նչ է զգացել նրա հայրենասէր հողին այդ սրտառուչ տեսարանների ժամանակ. ըլկայ նրա զգացմունքի մանրամասն նկարագիրը. մենք փորձել ենք մանել նրա կուրծքը իբրև ծնողի, մենք փորձել ենք մուտք դործել նրա արաբական սե ու ծութ նկուղը և երկար, շատ երկար լսել նրա դառնագին ողբը և խուլ հեծեծանքը, որոնք խառն հոգեզմալ ապաշտանքի հետ միայն ու միայն լույի են եղել բանտի յաւերժ քարասիտ և անմռունչ պատերին:

Սլացի՛ր և գու, զաւակս, գէպի Բաբիլոնի բոցակէղ տափարակը՝ գէպի կալանաւոր Բազրատունին:

Տարիների ընթացքում ուսումնասիրելով մեր գիւղական աշխարհի արդի հոգեկան ծգտումները, ես որոշակի տեսնում էի, որ այդտեղ ոչ մի զրւածք այնքան սիրալիր ընդունելութիւն չի գանում, որքան պատմական զրւածքները: Մեր ժողովուրդը պատմական ժողովուրդ է և իր հոգու բոցավառ տենչանքներով ծգտում է գէպի այդ պատմութիւնը: Զմեռւան երկար զիշերները նա խմբւած այս ու այն սաքում մի նախանձելի եռանդով կարգում է այս ու այն պատմական զրւածքները:

Հէնց այդ սիրելի գեղուկի համար է զրւածք է «Զաքարիա Զագեցու օրերը»: Այս, հէնց այդ գեղուկի համար, որը ներողամասութեամբ կը վերաբերւի գէպի մեր թերութիւնները:

Սիրելը և դու, զաւակս, այդ գեղջուկի  
կնճռոտած գէմքը և եղի՛ր նրա նման ներողամիտ  
գէպի թուլը և ընկածը:

17 օդ. 1904

I. Խանոսնաձեւն

Երանոս. Նորոբալազ.

գաւառ:

I.

Իսկ բասկէչք Սիմ լերին, որը Ասուն  
կոչեն, իմացեալ զվարանգութիւն Բագա-  
րատոց կապականօք ի գուռն, բորբոքեցան  
անհնարին սրամտութեամբ ցցժ և համա-  
գունդ ի մի վայր գումարեալ ըանս եղին  
'ի մէջ իւրեանց սպանանել զոստիկանն  
Ապուսէթ...»

Չաճշլան

849 թւականն էր: Տիգրիս գետը՝ կատաղի  
փրփուրներ արձակելով և տարադուշակ բուի վայ-  
վուլը մրմնչալով իր ափերին՝ զլուկ կարցրած զա-  
զանի նման աճապարում էր ժամ առաջ իր սրտի  
թախիծը թափելու իր քոյր եփրատի առաջը: Նրա  
ափերը այդ օրը լուզելու չափ ճնշումներ էին զործ  
զնում նրա վրայ, և նա առանց ուշքի առնելու  
թէ ինչ է կատարւում իր շուրջը՝ լորձանը տա-  
լով շօրօրում էր և առաջ բնթանում:

Նրա ափերին վիտում էին և՝ ոչխարների հօ-  
տերը և եղիւրաւոր կենդանիների նախիրները և  
արաբական նժոյգների չոկերը, որոնց վրայ զուար-  
ձանալու համոյքով բռնկւած՝ ցնցում էր Բաղդա-

տի իսլամի զաւակը, որը Տիգրիսի ափերին պալր-  
զած իր միջօրէի նամազն էր կատարում:

Գետի ընդարձակ և լախատարած ձախ ափե-  
րին սփռւած էր Բաղդատը, Բաբիլոնի թագուհին:

Օրւայ այդ պահուն ժուխի գորշագոյն քու-  
լաները՝ ոլորուն պտոյտներ կաղմելով նրա վրայ՝  
անթիւ ու անհամար օղակներով բարձրանում էին  
գետի կապոյտ եթերը, իրանց եսւեից թողնելով  
բազմաթիւ շարժուն սիւնեակներ, որոնք հոսող զե-  
փիւոի յուշիկ շւոցներից անզամ երերւում էին օդի  
մէջ և մարդակեր վիշապների կերպարանք ստա-  
նում: Այդ շարժուող սիւնեակների հետ գրեթէ հա-  
մաչափ բարձրութեան միջից նշմարւում էին մի  
այլ խայտարղէտ սիւների հազարաւոր զուխներ,  
որոնց ոչ այդ երկրի զեփիւոր, ոչ հուժկու հողմե-  
րը և ոչ կատաղի փոթորիկները կարող էին շար-  
ժեցնել. դրանք Բաղդատի մինարէների սիւներն  
էին, որոնց շէնքի փառահեղութեան համար ոչինչ  
չէր զլացել նրա շատագով և մոլեւանդ երկրպա-  
գուն:

Սրանցից ոչ պակաս ցցել էին Երանդերանդ  
իրանց սաղարթները բիւրաւոր հսկայամարմին ծա-  
ռեր, որոնք ասես իրանց փարթամ տերեներով ձրդ-  
ուում էին ծածկել բաղաքի շէնքերը նախողի աշ-  
քերից:

Հեռախց քաղաքը գրեթէ դիւրին չէր տես-  
նել. նրա փոխարէն ձեր աչքի առաջ տարածւում  
էր սաղարթախիտ կանաչների լախարձակ մի ճափ  
որը տեղ-տեղ ընդգծւում էր նեղ ու բարակ շաւիդ-

ներով. դրանք քաղաքի փողոցներն էին, որոնք ան-  
նշմարելի կերպով անշատում էին միմեանցից կա-  
նաչների զլուխները, ծառերի կատարները և քա-  
ղաքի շէնքերը:

Այդ ընդհանուր կանաչագոյն ովկիանոսի մէջ՝  
քաղաքի եղերքին՝ աչքի էր ընկնում արաբական  
ճաշակով զարդարւած մի հոլակապ շէնք, որը ու-  
ղիղ նախում էր Տիգրիսի վրայ: Դա Բաղդատի  
ամիրապետի ապարանքն էր, որը բաժանւած էր  
մի քանի մասերի, որոնցից ուշագրաւ էին գիւանը,  
բանտը և հարեմը: Սրանք միմեանցից ոչ հեռու  
շրջապատւած էին յաւէժ բարձր պարիսպներով  
իրանց հազարաւոր ելեկներով, որոնցից իւրաքան-  
չիւրը ունէր իր առանձնակի նշանակութիւնը: Այս-  
տեղ գարձեալ ամեն ինչ թագւած էր արևելքին  
յատուկ փարթամ բուսականութեան զրկում, ուր  
ծփում էր բաղմերանդ ծաղիկների հրաշագեղ բուր-  
մունքը, որոնք ապշեցնում էին և եթերային ցնորք-  
ների աշխարհը տանում հասարակ մահկանացունե-  
րին, եթէ մի օր նրանց առաջ բաց անէր իր գժոյն  
երեսը նրանց ու բաղզը և իր գեղահրաշ ժպիտը  
նրանց ցուց տար, և նրանց վիճակւած լինէր իշ-  
նել այլ միջավայրը: Թէ՛ գիւանի, թէ՛ հարեմի և  
թէ՛ միւս շէնքերի ընդարձակ բազերում կանաչ-  
ներից և հազարաւոր ոլորուն ծաղիկներից կաղմած  
էին զանազան ձեի և տարբեր մեծութեամբ օդա-  
կառուց կախաղանաւոր պարտեղներ, ուր օրւայ  
հոգսերից ազատւելուց յետով, պատապարւում էին  
նրանց տէրերը և տիրուհիները Բաղդատի կիզիչ հա-

ուազովթներից, որպէս մի ժամանակ պատսպարում էր արևելքի արփուհին՝ Շամիրամը:

Այս հանգստավայրերից մէկում յենւած բարձերի վրայ երևում էր մի միջին արփաւոր մարդ: Նրա արտաքինը զրաւիչ չէր. սակայն այդ օր նա սովորականից աւելի մասյուղ էր: Մի քանի ամիս էր, ինչ նա ցնծութեամբ ընդունել էր հայազգի Բագրատ Բագրատունուն, որին իր աւագ եղբայրը, Մաւուն, \*) սպարապետ Սմբատ Բագրատունուն (Արքաբասի, խոստովանողի) թաղանձանաց զիշելով, պատրիկ էր կարգել հայերի վրայ և որին Սալումէթ սստիկանը զլթայակապ Բաղդատ էր ուղարկել: Այս Բագրատը Սմբատի աներծագն էր:

Այդ միջին տարիքաւոր մարդը Ապաւշաֆար (Մաքսամ) ամիրապետն էր՝ Բաղդատի տէրլու, որի տասապելական պատիժների տարսափի տակ պատրիկ Բագրատ Բագրատունին ուրացաւ իր նախահայրերի հաւատը և ընդունեց իսլամի կրօնը:

Այդ երանելի օրից յեառյ, ամիրապետ Մաքսամը ոչ մի տեղեկութիւն չուներ Ապուսէթ սստիկանից, որը ուղարկւած էր Հայաստան: Թէև ստէպ-ստէպ հրէշաւոր լուրեր էր նա ստանումնրա մասին, բայց այնքան էլ չերծ հաւատ չէր ընծայում նա այդ լուրերին, երբ տեսնում էր, որ նրանք ոչ մի հաստատուն ազրիւրից չեն սկիզբ սոնում:

Եւ այժմ էլ հազարաւոր բուրմունքներով, շրրջապատած ծաղիկներով, լի այդ հանգստավայրում

նա ընկղծւած էր այնպիսի մաշող խոհերի զիրկը և յուսահատութեան գառնութեամբ լցւած մերթընդ մերթ չզածգական շարժումներ էր զործում, բազմած տեղից ուաքի էր կանգնում, թեթևակի մի քանի քայլ ետ ու առաջ պտոյաներ զործում, ապա կանգնում կանաչեալ պատերի առաջ, երկու ծեռքով անջատում իրարից այդ ողորուն կանաչների տերեները, անփոյթ աչքերով գուրսը նայում և իր մաշւած, խորընկած թշերը ուղղնում ու մի արտասովոր մազծոտութեամբ վնչում, ապա դարձեալ իր նախկին տեղը վայր ընկնում:

Մինչ սա ախպիսի խոռոված տափնապի մէջ էր զտնուում, ներս մտաւ նրա սպասաւորներից աւագագոյնը, մի քանի անգամ երկրպագութիւն արեց նրան, ապա գուան մօնն կանգնեց:

Ամիրապետի գէմքի կնճիռները մի վայրկեան կորան անհետ, երբ նա դարձաւ գէպի սպասաւորը, բայց շուտով նա վերատին իր մատյոզգ կերպարան. քը ստացաւ, որից սպասաւորը բարացաւ տեղն ու տեղը: Սակայն իսկոյն նա սթափւեց, երբ ամիրապետի խոռոված ծալնը իր սուր շեշտերով կրկնեց նրան առաջարկած հարցը մի քանի անգամ.

— Էլ ի՞նչ կայ...

— Տէ՛ր իմ, այս բոպէիս Հայաստանից, ձեր ուղարկութ գնդերից, մարդիկ են եկել և խնդրում են ձեզ տեսնել: Նրանք վաղուց է սպասում են, և ես, վերջապէս, սիրու արեցի ձեր՝ իմ երկրիս տիրոջ, հանգիստը խանգարելու. — Կցկտուր և երկչու

\*) Ո. թէր:

ծալնով պատասխանեց նրան սպասաւորը, շարու-  
նակելով իր երկրպագութիւնները:

— Կանչի՛ր նրանցից մէկին իծ անդարուն.  
ահա ես գնում եմ:

Սպասաւորը, խոր զլուխ տալով, դուրս դնաց.  
նրա ետեից դուրս գնաց և ամիրապեար:

Ըստունարանը, ուր գնաց ամիրապեար, ծր-  
փում էր արաբական ճոխութեան մէջ. թանկագին  
գորգերով պատած զահաւորակները, որոնց զանա-  
զան կողմերում զրած էին կերպասներով զարդար-  
ւած բարձերը, զեաեղւած էին նրա վերեի մա-  
սերում, ուր բազմում էր յանախ ամիրապեար:  
Յատուկ պատած էր ասրեալ և մետաքսեալ գոյն-  
զգոյն օթոցներով: Նրա պատերից կախւած էին  
զանազան ծեռվ զէնքերի մի քանի տեսակներ, որոնց  
մէջ աչքի էին ընկնում տէզեր, նիզակներ, շիզաներ,  
գեղարդներ, աշտէներ, զանազան լախաեր, բոլորը  
ոսկենուռ քանդակներով կերտած: իսկ զանազան  
սրերը, թրերը, գաշոյները իրանց պատեսների ա-  
կանակուռ շղթերով զմայելեցուցիչ տեսք էին առ-  
լիս այդ սենեակին:

Լուսամուտների կերպասեալ ծիրանազոյն վո-  
ռազոյները զարդարւած էին ոսկեթել ծովերով  
և ցած էին թողած:

Դահաւորակներից մէկի վրայ բազեց ամի-  
րապեար:

Նրա ետեից մուտք գործեց և վերապարձած  
մարդիկներից աւելի աւագազոյնը, որը սովորական

կերպով խոր երկրպագութիւն տւեց նրան և  
կանդնեց:

— Վերջապէս, վերջապէս, ես տեսալ ձեզանից  
մէկն ու մէկին: Սակայն տակաւին չեմ վստահա-  
նում մանրակրկիտ հարցեր առաջարկելու քեզ. սիր-  
ութ մի ինչ որ սե ենթագրութիւններով է բորնկ-  
ւած: Ոկած այն օրից, երբ իմ աջ բազկիս ոյ-  
ժքը, Ապուսէթք, անջատվել է ինձանից, սե սե  
ամպերի կուտակները յաճախակի ծածկում են իմ  
սիրտը իրանց միգագոյն մշուշներով, և այդ սրտա-  
մաշ մշուշների տակ, օ, զի՞տես, ի՞նչ է եղել իմ  
օրը: Ես այդ մշուշների մէջ մոռացել եմ ինձ, ի-  
շել եմ իմ փառքի վեհ բարձունքներից և ուշ ու  
մտքով և հոգոյս ամենաշերմ էութեամբ սլացել եմ  
զէպի հեռու, շատ հեռու և ձեզ ընկերակցել ծեր  
կատարած գործերի մէջ, ուր մեր նախնիբների վե-  
հապանծ անունն է փալլում: Այս, շատ տանշանք-  
ների մատնեցի... բայց այսօր, փառք Ալլահի  
ողորմածութեանը, յոյս ունեմ ավելի լավք, ավելի  
պանծալին լսելու ձեր կատարած գործերից. վեր-  
ջացրեց իր ասելիքը ամիրապեար, ուղղելով դէպի  
նրան իր սեորակ աչքերը, որի մէջ նշմարվում էր  
մի անբացարելի վրդովմունք և կատաղի կրակ:

— Տէր իմ, մխիթարական ոչինչ չունի ասելու  
քեզ քո ծառան. բայց եթէ իմ տէրը կը հրամայէ  
ես կը պատմէմ նրան այն ամենը, ինչ տեղի ունե-  
ցաւ սկսած այն օրից, երբ մենք թողինք Բաղ-  
դատը:

Պատմի՛ր, պատմի՛ր,— ճշաց իր ահեղ, ձայ-

նով ամիրապետը, որի մէջ որոշակի լսուում էր յուսահատութեան այն ծանրաշունչ նօտան, որը յառուկ էր նրա նախահայրերին:

Ահա, տէր իմ. մենք ծեր հրամանի համաձայն վաղվաղակի անցանք մէր սահմանը և մտանք ուղղակի ծարօն, ուր դտնուում էր պատրիկ Բագրատը, որին ծեր ծառան, Ապուսէթը, զանաղան, պատրւակներով հրաւիրեց իր մօտը, ապա շղթայակապ ծեղ ուղարկեց: Այստեղ մենք մեղ աւելի քան ապահով էինք համարում, որովհետեւ այլ ևս ոչ ոք չը կար մեղ խանգարելու: Աակալն այդպիս չեղաւ: Մի զիշեր, երբ Ապուսէթը հանգստանում էր Միծ լիքան կողմերում, և մենք անփրդով զիշերալին հանգիստ էինք վայելում, մեղ վրայ արծակւցին ալդ լիքան բնակիչները և չարաչար սպանեցին Ապուսէթին և որախոզող կոտորեցին մէր զօրքը ու ցան ու ցրիւ արեցին մեզ...

Այս ի՞նչեր եմ լսում. մի՛թէ ալդ շնէրը ալդքան յանգուգն են եղել: Եւ նրանք ստահակութիւն են ունեցել սպանելու նրան, որին ես որդու չափ սէր էի ցրաց տալիս: Ես նրանց ալդ թանկ նստացնել կը տամ: Նրանք համարձակւել են ձեռք բարձրացնել իրանց աիրոջ վրայ: Շուտով, շրուտով նրանք կը ստրչանան, կը սթափւեն. սակայն ալդ արգէն ուշ կը լինի իրանց թեթևամտութիւնը ուղղելու: Եւ սիրտս ապարդիւն չէր երերում. նրա իւրաքանչիւր ծայնք ալսուհետեւ պարտուպատշաճ յարգանք կունենայ իմ առաջ, նրա իւրաքանչիւր բարախմունքը մեղ շատ բան է շնչում. բայց մենք

գոցում ենք մէր ականջները նրա առաջ և յամառ անստարբերութեամբ անսալու հանութիւն անզամ երեան չենք հանում: Հեռացիր, հեռացիր. ծանր է ինձ այսուհետեւ ծեղ զիտել: Թողէ՛ք ալժմ ինձ միայնակ. իսկ մի երկու ժամից յետով, կանչիր այս տեղ իմ ընդուններից մէկին, աւելի յարմարագոյն է Բուզան, որին ես պատւերներ ունեմ հազոր-զելու:

Զինուորականը մինչեւ յատակը խոնարհելով երկրպագեց նրան ու դուրս եկաւ: Մնալով միայնակ ամիրապետը լոիկ սկսեց ծրագիրներ կազմել՝ տւերելու հայտատանը, որին զալուլթով լի բոհմունքներ էր կարգում իր մտքում և սրտատրովի աշխատում էր՝ իր կործանիչ թունով ողողել այն հողք, որի վրայ թափւել էր Ապուսէթի արիւնը: Ալդ արեան իւրաքանչիւր կաթիլի փոխարէն նա վճռում էր անթիւ ու անհամար արիւններ թափել և նրանցով ներկել այն հողք, որի ստահակ զաւակները ձեռք էին բարձրացրել իր զէմը. նա վճռում էր ալդ զաւակների արիւնից զետեր կազմել տալ և նրանցով լւանալ այն արտար, որին ինքը ենթարկւել էր Ապուսէթի սպանութեամբ: Նա ընդունակարծ և ընդունակարծ անհատներից չէր:

Մի երկու ժամից յետով, նրա մօտ մուտք գործեց Բուզան և, խոր երկրպագութիւն անելով, կանգնեց ու նրա հրամանին էր սպասում: Տեսնելով իր աիրոջ ալլալւած տեսքը և նրա մոալլած երեսը, նա ծանրաբերծ ահ ու դոզով լցւեցաւ և

չը գիտէր՝ ինչպէս ոտքի վրայ պաշտպանէր իրան։  
Ամիրապետը լուռ էր, և այդ լոռութիւնը ծանրա-  
տաղտուկ էր նրա համար։

Վերջապէս, նա իր խռովագին ծայնով ընդ-  
հատեց այդ լոռութիւնը։

— Կիտե՞ս, Բուզա, ի՞նչ չարաշունչ գոյժ է  
հասել ալսօր մեզ. դի՞տես, որ Ապօւսէթը սրախո-  
ղող է արւած. դի՞տես, ովքեր են եղել նրա սպա-  
նողները։ Գի՞տես, որ մի քանի լեռնական աւաղակնե-  
րի է նա զոհ գնացել։ Ասա, ասո, ահսնեմ ի՞նչպէս  
թափենք մենք մեր վրէժինդրութեան ծարաւը  
նրանց վրայ։

— Այդ բոլորը, տէր իմ, քո սարուկը գիտէ.  
գիտէ և իր սրտի անհուն գառնութեամբ ողբակից  
լինել հայրենիքի կրած տանշանքներին և վրէժ-  
ինդրութեան անլադ ծարաւով լցւած սպասում  
է իր տիրոջ հրամանին միուն։ Մեր հայրենիքը այդ  
պահանջում է մեղանից։

Հրամայի՛ր միայն, տէր իմ, և ես այդ լեռ-  
նական զազիր կիններին և տիրադրուժ շներին  
տոռնած տարածել տամ ձերդ վեհութեան գարշա-  
պարի տակը։ Հրամայիր միայն, և ես պեղագունե-  
րի անյատակ գառնութիւններ բաց անեմ նրանց  
առաջ, ուր նրանք ոչ աչ և ոչ ահեակ կարողանան  
շարժւել և միայն մոլորւած մնան իրանց թշւա-  
ռութեան մէջ։ Յամեցնելու կարիք էլ չը կայ, տէր  
իմ, և ի՞նչպէս կարելի է յամրոյր թողնել այդ  
Այն, կրկնել համարձակում եմ, տէր իմ, որ չը

պէտք է յապաղել, եթէ ոչ նրանք առաւել ևս երես  
կ'առնեն։

— Ո՞չ, ոչ, ես այս օրւանից սկսած հանգիստ  
ու գագար վայելել անկարող եմ՝ մինչև որ նրանց  
թշւառութեան բաժակը լցնել չը տամ։ Ես քեզ  
հրամայում եմ զօրաբանակ կազմել մեր անթիւ ու  
անհամար ընտիր կտրիճներից, որոնք ծովի աւազի  
և երկնքի աստղերի նման թող սփռւեան մեր  
թշնամիների երկրի վրայ և թող բնաշինչ անեն նրանց  
գարշանոտ հետքերը աշխարհի երեսից։

— Զեր հրամանը սրբութեամբ կը կատարւի,  
տէր իմ։

— Եւ ես քեզ վերստին պատւիրում եմ՝ բը-  
նաշինչ անել թշնամու երկիրը. նրա տէրերին և  
իշխաններին ընդհանրապէս բռնել և չարաչար կա-  
պանքներով ինձ առաքել. իսկ այն ամենայն հասա-  
րակ մահկանացուները, որոնք ընդունակ են զէնք  
կրելու և մարտնչելու, կոտորել անխնայ՝ առանց  
նայելու նրանց սեռի և հասակի վրայ։ Իսկ եթէ  
նրանցից մէկն ու մէկը ուրանայ իրանց ըրիստո-  
նէական օրէնքները և թողնի իր նախահայրերի  
այդ սին հաւատար ու գարծ գայ մեր գինին և ըն-  
դունէ մեր կրօնը, ալդպիսիներին քեզ հետ կ'առ-  
նես ու կը վերագառնաս ալստեղ, ինձ մօտ. միայն  
թէ դրանք լինեն քաջ կամ գեղեցկատեսիլ. իսկ  
եթէ ոչ չը խնայել և ալդպիսիներին՝ վախկոտներ  
և գարշելի կերպարանքով անհատները արժանի չեն  
ոտնափոխութիւն, զործելու մեր հաւատի սեամի  
մէջ։ Իսկ մնացած անպաշտպան ուամիկների, կա-

նանց և երեխաներին, որոնք անմռունչ զառների  
նման կը կատարեն մեր հրամանները, եթէ կը ցան-  
կանաս, կը թողնես անվնաս. իսկ եթէ ոչ, կարող  
ես մահացնիլ. այդ թողնում եմ քո բարեհայեացո-  
ղութեամբ: Զը ճոռանալ և ծի բան, այն է՝ ամեն  
տեղ լինել փութեամբ և հաւատի ամենաթեթե նշով  
անդամ չընձայել նրանց, եթէ ոչ այդ խուժադուժ  
ամբոխը կարող է օգուել ծեր դիւրահաւատու-  
թիւնից և զարձեալ վրէժխնդիր լինել:

Այս ըոպէիս գուրս կ'ելնես և իմ հրամանը  
կը ծանուցանես բոլորին ու անհրաժեշտ պատրաս-  
տութիւնների ձեռք կը զարկես՝ վաղվագակի ճա-  
նապարհ ընկնելու դէպի հայաստան, իմ տւած  
պատւէրները ամենաճշախիւ ՚ի կատար տծելու,  
այնպէս որ հետեւեալ տարին դուք այդ երկրում  
պիտի լինէք և դորհի պիտի կազէք եռանդադոյն  
ջանասիրութեամբ:

— Այդ բոլոր ծեր հրամանները, տէր իմ, ձեր  
ստրուկը աւելի քան ջանասիրութեամբ կը կատարէ  
և բոցախառ ճամանչներով լի գափնիներով կը պա-  
կէ ձեր փառքը: Ինքնազովելու հարկ էլ չը կայ-  
այդ շուտով մօտարուտ ապագան կը պարզէ: Սա-  
կայն աւելորդաբանութիւն թող չը լինի, որ ինքս  
վստահագոյն քաղերով հէնց ալժմեանից կ'աճապա-  
րեմ կարգի բերելու մեր զօրագունդերը և կը մեկ-  
նեմ առանց յապաղելու դէպի այն հողը, ուր ա-  
րեան գետեր հոսեցնել կը տամ թշնամու արիւնից:  
Ես վստահ եմ: Մեծ է Մուհամէտը: Մեծ է նրա  
անլաղթ խալիֆը:

— Եւ թող Ալլահը օրհնէ քեզ, Բուզա, և  
յաղթութեամբ պսակէ քո սուրբ:

Բուզան, խոր երկրպագութիւններ անելով ա-  
միրապետին, գուրս ելաւ նրա մօտից: Մի քանի  
օրից յետով, հաղարացոց անթիւ ու անհամար զօ-  
րագունդը՝ Բուզային իրան զլուխ և սատիկան ու-  
նենալով, ճանապարհ ընկաւ դէպի հայաստան:

խիլ անում, չնշում, կորժանում հայրենի օշախը, արիւնով ներկում նրա իւրաքանչիւր քար ու թուփը և ամեն տեղ իր սև հետքերը թողնում։ Եւ այդ տարաբաղդ երկիրը Երբ է այնպիսի չարաբաստիկ հանգամանքներից զերծ եղել։ Նրա պատմութեան որ սև էջերը վերցնէք, որ ծեղ որոշակի չ'ասեն թէ՝ այդ սեւառը հողի վրա ներբին երկպառակութիւնը և խուլ կոիւր յարատե ասպանջակութիւն են զրտել և տակաւին պիտի գտնեն։ Նրա որ էջերը թերթելու լինէք և սրտի լի թախծով ու անհուն դառնութեամբ չը տեսնէք, որ հարազատը անտարբեր սառնասրտութեամբ թափում է իւր հարազատի անմեղ արիւնը և ալդպէս ներկում հայրենի հողը իր հարազատների անմեղ արիւնով։

Եւ քանի ալդպիսի անմեղ արիւններ են թափել հարազատների անարդ ձեռքերով, որոնք մի առանձնակի գոհունակութեամբ լագուրդ են տւել իրանց արիւնուշտ, իրանց վայրադ կրքերին։ Այդ պատմութեան որ անծայն խուլ ու մութ անկիւնը բաց անէք, որ նրանք լեզու չ'առնեն և աշուղ չը դառնան և հայրենի գաւագրուժ, ազգուրաց, գաւահան-մատնիշների ողբերը չը մրմնչան ձեզ։ Եւ ալդպէս ամեն ժամ...

Այդ պատմութեան որ թերթը վերցնէք, որ ծեր առաջ չը ցցւեն Մեհրուժանների աղջուրաց ողիները։ Այդ պատմութեան որ երեսը դիտէք, որ Վասակների, Վահ անների, ազգալին փառք ու պարծանք կազմող Մամիկոնեանների, Սիւնիների տոհմը արատաւորող, այդ ստրկահոգի գաւահանների ու-

II.

«Եւ յասմ վերջեն պատերազմի զօրաց-  
եալ Բարկենի։ սպան զԳրիգոր Սուփան.  
և ինքն, որ Սիսականի տէր եր, եղեւ և  
տէր բովանդակ երկրին սիւնեաց...»

Զանցւան

Այն ժամանակ, երբ հեռաւոր հարաւում հայ-  
աստանի համար պատրաստում էր մի ահեղ փո-  
թորիկ, որը գալու էր տակն ու վրայ անելու և  
խորտակելու. նրան հիմնալատակ. այն ժամանակ, երբ  
Բարիլոնի հօրիգոնում մրրկածուփ խռովալոյզ ա-  
լիքները ահազնագղորդ կոհակներով խշում էին և  
դէպի հայաստանի լեռնալանչերը ու նրա սիրաը  
թռչում հեղձելու նրան իրանց ժանրաշունչ ալէ-  
կոծութիւններով, այդ ժամանակ հայաստանի մի  
քանի կէտերում թագաւորում էր կատարեալ խառ-  
նաշփոթութիւն և ներքին խռովութիւն, որոնք  
իրանց կործանիչ հեղեղներով գալիս էին նրա վիշ-  
տը, նրա տառապանքը առաւել ևս բարկելու, ա-  
ռաւել ևս խորացնելու նրա վերքերը։ Ինչպէս միշտ,  
այնպէս և այս նուազ անմիութիւնն էր արմատա-

Տրաք Ժամ

Հայութ - Հրաման

Վարդակական

սուականները երեան չը գտն իրանց գարշապոյն զիսակներով, Եւ այդ պատճութիւնը մխիթարական և սփոփիչ օրօրներ սահաւ կը շնչայ ձեզ:

Այսպէս էր և այժմ: Հայաստանի երկու ահեղ սիւները, փոխանակ միութեան զաշն կռելու, փոխանակ ձեռք-ձեռքի, թիկունք-թիկունքի տւած՝ պատնէշներ կազմելու գալոց ահրաւիրքի, ահեղ փոթորիկի առաջ առնելու, իրանը անսահման դառնութեամբ լցւած միմեանց գէմ, իւրաքանչիւրք լարեց իր գոլութեան բոլոր գերծանները մահառիթ վէրք, սպանիչ հարւած հասցնելու հակառակորդին:

Սոցանից մէկը՝ Սիսականի տէր Բաբկէնն էր, միւսը՝ Սիւնեաց իշխանը՝ Գրիգորը, որին Սուփան էլ էին կոչում: Եւ այսպէս, Հայաստանի այդ երկու հզօրագոյն նախարարների մէջ օրէցօր տարածայնութիւնը մինչ այն աստիճան զօրեղացաւ, մինչ այն աստիճան սուր կերպարանք ստացաւ, որ նրանը սահմանած էին զէնքով լուծելու իրանց խճճուած հարցերը: Եւ այդպէս էլ եղաւ այդ երկու կողմերի մէջ ծագեց եղբայրասպան անարդ կոփւր:

Թէպէտ եղան հալրենիքի անծնազոհ, նախածախնդիր զաւակներ, որոնք լարեցին իրանց ձիգերը՝ խանդարելու այդ կոփւր և հաշտութիւն ու խաղաղութիւն վերականգնելու երկու կողմերի մէջ բայց եղան և բազմաթիւ խոչընդուաներ, որոնք ուրանալով իրանց իզնի խթանը և ուսնակոխ անելով հալրենիքի պաշտպանի անձուրաց տւանդը, չան-

թափեցին առաւել և զրագութիւնը նրանց միմինց գէմ, և այդ վերջինները, անդունակարար, ուրաք յաղթական փառքը:

Եւ կոփւր սկսւեց:

Երկու կողմերն էլ բազմաթիւ զօրքերով պատերազմի դաշտը իջան, և եղբայրասպան, գարշանքով լի գրոշմած մանգաղը անխնայ, առանց աջ ու ահեակ, յետ ու առաջ գիտելու՝ սկսեց կատարել իր գէրը: Օրէցօր երկու կողմերի կոտորածների թիւը աճում էր ու սաստիանում, կոփւր աւելի յնցող կերպարանք էր ստանում և երկարում: Այս տակաւին բաւական չէր լցնելու այդ նախարարների արեան ծարաւը. Նրանցից իւրաքանչիւրք իր բարկութեան կրակը, զայրոյթով լի բաժակը սկսեց թափել թշւառ, անգաշտպան ժողովրդի վրայ: Սկսեցին ասպատակել, աւարի առնել միմեանց գիւղեր, շէներ, աւաններ. այրել կրակի նարակ գարծնել նրանց և այդպէս ամայսանել երկիրը, դերի վարելով բազմաթիւ կանանց և մարդկանց, որոնց շատերին ծայրակտուք էին անում և նման գաղանաբարոյ գործերով յագուրդ տալիս իրանց անսանծ կրքերին: Այս բոլորից յետով, ճակատամարտը վերստին տեղի ունեցաւ, և այս նւագ յօդուա Բաբկէն Սիսականի, որը աւելի հզօրացաւ այդ կուփ ժամանակ: Այս կուփին մասնակցում էր և Սիւնեաց Գրիգոր—Սուփանի որդի Վասակը, որին անւանում էին Գաբուռ, մի կողմից իսկ միւս կողմից՝ Բաբկէն Սիսականի երկու որդիները՝ Աշոտը և Վասակը: Կոփւր տեղի ունէր Սիւնեաց լեռներում,

որտեղից պարզ նշմարւում էր ալեոր Մասիսը և  
Արագած լեռան սպիտակ լանջերը: Վասակ-Գաբու-  
ռը այսաեղ՝ կռւի դաշտում, տեսնելով լեռների կա-  
տարքները, իր հոգու ամբողջ ոյժով մի առանձնակի  
ինքնուրոյն թափով սաւառնեց դէպի այն կողմերը,  
ուր ժպտում էր նրան կեանքը իր սիրաշունչ կեն-  
սատու գոյներով: Այդեղ՝ Արագածի լեռնալան-  
շերի ստորոտերում, Ախուրեանի հովասուն ափե-  
րում, նա թողել էր իր սիրտը և հոգին. ալդեղ  
էր սպարապետ Սմբատ Բաղրատունու գեղազան  
թոռը, Աշոտ առաջնի չնաշխարհիկ զուստը՝ Մա-  
րտմր, որին նա սիրում էր իր սրաի խորին բա-  
րախմունքով: Նա տեսնում էր իր հայրենի երկրի  
մրրկալոյզ զրութիւնը: Նա զիտէր, որ իր հայրենի  
լեռների իւրաքանչիւր քար ու թփի, իւրու քանչիւր  
ծառ ու ճիւղի ետեւում մի-մի մարդ է դարան մր-  
տած, և իր ու իրայինների վիճակը վտանգի մէջ է.  
զիտէր այդ, բայց և այնպէս կտրել չէր կարող իր  
հայեացը այն կէտերից, ուր գտնւում էր սիրած  
արարածը, ուր իր համար մի գեղեցկափալ չաս-  
տուածունի էր սնւում՝ իր ապագայ երջանկու-  
թիւնը կատարեալ դարձնելու համար. զիտէր, բայց  
անկարող էր շեղելու իր հայեացը այն կէտերից:  
Եւ որքան նա նայում էր այդ կէտերին և որքան  
իր շուրջը ահ ու սարսափ էր տեսնում, այնքան  
առաւել նա ուրախանում էր, այնքան առաւել նրա  
սիրտը լցւում էր մի անսահման երանութեամբ:  
Նրա սիրտը սէր ու զգւանք էր տենչում, ահ ու  
սարսափ արհամարում էր նա իւր հոգու մեծու-

թեամբ. ծնողքը տւել էին նրան այրական անվախ  
կրթութիւն, և նա իր ռազմիկ քաջութեամբ ա-  
ռաջին տեղ ունէր բռնած իր հօր զինուորների շար-  
քում: Նա ոտքից ցգլուխ զինւած էր, և այդ զի-  
նավառութեան ու սիրած արարածին տեսնելու  
տենչով, բռնկւած բոպէններում ահ ու դող էր  
սփռում իր շուրջը:

Մինչ սա այսպէս քարացած մեխել էր իր  
հայեացը դէպի Ախուրեանի կանաչազարդ ափե-  
րը, նրա ականչին զարնւեց իր հօր աղիովորմ ձի-  
չը, որը երերեց, տակն ու վրայ արեց նրա սիրտն  
ու հոգին, և նա վալրկենաբար սթափւեց իր ցը-  
նորքներից, ուշքի եկաւ ու դէպի հեծող հայրը  
սլացաւ սրարշաւ: Անբազդ հայրը մեռնում էր: Բար-  
կէն Սիսականի անշեղ նիզակը նեղքել, անցել էր  
նրա կուրծքը: Վէրքը մահացու էր: Շանթահար  
գազանի արագութեամբ նա վայր թռաւ իր նը-  
ժողի վրայից և երկու ձեռքով զրկեց հօր գանգր-  
րահեր գլուխը և ծածկեց նրան իր որդիական  
սրտառուչ համբուլներով: Դեռ ուշքի չ'եկած,  
թէ ի՞նչ է կատարւում իր շուրջը, երկու ուժեղ  
բազուիներ ամուր կերպով իրանց մէջն առան,  
և մի ակնթարթում նա շղթայակապ ընկաւ հո-  
գեվարքի տաղնապի մէջ գալարւող հօր կողքին:  
Տեսարանը ցնցող էր: Գարուոր զլուխը բարձրացը-  
րեց և ի՞նչ--իր կողքին կանգնած էր Սիսականի  
իշխանը՝ Բարկէնը՝ իր տռնական տեսքով:

— Տես, ահա, Սիւնեաց երկրի շառաւիդ, քո  
կեանքն էլ ալժմ իմ ձեռքումս է. սակայն ես չեմ

յանկանում վերջ տալ այդ զեռափթիթ կեանքին, որից հայրենիքը թերեւս մեծ բարիքներ է սպասում: Խղճա՞ եթէ ոչ քեզ, գոնէ մեր տարաբաղդ հայրենիքին և անձնատուր եղի՛ր ինձ: Ես իշխանական խոստում եմ տալիս՝ քեզ զարձեալ քո փառքի մէջ պահելու և երբէք, երբէք չը զրկելու քեզ քո իշխանական շուք ու զարդից, յարդ ու պատից և տիրական գաւաղանից:

— Սիդ բոլորը չեն կարող շլացնել ինձ. ևս միայն այս եմ տեսնում. ևս միայն այս եմ լսում, որ այդ բոլորը իմ հայրասպանի, իմ դոռ թշնամու ձայնն է շշնչում ինձ, որից ես ոչ մի երանութիւն չեմ կարող սպասել, և նրա տւած, նո պարզեած կնանքը թանկ չէ ինձ համար: Սիւնեաց արի զաւակները ոչ մի ժամանակ կեանք չեն խնդրել իրանց թշնամիներից, Սիւնեաց ռազմիկ որդին յաւերժ բաց է պահել իր կուրծքը թշնամու նետերի առաջ և այդ կրծքով ել պաշտպանել է իր հայրենիքի պատիւթ: Ես ոչ վերջինն եմ ալզպիսիներից և ոչ առաջինը. եթէ մեռնեմ, Սիւնեաց աշխարհը կորած չէ. նրա իւրաքանչիւր ժայռ ու լեառը, իւրաքանչիւր քար ու թուփը, գար ու դաշտը զիտէ նոր ռազմիկ ոլմեր կազմակերպել և այդ նոր ոյժերով իր դոռ թշնամու ճակատը պատասել:

— Լսի՛ր ինձ, այս սպիտակ վարսերս շատ բան են տեսել, ես Սիւնեաց արխազան զաւակների մասին աւելին զիտեմ. ես յարդել զիտեմ այդ ռազմիկ զաւակների ողին: Առաջարկելով քեզ լինել անձնատուր, ես չեմ սարսում քեզանից և Սիւնեաց

զաւակների կտրին ասպարներից, այլ յանկանում եմ, որ զու, Սիւնեաց տէրզ, խղճաս թէ՛ քո և թէ՛ Սիսականի՝ իմ զաւակների անմեղ արեանը, որոնք ահա քանի ժամանակ է՝ սպարզիւն թափում ենք և նրանցով ներկում հոյրենի լեռները: Բաւական է քո մի թէ՛թէ ակի հրամանը, և Սիւնեաց կտրին զաւակները վայր կը զնեն իրանց զէնքերը, և վրէժինլիր չեն լինի իրանց իշխանի մահւանը: Ահա, որն է զլխաւորը: Նախքան պատերազմ՝ այդ է եղել իմ միակ ցանկութիւնը և է այժմ: Զգաստացի՛ր, խոհուն աչալըշութեամբ բաց երեակացութեանդ աչքերը, անցի՛ր նրա խուլ ու մութ խորշերը և գատի՛ր անկողմնապահ արգարագատութեամբ՝ թէ ի՛նչ է մեր գործածը: Զէ որ մենք ինքներս ենք շլատում մեզ այս եղբայրասպան ճակատամարտներով: Զգաստացի՛ր, իմ շրթունքներով խօսում է քեզ հետ համայն ազգութիւնը, իմ շրթունքներով բողոքում է քեզ և պահանջ է յայտնում այդ հայ տիկնանց, հայ մանկահասակ ստւար խուժանը, որը շնորհի այս պատերազմի՝ ալրիների և որբերի սպաշչարշներով է սըօդել իր անտէր գլուխը և սեազգեսաներով է պատել իր մերկութիւնը ու նողկանքի անհուն դառնութեամբ լի նզովք է կարդում ազգակործան այդ անարդ սկզբունքին:

— Սիսկանի տէր, տեսնում եմ, այժմ է հայրենիքի պաշտպան նախանձախնդիր ողին կենդանութեան թռիչքներ գործում մեր մէջ. տեսնում եմ, այժմ է զարթնել նա իր յարառե մշուշախոր մրափից և մեզ մղում գէպի մեր անբազդ ազգի շա-

տաղովների շարքերը։ Տեսնում եմ, այժմ է ոտքի կանգնել ձեր խղճմտանքի ահաւոր խթանը և իր սուր-սուր ծալրերը դէպի ձեր կուրծքը ուզդել։ Այս, ձեզ առնջում են, ձեզ հանդիստ ու դադար չեն տալիս ձեր անմտութեան անթիւ ու անհամար զոհերը, որոնց արդար արիւնը ոոոգում է իր վերան երկրի հողը և հեծում է ու բողոք յայտնում տիեզերքի ահեղ Աթոռի առաջ։ Այս, նրանց անմահ հողիներն են հաղածում ձեզ։ Նրանց ուրուականներն են հրէշներ ու վիշապներ գարծել և ամենուրեք հետեւմ են ձեզ։ Դրանք ձեր քմահանուքի զոհերն են, Այժմ, երբ այլես չը կայ Սիւնեաց երկրի դյուխը. այժմ, երբ նա մրափում է յաւիտենականութեան մրափով, մժմ է զարթնել ձեր մէջ անմահ Վարդանների, Պարթևների, Ներսէսների հողիները և, կշտամբական նախատինք տալով, ուշքի բերում ձեզ, համ։

— Խօսի՛ր, ենթազրիր, դատի՛ր, որքան ցանկանում ես. սակայն զիտցի՛ր, որ ժամ է վախճան տալու մեր սկսած այս անարդ ճակատամարտներին, եթէ ոչ...

— Եթէ ոչ, ի՞նչ, ի՞նձ էլ հօրս հետ յաւիտենականութեան աշխարհը կ'ուզարկէք. ես ձեր սուզը ճանկերումն եմ...

— Այդ է ճակատամարտների նպատակը՝ սպանել, կոտորել, աւերել, ասպատակել, այրել, երբ հակառակորդը խելքի չէ ուզում գալ բառերով։ Ահա և իմ սուրը...

Վերջին բառերի հետ Սիսական իշխանի սուրը

մի առանձնակի շառաչով դուրս բերւեց պատեանից և իր տիրոջ հուժկու բազուկների հետ, բարձրանալով դէպի վերը՝ անշրապարձ շողերով սփռեց իւր շուրջը պողպատի շլացուցիչ ֆայլը իր երանդերանդ ճանանչներով, և մի վայրկեան ևո...

Սակայն պողպատի կուրացուցիչ ֆայլը, սուր շահիւնը և Սիսականի տիրոջ ահազնադղորդ ձայնը իր ահեղ ելեէշներով մի վայրկեան ուշքի բերին արեան մէջ թաւալող Սիւնեաց վիրաւորւած առիւծին, և նա՝ օձալին պտոյտներ և գալարներ գործելով իր արեան մէջ՝ հազիւ կարողացաւ մրմրն, չափ. — Գաբուռ, խնայի՛ր քեզ, խնայի՛ր քո Մարեմին՝ Բազրատունեաց հրեշտակին — ...

Սյս էին անբազդ իշխանի վերջին բառերը։ Սրեան մէջ գալարւող հօր արտասանած վերջին բառերը ուշքի բերին կալանաւոր որդուն. նա մի սուր ցնցում զդաց իր ամբողջ մարմնով, մի չերմազին զող անցաւ նրա երակներով, որոնք 'ի մի համախմբւելով՝ զգաստացըին նրա թուլացած երեւակալութիւնը, և նա նրա սրաթռիչ թեերով սաւառնեց զէպի Սիսուրեանի սիզաւէտ և հովասուն ափերը, ուր իր Մարեմի հրեշտականման զեղանի պատկերը իր չնաշխարհիկ նազելի երեսով կանգնեց նրա առաջին, և նրա սեորակ աչքերը, նրա արծաթափազ, հոլանի բազուկները, փարթամ՝ Բազրատունիներին յատուկ, թիկունքի վրայ ծփան երկայնաւուն փարսերը և գիսակները նրա մարմարիոն շրթունքների հետ ասես՝ անթիւ ու անհամար շշնչում էին նրան. — Վասակ, ի՞մ Գաբուռ, ապ-

րի՛ր, ապրի՛ր ինձ համար. թանկ է քո կեանքր իմ  
և հայրենիքի համար. ապրիր... ես ալդ եմ ու-  
ղում—...

Եւ անբաղդ կալանաւորը անզգալ կրկնեց մի  
քանի անգամ նրա վերջին բառերը:

Ալդ տեսաւ, տեսաւ ու հասկացաւ Սիսակա-  
նի իշխանը և լուռ իր սուրբ վերստին պատեա-  
նի մէջ թաղեց, ուխտելով՝ երբէք չը քանդել իր  
տւած երգումը նրան, այն է տիրական գաւազան  
տալ և իր գաւառներից մէկի վրայ իշխան դարձ-  
նել:

III.

«Ի ցեղեւ քումձէ (Սահակ Բագրատու-  
նի) թագաւորելոց են 'ի հայու...»

Խորենացի

Նրշակունեաց հարստութեան անկումից 456  
տարի յետոյ, սկիզբն է գրւում Բագրատունեաց  
իշխանութեանը, որը տեսում է 224 տարի (սկսած  
Աշոտ առաջինի սպարապետութիւնից մինչև վեր-  
ջին Գաղիկի մահը.) կամ 186 տարի (սկսած մի  
և նոյն Աշոտի իշխան կարգւելուց մինչև վերջին  
Գաղիկի իր թագաւորութիւնից դրէւիլը):

Բագրատունեաց հարազատ տանից Հայաստա-  
նը ունեցել է ինն թագաւորներ — Աշոտ առաջին՝  
Սմբատ խոստովանողի որդին, 856—885 թ. կա-  
տարում էր սպարապետութեան և իշխանաց — իշ-  
խանի պաշտօն, իսկ 886 թ. թագաւոր է օժւում  
և վախճանւում է 71 տարեկան հասակում՝ 889  
թ.: Սրա որդի Սմբատ ա. 889—914 թ.: Սրա  
որդի Աշոտ թ. (Երկաթ)՝ 914—928 թ.: Սրա եղ-  
բայր Սրաս՝ 928—951 թ.: Սրա որդի Աշոտ Գ.

(ողորմած)՝ 951—977 թ.: Սրա որդի Սմբատ Բ.  
977—989 թ.: Սրա եղբայր Գագիկ ա. 989—  
1020 թ.: Սրա որդի Յովհաննէս, որին Սմբատ էլ էին  
կոչում՝ 1020—1039 թ.: Սրա մահից յետոյ, Հա-  
յաստանը երկու տարուց աւելի առանց թագաւորի  
մնաց. իսկ երբ յոյները սկսեցին չանքեր զործել  
Անիին տիրանալու, այդ ժամանակ մի քանի նա-  
խարարներ միանալով Պետրոս Կետաղարձի հետ՝  
Յովհաննէս թագաւորի եղբայր Աշոտի որդի Գա-  
գիկին (Երկրորդ), որը այդ ժամանակներում մօտա-  
ւորապէս 17 տարեկան էր, թագաւոր օծեցին Անի-  
ում 1042 թ., որը չորս տարուց յետոյ՝ (1046 թ.)  
ստիպւած եղաւ զնալ Կ.-Պոլիս, ուր մի քանի  
տարի գեղերելուց յետոյ, սկսեց շրջել այստեղ—  
այնտեղ, յոյս ունենալով վերստին տիրանալու իր  
թագաւորութեանը. բայց 1080 թ. Սրծիասի Կի-  
դիստուալ ամրոցում սպանւեցաւ յոյն. Մանտալէի  
որդիների զաւաղբութեամբ, որով և վերշացաւ  
Բագրատունեաց թագաւորութիւնը. (856—1080 թ.)

Բագրատունեաց այս գահականերից ոմանք  
գահ են բարձրացել իրանց նախորդների մահից յե-  
տոյ իսկոյն և եթ, կամ մի քանի ամիս և կամ մի  
քանի տարի յետոյ, բայց որովհետեւ նրանը իրանց  
նախորդների մահից յետոյ իսկոյն մեռք են զարկել  
Երկրի կառավարութեանը, ապա թագաւոր օծւել,  
այդ պատճառով էլ մենք նրանց իշխանութիւնը,  
ինչպէս և մեր պատմիչներից շատերը, հաշուել ենք  
իրանց նախորդների մահից յետոյ:

Ինչպէս վկայում են մեր պատմիչներից շատե-  
րը՝ այս հարսառութիւնը առաջ է եկել Սբրահամից,  
և այս ցեղի հիմնադիրը եղել է ոմն Շամբատ՝ Յու-  
գայի ազգից, որը Նաբուշովոնոսորի՝ Ասորոց ար-  
քայի՝ Երուսաղէմ գերելու ժամանակը զերի է վերցըն-  
ւում մեր Հրաշեաց թագաւորից 600 տարի Ք. ա.:  
Սա Հայաստանում աճում է և մեծ ազդ է դառ-  
նում:

Քրիստոսի գալուստից քիչ տարի առաջ մեր  
Սրբամ թագաւորը ստիպեց նրանց ուրանալ  
իրանց հրէական կրօնը և լնգունել հայոցը: Հայոց  
Վաղարշակ թագաւորի օրօք այս ցեղի մէջ երեւելի  
էր ոմն Բագրատա, որի անունով և նրա յեղը ան-  
ւանեցաւ Բագրատունեաց:

Երբ Վաղարշակը եկաւ Հայաստան թագաւո-  
րելու, այս Բագրատար առաջին ողջունողն էր նրան  
իբրև թագաւորի և բացի բազմազան ընծաներից՝  
իր մէկ ու նար ազնիւ աղջիկն էլ կնութեան տը-  
ւեց նրան: Սրա փոխարէն թագաւորն իր աներ Բագր-  
ատաին թագաղիր և ասպետ ընտրեց հայոց մէջ,  
որը յետոյ տոհմական դարձաւ:

Այստեղ աւելորդ չի լինի յիշել Աստուծոյ  
տւած խոստումը Սբրահամին.—թէ թագաւորը  
՚ի քէն ելցեն, ոչ միայն ՚ի մէջ հօրացէլի, այլև ՚ի  
մէջ ալլոց ազգաց.—(որպէս և ՚ի Հայոց՝ նախ Սա-  
շակունիք՝ ՚ի Քետարայ և ապա Բագրատունիք):

Հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու  
(խոստովանող, Աբլաբաս) օրօք և յետոյ էլ նրա որ-  
դի Աշոտ իշխանը—ապա առաջին թագաւորը—

Նստում էր մերթ Անի քաղաքում, մերթ Երազգաւորս աւանում, որ է Շիրակաւան՝ ՚ի Շիրակ գաւառի. իսկ թագաւոր դառնալուց յետով, փոխում է արքայական գանձը Ախուրեանի ափերում ընկած Բագարան քաղաքը: (Երուանդ Բ. կառուցած:)

Գարնանային գեղածիծաղ առաւօտներից մէկն էր: Շիրակին այնքան յատուկ վտղորդեան հովասուն գեփիւուր հանգարտ շււալով՝ թռչում անցնում էր Ախուրեանի սիզաւէտ և երանդ-երանդ հովիտներով և չարագուշակ բուի նման ինչ որ շշնջում իր ափերին. ապա ստահակ հոսանքով վեր թռչուտում, Բագրատունեաց ապարանքների հոյակապ պատերին զարնւում, մնչիկ հառաչանքներ արձակում, ներս վազում նրանց բազմաթիւ անցքերից ու անհետ հալւում, կորչում նրա հազարաւոր բռւրմունքներով լի ծփացող միջավայրում: Ապարանքներից մէկում մտայոյգ լռութեամբ նըստել էին երկու հոգի և Ախուրեանի պղտոր շրերին ակնապիշ եղած՝ խորին թախծութեամբ մոռացութեան էին տեղ իրանց շրջապատը: Դրանցից մէկը մի միջին տարիքաւոր մարդ էր, որի խոռուն և առնական գէմքը զգալի փոփոխութեամբ կրում էր իր վրայ չարաբաստիկ ժամանակների թռղած հետքերը իրանց խորշօմաղին ակօսներով: Նա լստ երեսութին ամբողջ զիշերը ինչ-ինչ ծանրաշունչ խոռերով երեւած՝ այժմ տանջում էր քնէածութեամբ. մերթ-մերթ յօրանչում էր, երկու

թխամորթ ձեռքերով երեսը բռնում, արորում, ապա վերստին խորասուգւում իր մտածութիւնների գիրկը: Նու տակաւին չէր հագնւած, այլ անտարբեր կերպով սփածւած էր մի նուրբ վերարկուի մէջ, որը գրեթէ աւելում էր յատակը, երբ նա վրդովագին քայլերով շրջագայում էր սենեակի մէջ: Նրա կիսաալեռը գանդուրները անպարկեշտ ձեռվ սփաւած էին նրա գունաթափ այտերի վրայ և ծածանւում էին մինչև հարուստ թիկունքի կէսը: Ազ ճկութի վրայ շրջողում էր նրա իշխանական մասանին:

Դա Սմբատ Բագրատունին էր, հայոց սպարապետը:

Նրանից ոչ հեռու շքեղազարդ գահաւորակի վրայ բազմած էր մի առոյդ կազմւածքով երիտասարդ, որի արտաքինը շատ նձան էր առաջինին: Նրա բարձրահասակ և փայելչակազմ իրանը, սեռակ աչքերը՝ սև գիսակների, նրա թարմ և փարզագոյն երեսի հետ մի անշրպետ էին կազմում հօր և որդու մէջ:

Դա Աշոտ իշխանն էր՝ Սմբատ Բագրատունու որդին, որը նոր էր զարթնել և առանց հագնւելու, սփածւած էր նոյնպէս մի նազուկ վերարկուի մէջ:

Որդու զէմքը նոյնպէս ներքին փոթորիկների ալէկոծումից երերւում էր, աչքերը վառվում էին յուսահատութեան բարկ կրակով, որը ասես մերթ ընդ մերթ մարւում էր, ապա ներքին մրրկածուփ ալիքների խոռվայոյգ ալէկոծութեան տակ՝ մի առանձին թափով վերստին բռնկւում և խոռվագին

կերպարանք տալիս նրա տանջւող երեսին։ Նրա հայրը այդ գիշերն էր հասել որդու մօտ այդ ապարանքը, որը Անիի բարձրաւանդակների վրայ խնամատար աչքերով հսկում էր իր առաջ փուլած քաղաքի անժիւ ու անհամար շէնքերին։ Դա Բագրատուննեաց իշխանների, ապա գահակալների պալատն էր, որի սենեակներից մէկում առանձնացել էին հայր և որդին։ Սենեակը մի բնդարձակ առանձնասենեակի նմանութիւն ունէր, ուր կերպասեայ գահաւորակները ոսկեթել բարձերի և բազմաձեկի զէնքերի հետ ուշադրաւ տեղ էին բրոնում. ամեն ինչ ծփում էր փարթամութեան մէջ և շացուցիչ տպաւորութիւն թողնում նայողի վրայ։ Սակայն այդպէս չէր այդ օրը. այդ օրը սև թախիծի վշտարեկ կնիքը մի առանձնակի գոյնով նրշմարւում էր և նրանց տէրերի և նրանց միջավայր կազմող իրերի վրայ։ Վերջապէս, հայրը գարձաւ գէպի որդին մի այնպիսի ծայնով, որի խոռված ելեէջերի շեշտերից լսում էին միայն ու միայն տրտմագին նօտաներ։

— Գիտե՞ս, Աշոտ, Երբ այդ խոռվագուժ բանակը ոտք է կոխել մեր անբազդ հայրենիքը և ամեն տեղ իր աւերիչ սուրն է շարժում, մեղ ի՞նչ է մնում անել։

— Հայր, ձեր այսօրւայ այդ լուրը միանգամայն տակ ու վրայ արեց իմ սիրտն ու հոգին և ես տակաւին նրա մասին եմ խորհում ու տանջում. իսկ թէ ի՞նչ պիտի անել մեղ. — զրա վրայ ժամանակ էլ չեմ ունեցել ուշ գարձնել անդամ։

— Այդպէս, զաւակս, ապարդիւն տանջանքներ, մտալոյզ խոհեր մեզ աժմեան պայմաններում նպաստեցուցիչ ոչինչ չեն կարող տալ։ Գիտե՞ս, որպի՞սի սոսկալի եղերնազործութիւններ են կատարել նրանք Տարօնի գաւառում։ Երբ լիշում եմ այդ, ամբողջ էութիւնս փշաքաղւում է։

— Ես տակաւին նշգրիա տեղեկութիւններ չունեմ Բուզայի կատարած գաղանութիւնների մասին, սակայն ենթադրում եմ թէ՝ ի՞նչի է ընդունակ գործելու մի խոռվագուժ ազգի, նոյնքան խոռվագուժ առաջնորդի ըմբոսացած ոգին։

— Նո սրախողող է արել Սիմ լերան այն խաղաղ բնակիչներին, որոնք բնակւում էին այդ լերան գիւրամատչելի լանչերում. ամբողջ այդ երկրը ասպատակել, հրի և սրի ճարակ գարձրել, իսկ պատրիկ Բագրատի որդիներին՝ Աշոտին և Դաւիթին՝ Մամիկոնեան Գրիգորի հետ շղթայակապ է արել և, ըստ երեսոյթին, ամիրապետին պիտի ուղարկէ։ Նրանց հետ շղթայակապ են արւած և Տարօնի երեկիներից շատերը։

— Այս, հայր, ողբալի կը լինի մեր գրութիւնը, եթէ Բուզան իր զօրաբանակով առաջ խաղալ գէպի մեր երկիրը։

— Անշուշտ աւելի քան ողբալի կը լինի. սակայն ես խորունի համոզւած եմ, որ գիմազրել մեր քայլքայւած լոժերով՝ մէնք անկարող ենք նրա բազմաթիւ բանակին, ուստի մեղ մնում է խորամանկ և ճարպիկ ձեւերով զրաւել նրա սէրը և հաճոյա-

նալ նրան, որով թերեւս փրկել կարողանանք մեր հայրենիքը մօտալուտ վասանգի սպառնալիքներից:

Մինչ հայրը և որդին այսպիսի խորհրդածութիւնների մէջ էին ընկած, ներս մտաւ մի մատաղահաս օրիորդ, որը սիգաճեմ քայլերով մօտեցաւ թագրատունեաց սպարապետին և նրա պարանոցով փարւեց:

— Սիրելի պապիկ, հէնց այժմ զարթնեցի և, լսելով ձեր ծայնը, տուանց պատշաճ կերպով թռայ ձեզ մօտ ձեր ձեռք համբուրելու. մի՞թէ զիշերն էք հկել.

— Է՛ս, իմ Մարեմ ջան, դու շատ վաղ ես զարթնել. երեխ Ախուրեանը իր միատեսակ խրշշոյով զիշերները անդորրութիւն չի տալիս քեզ Քնի՛ր, քնի՛ր, որ արագ աճես: — Այս ասելով Սմբատ Բագրատունին գրկեց նրան և լի հայրական գուրգուրանքով համբուրեց նրա աչքերը: Մարեմը մի գեղեցկատեսիլ չնաշխարհիկ յաւերժահարսի էր նրամանւում, որը ասես զիտմամբ էր ալդտեղ աճապարել սիրելի պապի և հօր վշտերը փարատելու: Դա Աշոտ Բագրատունու գուստըն էր, որը նոր էր մտել կեանքի գեռափթիթ շրջանը: — Նրա նոնի հասկը իր տարիքից վաղ էր աճել և իր վայելչագեղ կազմւածքով և հրապուրիչ էր և՛ զեղանի:

Նրա բոցավառ և չընաղ դէմքը պապի անակընկալ գալստեան առիթով աւելի զուարթութիւն էր ստացել, թէև այդ հրեշտակալին զուարթութեան մէջ նշմարւում էր մի ներքին կրակ, մի խուլ հնոց, որը օրէցօր ալրում էր նրա սիրալ և որը

յատուկ է նրա հասակին և սեռին: Աքօղել ալդ կրակը նման ցնծութիւններով, որով այդ առաւոտ ծփում էր նրա սիրոր պապի գալու առիթով, լաճախ նա անկարող էր: Նրա սեռակ և խոշոր աչքերը իրանց երկարաւուն թերթեանուքներով յանախ մատնում էին նրան. նրանց մէջ առաջին սիրոյ հրալին կնիքը թողել էր իր երկնային սրբասուն անջինչ հետքերը և նրանցից առաջ եկած լուռ ու մունչ վիշտը, որը գաղանի սիրոյ անբաժան ընկերն է նման սրտերի այս ու այն խորշերում թաղւած: Եւ այդ սիրոյ ու վշտի ծանրազին հարւածների տակ գարձեալ հրաշագեղ էր Բաղրատունեաց տոհմի այդ չնաշխարհիկ արարածը, որը այդ երկու հակառատիկեր զգացմունքների ալէկոծութեան րոպէներում մի խոռված զիցուհու էր նմանւում: Այս, զեղեցիկ էր Մարեմը: Նրա սեռն և հարուստ զիսակները՝ զարդարւած գոյնզոյն գոհարներով և ոսկեհիւս թերուով մի շացուցիչ փայլ էին տալիս նրա ծփծփան վարսերին, որոնք սե-սե ալիքների նման անդադար երերում էին նրա փարթամ թիկունքի վրայ և սրօգում յանդուղն հայեացքներից նրա մարմարեայ պարանոցը, որը սպիտակ ծիւնի նման մերթ ընդ մերթ նշմարւում էր նրա սեռաթոյր զիսակների տակից, երբ նա շարժում էր իր զեղանի զլուիր: Ոսկեալ գնդերը իրանց վառվուն ակներով մի շրլացուցիչ կրակով մերթ ընդ մերթ ապշեցուցիչ փայլ էին տալիս նրա հրեշտակալին երեսին, որին ոչ նւազ նպաստում էր և փառաւոր կրծքի գոհա-

րազարդ մանեակը. հոլանի բազուկները աւելի քան  
գրաւիչ էին և զարգարւած ազգի-ազգի ականա-  
կուռ հուլունքներով: Նրա վարդագոյն վերնազգես-  
տը երկար և յուշիկ ալիքաւոր ծալքերով իջնում  
էր մինչև ոտները և ծածկում նրա ոսկեհիւս մա-  
շիկները:

— Այ, տեսնում ես, սիրելի Մարեմ, դու  
զարմանում ես իմ անակնկալ զալստեան և մեր շը-  
փոթութեան վրայ. բայց չէ որ մեր հայրենիքը  
տակն ու վրայ է լինում հազարացիներից, որոնց  
հզօր զօրաբանակը առաջնորդում է Բուղա ոստի-  
կանը, իսկ եթէ որքան անողոք և ժանտաբարոյ է  
նա, ալդ յուց են տալիս նրա կատարած գործերը:

— Սիրելի պապիկ, միթէ հէնց դրա համար  
է ձեր շփոթութիւնը. չէ՞ որ հայտառանն էլ ունի  
իր կորիչ դաւակները, որոնք հայրենիքի սէրը դե-  
րադասել գիտեն երկրացին ամենաթանկագին վայելք-  
ներից, և հայրենիքի ալդ արիագոյն դաւակները  
միթէ անկարող են Բուղալի զօրութիւնը շատե-  
լու:

— Էհ, Մարեմ, ի՞նչ նոր գիւտեր ես անում  
ինձ համար, ալո՞ւ, ճիշտ է մենք ունենք քաջերի  
մի ստւար բազմութիւն. սակայն ցաւօք սրտի  
դրանք տակաւին չ'են ծուլւած մի հոգու և մի  
մարմնի մէջ: Դրանք չ'են շնչում մի շնչով, դրանք  
չ'են շարժում մի հոգով: Այդ բաւական չէ. նրանք  
իրանք են իրանց ոլժերը շլատում: Միթէ քո յիշո-  
ղութիւնը դաւածանել է քեզ՝ չէ՞ որ զեռ երեկ էր,  
ինչ մեր դժբաղդ հայրենիքի երկու հզօրագոյն սիւ-

ները՝ Սիսականի և Սիւնեաց տէրերը՝ իրանց երկ-  
րի լեռներում արեան զետեր էին հոսեցնում հարա-  
զատների արիւնից. միթէ չես յիշում, որ Սիւնեաց  
առիւծը՝ Գրիգոր—Սուփանը, զո՞հ զնաց ալդ եղ-  
բայրասպան պատերազմներում, և նրա երկիրը նւա-  
ճեց Սիսականի տէրը՝ Բաբկէնը, կարգելով Սուփա-  
նի մեր Գաբուռ—Վասակին տէր իր Սիսական դա-  
ւառներից մէկում:

Միթէ Վասակը կը մոռանայ իր հօր ողբեր-  
գական մահը. չէ՞ որ վազը կամ միւս օրը դարձ-  
եալ կը բռնկւի մի և նոյն եղբայրասպան պատե-  
րազմը, և այսպէս անվերջ: Միթարական կը լի-  
նէր մեր վիճակը, եթէ միմիայն դրանք լինէին:

Մինչ պազը խօսում էր Վասակի մասին, Մա-  
րեմի սիրտը սուր-սուր բաբախմունքով սկսեց  
երեւել, և այնտեղ թաղւած վառ հնոցը բռնկւեց  
ալդ սրտերին յատուկ բոցերով, որը վայրկենաբար  
ալլալեց նրա չքնազ գէմքը: Հայրը և որդին նշմա-  
րեցին նրա զղաձղական ցնցումները, բայց ալդ վե-  
րագրեցին նրա զգայուն նիարդներին, որոնք իրը՝  
անկարող եղան անտարբեր մնար, լսելով հայրենիքի  
մօտալուտ վտանգը: Սակայն Մարեմի ներքին ալե-  
կոծումը, նրա հոգեկան բարկ խոռվութիւնը կապ-  
ւած էին նրա սիրելիի անւան հետ: Եւ ալդ  
անունը բոպէաբար անցաւ նրա մարմնի ամեն մի  
երակով և մի սուր թափով տակն ու վրայ ա-  
րեց նրա հոգեկան աշխարհը, բարձրացնելով այն-  
տեղ հուժկու փոթորիկների ահագնադղորդ մի ծը-  
փում: Եւ ալդ խոռված դիցուհին իր ամբողջ

էութեամբ սլացաւ զէպի իր Գաբուռը՝ բաց անելու նրա առաջ իր սրտի անհուն սէրը, որի առաջ փշրւում է մարդկալին հոգու արիութիւնը, որի առաջ փշրւում է և ինքը՝ Մարեմը. բայց որբան փշրւում էր այդ հրեշտակալին հողին, այնքան առաւել անյագ ծարաւ էր զգում այդ սիրոյ մէջը: Եւ նա շնչում և ապրում էր այդ սիրով:

Այդ է անարատ և անկեղծ սիրոյ չերմ պահնչը

#### IV.

Բազմաթիւ զօրքերով Բուղա ոստիկանը նախ իր սարսափի թոյնը թափեց Տարօնի բնակիչների վրայ, որոնցից շատ քչերին լաջողւեց փրկել իրանց զլուխները: Իսկ ձեմամանութիւնը ընկաւ նրա արիւնարբու սրից: Երկիրը ասպատակութեան ենթարկեց, նրա հրօսակախմբերը ամեն ինչ տակն ու վրայ արին այդ տարաբաղդ երկրում: Բազրատունի պատրիկ Բազրատի երկու որդիներին՝ Աշոտին և Դաւթին՝ Մամիկոնեան Գրիգորի հետ շրջթալակապ ուղարկեց ամիրապետին:

Ալսպիսի անողոք հարւտճների ենթարկւեցին և Սիմ լերան բնակիչները, որոնք սպանել էին Յակուտէթ ոստիկանին: Սիմ լերան այդ անվեհեր զաւակները, լսելով հազարացոց զօրքի զործած սրտամաշ անգթութիւնների ձասին, փութացին համախմբել իրանց կտրին բազուկները և լցւելով

այդ երկրի խուլ ու մութ կիրճերը, ամեն ըոպէ և ամեն ժամ լարւած գրութեան և սարսափահար տագնապի մէջ էին պահում հագարացոց վայրագ զօրքերին, հարւածելով նրանց ստէպ-ստէպ իւրաքանչիւր բարեբաղդ ըոպէներում: Վերջապէս, նրանք այնքան ստահակութիւն ունեցան, որ վճռեցին իրանց ապաստանած խուլ ու անառիկ մութ վայրերից վայր իջնել. այդ ժամանակ միայն հագարացոց զօրքը կարողացաւ լուծել իր թունալի վրէժը. նրանք շրջապատեցին այդ երկրի, այդ ամենայանգուգն զաւակներին և կոտորեցին նրանց անխրնայ, իսկ լոլով երեկիներին տոռներով կապած՝ տարան Բուղայի մօտ, որը նրանց առաւել աչքի լնկնողներին և ամենագեղեցիկներին տեղ պահեստի, որ ապագալում առաջարկի ընդունել իրանց կրօնը: Եւ այսպէս ամենայն տեղ:

Հայոց նախարարներից մեծամասնութիւնը, որը փութաց իր հլու հպատակութիւնը լայտնելու թուղալին, որը առանձնացաւ իւրացինների հետ իր անառիկ լեռների նոյնքան անառիկ ամրոցները և անփոյթ անտարբերութեածք զոցեց իր ականչները, որ չը կարողանալ անսալ իր տարաբաղդ ժողովրդի աղիողօրմ մըմունչները, որոնք ամեն ժամ, ամեն ըոպէ արծագանք էին տալիս հայրենի երկրի անպաշտպան շէներից. որոնք զրեթէ լողում էին արեան զետերի մէջ: Երկիրը անզլուխ էր, և առաջ-ւողը, տուժողը՝ թշւառ, անպաշտպան զեղուկն էր, որի սրտաշարժ ճիչը, աղեկտուր մորմոքները լա-նախ ամենաթոյլ վրդովմունքի նշաններ տնզամ

չեին առաջ բերում իրանց մի ժամանակ տէրերի գէմքի վրայ, որոնք միայն խաղաղ ժամանակներումն էին երեան հանու մ իրանց տիրական գաւազնը և նրա հումկու շարժումներով մերթ գոփում էին նրանց և մերթ նրա ապօրինի հարւածներով զգացրնել աալիս նրանց իրանց ոլժը և իրանց իշխանական իրաւունքը: Այժմ այդ բոլորը չքացել էր. այժմ բոլորը տեղի էր տեղի մի աւելի վայրագ անդմութիւնների, ուր գազանացած ոլժը, արիւնձարաւ, անսանծ կիրքը առաջնորդող դեր էր կատարում:

Կային և այնպիսի նախարարներ, այնպիսի իշխաններ, որոնք իրանց հոգու անկեղծ էութեամբ ողբում էին հայրենիքի կրած ամենախորունկ վիշտը և սոսկալի տառապանքը. սոսկայն սրանք էլ իրանց քայլայւած ոլժերով միայնակ անկարող էին դէմ յանդիման կանգնել հաղարացոց զօրքի առաջ և ճակատ առնակատ շարժել իրանց նիզակները: Այսպիսիները օժանդակիչ ոլժերի էին կարօտ զգում: Եւ այնպիսի ոլժեր բազում էին Հայաստանի այս ու այն ամենահեռաւոր վայրերում. տարաբազզարար, սրանք էլ օգնութեան ձեռք մեկնել չը զնուէին միմեանց:

Այսուեղ էլ հային յատուկ անմիութիւնն էր իր ապանդակ զլուխը ցցել: Եւ այսպէս, հադարացեք՝ շնորհիւ երկրի այգափիսի անիշխանութեանը առանց արգելքի ողողեցին այդ տարաբազդ երկիրը իր հարազատ զաւակների արեան մէջ:

Երբ այս լուրը ածենացնցող փութկոտութեամբ

տարածւեց Հայաստանի խորքերը և հասաւ Վասպուրականի Արծրունի Աշոտ իշխանի տկանչին, նա կատաղեցաւ զարութի զառն կրակով և պատրաստւեց իր զօրքերով գէմ յանդիման ելնել Բուղային և իր ու իր կարիքների բազկի ոչժերով պաշտպանել հայրենիքի ոտնակոխ արւած պատիւր:

Այդ ժամանակւայ հայկազն իշխանների մէջ Աշոտ Արծրունին պատկառանքով տեղ էր վայելուն և ունէր քաջ և ուազմիկ զինւորի բազմահնար համբաւ, որի անունը յահախ ահ ու զող էր ազգում իր հակառակորդների վրայ: Բուզան իր Ժիրաք անունով զօրապետին ուղարկեց այս Աշոտի վրայ, որը իր նախարարների հետ տմբացաւ Նկան ամրոցը:

Երբ նրա նախարարները ստուգ բմբոնեցին Աշոտի գիտաւորութիւնը, հրաժարւեցին օժանդակութիւն ցոյց տալ նրան. և ծածուկ թուղթ զրեցին Բուզային. բայց սա պահանջեց, որ Աշոտին կենդանի իրան յանձնեն: Իսկ ինքը Աշոտը միայնակ իր ոլժերով անկարող եղաւ հաղարացոց առաջ ելնել: Գտնւելով այդպիսի անելանելի զրութեան մէջ, նա լցւեց անհուն դաւանութեամբ. նրա հպարտ, Արծրունիների տոհմին յատուկ վսեմ հոգին, ընկճրւեց չարաբաստիկ հանգամանքների առաջ, և նա բարեյացող էլք էր վինդում փրկել իր երկիրը թրշնամու աւերածութիւններից: Երկար նա այս ու այն տեղ ընկաւ փոքր ինչ նպաստեցուցիչ միջոցներ ձեռք բերելու և ժամանակ դանելու, սակայն

բոլորն էլ ապարդիւն. ոչ ոք չէր ցանկանում օգնութեան ծեռք տալու նրան, և նա, ինչպէս և շատերը, վճռեց հնազանդութիւն ցոյց տալ նրան։ Այդ պատճառով բազմազան թանկագին ընծաներով և դրաւիչ պարզեներով ուղղերւեց Բուղալի բանակը։ Մի քանի տիւ ծանրատաղտուկ հանապարհորդութիւնից յետոյ, վերջապէս, նա հասաւ այն տեղ։ Բուղան իսկոյն և եթ հրաման արձակեց իր առաջ բերել նրան։

— Վասպուրականի տէր, այս ուր էիր. մի՛թէ այժմ լսեցիր մեր գալուստը. չէ՞ որ ահա մի տարի է ի՞նչ ես և իմ անցաղթ զօրքը արիւն ենք հոսեցնում ձեր երկրում. մի՛թէ գուք այդքան բութ հոսոտելիք ունէք, որ չէր զգացել այդ արեան գարշահոտ նենձերոցը. մի՛թէ ձեր ականջները այդքան խուլ են, որ մեր հայ կանանց և մանկանց նիշն ու աղաղակը չեն հասել ձեր ողորմելի ուղեղին։ Բայց չէ. այդ բոլորը գուք դիտէիք, միայն ցանկանում էիք մեր բազուկներով վախճան տալ այդ բոլորին. Ծերես այզպէս էլ լինէր, եթէ մեր նախարարներն էլ ձեզ նման անխելը յանդգնաւթեան հետեւէին։ Իսկ այժմ, երբ ամեն տեղից յիմարք գոյն յոյսդ արրւած է, կամեցար այս ընծաներով որսալ իմ հաւատը. ոչ, այդ պարզեներից շողերը շացնել անկարող են Բաղդատի զաւտկների փարթամ հողին։ — Նկատեց նրան Բուղան արհամարական ժալիար երեսին։ Աշուտ իշխանի համար անսպասելի էին այդ հարցերը։ Նա իսկոյն ըմբռնեց Բուղալի հարցերի իմաստը և պատասխանեց նրան։

— Բուղա, ես, այս, ճիշտ է, զիտէի ձեր գալստեան մասին, գիտէի, որ եկել էք ձեր վրէմբը լուծելու. ստկայն այդ ոչ մի առնջութիւն չ'ունէր ոչ իմ և ոչ իմ երկրի հետ։ Եթէ ես հաւատացած լինէի, որ գուք բացի Սիմ լեռնից՝ զայրացած էք և մեր երկրի գաւառների մէկն ու մէկի վրայ, առաջինը կ'աճապարէի ձեր բանակատեղին ձեր հզօր սիրտը մեղմելու։ Իսկ թէ ես միտումներ եմ ունեցել իմ նախարարների հետ գէմ յանդիման ելնել ձեզ, մի՛թէ, այդ արհամարանքի է արժանի. չէ՞ որ իւրաքանչիւր իշխան պարտական է հոգալ իր հը պատակների մասին ալնպէս, ինչպէս հարազատ որդեսէր հայրը՝ իր զաւակների մասին։ Իմ ընծաներով ես ցանկութիւն չ'եմ ունեցել շացնելու ձեզ, այլ իմ յարդանքը արտայալակու, նոյնպէս և իմ հնագնդութիւնը։

— Սպէ բոլորը այն ժամանակ միայն պարտ ու պաշշամ նշանակութիւն կ'ունենար իմ առաջը, երբ գուք դիմած ըրլինէիք որոգալթների, որոնց կամենում էիք լարել իմ դէմ։ Ստկայն մեծ է Ալլահը. Նա զիտէ փրկել իր զաւակների և զօրքի պատիւր։ Դու ինքդ ես կրկնում ինձ երես առերես թէ՝ իւրաքանչիւր իշխան պարտական է պաշտպանել իր ժողովրդի և իր երկրի շահերը։ Միթէ գուք ինքներդ յարգում էք այդ ժողովրդի շահերը։ Ոչ և ոչ..

— Բուղա, ես կրկնում եմ վերսախն, որ եկել եմ հնազանդութիւնս ձեզ յայտնելու և ցանկութիւն էլ չ'ունեմ մեր տարաբաղդ երկրի և ժողո-

վրբի շահերի մասին խոկալու, երբ այդ արդեն ուշ է: Եթէ անգութ ճակատագիրը մեղ ժպտար, մենք կանխապէս հոգած կինեինք այդ բողոքը և այն ժամանակ...

— Այն ժամանակ արդելքներ կը լարէիք մեր դէմ ձեր երկիրը մուտք չը գործելու համար. չէ՞ ինքոց ցանկութիւն չ'ունես խոկալու այժմ ձեր երկիրի շահերի մասին, սակայն ես կը հարկադրեմ ձեղ այդ ասելու: Սիրում էք այդ ժողովրդի, այդ երկիրի շահերը:

— Անշուշտ, սիրում եմ:

— Շատ բարի, եթէ սիրում էք, ես յանուն այդ ժողովրդի շահերի պաշտպանութեան առաջարկում եմ ձեզ՝ ուրանալ ձեր կրօնը և դարձ գալ մեր զինին: Եթէ ոչ, այդ երկրում, որի անունից խօսում էք, քար-քարի վրայ չի մնայ: Ընտրեցէ՛ք երկու չարեաց փոքրադոյնք՝ կամ ուրանալ ձեր սին կրօնը և ընդունել մերը, կամ դոհել ժողովրդի շահերը:

— Բուղա, ես այդ երբէք չ'էի սպասում ձեզանից. սակայն այժմ էլ թէե ականջներս լսելու դժբաղութիւն ունեցան, բայց և այնպէս հաւատալ անկարող եմ և նայում եմ ձեր առաջարկութեան վրայ իրու լոկ փորձութեան վրայ:

— Ես երեխաներին փորձել չը գիտեմ. նրանց ես միմիայն խղճահարւել և ճշմարիտ ուղին ցոյց տալ կարող եմ, որը և այժմ անում եմ ձեզ հետ վասպուրականի իշխանի աչքերում վայլատակեց բարկութեան ահեղ հուրը, և նա ուղիղ ոստիկանի

աչքերին յառելով իր զարութով լի հայեացը, պատասխանեց նրան:

— Բուղա, ես այժմ ձեր անողոք ճիրաններումն եմ. սակայն երբէք միամատութիւն մի ունեցէք, որ ես թոյլ կը տամ ձեղ վարելու հետա ըստ ձեր կոյր հայեացողութեան և խելու, յափշատկելու ինձանից այն, որը մահից յետոյ էլ կարող է անքիծ և անարատ կերպով պաշտպանել իմ իշխանական պատիւը: Իմ ժողովրդի շահերի համար ես չեմ խնայի նրան կեանքս անգամ. սակայն, եթէ այդ չարատաւոր է Սրծրունեաց տոհմի անունը և քարշ չը տայ իր ետևից Վարսպուրականի ամբողջ խուժանը: Այս, եթէ ես, այդ գժբաղդ երկրի տէրը, ուրանամ իմ նախնիքների հաւատը և դաւանանեմ նրա նվիրական սրբութիւններին, այն ժամանակ համար Վասպուրականը և թերեւս մեր դրացի ազգայինները հետեւն իմ օրինակին: Դուք շատ խելացի էք ըմբռնել ձեր զերը՝ վկիցն էք բռնում ձեր նպատակին հասնելու. սակայն այդ զլուխն էլ անքան թեթեաբարոյ չէ նա գիտէ, որ իր ետևից մի ամբողջ մարմին կալ, որին և անհրաժեշտ է փրկել: Եթէ եք հաւատացած լինէի, որ իմ մահով իմ պաշտած հայրենիքը փրկւած կը լինի, ոչ մի վայրկեան անգամ չ'էի յապաղել այդ ի կատար ածելու: Բայց ուրանալ հայրենի սրբութիւններն ես անկարող եմ:

— Նուազի զու խելքի կը դաս և կը սարբանաս քո յամառութիւնների մէջ. հագարացոց եր-

կաթի շղթանները քեզ զգաստացնելու բնդունակութիւն կունենան. նրանք քո փակւած աչքերը բաց կ'անեն՝ հարկ չը կայ աճապարելու:

— Զեր մանկական բոհմունքները անկարող կը լինեն ձեղ, Բուղա, ձեր լպիրշ և անարդ նպատակներին հասցնելու: Արծունեաց զաւակները իրանց հայրենիքի շուր և պարծանք կազմող վաղեմի աւանդութիւնները չը զիտեն ոտնակոխ անել. այդ հինաւուրց աւանդութիւնների իւրաքանչիւր քար ու թուփը կրում է իր վրայ նրանց նախնիքների նւիրական հետքերը, որոնք հազարաւոր խոռվ ու մուժ անկիւններից լեզու կառնեն՝ անէծք և նղովք շնչալու ձեղ, եթէ երբ և իցէ մենք ուրաննք նրանց դարաւոր անրիծ պահւած սրբութիւնները: Ծանր է ինձ համար հանել «դաւաճանի» անարդ անւան տակի:

— Կապեցէք, տղամէք, այդ լողորդախօս ցնորւածին:

Վայրկենաբար նրա հրամանը կատարւեց. նոյն վիճակին ենթարկեցին և նրա կինը, որդիները և աղջականները, որոնց նոյնպէս շղթայակապ հրամացեց առանց յամեցնելու առաքել ամիրապետի ժոտ: Եւ այսպէս, տարաբաղդ Վասպուրականի տէրը իր զերդաստանի հետ շղթայակապ եղած՝ սրտի խորին դառնութեամբ թողեց հայրենի երկիրը, ուր նրա իւրաքանչիւր քար ու թուփը սերտ կտպերով էր կապւած նրա վաղեմի յիշողութիւնների հետ:

Սրանից յետով Բուղան լի կատաղութեամբ

իր զօրքերով առաջ խաղաց և անցաւ Վասպուրականը, ուր հրամայեց շղթայակապ անել ամեն մի զէնք կրող ընդունակ անհատի: Զերբակալւածներին ըստ պատւիրանի Բուղալի՛ հագարացիք բաժանեցին մի քանի մասերի, որոնց աւելի վայելագեղ կերպարանք ունեցողներին և քաջերին անշատելով միմեանցից՝ շղթայակապ պահեցին. իսկ մնացած հասարակներին, որոնց թիւ ու համար չը կար, սրի նարակ զարձրեցին, որոնց զիտակներով կրեթէ լցւեցան Վասպուրականի խոր-խոր ծորերը, և հեղեղի նման հոսող արիւնը, զետեր կազմելով, ոռոգեց այդ դժբաղդ հողը:

Սպաս սկսեցին կալանաւորներին բռնադատել որ նրանք գառնան իրանց օրէնքից. Երբ այդ զբաղլները հետեւեցին իրանց իշխանի օրինակին և հաստատակամ մնացին իրանց հաւատի մէջ, նրանք սկսեցին աանշել նրանց և սրախողող անել: Եւ այդպէս, գաղանացած ոյժը ամենուրեք իր բռնապետական իրաւունքները առաջ ասարաւ, կարծանելով այն ամենը, ինչ խոչընդուն էր հանդիսանում իր վայրագ նանապահի վրայ: Մի քանի այսպիսի աղեկառուր տեսարաններից յետոյ, ամեն տեղ տիրեց մեռելացին լոռութիւնը: Սակայն մերթ-մերթ այս ու այն հեռաւոր խոռվ լեռնալանչերից և մշուշապատ խոր-խոր ծորերից լսւում էին հեծկտանքի մրմունչներ. զա այն կենդանի մնացածների հառաջանքներն էին, որոնք արծագանք առած՝ ողբում էին իրանց տարաբաղդ հայրենիքի խորագին վիշար: Հայրենի երկրի կիրճերը, խաւարապատ խոռոչները սիրա-

լիր ասպանչակութիւն էին տւել իրանց հարազատ և  
տարագրեալ զաւակներին, որոնք մի կերպ փրկել  
էին իրանց անտէր գլուխները թշնամու սրից:

V.

Մռայլ միգաշաղ թուղպերով սփածւած էր  
ծերուկ Մասիսի գագաթը: Հայաստանի վաղանցուկ  
փառք ու պֆրանքն, ծով աղեկտուր վշտերի և  
ծանրաշունչ դաժանազին անցքերի անսասան վկան  
այդ օր ասես անփոյթ անզգայութեամբ սքօղել էր  
իր խորշոմախոր, արծաթափայլ երեսը, և ծանրա-  
տաղտուկ լոռւթեամբ գոցերով իր վշտալի աչքերը,  
մրափում էր խորափին մշուշով: Զրնայած, որ Ա-  
րարատեան դաշտին յատուկ հրաշունչ արել արդէն  
զգալի բարձրութեամբ արտաքս էր բերել իր ոս-  
կեճաճանչ գէմքը Գեղամայ լեռներից. սակայն այդ  
երկրի յարատե պահապան ծերուկը տակաւին չ'էր  
ստահակում բաց անել իր գժեզոյն երեսը և գորո-  
վագութ մօր նման գիտել թէ՛ ինչ է իրագործւում  
իր ստորոտներում: Նա անարակոյս գիտեր այն  
ամեն չարաբաստիկ եղելութիւնները, որոնք սառնա-  
րիւն փութկոտութեամբ և եղերական անխնայ  
հարւածներով կտարւում էին դժբաղդ Հայաստանի  
հողի վրայ: Նա գիտեր, որ այդ հողը զաղանալին  
լի հակումներով բռնկւած պիղծ ծեռքերով ոռոգ-  
ւում է ծայր՝ ի ծայր իր հարազատների անմեղ ա-  
րիւնով: Նա գիտեր, որ այդ անմեղ զոհերի լճացած

արիւնը շառագունած ալիքներով ծփում է թշւառ.  
Հայաստանի սեաւոր հողի վրայ և ամենուրեք ըշ-  
տի արցունքներ է քամում իր հարազատ զաւակ-  
ների աչքերից: Անտարակոյս՝ նա գիտեր այդ ա-  
մենը. սակայն նրա վիրաւոր սիրտը այլես անկա-  
րող էր գիմանալ այդ բիւրաւոր ողբերգական տե-  
սարաններին, որոնք ցնցող տպաւորութիւն էին  
գործում նրա վրայ: Իսկ գեղարքունեաց աշխարհի  
հովասուն զեփիւոր իր միապաղադ մեղմագին շոո-  
ցով ասես խորունկ վշտի օրօրներ էր մրմնջում նրան  
և առաւել ևս տիրապետող գարծնու մ Մորփէսոի  
կապանքները, որոնց սրտամաշ օզակները կոշտագին  
ընդդրկել էին նրան իրանց թմրեցուցիչ նիրաննե-  
րում: Մերթ ընդ մերթ նրա նազելի հոսանքին  
ընդխառնւում էին Նիրակի լեռների ցրտաբեր հող-  
մերը, որոնք խափանածոյ ճչոցով խանդարում էին  
նրա օրօրների ներդաշնակ մրմունչը և գինարբու  
կատաղութեամբ զարնում նրա ալեոր գաղաթին,  
որից յետով վիրաւոր ծերուկը վայրկենաբար բաց  
էր անում իր խռովւած գէմքը, մի քանի նւագ  
թարթում իր քնէած աչքերը և վերստին փակում  
ու նիրհում իր սե վշտի մշուշով: Անցան մի քանի  
ծանրատաղտուկ ժամեր: Յանկարծ Սրագածը դղրդաց  
մի հու ժկու թափով և նրա շրջակալքը ալէկոծ, եց լի  
խառնաշփոթ փոթորիկներով, որոնք թնդացրին օդը  
իրանց ահագնադղորդ կատաղի ոռնոցներով և դէպի  
Մասիսը սլացան: Ծերուկը սարսափահար եղածի  
նման փոքր ինչ սթափւեց, բուռն երկիւղածութեամբ

նայեց մռայլ թուղպերի շարքերից և մնաց տեղն  
ու տեղ քարացած՝ Դուինի լայնատարած տափա-  
րակը ժամկւած էր հագարացոց անթիւ ու տնհա-  
մար զորքերով, որոնց կեղրօնում Դուինը ահ ու  
դողով պաշարած՝ ասես չ'էր համարձակում աներ-  
կիւղ շնչել: Այսաեղ էր Բուղա ոստիկանի տպա-  
րանը՝ պաշարւած նոյնպէս հագարացոց զինոր-  
ներով, որոնք անդադար անց ու դարձ էին անում  
նրա շուրջը և աչալուրչ հսկում իրանց աիրոջ հան-  
գիստը: Ապարանքից փոքր ինչ հեռու մի ընդար-  
ձակ հրապարակի վրայ գետնատարած շղթայակապ  
լնկած էին միքանի հարիւր զանազան հասակի և սեռի  
անբաղդներ: Դրանք այն հայ կալանաւորներն էին,  
որոնք ուխտել էին չը դաւաճանել հայրենի երկրի  
սրբութիւններին և կրօնին: Արարտաեան դաշտն  
էլ Տարօնի և Վասպուրականի նման տւեց իր բազ-  
մաթիւ զոհերը, որոնց արիւնը անխնայ թափւեց  
և ժողովեց իրանց վէրան երկիրը: Խսկ աւելի երե-  
ւելիներին և վայելչահասակներին շղթայակապ խառ-  
նեցին այն նախկին կալանաւորների հետ, որոնք  
իրանց հետն էին բերել Տարօնի և Վասպուրակա-  
նի գաւառներից: Վերջապէս, շրջապատած իր թիկ-  
նապահների ստւար բազմութեամբ՝ դուրս եկաւ  
Բուղան: Դա թիստամորթ գէմքով, նենգամիտ հա-  
յեացքով և բարակ ու երկար հասակով մի մարդ  
էր, որի խորշոմած ճակատին ցոփ կենցաղը և  
ահապարկեշտ տնցեալը թողել էին իրանց անշնչելի  
հետքերը: Նրա նւազ կազմւածքը և առօրեայ նիստ  
ու կացը շնչում էին աղեխարչ և սոսկալի անգթու-

թէններով, որոնց նա անխնայ գործ էր գնում իւ-  
րաքանչիւր քալափոխում գժբաղդ հայաստանի զա-  
ւակների վրայ:

Թաւ արեւեանունքի տակից անգաղար վառ-  
վում էին նրա գազանաբարոյ խոհերով լքւած աչ-  
քերը: Այսպէս նա անցաւ հրապարակով և մերձե-  
ցաւ կալանաւորներին ու բազմեց իրան համար  
պատրաստած փարթամ բազմոցի վրա, որի շարչը  
սրերը ձեռքերին կանգնեցին նրա թիկնապահները:

Դժբաղդ կալանաւորները անգիտակցաբար  
բարձրացրին իրանց զլուխները, նողկանքով լի ար-  
համարանքով նրա գէմքին նայեցին և, անէծք ու  
նզովք մրմնշալով բռնակալական անարդ սկզբուն-  
քին, վերստին կորացրին իրանց զլուխները:

Բուղան խոժոռաւեց և գարծաւ դէպի նրանց  
իր խորհրդակիր ձախով:

— Կսեցէ՞ք դուք, ո՞վ անմիտ և մոլեռանդ  
թշւառներ, այժմ տարակոյս չունեմ, որ համոզւե-  
ցիք թէ՛ ինչ փոթորիկներ են մոնչում ձեր երկրի  
նոյնիսկ հեռաւոր ծայրերում. այժմ տարակոյս  
չունեմ, որ ինքներդ ձեր կոյր ազքերով տեսաք, թէ  
ինչ մրրիկներ են ծփում ձեր աշխարհում, որոնք,  
ինչպէս և լինի, պիտի կերպարանափոխեն այս  
հողի սին կրօնը, որ ինչ—ինչ չարաբասափիկ  
հանգամանքների շնարհիւ ոտք է կոխել այս  
հողի նոյնիսկ խուլ ու ծութ վայրերում: Այժմ  
հասել է ժամք՝ ջնջել նրա սին հետքերը այդ  
վայրերից, և Ալլահը իր անհօւն ողորմածու-  
թեամբ ձեզ է ընտրել 'ի կատար ածելու իր սրբա-

զան պատւէրները: Աւստի խելքի եկէք և ձեր օրինակով յորդորներ կարդացէք ձեր բազմաթիւ ամբոխին, որը, ահա տեսնում էք, ակնապիշ եղած՝ ձեզ է սպասում: Բաւական է, որ դուք այստեղ, հրապարակով, խոստովանէք Մուհամէդի օրէնքը, և նրանք առանց տատանւելու ձեռք կը ձեկնեն ձեզ և կը հետեւեն ձեր օրինակին: Դէ՛հ, ձեր խոհուն առաքինութեամբ փրկեցէք թէ՛ ձեր և թէ՛ նրանց կեանքը: Յիշեցէք, որ դուք գաւակներ ունիք. յիշեցէք, որ ձեր սիրելիները սրտառուչ իղձերով տոգորւած՝ ձեր վերագարձին են ակնկալում: Տակաւին ուշ չէ յայտնելու մեզ ձեր ապաշտանքը: Խղճացէք ձեր սիրասուն զաւակներին, խղճացէք ձեր փափկասուն տիկիններին և հարծերին. միթէ քարից է կազմւած ձեր սիրտը. միթէ այնտեղ անկարող են մուտք գործել նրանց լալագին մըրմունչները. միթէ նրանց բոցակէղ սէրը և սրտագին համակրանքը ընդմիշտ լուել են, ընդմիշտ մեռել են ձեր կրծքերում: Բաց արեցէք ձեր կրծքերի փականքները, լուշիկ հետամտութեամբ անսացէք ձերայնոց ճիչը ու հառաջանքը, որոնք երերում են նոյնիսկ տարակալ մարդկանց նիարդային համակարգութիւնը. միթէ նրանց սուգ ու շիւանը, լաց ու հեծեծանքը, վիշտ ու տառապանքը, հոնդուր-հոնդուր մըրմունչները իրանց դառնազին վար-վույով չեն շարժում ձեր գութը. չէ՞ որ ձեր կրծքում բարխում է հարազատներին յատուկ բուռն զգացմունքներով լի սիրտը, որը կեղծելու անընդունակ է իր գաւա-

նանքը: Դուք անտարակոյս խոհուն շրջանկատ աչքերով կարող էք որոշել չարը բարիէն. ուստի յամեցնել անկարող եմ՝ ընտրեցէք այս երկուսից մէկը՝ կամ դարձր դէպի մեր սուրբ կրօնը, կամ եթէ ոչ՝ սուրբ...

— Սուր, սուր, Բուղա, ի՞նչ տղայամիտ քարոզներ էք կարդում մեզ. միթէ այսքան ժամանակ չը կարողացաք ըմբռնել, որ ձեր անարդ առաջարկութիւնները լոկընդունախօսութիւններ էին: Այո՛, մենք խորին թախծութեամբ ողբում ենք մեր տարաբաղդ հայրենիքի վիշար, որը ծովածուփ ալիքներով լուցում է մեր սեաւոր հողի նոյնիսկ հեռաւոր վայրերը: Սակայն եղէք աներկբայ՝ որ նրանք իրանց ահազնադղորդ և խռովագին ծալնով կարող հարւածներ չեն հասցնում մեզ, որ մենք դաւաճաններ մեր հայրենի սրբութիւններին, և եթէ նրանց տւած հարւածները նոյնիսկ խորունկ խոցեր բաց անեն ձեր սրտերում, դարձեալ անկարող կը լինեն մի շիւղի չափ անգամ խախտելու մեզ մեր դաւաճանների մէջը, թող թէ մոռացնեն մեր աւանդապահ հոգին, թող թէ չնչեն, ինչպէս կուրօրէն հաւատացածէք, մեր այդ հոգու զգացմունքները: Այո՛, մենք մեր օրինակով յորդորներ ենք կարդում մեր տպագալ սերունդին՝ անսասան չատագովներ լինել հայրենի վաղեմի և նւիրական սրբութիւններին և փապահել նրանց անման յիշատահները իրանց սրտերում՝ հաղորդելու այն սերնդէ սերունդ: Թող կորչի, թող անարժան զաւակ լինի մեր յետնորդներից այն մոլորամիտ անհատը, որը յանդինէ դրժել իր

նւիրական ուխտը, երգումը դէպի իր հալրենի եկեղեցին ու կրօնը: Թօնղ ջնջւի այգափիսիների անարդ անունը հայութեան պատմութեան էշերից: Մենք սրափ խորին բաբախմունքով լիշում ենք մեր սիրելիներին. Նրանց լալագին հառաչանքը երերում, տակն ու վրայ է անում մեր հոգեկան աշխարհը, խոր խոցեր է բաց անում մեր սրտերում. սակայն երբէք, երբէք կարող չէ այն խախտել մեզ մեր դաւանանքի մէջ: մէնք հաւատի բուռն զգացմունքով զիտենք, որ շուտով վերստին կը տեսնենք նրանց հետ և անվախճան բոցակէդ համբոյըներով կը լրացնենք մեր ծշտափառ տենչանքները: — Դողդոչիւն ձայնով տւարտեց իր ասելիքը երանելի Ատովմբը, որը իր վեց նոյնպէս երեկուի ընկերների հետ հեծում էր Բուղայի կապանքներում: Սա Աղբակ գաւառի Որսիրանա գիւղիցն էր, որի աննման գեղեցկութիւնը իր գւարթագին դէմքով, վայելու հասակով և ընդհանրապէս հրաշատիս արտաքինով զմալլեցուցիչ տպաւորութիւն էր գործել հագարացոց վրայ և որին թուղան չէր յանդում տանչել, այլ շանքեր էր գործ դնում, ինչպէս և լինի, զրաւել դէպի իրանց կրօնը. մի խօսքով, նրա հրեշտականման գեղեցկութիւնը կապել, կաշկանդել էր թուղալի ոտքերը ու ծեռքերը, և նա սիրելու չափ համակրում է: սրան

— Ատովմ, մի՞թէ տակաւին ցնորքներդ չեն հրաժեշտ տւել քեզ. մի՞թէ տակաւին չես զգաստացել: ինչո՞ւ թէ՛ քեզ և թէ՛ այս թշշառներին յանդուցին մոլորեալներին. իսկ քեզ և քոյիններին, որ տակաւին չենք ենթարկել այդ աղեխարշ վիճակին, միմիայն նրա համար՝ որ ինձ ցանկալի է ծեզ Մուհամէդի գրկում տեսներ:

ւիտենական կորստի ես մատնում քո վայր 'ի վերոյ խորհրդածութիւններով. չէ՞ որ գու ինքու մոլորութիւնների մէջ ես ընկզմւած և այդ քեզ լոգափի չէ, երբ ինքու այլքան յափշտակւած ես ծեր հաւատի սին ուսմունքով, այն էլ առանց հաւատի անդեկութիւնների, առաջ ես ընթանում քո գատողութիւնների մէջ: Երբ ես այսքան ուշագիր եմ դէպի քեզ, այդ միմիայն նրա համար, որ սիրելու չափ յարգանք եմ տածում դէպի քեզ. ինչո՞ւ գաւաճանել իմ այլքան չերմ հաւատին: Թօնղ այդ ամբարիշա ուղին, որը կարող է խորտակել քո և բոլորիդ կեանքը: Ամեն բան իր չափ ու սահմանը ունի. այգափէս և իմ համբերութիւնը. մի՛ լցրու այդ բաժակը, որը կարող է աղեկտուր վախճան ունենալ ծեզ համար: Ասա՛, Ատովմ, մի՞թէ բաւական չէ իմ մի թեթեակի ակնարկը, որ դուք և ծեր համայն երկիրը տակն ու վրայ լինէք. իսկ ես այդ չեմ անում միմիայն քեզ համար: Զէ՞ որ ինքու էիր ականատես, թէ ի՞նչպէս իմ արիագոյն դինորները հաւերի ծագերի նման խողխողում էին ծեր Վասպուրականի յանդուցին մոլորեալներին. իսկ քեզ և քոյիններին, որ տակաւին չենք ենթարկել այդ աղեխարշ վիճակին, միմիայն նրա համար՝ որ ինձ ցանկալի է ծեզ Մուհամէդի գրկում տեսներ:

— Թուղա, ես, ահա մի քանի ամիս է, ինչ ծեզանից միւնոյն անարդ առաջարկը լոելու գրժրաղութիւնն ունեմ: Սակայն, եթէ համայն Արարիան իր ճարտարախօս զաւակներով ոտքի կանդէ, զարձեալ անկարող կը լինի մեզ շեղել մեր հայ-

բենի կրօնից, որի անմահ յիշատակները իւրաքանչիւր քայլափոխում նւիրական աւանդների տեղ ունեն բռնած ձեր հոգու ու սրտի խորշերում: Կրշտամբում էք ինձ, որ ես յորդորում եմ իմ եղբայրներիս մեր հայրենի սրբութիւններին չը դաւաճանել. սակայն այդ չէ յուսահատեցնում ինձ՝ թող զգաստանան, թող խորունկ ըմբռնեն իմ վիճակից քրիստոնեալ դժբաղդ եղբայրներս, որ արդարե, եթէ մեր երակներում հոսում է մեր հայրերի արդար և անարատ արիւնը, մենք պարտադանի ենք այստեղ ապացուցելու, որ հարազատ զաւակներ ենք Վարդանների, Ղեոնդների, որոնք խաչը և սուրբ ծեռքերին՝ ընկան թշնամու պատերազմում. այժմ սուրբ խլած է մեզանից. բայց խաչը, այն խաչը՝ դժբաղդ հայրենիքինսիրական աւանդը, խոր արմատներ ունի ծգած մեր երակներում, և կանցնեն տակաւին դարեր՝ իրանց ետեից չախչախելով ազգերի և ձեր գահակալների թողած անբարտաւան հետքերը. իսկ խաչը կ'անցնէ սերնդէ սերունդ և ծալը է 'ի ծալը կ'ողողէ համայն տիեզերը իր լուսափայլ ճաճանչներով, երբ մարդկութիւնը այլևս զրկւած կը լինի իր արդի գազանային անշագ հակումներից և անսասան անաշառութեամբ կը կատարէ խաչի պատերները: Եւ այդ խաչը խելու, յափշտակելու դիտաւորութիւնը աղայամիտ ցնորք է:

— Ատովմ, վերջին անգամ կրկնում եմ այն, որը միմիան կարող է փրկել ձեր կեանքը, թողէք ձեր սին հաւատը: Ես իմ պարդեներիս առաջապոյն

դռները բաց կանեմ ձեր առաջը. ահա այն ոսկու, արծաթի, թանկադին ակների քսակները, որոնք ձեղ համար եմ պահպաներ. եթէ այդ բաւական չէ, բնտրեցէք զիւղեր, աւաններ, գերգաստաններ, և ես երդւում եմ Մուհամեդի արեւադոյն օրէնքով, ձեզ բաշնել այդ բոլորը. եթէ այդ էլ հերիք չէ, ես ձեղ իշխանական բեհեզների արժանացնեմ, իշխանական դաւազաններ և մատատիներ շնորհիմ ձեղ. և դուք յաւէրժ տէր և զլուխ լինէք ձեր ընտրած գաւառներին: Իսկ եթէ ոչ, այն ժամանակ լցւած կը լինի համբերութեանս գաւաթր:

— Այդ պարզեներիցդ և ոչ մէկը չէ կարող շացնել մեզ. նրանց փայլը, նրանց շողերը իրանց տէրերի յարաբորբոք ճառերի հետ՝ միմիան խղճահարութիւն են զարթեցնում մեր մէջ զէպի ձեղ. այո՛, զէպի ձեղ, որ յանդզում էք այդ երկրային մանկամիտ խաղերով նւաճել մեր սիրան ու հոգին իրանց նւիրական վայելքներով և քաղցր յիշատակներով: Դուք, հագարացիք, խարխափում էք մանկական կուրութեան մէջ, եթէ ո՞չ չէիք այսքան ծանծրովթ պատճառի մեղ ձեր ընդունախօսութեամբ: Դուք մանկական միամտութեամբ փորձում էք վաճառել տալ մեղ մեր սիրան ու հոգին, չէ՞ որ նրանց մէջ է ամփոփւած հայրենի կրօնը իր վազեմի քաղցր յիշատակներով: Մենք ընդունախօսներ չենք, և զուք շուտով կը համոզէք, որ մենք յամբոյը աչքերով յաւէտ պիտի նայենք ձեր մանկական անարդ առաջարկների վրայ: Դուք յանկանում էք,

որ մենք տեղ բռնենք Մուհամէդի դրկում. սակայն հաւատացած եղեք, որ Մուհամէդը իր ահեղ զօրութեամբ երբեք արժան չի լինի մեղ իր անբարտաւան գրկում տեսնելու. մենք նոզիանքի գառնութեամբ ատում ենք նրա սին և գազանաբարոյ ուսմունքը:

— Դուք, յամառ կինմեր, խաչի մահով պիտի կնքեք ձեր վախճանը: Այդ խաչը թող ցոյց տայ ձեղ իր ահեղ զօրութիւնը:

— Տիեզերի փրկիչն էլ այդ մահով մեռաւ, — միաբերան ձայնակցեցին տարաբաղդ կալանաւորները:

— Այդ դուք կը զգաք վազ առաւօտեան, — մի չըտեսնեած կատաղի փրփուր բերանին՝ նկատեց նրանց Բուղան, որը իսկոցն և եթ հրաման արձակեց՝ խաչեր պատրաստել. իսկ նախքան նրանց պատրաստ լինելը, սկսեցին աննկարազրելի տանջանքների ենթարկել այդ տարաբաղդներին: Որի գէմքը՝ ողողւած արեան մէջ՝ չէր կրում իր վրայ մարդկային կերպարանքի ամենաթոյլ հետքերը անզամ. քիթը՝ կտրւած էր, աչքերը՝ հանած, կաշին՝ քերժած, շրթունքը՝ նոյնպէս հատած էին. սակայն, այդ խուժաւուժ ամբոխի, այդ անբաղդ զոհերը չէին դադարում փառաբանել իրանց Տիրոջը: Բուղան առաւել ևս կատաղեցաւ, երբ տեսաւ, որ տանջանքները ուշքի չեն քերում նրանց և նոյնիսկ արհամարում են, ուստի հրամայեց ալրել նրանց կրակի բոցավառ հնոցի մէջ ոչ թէ միանգամայն, ալլ

տակաւ-տակաւ: Այսպէս նահատակեցան մօտաւորապէս հարիւր յիսուն հոգի:

Հետեւալ առաւօտ Գուինի հրապարակի վրայ նրեւում էին եօթն խաչեր, որոնց վրայ անմռունչ գամւած էր երանելի Ատովմը իր վեց համախոհ ընկերների հետ: Նրանց հոգեկան ապշեցու ցիս անգորրութիւնը և անխռով տեսքը յուստհատութեան մէջ էր ձգել Բուղային, որը անտարակոյս ենթագրութ էր, թէ նրանք հրապարակաւ պիտի յայտնեն իրանց ապաշաւանքը: Ոչ մի ցաւ, ոչ մի մրմունչ չէր լսւում նրանց շրթունքներից, ընդհակառակն, նրանց կերպարանքը արտավարտում էր հոգեկան վառ յորդորանք գէպի հոգրենի եկեղեցին ու կրօնը՝ նրանք աւելի քան անլողդողութիւն և անսասան հատած էին սփռում իրանց նայողի վրայ: Հոգեկան անալլալ տեսքը և անլորրութիւնը ահ ու գողով էր պաշարել հաղարացոց բանակը, որ ահաբեկող մի արտասովոր երկիւղածութեամբ էր լցւած այդ պահուն: Նրանց թւում էր, իրանց շրջապատը իր դար ու գաշտավայրերով, բարձրաւանդակներով ու աննման փառարներով՝ ծաղը ու ծանակ են անում իրանց քստմնելի գործողութիւնները: Վերջապէս, Ատովմը մի քանի շղածքական շարժումներ դորժեց խաչի վրայ: Բազմութիւնը իր ուշաղրութիւնը յառեց գէպի նրա կողմբ: Նա խորունկ թախծութեամբ իր մտախոհ աչքերը ամբարձեց գէպի կապոյտ եթերը և, շեշտակի Բուղալի ապարանքը դառնալով, խօսեց այսպէս:

— Բուղա, փարթամ բազմոցի վրայ կոթնած

շոյում ես քո վայրագ հաճոյըր: Սակայն զիտենալ  
պէտք է, որ երկարատեւ չէ կարող լինել այդ. մենք  
բոլորս տարակայ մարդիկ ենք այս վերան աշխար-  
հում, բայց այն, ինչ թողնում ենք մեզանից յետով,  
այն ապագայ սերնդի համար կեանքի մեծ դասեր  
են կազմելու: Մեր հայրենիքի, մեր կրօնի և մեր ազ-  
գային նւիրական յիշատակների անաղարտ և ան-  
խախա սերը մեզ խաչ հանեց քո ամբարիշտ ձեռ-  
քերով: Թող մեր ապագայ սերունդը խրախուսւի  
մեր ողբերգական մահով և անսասան հաւատով ընդ-  
դրկէ իր նախնիքների թողած պաշտելի աւանդը:  
Թող մեր եղերական մահը վրէժինդրութեան ծա-  
րաւով լցնէ մեր ապագայ սերնդի սրտերը, և նրանք  
հայրենիքի բուռն տենչանքներով ոգեռուած մահ ու  
կեանքի դնով մարտնչել կարողանան իրանց գոռ  
թշնամիների հետ: Թող հայրենի ասպատակոմ, ա-  
ւեր դարձրած հինաւուրց սրբավայրերը՝ վրէժինդրու-  
թեան բոցակէզ կայծերը յարատեւ բորբոքւած  
պաշտպանեն մեր ապագայ սերնդի կրծքում, որ  
նրանք ձեր անամօթ գործերի փոխարէն քրիստոնէա-  
կան նախանձախնդրութեամբ վարժահատոց լինեն  
ձեզ: Անիրաւ, ըմբռնում ես քո կատարած դազ-  
նութունների ալյանդակ ահուելիութիւնը: Գիտես  
արդեօք, որ մի անպաշտպան ժողովուրդ հլու հնա-  
զանդութեամբ և անմռունչ շրթունքներով ընկնում  
է մեր արիւնարբու սրերից և ժամերով, օրերով լո-  
զում է իր սեփական արեան մէջ, արծակելով կի-  
սակենդան շրթունքներից անլսելի մրմունջներ, սրբ-  
տամաշ հառաջանքներ, որոնք արձագանք առած

թնդացնում են հայրենի երկրի սար ու ծորը, դաշտ  
ու մարգագետինը և թռնչում—անցնում են հեռու,  
շատ հեռու դէպի՝ մեր հարազատ լեռների գագաթ-  
ները ու բարձրաւանդակները, ուր աղեխարշ սուդ  
ու շիւանը, լաց ու կոծ և անվե՛րջ հեծեծանք  
իրանց դառնազին վայ—վոյով ասես պղծում են  
հայրենի անարատ լեռների ահեղ կատարները...  
Անիրաւ, արդեօք, Ե՞րբ կը լուէ քո մէջ այն դա-  
զանալին հակումներով բռնկւած անսանծ կիրքը:  
որը ոտնատակ արեց մեր սեւաւոր աշխարհում մարդ-  
կային նոյնիսկ ամենատարբական իրաւունքը: Ե՞րբ  
կը դադարէ զործերուց քո մէջ այն դիւաչին ոգին,  
որին անխնայ զոհ գնացին մեր հարազատ աշխարհի  
բազմաթիւ չատագովները, որոնց ուրուականները,  
հաւատացած եմ մեռնում, օծ ու վիշապ դառած՝  
ոչ մի վայր հասնգտութիւն ու դադար չը պիտի  
տան քեզ: Բայց, բայց, կոյր աչքերդ և ահս՝ որքան խոր  
է քո բացաձ՝ վկրքերը մեր դժբաղդ հայրենիքում:  
Դու հիմնայատակ կործանեցիր մեր սրբավայրերից  
շատերը, դու քո պիղծ ոտքերով մուտք գործե-  
ցիր մեր հինաւուրց վանքերը ու մենաստանները  
և կողոպտեցիր ու աւերակ դարձրիր նրանց:  
Դու լուցըրիր այդ սրբավայրերում հնչող քրիս-  
տոնէական այն անուշ և քաղցրահնչիւն մեղեղիների  
ծախները: Դու անգութ գոռոզութեամբ լցւած ոտ-  
նակոխ արիր մեր խաչն ու աւետարանը: Դու զըն-  
չեցիր մեր իշխանազուն շառաւիզներից շատերը,  
որոնք՝ հաւատալով քո անբարտաւան կոչին և խար-

դախ հրաւերին՝ միամտութեամբ քո լարած որովայթների մէջ ընկան: Լսիր, Բուզա, այդ բոլորը դու գործեցիր մի կոյք նպատակի հասնելու համար. սակայն դիտցիր, որ այն հողը, ուր գարերի ընթացքում ծնւել-սնւել է մեր տարաբաղդ հայրենիքի չատագովների ստւար անծնազո՞ն ողին, այն հողը վերստին կը ծնէ իր կրծքից առաւել անծնանւէր զաւակներ, որոնք նրա քար ու թուփիր, գար ու գաշտը աւելի ևս ամուր կը սեղմեն իրանց ապաւաժ կրծքին այնպէս, որպէս ես եմ այժմ թեերիս վրայ տմբարձած այս հայրենի թողած որբազան տւանը՝ խաչը: Ո՞հ, հայրենի անբաղդ լեռներ, անմեղ արեան մէջ ծփացող հայրենի նորական վայրեր, կարօտաղին տենչով պապակւած շրթունքներովս տալիս եմ ձեզ վերջին համբոյրներս և մեռնում եմ մեր անսահման սէրը հետո յաւիտենականութեան ահեղ Աթոռի առաջ տանելով: Զեր սուրբ սիրովն եմ կնքում իմ վախճանը:—

Սյս եղաւ դրժբաղդ խաչեցեալի վերջին բառերը Խաչեցեալից ոչ հեռու արտօմութեան կնճիռները երեսին պատաժ՝ մտախո՞ն յոյզերով բռնկւած կանգնած էր Սմբատ Բագրատունին, հայոց սպարապետը: Նա մի երկիչոտ և գալտնազողի հայեցացը ուղղեց դէպի խաչեցեալը, մի խոր հոգոց հանեց այնպէս, որ ոչ ոք չը լսեց, ապա զողղոչուն շարժումներով ձեռքը դէպի պապանը տարաւ, դուրս հանեց իր մետաքսեայ թաշկինակը և փութկոտ կերպով սրբեց իր մեորակ արտասուաթոր աչքերը:

Սակայն նրա գաղտնազողի շարժումները և ար-

տասուքի խոշոր կաթիլները ըմբռնեց միայն մի նենգամիտ հայեացը: Դա Բուզայի հայեացքն էր, որը տեսաւ և իսկոյն հասկացաւ հայոց սպարապետի գաղտնի արտասուքների շարժառիթը:

— Համբերի՛ր, ծեր աղուէս, ևս շուտով քո երկղիմի քողդ էլ պատռել կը տամ: Ես քաշ զիտեմ, թէ ինչ բաղաբականութեամբ ես զու շնչում, — վինթինթում էր իր մտքում զոռող սսափկանը:

VI.

Հայրենիքի անձնւէր նախարարների հայրենասէր սիրու լցւեցաւ խորին թախծի դառնութեամբ, երբ նրանք իմացան հագարացոց զօրքերի գործու ծաննկարագրելի անցքերի խստութիւնը ու զարհուրանը: Դեռ հայրենիքին գալուց արհաւիրքի և ցընցող աղետի սկզբին նրանք իրանց գերգաստաններով, սիրելիներով և ազգականներով ամրացել էին անմատչելի ամրոցներում և անառիկ ծածկավայրերում: Միայն նրանց զժբաղդ ժողովուրդն էր իր չարբաշ պարանոցի վրայ կրում թշնամու խուժագուժ ոճիրների ծանրութիւնը ու զարհուրանքը: Եւ այսպէս, ամեն ան միայն նրանց տարաբաղդ ժողովուրդն էր ընդպրկել իր հայրենի օջախի և իր անմեղ արիւնով ներկում նրա միջավայր կազմող սիրելի մթնոլորդը: Միայն այդ ժողովուրդն էր անշահասէր ու անկեղծ սիրով կապւած իր աղքատիկ խրճիթի հետ և անծնազո՞ն համբերութեամբ հեծում նրա նւիրական աւերակների վրայ: Նա հա-

բազատի անկեղծութեամբ և խորին դառնութեամբ բորբոքւած՝ ողբում էր այդ աւերտկների վրայ հայրենիքի կրած սոսկալի աղետը: Նա բազմաթիւ քաղցր լիշողութիւններով կապւած էր այդ հայրենի իւրաքանչիւր քար ու թփի հետ, որոնք ամեն անդամ յուշիկ մտախոհութեամբ զարթեցնում էին նրա մէջ իր վաղեմի անցեալի անձուանալի լիշտակները: Նա իր ամբողջ էութեամբ էր կապւած այդ անտէր աւերակների հետ, որոնց մէջ ճնւել, սնւել էր և անշինչ լիշողութիւններով անել ու անցկացրել իր կեանքի քաղցրիկ ժամերը: Այդ անտերունչ աւերակների տակ էր նա սրտի խորին դառնութեամբ թագել իր սիրելիների, իր հարազատների անձեղ զիակները: Այդ անտերունչ աւերակներին էր հպել թշնամու ապականիչ ծեռքը և հիմնայատակ կործանել նրանց իրանց ամբողջ կազմով: Երբ ինքը սրտի ահ ու դոզով պաշարւած սրտառուչ գալարներ էր զգում նրա իւրաքանչիւր հպումից: Եւ այսպէս, ինքը քաղցրիկ խոհերով մշանչնապէս կապւած կար այդ թէ և անլեզու, բայց և շանթալից կրակով լցւած անխօս ողբացող աշուղների հետ: Անշատւել նրանցից ոչ մի ժամանակ նա չէր յանդգնում. այդտեղ էր նրա անձեղ մանկութիւնը իր վառ կերպարանքը ծածկել նրանից և իւրաքանչիւր քաղցրաշում քաղցրաշունչ խոհերով խօսում նրա հետ: Այդտեղ էին նրա վիրաւոր սրտին մօտիկ սիրելիները օրհնել նրան և օջախի տիրական բանալին իրան յանձնել ու ընդմիշտ կնքել իրանց մահկանացուն: Այդտեղ էին նրա սի-

րելիների անթիւ ու անհամար շիրիմները: Եւ վերջապէս, այդտեղ էր հայրենի սրբավայրը, ուր ինքը բազում անդամ ազօթել էր և այդպէս զօրացել քրիստոնէական ուսմունքի մէջ: Եւ այսպէս, ինքը յարատե անբաժան ընկեր էր իր անտերունչ աւերակներից, որոնց վշաերով և շնչում էր այժմ ինքը:

Սակայն այդպէս չէր իշխանազունք և նախարարներ կազմող դասակարգը: Նրանք իւրալիններով հանդերձ ծածկւել էին թշնամու նենդամիտ հայեացքից հայրենի անդնդախոր ձորերում և կիրճերում և այդպէս անառիկ զիրքեր բռնած՝ սրտամորմոք հայեացքով զիառում էին, թէ ի՞նչ է կատարում հայրենի հողի վրայ:

Վերջապէս, նրանց կրծքումն էլ խօսեց հայրենիքի վրէժիննդրութեան ողին, և նրանք՝ իրանց յանձնելով Աստուծոյ ամենակարող զօրութեան և յոյսները դնելով իրանց շլուտ բազուկների պաշտպան անյատ աշի վրայ, լարեցին իրանց լայնալին աղեղները, լցրեցին իրանց վաղեմի կապարճները լի նետերով, սրեցին տապարները երկաթեալ երկար կոթերով, հազան իրանց սազաւարտները և զրահները գործած մանր օղակներից և, վերցնելով իրանց բազմազան երկսալրի, մի սալրի սրերը, թրերը, գաշոյները՝ գարտնակալ եղան այն խոր-խոր ծմակներում և խուլ ու մութ կիրճերում, որտեղից թթշնամին պիտի անցնէր զէպի Սիսականի և Սիւնեաց կողմերը:

Բուզան, տեսնելով, որ ոչ ոք չէ կարող դէմանդիման կանգնել իր ահաւոր զօրութեան առաջ,

վճռեց ամիրապելու և Սիսականի ու Սիւնեաց աշխարհները: Այդ պատճառով նա՝ ընտրելով իր իր բանակից մի ստատր զօրամաս, առաքեց նրան աչք կողմէրը, պատաւիրելով գերի վերցնել և շղթայակապ իրան հասցնել Սիսականի աէրերին՝ Բարեկէնի երկու որդիներին՝ Վասակին և Սշոտին, և անխնայ ասպատակել նրանց աշխարհները: Մինչ հազարացիք անվրդով շարունակում էին իրանց ճանապարհը, հայ դարանակալ խմբերը լցւած անհուն վրէժինդրութեան ձարաւով, որը բորբոքում էին նրանց առաջնորդ իշխանները՝ Յակեան տոհմի հայրենասէր Գէորգը և Գաբրիէնի աւանց երանելի Խոսրովը, որոնք իրանց ոգելից ներբողներով անրնդհաա խրախուսում էին նրանց մեանել հայրենիքի փրկութեան համար:

— Տարաբաղդ հայաստանի անձնւէր կարիք գաւակներ, մեծ է հայրենիքի փոթորիկը, առհազնապղորդ են նրա անվերջ վայ-վույով ծփացող տլիքները, օրոնք օր ու գիշեր անպաղար ալէկոծում են մեր գժբաղդ հօղը: Թշնամու պատճառած չարիքը անհուն է, մեծ է, և ո՛վ հայրենասէր զաւակի անկաշառ ողով ըմբռնում է այդ չարիքի խորութիւնը, նրա ահագին մեծութիւնը, նրա էլ սեպուհ պարտականութւինն է ընդգիւմադիր ոյժեր կազմել շարդ ու փշուր անելունրա զարհութանքը, նրա նրա ապօրինի արմագալ: Հայրենիքը ակնապիշ եղում սպասում է այդ իր հաւատարիմ զաւակներից, այդ հայրենիքի դերագոյն նսիրական սէրը ոյժ և կարողութիւն կը

առաջ ձեր յաղթանզամ բազուկներին և գուք յաղթական փառքով կը խորտակէք, կը փշրէք թշնամու անամօթ և ամբարտաւան կապակները, և նա կորազլուխ կը լինի: Ոգեորւեցէք, լարեցէք ձեր ռազմիկ անվեհեր ոլժերը և զրոհ տւած մտէք մեր թշնամու անարգ շարքերը՝ չնչելու նրանց կործանիչ գոյութիւնը մեր տարաբաղդ աշխարհից: Հայրենի սպով լի աշխարհը կանչում է ձեղ, մեռնենք նրա սիրոյ փրկութեան համար: Մեր արդար արիւնով լւանանք այն արատը, որը մեր ամբարտաւան թշնամին բերեց իր հետ մեր գժբաղդ հայրենիքը և նրանով զրոշմեց մեր ճակատները: Մեր հելոսական մահով ցոյց տանք ամբողջ աշխարհն, համայն մարդկութեանը, որ մեր երակներում տակաւին հոսում է մեր պանծալի նախնիքների չերմ արիւնը, որը հաւատացած եմ, ալժմ ևի է գալիս, եռում է մեր երակներում և վրէժ է պահանջում ձեղանից: Այդ վրէժխնդրութեան անյագ ծարաւով բռնկւած վստահ եմ, նոյնիսկ բարձրագագթ լեռները կը սարսափեն մեր կարող բազուկներից: Զեռք-ձեռքի տւած ապաւէն րնտրեցէք մեր հայրենիքի յաւէրժ պաշտպան խաչը, որը ալժմ կործանւած է, զետին տարածւած և ոտնակոխ է արւած թշնամու խարդախ մեռքերով: Թանկ գներով ծախեցէք մեր քաղցր կեանքը, երբ վաստակած կը լինեն մեր շլուտ բազուկները: Հաւատացած եղէք, որ թշնամին յանդուգն համարձակութեամբ մուտք է գործել մեր աշխարհը բազմաղիմի ազգակործան տենչաքներով և նպատակներով: —

Նա նպատակ է ընտրել՝ աւերել, ասպատակել,  
տակն ու վրայ անել հայրենի հողը, բնաշինչ անել  
նրա դաւակների ռազմիկ ոլժերը, ատւար հայկազն  
իշխանազունք խմբերով լցնել արաբական սև ու  
ձութ բանտերի խորշերը, մեր գեղազան օրիորդնե-  
րով ու հարսներով զարդարել Բաղդատի հարեմա-  
կան տռփանքով լի կեանքը, ջնջել, կոտորել մեր մա-  
տաղ սերունդը և արմատախիլ անել մեր երկրի  
երեսից մեր հայրենի կրօնը իր քրիստոնէական սրբ-  
բազալբերով։ Ահա թէ ի՞նչ տենչանքներ ունի  
իր գաղանաբարոյ սրտում մեր թշնամին։ Ուս-  
տի կրկնում եմ թանկ ծախեցէք ծեր կեանքը։  
Դէ՛չ, օն անդր առաջ... վերջացրեց իր ասելիքը  
Դէորդ իշխանը։

— Մեռնենք, մեռնենք, այդ է պահանջում  
հայրենի անաղարտ սէրը, — միածայն թնդացրին  
օդը հազարաւոր բերաններ։

Մինչ հայրենիքի անդնդախոր ծորերում գաղտնի  
քարոզի ոգեսորիչ ձայնն էր հնչում, թշնամին  
հաստատակամ շարժումներով մուտք գործեց այդ  
ծորերը։ Տեսնելով, որ օրհասը մերծենում է, Խոս-  
րով իշխանը դարձաւ դէպի իր խմբերը հետեւալ  
կոչով։

— «Միրաօսն զաւակներ, ահա երեւեցաւ թշնա-  
մու զօրութիւնը. ահա, աեսնում էք, նա մեր սե-  
փական դրաստների վրայ կաշկանդա՞ գերի է տա-  
նում մեր հարս ու աղջկունքը, հայաստանի փափ-  
կասուն տիկիները։ Ահա այնտեղ, նրանց մէջն են  
թերեւ ծեր մայրերը ու քոյրերը. նրանց արտաս-

ւաթոր լալագին աչքերը ծեզանից փրկութիւն են  
հայցում։ Մի խնայեցէր այդ նրանց... Եւ ես առա-  
շինը թող լինեմ, հետեւեցէր ինձ։»

Այս ասելով, նա վէժխնդրութեան անլագ կրա-  
կով վառւած, սուրբ ձեռին՝ գաղտնագողի անցաւ  
թշնամու թիկունքը, իսկ Դէորդ իշխանը իւրային-  
ներով կարեց նրանց ճանապարհը։

Սկսեց կատաղի կոփւր, և սարսափահար  
թշնամին, չիմանալով թէ ում հետ գործ ունի,  
օծապառյա գալարներով մազլցում էր, չանգուում  
կիրճերի, ապառաժների երեսները և, գարանակալ-  
ների անշեղ սլաքներից վիրաւորելւով, գահավիժւում  
դէպի անդունդը, արծակելով գաղանային մռնչիւն-  
ներ և կրծտացներով իր ատամները. և ալսպէս, թա-  
ւալելով իր արեան մէջ ու մրմնչալով անվերջ ա-  
նէժքներ իրանց անվայտ թշնամու հասցեին, նրանք  
ընդմիշտ փակում էին իրանց աշքերը, ուր այն-  
քան վառուն գոյներով փայլում էր վրէժխնդրութեան  
կրակը, որը այժմ տակաւ առտակաւ մարում էր  
և գերեզման գնում նրանց հետ։

Ալսպէս շարունակելով իրանց դործը՝ դարա-  
նակալները շնորհիւ իրանց անվրէպ նետերին զգալի  
չափով թեթևացրին թշնամու զօրքի առաջնակարդ  
ոլժերը, ապա գաղանային քրքիչներ արծակելով,  
դուրս վաղեցին իրանց ժածկավայրերից և երկու  
կողմից նրանց զործ զրած սրերը ու տապարները  
լրացին նետերի սլաքների պակասը...»

Հայ գեղազան օրիորդների և համեստագոյն  
հարսների ստւար բազմութիւնը փրկւած էր։ Դա-

բանակալների առաջնորդները իրանց արիագոյն ոլժերի հետ փութացրին նրանց դէպի անառիկ ծածկավարեր, ուր թշնամու ոտքը անկարող էր մուտք գործել: Սակայն վտանգը տակաւին չէր անցել: Այդ ժամանակ Բուղազի մի այլ զօրաբաժին անակնկալ կերպով օժանդակութեան եկաւ իրանց պարտած ընկերներին, և մնացեալ զարանակալները իրանց անվեհեր առաջնորդների հետ գերի ընկան նրանց ծեռքը և առաքւեցին Բուղազի բանակը, ուր ըսկսեցին նրանց ողոքել, տաճել, որ խախտեն նրանց հաւատը և դաւաճանել տան իրանց կրօնին: Բայց հայրենիքի և հաւատի այդ անսասան սիւները հաւատարիմ ձնացին իրանց աղջային սրբութիւններին և եկեղեցուն: Այդ պատճառով Բուղան լցւեց խխտ դառնութեամբ և հարամակեց հատանել նրանց գլուխները: Եւ այսպէս, անսասան համբերութեամբ կրելով բազմազիմի տանչանքներ Յակեանց Գէորգ և Գաբրէչեանց Խոսրով իշխանները նոյնպէս ընկան ամբարտաւան Բուղազի անարդ սրից:

Սրանց հետ մի և նոյն վիճակին ենթարկւեց և մի հագարացի այլազգի, որը տեսնելով հայ նահատակների անխախտ և հաստատակամ հաւատը ու համբերութիւնը, բարձրածալն աղաղակեց թէ «Ես էլ քրիստոնեալ եմ հէնց ալժմեանից»: Այդ պատճառով Բուղան անողոք տանջանքների ենթարկեց նրան, որ նա յետ դառնալ իր մոլորութիւնից. բայց երբ նա անխախտ մնաց իր հաւատի մէջ, նրան էլ նահատակեցին:

VII.

Սնթափանցելի խաւար ու մութ գիշեր էր: Երկինքն մթին էր տալիս: Սկս-սկ ամպերը լռութեամբ հապճեալ քայլերով լողում էին երկնակամարի վրայ և նրանց սկաթոյր շղարշով ժամ առաջ աճապարում էին սքօղել երկնքի երեսը: Ամեն ինչ գիշերային լռութեան մէջ հանդիստ էր վայելում: Ամեն արարած, սկ սարսափի ահ ու դողով պաշարւած՝ վազուց էր ծածկւել իր յարկի տակին և ծանրատաղոտկ անժուժկալութեամբ ասես հաշվի էր առնում ժամերը՝ թէ ե՞րբ կը շողղողէ վաղորդեան արշալոյսը իր շառագոյն նախանչներով: Վախի ու արտասուրքի օրեր էին. վախենում էին վայրի գաղանները, վախենում էին երկրի քար ու թուփը, դար ու գաշտը, վախենում էր և տարաբագդ հայ գեղջուկը, վախենում էին և հայ բաշազնական իշխանազունքը: Այդ ընդհանուր երկիւղածութեան մէջ ասես վախենում էին և երկնալին մարմինները և ծգտում իրանց փայլուն երեսները խորասուզել սկս-սկ ամպերի նոյնքան սկ շերտերում: Իսկ լուսինը մերթ-մերթ երկուս հայեացըով դուրս էր պրծնում ամպերի շերտերի միջից, խորին արտամութեամբ գիտում էր իր քոյր երկրի վիճակը և վերստին կորչում տիրող խաւարի ովկիանոսում: Եւ դարձեալ ամեն ինչ ընկղմաւում էր թանձր խաւարի գրկում և գիշերալին նիրհ վայելում:

Գիշերային այդ տաղնապալի պահուն միայն

մի ձայն էր լուսւմ, որը խորին թախծութեամբ ինչ որ է մրմունջներ էր կարդում նման ծանրաշունչ ողբերի և իր այդ դառնազին վայ-վույով կարծես առաւելես սրտամաշ դարձնում տիրող խաւարի սարսափով լի գոյութիւնը: Նրա ազետալի մրմունջը նաղելի ելեէջերներով մերթ ընդ մերթ թեթեակի խանդարում էր զիշերային այդ գերեզմանական լոռութիւնը. ապա հալւում, կորչում էր խաւարի ովկիանոսում: Եւ այսպէս անվերջ: Դա Սխուրեանի մեղմ ալիքներն էին, որոնք իրանց երկչոտ շարժումներով թեթեակի ծփում էին իրանց լալազին ինքնորոյն ծախներով և ինչ որ փսփսում իրանց ափերին, նրանց հանդիստն խանդարում, գուրում-գուրզուրում իրանց հարազատ գետեղերքի քարերը, անվերջ սրտառոռէ համբոյներ զրոշմում նրանց այտերին, խորին դառնութեամբ հրաժեշտի մնաս բարեւու շշնչում նրանց և ապա տխուրտրտում քայլերով տարակուսւած դէպի առաջ շօրորում:

Գետեղերքին բաղմած թագրատունեաց փառք ու պարժանքը Սնին՝ վաղուց նոյնպէս մշշում էր զիշերային մրափով: Նա նոյնպէս թաղւած էր թանձրագոյն խաւարի թերի տակ: Միայն տեղտեղ ազօտ ճանանչներով տակաւին պլազում էին նրա եկեղեցիների բազմաթիւ կանթեղները: Հազար ու մի էր նրանց թիւը, որոնք այդ զիշեր մի արտասովոր լոյսով, թւում էր, կռւում էին տիրող խաւարի թանձրութեան հետ:

Միայն մի հոյակապ շէնքի լուսամուտներից

մարւող ասաղերի նման մերթ բոցակէզ լոյսով նրշմարւում էին մի քանի նրազներ, մերթ կորչում-անհետանում էին թանձր խաւարի մէջ ու ազօտ նանանչներ արծակում: Դա թագրատունեաց պալատներն էին, որոնք իրանց բազմաթիւ ներքին գաղտնի անցքերով միանում էին Սխուրեանի ջրերին և այս ու այն պաշարումների ժամանակը այդ անցքերով չուր մատակարարում իրանց համար:

Պալատների սենեակներից մէկում կերպասեալ դործւածքներով գարդարած գահաւորակի վրայ մտալուզ լոռութեամբ բազմել էր Սմբատ թագրատունին: Նրանից ոչ հեռու նոյնպէս մի փարթամ գահաւորակի վրայ նստած էին երկու երիտասարդ իշխաններ՝ նրա որդի Աշոտը և Սիւնեաց Վասակ-Դարուռը: Սենեակի մետաքսեալ փարագոյները իրանց ոսկեթել ծոփերով թողւած էին. միայն մէկ լուսամուտի վարագոյնը, որ նայում էր դէպի Սխուրեանը, թողած չէր:

Սենեակը ծփում էր արևելեան փարթամութեան գրկում: Բաղմաթիւ օթեակներ, գոյնզգոյն գորգեր, ականակուռ, բազմազան զէնքեր և արձաթեայ կանթեղը՝ քանդակած ժամանակի ոգուն համապատասխան նկարներով՝ մի ապշեցուցիչ գեղեցկութիւն էին տալիս նրան: Գարուռը մտախոհ աչքերով մերթ նայում էր դէպի բաց լուսամուտը, մերթ Աշոտ իշխանի գեղանի իրանին և սիւնեցուն յատուկ անժումկալութեամբ նեղսրատում էր ինքն իրան, թէ երբ կը խօսէ սպարապետը: Վերջապէս նա խօսեց:

— Իշխան, ահա՛ մի քանի օր է, ինչ մենք արժանացել ենք ձեր տեսութեան. սակայն երկրի խառն գրութիւնը այնքան է յուզում իմ մաքերը, որ ես տակաւին չեմ կարողացել մի առ մի պատասխանել ձեր հարցերին և թւել թէ՛ ի՞նչ է մտադիր թերեւ գործելու այդ անիրաւ ոստիկանը:

— Ես այդ նկատում էի, տէր սպարապետ, — պատասխանեց Գաբուռ:

— Այդ անիրաւը մտադիր է արշաւել Խոաչենի Սարներսէհի, Գարդմանաց Կարիճ իշխանի վրայ վճռում է արեան մէջ ողողել Ուտեաց ամբողջ աշխարհը, միևնուն վիճակին պիտի ենթարկէ Սպունանից աշխարհը և Տփիսի ստհմանները:

— Ամբարտաւան բռնակալ, — միաժամն կրկնեցին Աշոտ և Գաբուռ իշխանները:

— Ես տակաւին ոչինչ չեմ ասել Սիսականի և Սիւնեաց երկրների մասին:

— Սրանց վրայ առաւել ես փրփրոտած է:

— Ես այդ նախատեսնում էի, այդ պատճառով էլ օր առաջ աճապարեցի ձեզ ծօա՛ խորհելու միորե է հնարքով փրկել ձեր գժբազզ երկիրը նրա արիւնարբու ճանկերից: Եւ ես կը խնդրէի ձեզ, տէր սպարապետ, այդ գերը ինքներդ վերցնէիք ձեր վրայ: Բուդան համակրում է ձեզ և յարգանը է տածում. միայն դուք կարող էք փրկել իմ երկիրը եկող անխուսափելի վտանգից: Եւ ես վստահ եմ գէպի ձեզ: Տակաւին մեր թշւառ հողը, քար ու թուփը, դար ու դաշտը չեն ցամաքել այն անմեղ արիւնից, որը թափւեց Սիսականի և մեր նակատա-

մարտներում: Ես այդ ժամանակ լսեցի ձեզ, վրէժինդիր չեղայ դէպի իմ հօր սպանողը, համեստութեամբ ստանձնեցի Սիսականի գաւառների կառավարութիւնը..

— Եւ զու, Վասակ, սիալւած չես, որ որդիական խոնարհութեամբ կատարել ես իմ պատւէրները: Այժմ ես շանքեր գործ կը գնեմ փրկել Սիւնիքը. իսկ Սիսականի իշխանները չարաչար կը տուժեն՝ քո հօր արիւնը ամենուրեք հալածում է իշխանասպան իշխանի որդիներին:

— Այդ ինծ անսահման տրտմեցնում է, հայր, — վրաբերեց Աշոտը: — Նրանք անձնւէր հայրենասէրներ են և կորիչ պաշտպաններ իրանց աշխարհին, մանաւանդ Վասակը, որը իր քաջարի ռազմիկ հանճարով իր հօր Բարկէնին շատ է լիշեցնում: Իմ հոգիս խորին դառնութեամբ խոռվւում է, երբ մեր գժբազզ աշխարհը այդպէս դատարկում է իր արիացոյն զաւակներից: Զէ՞ որ վազը, միւս օրը այդ ամբարտաւան սոտիկանի սուրը դէպի մեզ կարող է տարածւել, այն ժամանակ ի՞նչ կարող ենք մէնք միայնակ անել, երբ երկիրը զրկւած լինի իր անձնւէր դաւակներից: Այո՛, Սիսականի ալժմէան տէրերը՝ Վասակը և Աշոտը, արժանաւոր դաւակներ են իրանց հօր Բարկէնի: Եւ զու, Վասակ, առաւել խելացի և խոհուն կը լինէիր, եթէ ընդմիշտ մոռանալիր հօրդ վրէժխնդրութեան մասին. Քրիստոնէական ներողամտութիւնը ներկայ պարագաներում աւելի քան անհրաժեշտ է մեզ:

— Ճիշտն ասած՝ այդ անիրաւ ոստիկանի վրայ այնքան էլ հաւատ չի կարելի դնել. նա թէւ իմ իւրաքանչիւր խնդիրը յարգել զիտէ. սական ես չը զիտեմ՝ ի՞նչու ես ինձանից էլ երկնչում եմ: Ես տարակուսութեան մէջ եմ, թէ վաղը, միւս օրը ինձ էլ միւս իշխանների նման անակնկալ կերպով շղթայակապ անէ և Արարիա աքսոր է: Դիտէք, որքան իշխաններ, իշխանազունք են հեծում նրա շղթաների օղակներում:

— Ի զուր կասկածներ են, տէր սպաբապետ, — ասաց Վասակը, — նա ձեզ յարգում է. եթէ կեղծ լինէր նրա վերաբերմունքը դէպի ձեզ, նա այնքան ուրախութեամբ չէր կատարի ձեր խնդիրները:

— Իմ հայրս, դուցէ, ալժմ պէտք է նրան: Ընդհանրապէս շան հետ ակամայից ընկեր լինես՝ չը պէտք է փայտը ձեռքիցդ փայր դնես: Վասակ, այդ խարդախ շներին չը պէտք է այնքան հաւատ լնծալել:

— Ինչ և իցէ, վիճակը ձգւած է ես ընկել եմ նրա նանկերը, տեսնենք կը յաջողւի ինձ խոյս տալ նրանցից: Տակաւին ոչինչ սպառնական չի նրկատում իմ դէմ, այլ միայն տեսնելով բազմաթիւ իշխանների թախմալի վիճակը, ես ակամայից կասկածների եմ ենթարկում իմ վերաբերեալ: Ալլոց փրկելու յոյս ունեմ, մի՛թէ անկարող կը լինեմ ինձ փրկել: Այժմ պիտի աշխատել, Վասակ, քո մասին: Ես թերեւս վաղը մեկնեմ նրա բանակը և զիտմամբ խօսք բաց անեմ ձեր երկրի մասին և առելիքս կրկնեմ նրան: Թէւ մի քանի օր սրանից առաջ նա

ասաց. իշխան, արդեօք շնուտ կը յաջողւի իմ զօրքերին տիրելու Սիսականի և Սիւնեաց աշխարհները: Այժմ ինձ մնում է փրկել վերջինիս կեանքը: Տեսնենք ինչ է լինելու:

Սրծաթեալ աշտանակի ճրագի լուսը սկսեց աւելի և աւելի աղօտ կալծեր արծակել. նրա միշի ծէթը զրեթէ մերձենում էր իր վախճանին: Դա նշան էր, որ զիշերից բաւականին անցել էր. այդ պատճառով իշխաններից իւրաքանչիւրը վերկացաւ և առանձնացաւ իր քնարանը: Ապարանքում տիրեց խորին լոռութիւն:

Միայն Վասակ-Դաբուռն էր, որի ալրական կրծքից ստէպ-ստէպ լսւում էին ծանր հառաչանքներ: Իր երկրի գալոց արհաւիրը և սիրող արարածին տեսնելու բոցակէզ տենչը այդ զիշեր հանգիստ չէին տալիս նրան, և նա տանչւում էր թէ մէկի և թէ միւսի անկեղծ սիրով: Երկու օր էր, ինչ նա Անի էր մտել և այդ երկու օրւայ ընթացքում նա չէր տեսել իր սիրած զիցուհուն: Տեսնելով երկրի տագնապալի դրութիւնը, նա անբարեպատեհ էր տակաւին համարում օրինաւոր ամուսնական առաջարկներ անել նրան, չը նայած որ բոլորը նրա վրայ նայում էին իրեւ ապագայ փեսայացւի վրայ: Յուսազրելով իրան, որ վաղը թերեւս կը յաջողւի իրան տեսնել իր պաշտած արարածին, նա տակաւ առտակաւ սկսեց մշալ. սական ներքին հոգեկան ցնցումներն երկար, շատ երկար հանգստութիւն չէին տալիս նրան և նա երազների զարհուրանքով լի աշխարհում էր: Նրա դող-

գոշուն շրթունքները ստէպ ստէպ զառանցում էին, և զառանցելու միակ առարկան իր Մարեմն էր, որի անունը մի քանի անդամ արտասանել էին նրա անդայ շրթունքներ լի տենդալին սիրաբորբռք զգացմունքներով: «Ո՞հ, սիրելի Մարեմ, — զառացնում էր նա, — «դու իմն ես յաւիտեան... իմ վիրաւոր սիրաբ հոգուս անեղ զօրութեամբ քեզ եմ նւիրել... տարաբազգ հայրենիքիս գոռ թշնամու խստասրտութիւնը իրանց ահոելի արգելքներով, անդութ աշխարհի վիշտ ու ցաւը չնն կարող ինձանից խլել այն, ինչ որ տւել է ինձ քո չնաշխարհիկ, հրեշտականման պատկերը... թող իր ահեղ մէծութեամբ շուրջս ծփայ աշխարհի փառքը, կախարդական փայլը, արքայական պալատների շուրջ ու զարդը, այդ բոլորը, այդ բոլորը, սիրելի Մարեմ, անկարող կը լինեն փոխարինել քեզ և գէթ մի վայրկեան սփոփել իմ այրւած սիրտը: Դու, սիրելի Մարեմ, ինձ համար աշխարհի երշանկութեան հմայիչ վայելքների թագն ու պարծանքն ես... առանց քեզ ապրել անկարող է իմ հոգիս... երբ հոգիս անողոք ճակատագրի անգութ հարւածներով մրրկայոյզ ծփում էր արեան մէջ թաւալող հօրս անհուն վշտի տակ, ես քո մէջ գտալ, սիրելի Մարեմ, սրտիս սփոփանք և խաղաղութիւն. քո գեղանի գէմքը, իր լուսապայծառ ճանանչներով, լուսաւորեց իմ մռայլած երևակայութիւնը և ապրելու հրաւիրեց միայն իր համար: Այո՛, քո մէջ գտայ ես իմ փրկութիւնը և կետնքը.

Քո միակ անունը մի ահազնաբղորդ հոսանքով երերում է միտքս ու հոգիս, և անմոռունչ զազանի նման լոռում են իմ մէջ ծանրաշունչ վշտերը, փարատում է տառապանքս, և ես աշխարհի արարժներից ամենաերշանիկն եմ ինձ համարում: Դու ես իմ կեանք ու արել, Մարեմ, որ մի հուժկու թափով գեորում ես ինձ քո հրաբորբոք ներշնչութեամբ. երբ հոգիս մռայլում է, երբ կանխահաս յուսահատութիւնը քօղարկում է իմ երևակայութեան տեսանելիքները, երբ առօրեայ սգալի պատահարները ուժասպառ են անում ինձ իմ մեռած եռանդը և լրւած հաւատը քեզանով թե են առնում ու առաջ գնում դէպի երազածս վայելքների աշխարհը, ուր հասարակ մահկանացուները ուշացնոր են լինում և մեռնում: Սակայն այդտեղ էլ դու ինձ խնամք ես տանում և ողջ պաշտպանում: Ո՞հ, Մարեմ, այս բոպէիս, երբ մեր աշխարհը հարազատների արիւնով է ներկւում, երբ մեր ազգային սրբավայրերից լուռում է բաղցրաշունչ մեղեգիների անոյշ նօտան, երբ ամեն ինչ տակն ու վրայ է լինում, այդ օրհասական ճգնաժամին դու պահապան հրեշտակի նման ամենուրեք հետեւում ես ինձ, արհամարելով հուր, արիւն, սուր, թուր... դու ինձ անձներ պատւէրների մէջ ես վարժեցնում... Մեր հակատագիրը կախւած է մեր տարաբազդ հայրենիքի վիճակից՝ երբ նա կը թօթափէ թշնամու անարդ լուծը, երբ այնաել կը լուկ զէնքի շառաչիւնը, կը հաստատի նախնի

օրէնքը... այն ժամանակ, ո, իմ նազելի արարած,  
բաց ըո մարմար կուրծքը և հանդիսա տուր  
քո անբաղդ սիրեկանիդ... այն ժամանակի հայ-  
քենիքի երշանկութեան հետ՝ երշանիկ կը լինեն և  
ձեր սրտերը...»

Ամպերի ահագնագորդ որոտը ուշըի բերեց  
հոգեվմայլ սիրահարին, նա զարթեցաւ: Երկինքը  
բաց էր անում իր երեսը: Ա. Տպերը չքանում էին:  
Խաւարը հետզհետէ նսեմանում էր: Եւ այդ ընդ-  
հանուր մթութեան մէջ պարզ նշանաւում էր ա-  
րելքի շառագունած երեսը: Արշալուսը բացւում էր:  
Մի ժամ ևս, Շիրակի ընդարձակ դաշտավայ-  
րը պիտի փայլէր իր երբներանդ գոյներով արեկի  
ժառագայթների տակ: Ակսւում էր մի հովասուն  
առաւոտ:

Վասակ-Գաբուռի բորբոքւած երեակայու-  
թիւնը ոտքի կանդնեցրին նրան. նա փութապէս  
հազնեց և դուրս եկաւ դուռը: Պալատական սպա-  
սաւորները նայեցին նրան իրանց քնաթաթախ աչ-  
քերով և դարձեալ լնկան քաղցր մրափի տակ:  
Վասակը դուրս եկաւ և ուղղեց իր բալերը  
դէպի Ախուրեանի ափերը: Սիւնեցու անդադար  
արիւնը հանդիսա և դադար չունէր, և նա սիրում  
էր շրջադաշել երկար, շատ երկար, երբ գտնւում  
էր հոգեկան մտայոյց և խոռվ դրութեան մէջ:  
Ախուրի բոպէներում նա անդախ թափառում էր  
դար ու դաշտերը՝ ասես աշխատում էր բաժանել  
իր ծով վիշտը իր առաջ սփռւած լախածաւալ դաշ-

տավայրերի իւրաքանչիւր քար ու թփին, լեռ ու  
ձորին:

Մինչ սա այսպէս անցնում էր Ախուրեանի  
գետեղերքով՝ յանկարծ իրանից ոչ հեռու զիշե-  
րային յաւերժահարսերի նման սիգանեմ քալե-  
րով նշմարւում էին մի քանի օրիորդներ:  
Դա Մարեմն էր, որը ըստ իր սովորութեան,  
վաղ առաւօտներ արևից առաջ, այն ժամանակ,  
երբ խաւարը փոքր առ փոքր նօսրանում է երկրի  
երեսից, սիրում էր Անիի բարձրաւանդակներից իշ-  
նել Ախուրեանի ցուրտ չըերի մօտ իր վաղորդեան  
զբոսանքը կատարելու, երբ տակաւին Անիի բնա-  
կիները քնած էին լինում և երբ նա աւելի քան  
ազատ էր իրան համարում անհամեստ հետաքրք-  
րութիւնից: Նրշապատաճ մի քանի զոյտ նոյնպէս  
գեղանի նամիշտներով, որոնց մէն էր ամենագե-  
ղեցիկ երանեակը, նա աւելի նմանում էր մի յան-  
դուգն գիցուհու, որը ասես եկել էր իր աստւա-  
ծային ահեղ մտրակի հարւածներով հալածելու խա-  
ւարի սրտամաշ իշխանութիւնը: Երկայն սեաթոյր  
գիսակները ծփծփում էին նրա հարուստ թիկունքի  
վրայ և գրեթէ գուրգուրում գետեղերքի կա-  
նաչագարդ ափերը: Հողանի բազուկները, սեորակ  
խոշոր աչքերը լայն ճակատի հետ՝ թւում էր, սեր  
ու գգւանք էին սփռում իրանց շուրջը:

Սիւնեցի ամենի զաւակը տեսաւ իր գիցու-  
հուն և ուղիղ նրա կողմը գնաց:

Բազրատունեաց հրեշտակը տեսաւ այդ և

ձեռքի մի շարժումով նշան արեց իր նաժիշտներին  
փոքր ինչ հեռու գնալ իրանից:

Վասակը մօտեցաւ և խոր զլուխ տալով նրան՝  
փոքր ինչ դապւած ձայնով նկատեց:

— Ո՞րքան երջանիկ եմ ես, որ օրւայ այս  
պահուն, երբ երկնքի թագուհին տակաւին չէ ար-  
ժանացել վայելելու այս օրւայ աշխարհիս սէր ու  
վայելքները՝ ինձ վիճակում է երես առ երես տես-  
նել նրա հրեշտակներից մէկն ու մէկին, թագրա-  
տունեաց օրիորդին, որի չնարշխարհիկ պատկերը  
ինձ քուն ու դադար չէ տալիս սկսած այն օրից,  
երբ ոտք եմ կոխել այս ապարանքը:

— Վասակ, ինձ ամեն հասարակ մահկանացու  
կարող է տեսնել օրւայ այս պահուն այս վայրե-  
րում, եթէ յանդզնի շրչագալել գետի այս ափերում:  
Ես իմ սովորութեան համաձայն ամեն օր այս պա-  
հուն դրօսանք եմ կատարում Ախուրեանի այս շրերի  
ափերին:

— Եթէ ես այդ կանխապէս իմացած լինէի,  
ամեն օր իմ սրաթոիչ նժոյգներով կ'աշխատէի  
խանգարել քեզ քո դրօսանքը. միթէ թագրատու-  
նեաց մրայօն կոյսը պիտի սրանեղէր իմ այդ յան-  
դուցն ձեռնարկութեան վրայ, — սրտի խորին բա-  
րախմունքով և փորձառու նկատողութեամբ վրայ  
բերեց Վասակը:

Մի զւարթագին ժպիտ անցաւ Մարեմի չքնաղ  
գէմքի վրայ, և նա պատասխանեց:

— Է՞ս, ի՞նչ. ինքներդ կը յոդնէիք, ինքներդ

կը վաստակէիք, ես ձեզանից խրանացողը չեմ, երբ  
դուք այդ անէիք, ես ուրախ կը լինէի, չէ որ...

— Զէ որ «Ես քոնն եմ», — ընդհատեց նրան Վա-  
սակը, — երեկի այդ էիք ուզում ասել:

Մարեմը ժպտաց և մնաց լուռ:

Վասակը շարունակեց.

— Սիրելի Մարեմ, զի՞տես, ո՞րքան տանջանք-  
ների եմ ենթարկում, ո՞րքան հոգեկան խռովու-  
թիւններ են պաշարել ինձ սկսած այն օրից, երբ  
հայրս հայրենի պաշտպանի նախանձախնդիր ողով  
լցւած՝ զոհ գնաց իր տեսչանքներին, երբ մեր ամ-  
բարտաւան ոսոխ-թշնամին՝ թուզան, իր կործանիչ  
սուրբ տարածեց մեր տարաբաղդ հայրենիքի վրայ  
և թերես պիտի տարածէ: Իմ մննդավայրս էլ վր-  
տանդի մէջ է այժմ: Այդ ընդհանուր տավնապաների  
մէջ միայն գու ես, որ պահապան հրեշտակի նման  
ամեն տեղ հետեւում ես ինձ և միիթարութիւն,  
սէր ու խաղաղութիւն շշնջում: Ստկայն ես տա-  
կաւին անձեռնհաս եմ իմ հրեշտակին կրծքիս վրայ  
հանդիստ տալու, այո՛, անձեռնհաս եմ, երբ տակա-  
ւին մեր հայրենիքի հօրիզոնը չէ պարզւել թշնա-  
մու սփռած սեազոյն թուզպերից, անձեռնհաս եմ,  
երբ տակաւին հայրենի հօրիզոնը մոալլ մառախուղ-  
ներով է պատած: Երբ կանցնեն այդ բոլորը, ո՞հ,  
իմ նազելի Մարեմ, մեզ ալլես աշխարհի հրեղէն  
բոյակէզ սիւները անկարող կը լինեն բաժանել մի-  
մեանցից: Ո՞հ, ե՞րբ կ'անցնեն այդ փոթորկալի  
օրերը:

— Շնորհակալ եմ, Վասակ, որ մեր տարա-

բաղդ հայրենիքի սէրը առաւել տեղ ունի բռնածքո սրտում: Սիրածդ էակը այն ժամանակ միայն քեզ արժանի կանի իր սէր ու գգւանքին, երբ դու հայրենասէր ոգով կ'աշխատես ամոքել մեր տարաբաղդ հայրենիքի վէրքերը:

Սրաի անհում բաղցրութեամբ լսում էր Վասակը նրա նազելի շրթունքների արտասանած իւրաքանչիւր բառը և ցնծում աննկարազրելի բերկութեամբ:

— Սիրելի Մարեմ, որքան այժմ ինձ ձգել է այստեղ քու անփոխարինելի չերծ սէրը, այնքան առաւել հայրենիքիս փրկութեան տենչն է շտապեցրել անել այդ բայլերը: Քո պապիկդ խոստանում է իր միշտամութիւններով շեղել Բուզայի զորքերի ընթացքը Սիւնեաց աշխարհից:

— Այս է իմ հաւատը դէպի Հայաստանի Աստուածը. վերջապէս, նա ել կը լսէ մեր սևաւոր հողի իւրաքանչիւր անկիւնից հեծող հազարաւոր ազագակները, գառնազին հեծեծանքը, անվերջ սուդ ու շիւանը, լաց ու կոծը...

Մարեմի բորբոքւած դէմքը այս պահուն մի զայրոյթով լի չաստուածունու էր նման, որը իշել էր ասես պատժելու աշխարհի վրայ տիրող ամբարտաւան սկզբունքները և ապօրինի գործողութիւնները:

— Ոհ, իմ նազելի արարած, խօսի՛ր, խօսի՛ր, քո իւրաքանչիւր բառը նոր հոգի, նոր եռանդ է ներշնչում ինձ: Սիւնեաց աշխարհը երջանիկ է, որ

քեզ պէս մի թագուհի է ունենալու: Եւ ստկայն երբ կը հասնի այդ յաւէրժական ուրախ ժամը:

— Թո՞ղ անցնեն փոթորիկները, Վասակ, ամեն բան արդէն վերջացած է իմ սրտում, ես քոնն եմ յաւիտեան:

— Այո՞ւ, թո՞ղ անցնեն:

— Այժմ մնաս բարեաւ, արեր իր ոսկեգոյն շողերը արդէն երեան է բերել մեր լեռների գաղաթներին:

— Իմ միտքս ու հոգիս միշտ քեզ հետ են. գնաս բարեաւ: Նաժիշտների խումբը շրջապատեց Բագրատաւնեաց այդ գեղանի արարածին և ուղղեորեց դէպի իրան պալատները:

Ե՞րկար, շատ ե՞րկար Վասակը ակնապիշ եղած ուշացնոր աչքերով հետեւում էր նրա իւրաքանչիւր բայլերին, մինչև նա անհետ կորաւ նորա տեսութիւնից:

### VIII.

Ծանրասազատուկ խաւարը իր սևաթոյը թւերի տակն էր առել Կոտաց գաւառը: Խաւարի այդ գերեզմանական լռութիւնը մերթ ընդ մերթ խանգարում էր Գեղամալ լճակը, որը յուսահատ սզւորի նման ընդհատում էր տիրող լռութիւնը իր գառնազին հեծեծանքներով և անվերջ վալ-վույով, որոնք արծագանք էին տալիս իւրաքանչիւր անգամ, երբ նրա համաչափ ալիքները իրանց մեղմ շրմփոցներով զարնւում էին լճի բիրտ ափերին և

հազար ու մի ողբազին ծայներ հանում, որոնք զիշերւայ այդ պահուն մի ահաբեկող երկիւղ էին առաջ բերում: Ի՞նչ էին շշնչում իրանց հարազատ ափերին այդ խռովւած ալիքները: Ի՞նչ պահանջներ էին անում նրանցից—յայտնի չէր: Միայն նրանք իրանց այդ ողբազին աղաղակներով առաւե ևս զարհուրելի էին գարձնում լին ներկայութիւնը, որի խուլ հառաջանքը թուզում անցնում էր կոտաց լեռների գաղտթները՝ հազորդելով նրանց այն վիշտը, թախիժը, որոնք գարերի ընթացքում խորսդոյն խոցեր էին բաց արել նրա ջրերի կրծքում: Խաւարի այդ զարհուրելի թագաւորութեան միջից, այդ երկրի լեռները անմոռունչ հսկաների նման առես ձգւում, երկինք էին բարձրանում, որտեղից զիւրին էր նրանց դիտելու լին մելամաղճոտ կերպարանքը, որտեղից զիւրին էր նրանց փարատելու նրա վէրքերը, որոնց ցաւի տակ նրա աղեխարշ մըմունչները ցնցող տակաւորութիւն էին դործում նրանց երակներում:

Գիշերւայ այդ պահուն այդ գաւառի Զագ գիւղում (այժմ Երանոս \*) ձէթի ազօտ նրազը հեռուից թոյլ բոցերով պլազում էր և երկչոս կերպով իր շուրջ սփռում լոյսի վախկոտ ճամանչները: Ճրագի մօտին, մի անշուք սենեակի մէջ, երկու հնամաշ օթոցների վրայ ծալապատիկ նստոտած էին երկու հողի: Նրանցից մէկը լիսունին մօտիկ մի առողջա-

\*) Յուշիկը հայրենեաց հայոց. Հատոր ա. եր. 444:

կաղմ մարդ էր, որի սպիտակ վարսերը, լի թախիծով լցւած գէմքը իր խորունկ կնճիռներով, աւելի քան մելամաղծոտ տեսք էին տալիս նրան: Նա լուռ նստած էր և խորին զառնութեամբ լսում էր խօսակցի պատմւածքը և ստէպ-ստէպ հարցեր էր առաջարկում նրան: Այդ մարդը տան տէրն էր, իսկ ծիւսը՝ նրա հիւրը: Սենեակի պատերին ամրացրած տախտակների վրայ գարսած էին բազմաթիւ մեծ ու փոքր գրքեր, որոնք ցուց էին տալիս թէ այդ մարդը գոսպէտ է և սիրում էր ընթերցանութիւն: Այդ մարդը բանիքուն դպրի հաչակ ունէր և յայտնի էր իր բարեբարոյ կենցաղով, որի ընտիր վարը ու բարը և լայն աշխարհահայեացքը ու ժամանակի ողուն համապատասխան զիտութիւնը՝ վազուց իրանց վրայ էին գրաւել Բագրատունեաց տէրերի ուշագրութիւնը: Միւսը՝ փարթամ կազմւածքով մի երիտասարդ էր, որի առնական կերպարանքը ահ ու սարսափ էր տարածում իր շուրջը: Նրա անվեհեր ոգին վազուց էր շարժել գէպի իր անձնաւորութիւնը ուշագրաւ պատկառանք: Նրա կրակոտ աչքերը ցնցող գող էին սփռում նայողի վրայ: Նա ոտքից գլուխ սպառագինւած էր. զէնքերը տակաւին չէր արձակել իր վրայից Զգեստները կրում էին իրանց վրայ արեան հետքեր, որոնք իրանց շառագոյն ծալքերով բնորոշում էին նրա ուազմիկ ոգին:

Առաջինը Զարարիա Զագեցին էր: Երկրորդը՝ Միստիանի տէրը՝ Բարեկէնի որդի Վասակը:

— Այդպէս, Միստիանի տէր, մեր անարատ

լեռներն էլ թշնամին ներկեց մեր հարազատների արիւնով:

— Այս, ներկեց. սակայն այդ շատ թանկ նոտեց նրան: Մեր իւրաքանչիւր կաթիլ արեան փոխարէն նա տասնեակ զիակներ թողեց մեր անդընդախոր ձորերում: Սիսականի արիագոյն դաւակները թանկ ծախեցին իրանց կեանքը: Մեր լեռների իւրաքանչիւր քար ու թուփը զգալի հարւածներ տեղ մեր գոռ թշնամուն: Եւ այդ հարւածները աւելի քան զգալի կը լինէին, եթէ մեր երկրի տէրերը չաճապարէին թողնել իրանց երկիրը և չաճանալին իրանց անառիկ ամրոցներում:

— Այս, տարաբազզաբար, մենք բաղմաթիւ այդպիսի իշխաններ ունենք, որոնք չը զիտէն մեռնել իրանց ժողովրդի հետ և ամեն անդամ, երբ հայաստանի այս ու այն ծալքերից խուժում է արտաքին թշնամու հոսանքը դէպի մեր երկրի ներսը, տուժողը մեր թշւառ և խաղաղ ժողովուրդն է լինում, իսկ նրանց տէրերը ամեն ինչ ճակատազրի քմահածոյըներին թողած՝ իրանք միմիայն իրանց զլիսի ճարն են անում: Եւ այսպէս, ամեն ժամանակ:

— Զգալով գալոց ահրաւերքի ծանրութիւնը, ես չանքեր գործ զրեցի 'ի մի համախմբել մեր ցըրւած ոյժերը և լաւ չարդ տալ թշնամուն: Սակայն դիւրին չեր ինձ խելքի բերելու մեր այդ ոյժերի առաջնորդների ըմբոստ ողին: Մինչ այս, մինչ այն ես ինձ պաշարւած տեսայ հազարացոց անթիւ զօրքերով: Ի՞նչ էր մնում ինձ անել, եթէ ոչ փրկել իմ

զլուխը թշնամու սրից: Վերջապէս, ես կարողացայ փախուստ տալ թշնամու սրից և ահա՛ ձեզ մօտ եմ:

— Իմ անշուք տունը պատրաստ է միշտ անձկալի ապաստան տալու հայրենեաց անձնւէր պաշտպաններին:

— Սակայն վաղը ես պիտի խոյս տամ այս- տեղից, որովհետեւ նենգամիտ թշնամին վնդռում է ինձ: Միթէ սակաւ է մեր գաւաճանների թիւր. չէ՞ որ նրանք վաղը, միւս օրը կարող են մատնել իմ ուր լինելը: Այն ժամանակ թէ ես և թէ գուք կորած ենք:

— Այս, անհրաժեշտ է խոյս տալ. սակայն գէպի ուր: Այժմեան չարաբաստիկ հանգամանքնե- րում ամբարտաւանների թիւր շատ է, որոնք Բու- զալին հաճոյանալու համար, թերեւ կարող կը լի- նեն խախտել ասպնջականութեան սուրբ աւանդը և ձեզ թշնամու ձեռքը տան:

— Այս, ես զեռ երեկ ակնատես եղալ մեր թշնամու ամբարտաւան զազանութիւններին: Ներ- կելով հայրենիքիս ամեն մի քար ու թուփը մեր հարազատների արիւնով խորտակելով և հիմնայա- տակ կործաննելով ազգային սրբավայրերի փառահեղ շէնքեր, նա այդ բոլորը բաւական չը համարեց, այլ ուժգին ճեպով սկսեց հալածել ինձ, չանքեր գործ գնելով բանել ինձ: Սակայն այդպէս չեղաւ: Այն ժամանակ, երբ նրանք ձգաւում էին իրանց որոգայթ- ների մէջ զլորելինձ—սիսական ազատ արիւնը վայր- կենաբար եռաց երակներում, և ես անակնկալ շարժումով գարձալ դէպի նրանց շողաց լեռնական

երկսայրի սուրս մի տռանձնակի շառաչիւնով, և ինձ հալածող տասնից աւել հսկանները իւրաքանչիւր անդամ իրար յաջորդող շառաչիւնից յետոյ՝ մէկ-մէկ դիմաւաւալ եղան իրանց արեան մէջ։ Տեսնելով իմ թիկնապահների յանկարձահաս մահը, նրանց զօրավարը ցանկացաւ փրկել իր կեանքը փախուստով։ բայց այդ ժամին սրաթռիչ նժոյզովս վրայ հասալ, և սրիս մի թեթեակի շարժումուվ գլորեցի նրան գետին։ Ես այդ յանդուդն զօրավարին՝ գիտէ՞ք ի՞նչ մահով սպանեցի։ — ազնիւ կռւի սուրը վերջ չը տւեց նրա անարդ կեանքին, այլ նժոյզիս հումքու սմբակների տակը նա կոխկրաւելով գտաւ իրան արժանի մահը։ Մահւան վերջին բոպէներին նա յայտնեց ինձ, որ իմ գլուխր արդէն վաճառւած է և հագարացոց ագան խուժանը իր անյադ ընչաքաղցութեանը յագուրդ տալու տենչանքով բռնկւած՝ ջանքեր կը դործ է ինձ սրսալ։ Ուստի ես վճռեցի անցանել դէպի արեւելը՝ Գարդմանց աշխարհը, Կարին իշխանի մօտ։

— Միթէ կարելի է այդքան հաւատ ընծալել Կարին իշխանին։

— Ես տարակոյս չունեմ, նա այնքան խարդախ լինի, որ խախտէ ասպնջականութեան սրբագործւած աւանդը։ Զէ՞ որ նա ինքը լի ատելութեամբ է բորբոքւած դէպի Բու դան։

— Այդ ճիշտ է. սակայն, իշխան, ես տարակուսութեան մէջ եմ, թէ այդ մարդը ձեր եղբօր Աշոտի վրէժը ձեղանից առնէ. չէ՞ որ Գրիգոր Սուփանի գեղանի դուստրը՝ Զարուհին, ձեր եղբօր

Աշոտի նշանադրւած կինն է. իսկ երբ այդ անբաղդ օրիորդի հայրը ընկաւ ձեր հօր սրից, նրա եղբայր Վասակ-Գաբուոր դրժեց իր խոստումը, ցանկանալով այդ իր քոյզը Զարուհին Կարին իշխանին տալ։ Միթէ չէք յիշում, որպիսի որոգայթների էր դիմում ձեր եղբայր Աշոտը խանզարելու Գաբուոր այդ զիտաւորութիւնը։ Միթէ այդ ոխակալ և նենդամիտ զոռ իշխանը, Կարինը, մոռացուծ կը լինի ձեր եղբօր գործերը։ Գոնէ ես նրա մասին տարակուսուց եմ։

— Այդ Գաբուոր սկսած այն օրից, երբ հաւատացած եղաւ, որ Բագրատուննաց հրեշտականը ման օրիորդի, Մարեմի, սիրտը իրան է պատկանում և Հայոց սպարապետի ու նորա որդի Աշոտի նման պաշտպաններ ունի, կորցրեց իր նիստ ու կացի իշխանափայել չափը։ Այս, այդ Մարեմը շատ բան արեց. նրա գեղազան պատկերը ուշացնոր էր արել երկու Վասակներին, որոնցից մէկին նւիրեց իր սիրտը, իսկ միւսը՝ յուսահատ գաղանի նման սուգ ու վշտով լցւած՝ միշտ խուլ հառաջանքների մատնւեց։ Եւ այդ տարաբաղդ հառաջողը՝ ես եմ, ես եմ, որի համար յաւիտեան կորաւ աշխարհը իր քաղցրաշունչ վայելքներով։ Ես եմ, որի համար կեանքը մանրատաղտուկ է և գարշելի։ Այս, ես եմ, որ այն օրից սկսած ապրում եմ միայն դատարկ շնով. սիրտս մէռած է. նրա բաբտիմունքը սկսած այն օրից՝ վշտի, սուգ ու շիւանի օրօրներ է մրմնացում ինձ։ Այժմ այդ կեանքը այնքան էլ թանկ

չէ ինծ համար: Ես կերթամ Գարդմանաց իշխանի մօտ:

— Թո՞ղ Տէրը օդնական լինի ձեզ. ուր է կաթողիկոսը, իշխան, այս քանի ժամանակ է, ես նրա մասին ոչ մի տեղեկութիւն չունեմ:

— Նա շրջում էր իր տարաբաղդ հօտի մէջ և յորդորներ էր կարդում նրան՝ համատարիմ մնալ հայրենի կրօնին, հայրենի սրբութիւններին: Իսկ այս վերջերս էլ յոդնածութիւնից, թէ ինչից, առանձնացել է Մաքինեաց սրբավայրում, և ինչպէս պատմում էին, տկարացել է:

— Տարաբաղդ ազգ, եթէ այս խառնաշփոթութեան մէջ նա էլ կնքէ իր մահկանացուն, ով դիմէ ինչ է լինելու մէր դժբաղդ ժողովրդի վիճակը, որը ներկայ տաղնապալից ըովէներում հոգեկան մխիթարութեան է կարօտում:

Երկար այսպէս խօսակցում էին Սիսականի տէր Վասակը և Զաքարիան, մինչև Մորփէոսը սկսեց կատարել իր անհրաժեշտ պահանջները: Նրանք առանձնացան իրանց համար պատրաստւած օթեակներում և ընկան նրանց գիրկը: Առաւօտեան Սիսական Վասակը տւեց Զաքարիակին իր հրաժեշտը և նանապարհ ընկաւ գէպի Գարդմանաց աշխարհը:

Մի քանի օր գաղտնագողի ճանապարհորդելուց յետոյ, վերջապէս, նա հասաւ Կտրին իշխանի ապարանքը: Կտրին իշխանը նրան մեծ շըով ու պատւով ընդունեց: Ապա գաւաճանութեամբ կապեց նրան և Բուղալի բանակը ուղարկեց, ակն

ունենալով ստանալ նրանից պատիւներ և չենթարկւել տանջանքների, մի խօսքով, խարդախութեամբ որսալով Վասակին, նա ակն ունէր հաճոյանալ նրան. սակայն այդպէս չեղաւ, ինքն էլ ապագայում կրեց նրանից իր արժանի պատիժը:

Տեսնելով Վասակին, Բուղան ուրախացաւ և պատգամաւորներ ուղարկեց նրա եղբօր Աշոտի և մօր մօտ՝ պատւիրելով փութալ իր գուռը, Եթէ ոչ սպառնում էր կտտամահ անել Վասակին: Մինչ պատգամաւորները ճանապարհին էին, հագարացոց գօրքերի մի մասը պաշարեց նրանց և բռնեց: Ապա նրանց հետ և շատերին կապանօք Դուխն բերեցին Բուղալին ներկայացնելու, որը կրկնապատկեց նրանց կապանքները և հրամայեց զգուշութեամբ բանտարկել: Դրանից յետոյ իր հետ վերցնելով բոլոր գերիներին՝ առաջ խաղաց գէպի արևելք:

IX.

Յայսմ գառնութեան ժամանակի Ովացիցի կաթողիկոսն Յովհաննէս ո՛չ էր 'ի Դուեին, այլ շրջէր յայլ և այլ գաւառս յայցելութիւն և' ի բաշալերութիւն տառապեալ ժողովրդոց և ունէր իւր կայսն հանգըստի ի Գեղարքունիսն՝ 'ի վասն Մաքենոցաց, յորում և հիւանդացեալ 'ի բազում ցաւոց սրաի իւրոյ՝ վախճանեցաւ յամի Տեառն 854 և թաղեցաւ յայն վանսու

Չաճկան

Գեղամալ լճակի Սօթից զաւառի հարաւալին բարձրաւանդակների վրայ հպարտ փառահեղութեամբ բազմած էր այդ ժամանակներում Մաքենաց՝ \*) հաշակաւոր մենաստանը, որը հայոց դրեթէ բոլոր վանքերի մէջ նախապատիւ տեղ ունէր բըռնած իր ասրազգեստ միանձանց խստակրօն կենցաղավարութեամբ և դիտնականութեամբ:

Մեր նկարազրած ժամանակից մի դար առաջ այստեղ ուշազրաւ էին երկու Սողոմոններ, մէկը

\*) Այժմ Պաղլ-վանը, որը կիսախարխուլ դրութեան մէջ է:

առաջնորդ էր, իսկ միւսը՝ հայր Սողոմոնը՝ հարանց հայր, իր հոգատար չանասիրութեամբ ծաղկեցրեց այդ սրբավայրում ժամանակի ոգուն համապատասխան դիտութիւն, որը ապագայում տակաւ առտակաւ անեց և պատկառանքով տեղ բռնեց մեր վանքերի շարքերում: Այս հարանց հայր Սողոմոն վարդապետը թողեց մեղ մեր գպրութեան և եկեղեցւոյ տօնականը: Այս վանքը հայ ազդի քրիստոնէական և դիտնական մի քանի լուսատու աստղերի է սնուցել իր ծոցում, ինչպէս Ստեփաննոս Սիւնեցու վարժարանն է եղած, ժառալել է Վահան Գողթնացուն իրու օթեան. եղել է Մաշտոց երկրորդին մարզարան և տւել է ազդին մի քանի ուրիշ աչքի ընկնող գիտնական հովիւներ:

Մօտաւորապէս 839 թւականին պատրիկ Բագրատ Բագրատունու իշխանութեան օրերում պարսից ազդից ոմն իշխան Բաբան անունով, որը բնակւում էր Բագրատում, ապստամբւեց ամիրագետից և, ժողովելով իր շուրջը բազմաթիւ զօրքեր պարսիկներից և ուրիշ ազգերից, սկսեց արձակել ամիրագետի այլ և այլ իշխանութեան տեղերի վրայ: Որոնց ասպատակում էր, աւարի էր տանում, բազմաթիւ մարդկանց գերի էր տանում և աւերում էր վանքեր, քաղաքներ և զիւղեր: Արա դադանութիւններին զոհ զնաց և Մաքինեաց վանքը, որին Բաբան աւերել էր, և միաձունքն յան ու ցրիւ էին եղած: Սակայն 851 թւականին Վաստիկ-Գարուր վերստին նորոգեց նրան, և կրօնաւորը ժողովւցին և տիին նրան իր նախկին կերպարանքը:

Այս մենաստանի այն լեռներում, որոնք անշրապետ էն կազմում Գեղարքունիքաց աշխարհի և Վալոց- ջորի մէջ, գտնուում է մի կարկաչանոս աղբիւր, որից սկիզբն է առնում այն վտակը, որը իր ար- ծաթանման շրերով անրնդհատ քորում է մենաս- տանի կուրծքը, դրոշմում է նրա նւիրական հողե- րին իր սրտառուչ համբուրները և զիխակոր անցր- նում է և թափւում Գեղամայ ծովակը: Այդ օր Գեղարքունեաց աշխարհին լատուկ վախկոտ արեր մերժ ընդ մերժ արտաքս էր բերում իր կարմիր երեսը սև թուղպերի տակից, ախուր աչքերով դի- տում Մաքինեաց ալդ վտակը, որի շուրջը խմբւել էին մի քանի մարդիկ՝ դրանք վանական ձկնորս- ներն էին:

— Տղակը, բաւական է դանդաղդանդաղ շարժ- ւեք շրերի մէջ, ծուկ բռնողը ծկան էլ արագաշար- ժութիւն պիտի ունենայ: Փութացէ՛ք մի բան գոնէ բռնելու, չէ՞ որ կաթողիկոսը կարող է այժմ զարթ- նել և դարձեալ իր պահանջը կրկնել և ծուխն ու- զել: Նկատեց ձկնորսներին մի պատկառելի վար- դապետ, որը շրջում էր վտակի ափերին:

Դա վանահալըն էր, Ստեփաննոս վարդապետ, Մաշտոցի դաստիարակիչը:

— Հայր սուրբ, չը գիտենք՝ այսօր ի՞նչու մեր գործը աշողակ չի դնում: մեր բաղդիցն է այդ, թէ մեր կաթողիկոսի: Բայց այս քանի՛ ժամանակ է կարծես մեր հայերիս բաղդը ամեն տեղ քնած է: Ոչ ժողովուրդը բաղդ ունի, ոչ իշխանը և ոչ կա- թողիկոսը: Իշխանները՝ որը ապաստանել է անա-

ռիկ ամրոցները, որը հեծում է Բուղալի կապանք- ներում. Ժողովուրդը մորթւում է անմոռնէ զա- ռան նման: իսկ մեր հոգեոր պետը տկար պառ- կած է, — նկատեց վեհափառի սպասաւորներից ա- ւագագոլնը, որը եկել էր ձուկն որսալու:

— Կարէս, էլի՞ դու քո ճառերն սկսեցիր. քեզ ասում են ձուկ որսա: իսկ դու քո զիտցածն ես ճառում:

— Բա՛, ի՞նչ անեմ, հայր սուրբ, թերես մի բան կարելի լինէր որսալ, եթէ արեր այսքան բարձրացած չը չինէր. չէ՞ որ միջօրէի արեր իր կիզի ճառագայթներով, ով գիտէ, որ տարտարոսն է փախցրել ծկներին: Մեղ պիտի կանխապէս պատ- ւիրած լինէիր, որ մենք վաղ առաւօտեան մեր գործը գիտենալինք:

— Օրհնած, տկար մարդը ի՞նչ է հարցնում ժամ ու ժամանակ: Նա կարող է Մասիսի գլխի ծիւն պահանջել և այն էլ առանց սպասելու՝ մի րոպէի մէջ: Նա հէնց նոր աչքերը բաց արեց և ձուկ պահանջեց:

— Ճիշտ է, հայր սուրբ, որ վեհափառը այս գիշերը շատ վատացաւ. հայր Մաշտոցը պատմեց մեզ:

— Ճիշտ է. մենք լոյսներս կտրեցինք: Սա- կայն, ինչպէս երեւում է, խեղճ մարդը զուր տեղն է տառապում: Ալես հայոց ազգը չի կարող ունենալ Ովացեցի Յովհաննէս կաթողիկոս:

— Դժբաղդութիւն դժբաղդութեան ետեից.

ի՞նչ վատ աստղի տակ ծնւած աղդ ենք, հայր սուբբ...

— Կարէն, դու աշխատի՛ր, զոնէ մի երկու հատ բռնելու, իսկ ես գնած վեհափառի մօտ. վաղուց է, որ ես զուրս եմ եկել նրա մօտից:

Վարդապետ՝ յօրանշելով մի քանի անգամ և մեղմ կերպով չըխկացնելով ծեռքի տէրողորմիան, վերադարձաւ դէպի վանքը, որի բարձրասարա պարիսպների արեւելեան կողմի հոյակապ շէնքերից մէկում մի փայտեաց մահճակալի վրայ պառկած էր մի պատկանելի դէմքով ծերունի: Սենեակի թէ յատակը և թէ պատերը շինւած էին կոփածոյ քարերից, որոնց վրայ նարտարապետորէն կերտած էին զանազան նկարներ: Պատերը պատած էին գորգերով, գորգեր էին սփռւած տեղ-տեղ և յատակի վրայ: Ծերունու շուրջ գանւում էին մի քանի մարդիկ, որոնք խորին դառնութեամբ լցւած չէին թարթում նրա վրայից իրանց թախծալի հայեցքը: Սյուտեղ մտաւ և Ստեփաննոս վարդապետը և, մի հարեւանցօրէն հայեցք զց'լով ներկայ եղողների վրայ, մօտեցաւ ծերունու մահճակալին: Ծերունին Յովիաննէս Ովայեցի Կաթողիկոսն էր, անյուսալի հիւանդ: Սենեակում տիրում էր խորին լռութիւն, որը թառում էր՝ նախադուշակում էր ի՞նչ որէ մի ծանրաշունչ աղետ:

Հիւանդը զուռանցանքների աշխարհումն էր, և մերթ ընդմերթ նրա խուլ կրծքից լսում էին նրա հոգու ահեղ վերքերի աղեխարշ տառապանքը և ծանր հառաջանքը, որոնք ընդհատում էին միայն

այն ժամանակ, երբ նա խօսում զառանցում էր: Վերջապէս, հիւանդը բաց արեց իր կիսամեռ աչքերը, լռութեամբ դիտեց իրան շրջապատողներին և մի քանի անգամ հաղիւ լսելի ձայնով մըրձընչաց...

— Այս ովքեր են, այս ովքեր են, ոչ ոքի չեմ ճանաչում.—ապա փակեց աչքերը:

Ստեփաննոս վարդապետը փութաց պատասխանելու նրան:

— Վեհափառ տէր, այս երիտասարդ՝ Սիւնեաց իշխանն է՝ Վասակ-Գարուոր, այս՝ Զաքարիան է Զագեցին, մեր վանքի նախկին սաներիցն է, այս քանի հոգին էլ մեր վարժարանի ուսիցիչներն են, սրանք բոլորն էլ այցելութեան են հիել ձեզ:

— Սիւնեաց իշխան... խուլ ձայնով կրկնեց մի քանի անգամ հիւանդը, ապա լախն բաց անելով իր պղաոր աչքերը, լռութեամբ դիտեց նրան մի քանի վալրկեան, յետոյ խօսեց.

— Սիւնեաց տէր, տարաբազզ ազգիդ կաթողիկոսը մեռնում է, իշխանները գերի են վարւում Սրաբիալի անապատները, երկիրը ծփում է իր դաւակների արեան մէջ, մեր արիւնարբու գոռ թրշնամին չէ դագարում սուարացնելուց իր զօրքերի թիւը նորանոր գազանութիւններ առաջ բերելու մեր սեւաւոր երկրում: Ես էի աստանզական գաւազնը ձեռքս տուած՝ միիթարում և սփոփում այս տագնապալի բոպէներում մեր բաղմատանչ զա-

ւակներին, սակայն ես էլ ուժասպառ ընկայ մահւան ճիրանները: Հայաստանի սգաշղարշը կատարեալ է այժմ: Թռող ողբա՛ նա իր զաւակների կորուսար: Թշնամու ամբարտաւան ծեռքը խսպասխորտակում է մեր տարաբազդ հայրենիքը... սակայն ոչ, տակաւին չէ մեռած Հայաստանի Աստուածը: այս խարխուլ կրծքիս խորքերից մի ինչոր ձայն շնչում է ինձ թէ՝ այս երկարատև արիւնալի ատպապներին յաջորդելու է մի հճայիչ առաւտ, սակայն ե՞րբ, այդ անկարող է երեակայել հոգիս: Միայն տուր իմ տարաբազդ զաւակներիս իմ վերշին պատերը, հաղորդիք մեր գժբազդ իշխաններին իմ վերջին կտակը՝ օգնութեան ծեռք մեկնելու Բաղրատունեաց տէրերին, որոնց մէջ կայ մէկը, որի խոհուն սիրար և խելացի աշխարհահայեցքը արդիւնաւէտ և բարելի խոստումներ են կեղոնացնում իրանց մէջ: Դա Աշոտն է սպարապեափ որդին: հաղորդիք նրան, որ մեռնում եմ, օրհնելով նրան: Նրա գժբաղդ հայրը ակամալ ընկաւ Բուզայի հանկերը և դործիք զարձու նրա խստարտութիւններին: հաղորդիք նրան, որ մահւան տաղնապների միջից, յանուն պաշտպանութեան մեր բաղմափաստակ աղդի, յորդորներ եմ կարդում խելացի հեռաւեսութեամբ ըմբռնել հագարացոց բաղաքականութեան նպատակը և ըստ այնմ վարել մեր հայրենեաց գործերը...:

— Վեհափառ տէր, ես աներկայ եմ, նա չի դաւանի իր սրտին:

— Եւ թող հայաստանի Աստուածը օքանէ նրա սիրտն ու հոգին: Իշխան, կրկնում եմ, երբ մեռնեմ փութացէք սուրհանդակ առաքելու սպարապեախն, որը՝ թէկ ընկած է Բուզայի արիւնալի նանկերը, սակայն չէ զավարում լոիկ խոկալ իր երկրի զրութիւնը և անկեղծ հայրենասէրի նման ողբալ նրա վիշտ ու տառապանքը: Նրա ալեոր վարսերը շատ փոթորիկներ են տեսել, նա միայն արգի պարագաներում ընդունակ է հայրապետական գահին արժոնաւոր յաջորդ տալրւ:

— Վեհափառ տէր, ապարդիւն է ծեր յուսահատութիւնը՝ ձեղ ոչինչ չէ կարող պատահել, զուք ազատ խօսում էք, կշուռ և կատում: Այս խառնաշփութութիւնների ժամանակը Աստուած կը խնայէ մեր տարաբաղդ աղդին և չի զրկի նրան իր միակ մխիթարութիւնից, որը նա զտնում է ձեր մէջ: Դեղարքունեաց աշխարհի առողջ կիման կը քրէկ ծեր կեանքը, — հանդարա ծալնով նկատեց Զաքարիա Զագեցին:

— Զաքարիա, իզուր լոյսերն են գրանք, հոգիս արդէն վերջին հրաժեշտն է տալիս աշխարհի փառք ու պերճանքին և նրա հրապուրիչ վայելքներին: Այդ ես զգում եմ: Ես զգում եմ ամեն բան: Ո՞հ, որքան երջանիկ կը լինէր մեր թշւառ ազգը, երբ զուք նրա հոգեոր տէրերի սքեմի մէջ լինէիք: Այն ժամանակ բաղմատանչ ոսկորներս ցանկալի հանգիստ կառնէին գերեզմանիս մէջ: Այս, զու հեռու ես մեր հոգեռարականների սքեմից: իսկ Մաշտոցը՝ տակաւին չահել է անփորձ: Ո՞վ է արգեօք բարձր-



բանալու ս. Հուստառքի գահը, որին ներկայ հանգամանքներին էր վարչապետ թափուր թողնել վնասակար է և աննպատակ:

— Հայոց սպարապետի աչալուրչ ոգին, վեհափառ տէր, կը գտնէ և դրա համար ցանկալի սպեղանի. նրան յախնի է հայրենեաց արդի թախծալի վիճակը, նա զիտէ նրա վէրքերի խորութիւնը և լստ այնմ կը սփոփէ մեր արտամադին խոցերը: Եթէ արտաքին թշնամին թողնէր նրան ազատ շնչելու, նա վազուց 'ի վեր թեթեռութիւն տւած կը լինէր Հայաստանի բազմազան կարիքներին: Սակայն ամեն անգամ, երբ մեր հօրիդոնի վրայ երեւում է մի լուսատու աստղ, անտանկալ զիպւածով որտեղից որէ, աշխարհի որ խուլ ու մութ անկիւներից ծնւում է մի զիշատիչ ոյժ, մի կործանիչ խոչընդոտ, որը սփռում է իր քայքայիչ թեթերը նրա առաջ և կտրում է նրա ուղին, յաճախ և չախչախում է նրա գոյութիւնը: Այդպէս էր և այս նւագ, — վրաբերեց Զաքարիա Զագեցին:

— Այո՛, այդ յարատե անէծը է փաթաթւած մեր տարաբաղդ ազգի պարանոցին, և քանի դար է, որ միենոյն խոցերով տնբում է նրա բազմավաստակ և չարատանչ մարմինը, և թերեւս պիտի տնըէ, նկատեց Սիւնեաց իշխանը:

Հիւանդը սկսեց ծանրագին խոխոալ և սրտամաշ հառաչանքներ արձակել, որը կրկնապատկւում էր իւրաքանչիւր անգամ, երբ նա գալարւում էր և չղաձղական շարժումներ գործում իր անկողնում: Զաքարիա Զագեցին փութաց թաշկինակը

թրչել չըի մէջ և շփել նրա մաշւած երեսը: Հիւանդը բաց արեց իր աչքերը և հազիւ-հազիւ կարողացաւ հրաժեշտի մըմունչներ շշնչալ իր շրջապատողներին և վերստին փակել նրանց:

Ծրչապատողները, իրանց արտասւաթոր աչքերը սրբելով, գուրս եկան նրա մօտից անհրաժեշտ կարգադրութիւններ անելու թէ՝ նրա թաղման և թէ հայոց աւագանուն տեղեկութիւններ տալու մասին, որովհետեւ երկրի մէջ աիրում էր կատարեալ խոռովութիւն, ուստի և անկարելի էր նրա մարմինը փոխազրել հայոց հայրապետների գերեզմանողը, որը այդ ժամանակ գտնւում էր Դուխնում: Եւ այսպէս, երկրի աղիողորմ աղետների վրայ աւելացաւ և նրա կաթողիկոսի մահը:

## X.

Անցաւ մի քանի շաբաթ:

Գիշերւայ խաւառը քանի գնում սեանում էր և աննշմարելի գարձնում Զագ զիւզի շրչակալը: Ոչ մի ձայն-ծպտուն չէր լսւում. ամեն տեղ թագաւորում էր ծանրատաղտուկ լոռութիւնը, որը մէրթ ընդմերթ ընդհատւում էր զաղանային աղիողորմ ոռնօցներով, որոնք աւելի քան զարհուրելի էին գարձնում զիշերւայ տաղնապալի գոյութիւնը: Զագ զիւզը ամբողջովին թաղւելով խաւարի գրկում ասես ընդմիշտ մեռել էր՝ մի թուլ շշնչւն անգամ ըլ կար նրա նեղ, խորդ ու բորդ փողոյներում. չէին

հաշում և շները, որը աւելի քան սրտամաշ էր գարձնում խաւարի խուճապանքը: Երկինքն էլ վաղուց սե առել և սուդ էր մտել. սե-սե թուղ-պերը մի քանի օր էր, ինչ անողորմ կերպով սրօ-ղել էին նրա երեսը: Խաւարի գժոխալին սար-ստիր առաւելես խիստ կերպարանք էր ստա-նում, երբ հեռու հօրիզոնում հուժկու թափով գղրդում էր ամբողջ մթնոլորտ, արծակելով այս ու այն կողմ վախկոս կալծակների սիւներ: Ա.մ-պերի որոտը զարհուրելի էր դիշերւայ այդ ժա-մին, որը նման էր լուսահատ սղւորի վառնագին տնքոցներին և չարագուշակ ծանր-ծանր հառաջանք-ներին: Անձրե չէր տեղում, ալ նրա փոխանակ իւ-րաքանչիւր որոտումից յետով, շրւում էր կոտա գաւառին յատուկ բարակ դեփինոր, որը թւում էր, քնքոյշ սիրահարի նման շոյում էր իր ծանա-պարհին պատահող առարկանների երեսը և անց-նում, զնում՝ հեռու, շատ հեռու, զէպի Գեղա-մայ ծովակը՝ զարթեցնելու նրան դիշերւայ խեղ-գող մրափից: Իւրաքանչիւր անգամ, երբ նազելի հոսանքով շրւում էր այդ քամին, ժառերի տերեւա-խիտ սաղարթները ողբագին մրմունչներ էին ար-ծակում իրանց մեղմ սօսափիւնով, որը ահ ու սար-սափ էր տարածում իր շուրջը, իսկ ծովակի մա-կերեսլիք հանգարտ շօրօներով տարութերւում էր և ալիքներ առաջ բերում որոնք ներդաշնակ մեղե-զիով շրմփում էին իրանց ափերին և վայ-վույ կրկնում: Գիշերւայ այդ տագնապալի ժամին ջեղանքում էր առաջանակ առաջանակ մեջ, որ մոռացութեան էր աւել իր շըշակալը: Այդպէս են մշտատե անկեղծ հոգիները, որոնք միայն իրանց բուռն էութեամբ նւիրւում են իրանց այս ու այն փայփայած դգացմունքներին, որոնց համար և յա-ձախ չեն խնայում իրանց կեանքը: Նրանց սրտերի, նրանց զգացմունքների համար անշրպեաներ չըկան, նրանց համար գոյութիւն ունեն միայն երկու ծայ-րեր՝ սկիզբ և վախճան, մաս կամ կեանք, հասնել իրանց տենչանքներին, կամ մեռնել նրանց համար: Յորդահոս արցունքներից յետով, վերշապէս, սւեց նրա խուլ հեծեծանքը.

դիւզի գերեզմանոյի կողմից—սաէպ-սաէպ լսւում էին հոնզուր-հոնզուր լայի հառաջանքներ, ասես գիշե-րային ողիներ լինէին, որոնք եկել էին այգտեղ ողբա-լու իրանց սիրելիների մահը: Սակայն գիշերային ողի-ներ չը կային: Կար միայն մի հատիկ մարդ, որի գունաթափ և մռայլւած երեսը, եթէ կարելի լի-նէր նշմարել այդ մթութեան մէջ, անտարակոյս կերեար, որ նա գտնւում է հոգեկան անմարելի տանչանքների մէջ, որը աւելի քան խռովւած և ալլայլւած կերպարանք էր տալիս նրա գէմքին: Նա ծնկաչօք ընկել էր մի անշուք շիրիմի վրայ, երկու հղօր բազուկներով դրկել էր նրա ար-ձանաքարը և աղիսզորմ արցունքներ էր թափում նրա կոշտ երեսի վրայ. ապա մերթ-մերթ նրա խուլ հեծկտանքների հետ շարժւում էին նրա շրթունքնե-րը, և հաղիւ լսելի ծալնով նա խօսում էր ինքն իրան և գարծեալ սգում ու սգում: Նա այնքան էր խորասուգւել այն հոգեկան տանչանքների մէջ, որ մոռացութեան էր աւել իր շըշակալը: Այդպէս են մշտատե անկեղծ հոգիները, որոնք միայն իրանց բուռն էութեամբ նւիրւում են իրանց այս ու այն փայփայած դգացմունքներին, որոնց համար և յա-ձախ չեն խնայում իրանց կեանքը: Նրանց սրտերի, նրանց զգացմունքների համար անշրպեաներ չըկան, նրանց համար գոյութիւն ունեն միայն երկու ծայ-րեր՝ սկիզբ և վախճան, մաս կամ կեանք, հասնել իրանց տենչանքներին, կամ մեռնել նրանց համար:

Յորդահոս արցունքներից յետով, վերշապէս, սւեց նրա խուլ հեծեծանքը.

— Խօսի՛ր, Խօսի՛ր, իմ հրեշտակ, իմ դողտը-  
րիկ Սանդուխտ, քո աննման սէրը ինձ գէպի  
փառքի բարձունքներն է տանում: Ես տակաւին լի-  
շում եմ կեանքիս առաւօտը, երբ ես թոթովախօս  
մանուկ էի և մանկական զւարճալի խաղերով օր  
ու ժամերս քեզ հետ էի մթնացնում: Այդ մանկա-  
կան անմեղ խաղերի ընթացքում, ոհ, զի՞տես, քո  
ինձ տւած աննշարելի կայծը ապագայում, երբ  
ես ուսնակոխ արեցի պատանեկութեան սետմբ, որ-  
քան կիզիչ բոցերով բորբոքւեց իմ վիրաւոր սըր-  
տում. ոհ, զի՞տես, կեանքի այդ մանկական հմայիչ  
առաւօտին որպիսի տագնապալի միջօր յաջորդեց:  
Այդ ժամանակ անհետ կորան մեր մանկական խրծ-  
բովին խաղերը, երբ զու այլես յամախակի չէիր  
երեսում իմ աչքիս: Թարասիրա մարդկանց հաստա-  
տած երկու չափահաս սեռի օրէնքը մտաւ իր իրա-  
ւունքների մէջ, և մեր իրար հետ տեսնելը ան-  
փայել համարեց: Ես ընկալ մելամազձոտ երեսում-  
ների գիրկը, ես խուլ հեծում էի, սակայն ով էր  
լսողը: Թախծալի էր, թախծալի իմ զրութիւնը:  
Ես կարծում էի, թէ կարող եմ փոքր ինչ ուրա-  
խութիւն ձեռք բերել ապագայում. բայց իգուր...  
օր ըստօր է բարզեց, խորացաւ իմ վիշտը, իմ ներ-  
քին կոփեր և անմարելի կրակը: Անբաղդութիւնը  
բաց արեց իր ահարկու բերանը և կլանեց իմ սիրան  
ու հողին: Եղերական հետևանքներ էին սպասում,  
եթէ մի անտեսանելի ձեռք չը կարկառէր իր ա-  
հեղ բազուկները և չը փրկէր ինձ, որից յետոյ, ես  
ձու եցի զրքի և մելանի մէջ գանել ինձ սփոփանք,

զրքի և մելանի մէջ փնդուել ինձ միիթարութիւն:  
Եւ ես նւիրեցի ինձ զրագիտութեան: Այդտեղ քո  
նւիրական սէրը ինձ ոյժ և կարողութիւն էր տա-  
լիս, այդտեղ քո լուսատիպ և չքնաղ գէմքը ան-  
սասան լոյս ու հաւատ էր ներշնչում ինձ, այդ-  
տեղ քո հրեշտականման երեսը, քո խարտեաշ աչե-  
րը, քո հոլանի բազուկները, քո երկարաւուն և  
ծփան սե ու մութ վարսերը թե ու թիկունք էին  
տալիս ինձ: Եւ ես անվաստակելի կարողութեամբ  
առաջ էի զնում զիտութեան ովկիանոսի մէջ և  
խրոխտագին անվեհերութեամբ նայում էի նրա ան-  
գունդների, նրա խորխորաաների անծալք յատակը,  
ուր ոչ մի մթին ցնորք, ոչ մի յուսահատ քա-  
մի չէին շփոթեցնում ինձ: Այդտեղ ամեն ինչ  
ինձ ծաղկափթիթ գարնան բուրմունքների էր նման-  
ում, ուր ես շնչում էի և չէի յագենում: Սակայն  
այդտեղ էլ էիր և զու, իմ աննման Սանդուխտ,  
այդտեղ էին և քո ինձ տւած խոցերը իրանց ան-  
մարելի կրակով, այդտեղ էին և քո ինձ տւած  
վշտերը, և այդ վշտերը, այդ անմոռանալի կրակը.  
այդ խոր խոցերը ամենուրեք հետեւում էին ինձ և  
թերեւ գերեզման իշնեն ինձ հետ: Մարդիկ իրանց  
սրտի և հոգու ամեն վերքերը իրանց հետ գերեզ-  
ման են տանում, կը տանեմ և ես, իմ չըր-  
նաղ Սանդուխտ... Վերջին բառերը արտասանելիս  
ժայթքեց ամպերի որոտագին գոռոցը և ընդհատեց  
նրա ձախնը, որից յետոյ կայծակը մի առանձնակի  
շողերով լուսաւորեց նրա խռովւած գէմքը, որը  
արտայալտում էր նրա յուզւած սրտի խորին ալէ-

կոժութիւնը և հոգետանց վրդովմունքը, որոնք չեին կարող կարելցութիւն առաջ չը բերել նոյնիսկ այն դիւալին հոդիների մէջ, որոնց խորշերում մեռած էն մարդկացին ամեն զգացմունքները։ Ողբացողը ամենաթոյլ ուշադրութիւն անդամ չը դարձրեց կայծակի փալատակումների վրայ և վերստին շարունակեց իր ընդհատաւած խօսքերը։ — Իմ վաղամեռիկ Սանդուխտ, քո նւիրական սէրը կայծակի նման շանթեց իմ սիրան ու հոդին, որոնց մէջ միանդամայն փշրւեցան, մեռան այն բոլոր երանական յոյսերս և փայփայած երազներս, առելի բազմանքներով տենչանքներս, երբ դու ընդմիշտ անշատւեցար ինձանից, սակայն գէպի ուր... գէպի այս լուռ գերեզմանը, որի գոյութիւնն է այն օրւանից մնացել իմ միակ սփոփանքը և միշիթարութիւնը։ այդ միակ լուռ վկան է մնացել այն երանելի ժամանակներից, որի վրայ յաճախ հանդշում է իմ երերւող, իմ խորտակւող նաւակը։ այդ է այն միակ կայտնը, ուր ես հանդչում եմ դժբաղդութեանս և յուսահատութեանս վայրկեանում։ Սյս միակ կայանն է, որը Յիսուսի խաչի նման մոռացնել է տալիս ինձ իմ մշտօրեալ տառապանքները և լցնում իմ սիրտը ապագայի երանութեամբ։ Զգում է, տեսնում է իմ հոդին, որ վերստին կը տեսնենք մենք, և այդ բոլորը խաբութիկ յոյսեր չեն, որոնք իրանց հմայիչ փալերով հրապուրում են ինձ, այլ բուռն հոգու խորին համոզունք... Վերջին խօսքերի միջոցին նա ձեռքերը տարածեց և զրկեց գերեզմանաբարը, և գիշերւայ այդ

մեռելալին լոռութիւնը ընդհատւեց նրա սրտագին համբուրների շրմիոյներով, որոնցից յետով, դարձեալ շարունակեց խօսել ինքն իրան։ — Լսի՛ր, լսի՛ր, իմ քաղցրաբարոյ Սանդուխտ, ընդունի՛ր տառապեալ տանջւողիս աղաչանքը։ մի՛ թ' զ ինձ, մի՛ զրկի՛ր ինձ քո ցանկալի տեսութիւնից։ մի՛ արատաւորիր մեր նւիրական անցեալը քո ալլ անտարբերութեամբ՝ լսում եմ, Ծիրակաւանում \*) ժողովներ են լինում, և տարաբաղդ աղջիս ընդհանուր կոչը կանչում է ինձ գէպի ո. Լուսաւորչի անարատ գահր։ Օգնի՛րինձ, հեռու մնալ այդ կոչից։ Ես անարժան եմ այդ նւիրական գահին։ Ես անարժան եմ ս. Գրիգորի յաշորդների ցանկի մէջ մտնելու։ Տակաւին ուշ չէ, տակաւին քո հրեշտականման հոգին կարող է օգնել ինձ իր անարատ, իր անկեղծ աղօթքներով որ վանել ժողովի անդամների մտքից իմ անարժան անունը։ Ազատութիւն շնորհի՛ր ինձ, անբազդ տանջւողիս։ Մրի՛ր նրա յորդահոս արցունքները։ Թո՛ղ չը կայանայ այդ ժողովը յօգուտ ինձ, որը ներքին կուի մրրկածուփ փոթորիկներ է լի ալէկոծութեամբ առաջ բերել իմ մէջ սկսած այն օրից, երբ ես լսեցի նրա մասին։ Թո՛ղ չը լինի իմ մէջ այդ կուիւր, որը տանջանքների պատճառ է դարձել ինձ։ Թո՛ղ մնամ ես իմ նտիսին անշուրք կացութեան մէջ և վայելեմ քո տւած ինձ համար այնքան քաղցր վիշտ ու տառապանքը, և իմ հոդիս խաղաղ կը լինի...

\*) Բաշ-Շօրագեալ

Առաստ արցունքների տարափը դարձեալ խեղ-  
դեց նրա ծայնը, և նա մի քանի բոպէ մնաց ան-  
շարժ ու լուռ:

Գիշերւայ այդ տագնապալի ժամին Շիրակա-  
ւանից գէպի Զագ տանող ճանապարհի վրայ թանձր  
խաւարի մէջ հաղիւ-հազ նշմարւում էր մի ծիա-  
ւոր, որը խորին զգուշութեամբ ընթանում էր գէ-  
պի Զագ գիւղը: Դա սուրհանդակ էր:

Նրա յանդուզն նժոյգը զարմանալի փորձւոծ  
քաղերով տասես նախատեսնում էր խորդ ու բորդ  
ճանապարհի անթիւ ու անհամար խոռոչները և  
վազրի ճարպիկութեամբ խոյս էր տալիս նրանցից  
ու ահաւոր թռիչքներ գործում: Նրա տէրը գիտէր  
իր նժոյգի խելացի բնաւորութիւնը և գիշերւայ  
այդ սոսկումով լի ժամին իրան աւելի քան հան-  
գիստ էր զգում նրա վրայ: Նա անցել էր այն  
գժւարին վալրերը, որոնց իւրաքանչիւր քար ու  
թփի տակին գտնուում էին զարանակալների ստւար  
խմբեր, որոնք՝ ճանաչելով թէ ում հետ գործ ու-  
նեն, թողել էին նրան հանդիստ շարունակելու իր  
ճանապարհը: Եւ այսպէս, նրա գեղեցիկ նժոյգը՝  
թափահարելով իր հարուստ բաշը՝ սլանում էր  
գէպի Զագ գիւղը: Վերջապէս, նա հասաւ այդ  
գիւղը և կանգնեց մի հարուստ տան գուան ու  
թրխկացրեց իր ձեռքի մտրակով նրա հաստ տախ-  
տակներին մի քանի անգամ: Մի քանի բոպէից յե-  
տոյ, նեսից բաց արեցին գուռը և ընդունեցին եկ-  
ւորին: Տեղաւորեցնելով իր նժոյգին և տալրով նրան

կերակրի առատ պաշար, նա գուրս եկաւ ալդ տա-  
նից և զգուշութեամբ առաջ ընթացաւ գէպի գիւ-  
ղի գերեղմանոցը և ուղիղ այն ծանօթ ողբացողի  
կողմը զնաց: Ամպերի հուժկու որոտը և կայծակի  
ազօտ լոյսը ուշը բերին յուսահատ հեծողին, և  
նա իր զլուխը վեր բարձրացրեց և տեսաւ իրանից  
ոչ հեռու մեղ ծանօթ եկառ սուրհանդակին:

— Ո՞վ ես գու, —խռովւած ձայնով հարցրեց  
նրան ճնկաչօք ողբացողը:

— Ես եմ, տէր իմ.

— Կարէն, այդ որտեղից այս ժամին և ին-  
չու ալսաեղ ինձ մօտ:

— Շիրակաւանից եմ գալիս. Սիւնեաց իշխանը  
և Ստեփաննոս հայր սուրբը առաքեցին ինձ, ինչ-  
պէս գիտէք, սպարապետի մօտ հաղորդելու նրան  
կաթողիկոսի մահը, որտեղից այժմ զալիս եմ գէպի  
ձեղ առանձին գրութեամբ: Եղայ ձեր տանը: Ինձ  
ասացին, որ գուք այս կողմերն էք եկել, և ես ա-  
ճապարեցի ձեղ գտնելու:

— Ի՞նչ ունի սպարապետը ինձ հաղորդելու:

— Տէր իմ, Շիրակաւանում իմ գնալուց յե-  
տոյ, իսկոյն և եթ սպարապետը ժողով գումարեց,  
և այդ ժողովը ձեղ միաձայն յաջորդ ընտրեց ս. Լու-  
սաւորչի գահին: Ահա այն ծրարը, որը պիտի ձեղ  
յանձնեմ: Սպարապետը փութաց գումարելու այդ  
ժողովը, որովհետեւ անյետաձգելի կոչով կանչւած էր  
հագարացոց բանակը: Բուզան կանչել էր նրան:

— Եւ այդպէս, իզուր չէր երերւում իմ  
սիրտը:

Խօսողը մեզ ծանօթ Զաքարիան էր, որին  
մենք տեսանք Մաքինեաց վանքում:

— Այսուհետեւ, Կարէն, զու ինձ հետ կը լի-  
նիս միշտ: Ինչպէս ծառայել ես իմ նախորդին, ծա-  
ռայի՛ր այնպէս և ինձ, — նկատեց նրան Զաքարիան:  
Կարէնը լուս մնաց:

— Կարէն, Ե՞րբ է մեկնելու սպարապետը:

— Զը գիտեմ, տէր իմ:

— Ինձ անհրաժեշտ է նրան տեսնել:

— Ես այդ կը հաղորդեմ նրան, եթէ իմ տէրը  
կը հրամացէ:

#### XI.

Առաւոտ էր

Շիրակաւանում Բագրատունեաց ապարանքնե-  
րում տիրում էր մի արտասովոր իրարանցում: Բո-  
լորի գէմքերի վրայ նշանաւում էր մի թախծալի  
շիոթութիւն: Վաղ առաւոտից սկսած ժողովրդի  
խառնիճաղանճ բազմութիւնը շրջապատել էր իր  
տէրերի այդ պալատները և բուռն հետաքրքրու-  
թեամբ լցւած՝ սպասում էր թէ ի՞նչ է լինելու:  
Նրանց հետաքրքրութիւնը շարժել էր հայոց նոր-  
ընտիր կաթողիկոսը՝ Զաքարիա Զագեցին, որը գեռ  
երեկ էր ժամանել ալգուեղ և որը քահանայական  
կարգ մտած չը լինելով մի օրւայ մէջ ձեռնադրւած  
էր սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս և կաթողի-  
կոս: Այդաեղ էր և հայոց սպարապետը: Այդտեղ  
էր և հայոց աւագանին:

Ժողովրդի բազմութիւնը ակնապիշ եղած դէ-  
պի պալատների շքեղազարդ շէնքը, մերթ-մերթ  
իրան յատուկ շատախօսութեամբ շօշափում էր այս  
ու այն հարցերը:

— Դիտես, Յուսիկ, ի՞նչու է կաթողիկոսը  
եկել սպարապետի մօտ:

— Ես երեկ եմ մուտք գործել մեր քաղաքա-  
ւանը՝ Սնի էի գնացել՝ տկար քրոջ այցելելու և  
ուշ վերադարձալ: Ո՞չ մի տեղեկութիւն չունեմ այդ  
մտախն: Իսկ զու, Խաչիկ, երեկի մի բան գիտես  
այդ մասին:

Սլսուկս խօսում էին երկու տարիքաւոր գեղ-  
ջուկներ:

— Ինչպէս չէ, ես լսել եմ, որ նա եկել է մեր  
սպարապետին թագաւոր օծելու:

— Է՞ս, Խաչիկ, գժւարին է այդ. Ես չեմ հա-  
ւատում, սպարապետը ծեր է, եթէ նրա որդի, մեր  
սիրելի իշխանին՝ Սշոտին, օծելու լինէին, գեռ կա-  
րելի էր մի փոքր հաւատ ընծայել:

— Ո՞չ, Յուսիկ, սպարապետը այնպէս է հա-  
նոյացել հագարացոց, որ այդ գժւարին չէ.

— Խաչիկ, այդ ճիշտ է, որ մեր փորձւած  
սպարապետը աւելի քան շահել է Բուղալի սիրտը:  
Սակայն չը պէտք է մոռանալ, որ նա իր տարա-  
բազդ երկրի փրկութեան համար է այդ անում:  
Նրա յարաբերութիւնները անկեղծ չեն Բուղալի  
հետ: Բագրատունեաց քաղաքագէտ ողին գիտէ, թէ  
ի՞նչ է անում: Բայց, ասում են, որ այդ սատա-

նայի ծնունդը՝ թուղան, ամեն բան հասկանում է և դիտմամբ լրում է:

— Շուտով ամեն բան կը պարզեի. թէ թուղան դիտէ արդեօք, որ մեր սպարապետը որպիսի խելացի քաղաքականութեան է հետեւում է: Ես հաստատ գիտեմ, որ թուղան նրան կանչել է Բաղդատ տանելու ամիրապետին ներկայացնելու և խնդրելու, որ նա վարձատրէ մեր սպարապետին նրա կատարած ժառայութիւնների համար: Այն ժամանակ որոշակի կարելի կը լինի ասել, թէ որքան միամիտ է եղել թուղան,—մէջ մտաւ. մի ուրիշ զեղուկ, որը կանգնած էր Խաչիկի և Յուսիկի մօտ:

— Միթէ սպարապետը գնալու է,—հարցրեցին նրան միաբերան Յուսիկը և Խաչիկը:

— Ինչպէս չէ. նա եկել է վերջին հրաժեշտ և պատւէրներ տալու իր որդի Աշոտին և նրա ընտանեցը: Արան նոյնպէս շտապել է այցելելու և մեր կաթողիկոսը:

Այն ժամանակ, երբ զրառւմ տեղի ունէր այդ խօսակցութիւնը՝ ներսում, Բաղրատունեաց ապարանքներում, շքեղ գահաւորակների վրայ բազմած էին հայոց սպարապետը և Զաքարիա Զագեցին: Նրանք լուռ էին, նրանց գեմքերի վրայ նրկարւած էր մի տեսակ թախծալի գժգոհութիւն: Ծերունի սպարապետը սարսափելի տեսք ունէր և խոժոռւած էր և անդադար շփում էր իր բորբոքած ձակատը: Սակաւ խռովեալ ալէկոծութեան

մէջ չէր և Զագեցի կաթողիկոսը: Ներքին տրտմութիւնը և ծանրապին վրգովմունքը ասես պատպանձացրել էր նրանց լեզուները: Երկու ահեղ զէնքերի՝ խաչի և սրբ՝ պատակառելի ներկայացուցիչները գտնուում էին հոգեկան մի տեսակ ալէկոծութեան և յուղձունքի մէջ և լուսութեամբ մաքառում էին նպաստեցուցիչ մի ելք դանելու:

Վերջապէս, առաջինը խօսեց սպարապետը:

— Վեհափառ տէր,—ասաց նա փոքր ինչ մեղմ ծայնով, որը արտայատում էր մազծ և գառնութիւն,—դուք պնդում էք, որ ես չը լսեմ թուղալի կոչին և չը գնամ նրա հետ Բաղդատ: Ինչպէս չը գնամ՝ ծիւն է եկել, որ ոտքերս մրտեն՝ ակամայից ընկել եմ նրա լարած որոգալթների մէջ, որ այժմ կրեմ նրա հետեանքները. Դուք, անտարակոյս, մի ինչ որ երկիւզածութեան մէջ էք: Այլապէս ինչ կարող է լինել:

Զագեցին սթափւեց և խորին դառնութեամբ լցւած՝ վարձրեց իր ալլալւած հայեացըր դէպի սպարապետը:

— Տէր սպարապետ, ես տարակոյս ունեմ, որ դուք գնաք Բաղդատ և վերստին չը վերադառնաք ձեր դժբաղդ հայրենիք. Ես տարակոյս ունեմ, որ ձեղ ամիրապետի արքունիքում փոխանակ արժանավայել փառք ու պատիկ սպասում է բանտ և աբսորանք, որոնց ահարկու ծանրութիւնների տակ թերեւս անկարող լինի ձեր զառամեալ հոգին գիմանալու: Այս, ծիւն է եկել, որ ձեր ոտքերը մրտեն

և կտմ ընկել էք, պիտի բաշէք. բայց չէ՞ որ զուք կարող էք պատշաճաւոր կերպով ապահովել՝ ձեր սաքերը եկող ծիւնից պաշապանելու համար: Զէ՞ որ դուք կարող էք մի խորամանկութիւն գործ դնել և չը հետեւ նրա կոչին: Ով դիտէ, ձեր մեկնելուց յետոյ, ինչ ժանր փոթորիկներ բարձրանան ձեր գժրադր հողի վրայ, չէ՞ որ հօրիզոնը տմենուքը մռայլւած է: Ես քաջ դիտեմ հաղարացոց նենդամիտ վարձունքի վայրագութիւնը:

— Վեհափառ տէր, կեանքիս ամեն մի նդնաժամին, կեանքիս ամեն մի սոսկալի օրհասին, երբ եղել են նրանց մէջ կասկածանքի ամենաթոլլ նշովներ, ես իւրաքանչիւր անդամ լսել եմ իմ սրտիս ծայնին և հետեւ եմ նրա կոչին: Այժմ էլ նրա իւրաքանչիւր բարախմունքը լի խոստումներ է շշնչում ինձ, որ ես կունենամ հոգու կորով և արխութիւն՝ չարատաւորելու մէր նախնեաց անբիժանունը: Իմ չը դնալով թերես նա, ինչպէս արել է ամեն աեղ, թափէ իր զարութի թոյնը իմ վէրան երկրի վրայ: Այս սպիտակ վարսերիս ամեն մի հատը մի-մի ծրբկածուփ փոթորիկի մէջ է սպիտակել, ես անտարակոյս եմ, որ սխալւել, փորձութիւնների մէջ հեղծւել՝ անկարող եմ: Բազրատունեաց տէրերի տոկունութիւնը, խստասրտութիւնը և անշահ սաեր ողին վաղուց ծանօթ է հաղարացոց արքունիքին: Ծանօթ եմ և ես նրան:

Զագեցու խոռվւած դէմքը փոքր ինչ դւարթացաւ և նա նկատեց.

— Թող մեր հայրենի Աստուածը պաշտպան հանդիսանայ ձեզ, տէր սպարապեա:

— Եւ այսպէս, վեհափառ տէր, ժամ է ինձ մեկնելու, ես յանձնում եմ ինձ մեր աղօթքին:

— Օրհնում եմ ձեզ մեր սրբազն հայրերի նւիրական անուններով: Օրհնում եմ ձեզ, Հայաստանի պաշտպան, այս փրկարար խաչով և հայրենիքի ամեն հինաւուրց սրբութիւններով: Թող նրանց հրաշտապանձ զօրութիւնը ոյժ և կարողութիւն ներշնչէ ձեր երակներու մ ձեր փորձութեան րոպէներին: Թող նրանց վաղեմի հրաշտագործ անունը բորբոքէ ձեր սրտում սէր դէպի հայրենիքի իւրաքանչիւր բար ու թուփը և թեւ ու թիկունք տայ ձեզ՝ տանելու փորձութեան լաղթանակը. Թող հայրենիքի նւիրական սէրը ամեն ժամ, ամեն րոպէ անջատ կապերով հետեւէ ձեզ և իր պաշտպան թեւերով փրկէ ձեզ ամեն մի պատուհասից, ամեն մի փոթորիկից:

Տխուր և արտասւալի աչքերով օրհնում էր կաթողիկոսը, որպէս մի պարտկերացած և ոգեօրշած թախծութիւն, որի գեղեցիկ գէմքը ստէպսէպ գունաթափում էր: Յուստահատութիւնը և երկիւղը փոփոխակի ստրեցնում էին նրան:

— Սրաի անհուն դառնութեամբ, տէր սպարապեա, ես ցաւում եմ, որ օրհնում եմ ձեզ ոչ դէպի հայրենի երկրի փրկարար պատերազմը գնալիս, այլ թերես դէպի գառն աղետալի աքսորանք...

— Ուր էլ որ լինեմ, վեհափառ տէր, — ընդհատեց նրա խոսքերը սպարապեար, որի բորբոքւած

գեղեցիկ աչքերը լի գոհունակութեան արցունքներով լցւած՝ բուռն քաջութեան հետ միայնում էին և հոգեկան աղնիւ յատկութիւններ, —ուխտում եմ չը խախտել հայրենիքիս ինձ տւած վաղեմի աւանդը և հաւատարիմ մնող նրա հին օրերի սրբութիւններին. Ուխտում եմ հայրենիքիս սրբազան աւանդներով, խաչ ու աւետարանով, անսասան չատագութեամբ ոչ մի վայրկեան չը շեղւել բարոյական այն վեհ ճանապարհից, որի վրայ դաստիարակել են ինձ իմ նախնիքները իրանց նւիրական խաչ ու աւետարանով: Ուխտում եմ հայրենիքիս արիւնաներկ քար ու թփով, դար ու դաշտով միշտ կենդանի պահել նրանց անմահ լիշտակները հոգուս խորքերում և կեանքիս դառն բովէներում նրանցով սնւել, նրանցով սփոփել իմ ողբալի օրերը: Ուխտում եմ հայրենիքիս կիսակործան տաճարներով, յարատե անձուաց պահել նրանց սրբազան սեղաններից աւանդած վսեմ պատէրները և նրանց քաղցրաշունչ մեղիդիներով ամոքել իմ դառն վիշտը և տառապանքը: Ուխտում եմ հայրենիքիս չատագովների անմահ անուններով, չը սարսել թշնամու մերկացրած սրից և նրանց առաջ խոստովանել Աստուած Որդու սրբազան օրէնքները: Ուխտում եմ հայրենիքիս արելուսինով, տատեղ-աստղունքով, երկինք գետինով չուրանալ այն սէրը, որը տւել են ինձ նրանք իրանց թեկերի տակ:

Զագեցի կաթուղիկոսը լոռութեամբ թափում էր արտասուքներ: Նա դիտէր, նրա իմաստնագոյն հողին տսես վկայում էր, որ նա վերջին անգամն է

խօսում հայոց անբաղդ սպարապետի հետ: Սակայն և չեր յուսահատուում, լսելով նրա տւած սրտառուչ երգումները, որոնք բղխում էին նրա խորիմաց հոգու անկեղծ խորքերից: Մինչ սրանք գտնուում էին այսպիսի յուղւած զրութեան մէջ, ներս մտաւ սպարապետի որդի Աշոտը: Խորին տրտմութիւնը, խառն կատաղի յուսահատութեան հետ, ալէկոծում էին նրա սիրար և երերում, տակն ու վրայ անելով նրա հոգու ամբողջ էութիւնը: Գտնելով հոգեկան այգապիսի տագնապալի զրութեան մէջ, նա լուռ էր և այդ լոռութիւնը աւելի քան խռովւած կերպարանք էր տալիս նրա վայելչադեղ երեսին: Տեսնելով որդուն, սպարապետը դարձաւ դէպի նրան. — Աշոտ, զաւակս, ահա մի քանի ժամկից յետոյ, ես թողնում եմ ձեզ, ես պիտի մեկնեմ Բուղայի բանակը և այն աեղից դէպի Բարիլոն: Թէ ի՞նչ է սպասում ինձ այնտեղ, ամիւապետի արքունիքում, այդ գժւարին է որոշել: Սակայն ինչպէս միշտ, այնպէս և այս նւազ, ես յունեսութեամբ եմ զեկավարում և նրա առաջ կանխապէս պատնշներ կազմում. ապագայի վերաբերեալ երկու հակապատկեր ծայրեր կան՝ լաւ և վատ: Լաւի մասին հոգ չէ խոկալու՝ նա անվնաս է մեղ համար, իսկ վատը, որը կարող է ցցւել մեր ճանապարհի վոայ իր այլանդակ դէմքով, պիտի ունենալ իր պատնշները, իր զիմագիր ոյժերը: Եւ այնպէս, ես զրնում եմ, ով զիտէ ինչեր պատահեն ինձ, բայց միշտ եղի՛ր աներկրայ, որ հայրդ անսասան կը մնայ իր հայրենի աւանդութիւնների և նրա սրբութիւն-

ների մէջ: Ով զիտէ, թերեւս իմ մեկնելս այնտեղ անդարձ լինի, ուստի ես քեզ եմ յանձնում հալրենիքիս այն փրկարար զեկը, որը ինձ էր պատկանում: Խոհուն հոգատառութեամբ վշտակէց եղիր հալրենիքիդ իւրաքանչիւր աղետներին և կարելիին չափ բուժիչ սպեզանի պատրաստի՛ր նրա առօրեայ խոցերի, նրա պալարալից վէրքերի վրայ դնելու: Մեծ է Սատուած. Նա կօգնէ քեզ քո այդ դորձերում: Նա միշտ բարի է, և բարութեան ուխտեալ պաշտպան է ամեն տեղ և ամեն ժամանակ: Քեզ հալրենի կրօնի վաեմ պատէրների հետ տւած եմ սպարապետական և ռազմապիտական աշալուրջ քաղաքականութիւն, որին և լիալուս եմ պիտի հետեւս: Առաջ անա այն սուրբ, որով հալրդ անձնըւէր չատագովութեամբ պաշտպանել է հալրենիքիդ պատիւր:

Վերջին բառերի հետ ծերունի սպարապետը արձակեց իր վրացից սուրբ և յանձնեց որդուն, որը արտասւալի աչքերով չը զիտէր, թէ ինչ պատասխանէր հօրը: Նփոթւած էր և կաթողիկոսը, որը կրում էր իր գաւազանը:

— Յիշիր հօրդ տւած թերեւս վերջին պատէրը. թո՞ղ իմ տարաբաղդ հալրենիքիս և սիրասուն գերգտաստանիս նւիրական սէրը զեկավարէ ինձ իմ տարակայ օրերում: Սակայն ի՞նչու էր դուք, վեհափառ տէր և սիրասուն իմ զաւակս, շփոթւած: Մի՞թէ այդ նորանոր իրերը սարսեցընում են ձեզ: Մի՞թէ դրանց պահանջի երկիւղը շփոթեցրել է ձեզ: Վեհափառ տէր, դուք նոր էր

ստացէլ ս. Դրիգորի գաւազանը, և այդ գաւազանի ծանր պարտականութիւնը թերեւս սարսեցնում է ձեզ, թէ ի՞նչպէս պիտի իրագործէք նրա վսեմ պահանջները: Իսկ գու, սիրելի զաւակս, գուցէ զարհուրեցար սրիդ շլացուցիչ շողերից, թէ ի՞նչպէս իր կոչման սրբութեան վրայ պահել նրան և չարատաւորել նրա միշտ անբիծ շողերը, նրա անարատ փայլը: Եղէ՛ք միշտ աներկբայ, որ հալրենիքի մեծափառ Աստուածը ոյժ և կարողութիւն կը տայ ձեր բազուկներին՝ այդ գաւազանով և սրով օգտաւէտ շարժումներ գործել մեր դժբաղդ հողի վրայ: Եւ թո՞ղ Տէրը փրկէ ձեզ ամեն փորձութիւններից:

Վերջին բառերի հետ նա զրկեց որդու զլուխը և ծնողական չերմ անկեղծութեամբ համբուրեց նրա ճակատը: Խոշոր արցունքների կաթիլները խեղդեցին դժբաղդ հօր ձայնը: Ապա նա իր երկու հզօր ձեռքերի մէջ առաւ Զագեցու աջը և ամենախորին յարդանքով համբուրեց, — կրկնելով մի քանի անգամ.

— Այս աջը թո՞ղ պահպանէ իմ սիրեցեալ հալրենիքը. այս սուրբ աչը թո՞ղ պաշտպանէ և ինձ, որի աղօթքին եմ յանձնում ինձ և իմ հալրենիքը...

Զագեցին իր դոզդոչիւն ձեռքերով բռնեց սպարապետի զլուխը և նոյնպէս համբուրեց նրա ճակատը, արտասանելով.

— Թո՞ղ հալրենի Աստուածը ամեն տեղ պաշտպանէ քեզ:

Եւ այսպէս, տալով իր վերջին սրտառուչ

հրաժարականը բոլորին, սպարապեար դուրս եղաւ և իր ասպախմբով ճանապարհ ընկաւ գէպի Դուին, ուր էր այդ ժամանակ Բուզան: Եւ այդ տեղից, մի քանի ժամանակից յետոյ, նրա զօրքի և հայ կալանաւոր իշխանների և իշխանուհիների հետ, ճանապարհ ընկաւ նա Բուզալի հետ գէպի Բաղդատ: Այդ կալանաւորների մէջ էին Խաչենի տէր՝ Աղբներսէն իշխանը իր ազգատհոմով, Գարզմանաց Կորիճ իշխանը, Տուս աւանի իշխանը՝ Կոն Ստեփաննոսը, Ազուանեց իշխանը, Նանա ասորի սարկուազը, Սիսականի Աշոտ իշխանը և իր մայրը, Սիսական Բարիէնի կինը և ուրիշները: Հայաստանում մնաց ծիախն Շեխի պարսիկը, իբրև վերակացու:

XII.

Բաղդատի ամիրապետի ահարկու բանոր գտնում էր նրա ասպարանքից ոչ հեռու: Այստեղ կեանքը աննկարազրելի սառնասրտութեամբ իր մեռելալին կնիքն էր զրել թշւառ կալանաւորների ճակատին, ուր թախմալի վշտի անհուն դառնութիւնը իր սոսկալի կնճիռներով ակօսել էր նրանց երբեմն զւարժ երեսոր Բանառում զժբաղդ կալանաւորները, անջատւելով աշխարհային ամեն հրապուրիչ վայելքներից, օր ու գիշեր հեծում էին նրա սե ու մութ խորշերում: Այդ տարաբաղդ մահկանացուները լոյսի երես տեսնում էին միայն այն ժամանակ, երբ զուրս էին բերւում դատաստանի

կամ մի այլ հարց ու փորձի համար: Մնացած ժամանակները անթափանցելի խաւարը նրանց անբաժան ընկերն էր: Բանտը բաժանւած էր բազմաթիւ սե ու մութ խորշերի, որոնք իրանց անդրնդային խաւարի հետ աւելի լոբիրինթոսի էին նման՝ քան բանաի, ուր տիրում էր գերեզմանական լուսթիւն: Ամբողջ այդ մթնոլորտար այնպիսի տաղտկալի տպաւորութիւն էր գործում մարդու վրայ, որ նա ակամայից փշաքաղաւում էր և լցում նողկանքի դառնութեամբ գէպի կեանքը և նրա հմայիչ վայելքները: Որքան բանաի խաւարն էր թանձր և հեղուցիչ այնքան էլ աղետալի էր տարաբաղդ կալանաւորների ներքին աշխարհը, ուր նոյնպէս թագաւորում էր անվերծանելի արտօնութիւն, որը վաղուց, շատ վաղուց սքօղել էր նրանց սրտի ամեն մի ելևէջները: Նրանք բանաի աագնապալի կապանքներում ապրում էին միայն իրանց երջանիկ անցեալով և նրա քաղցրիկ խոհերով: Սակայն որքան հրապուրիչ էին եղել անցեալի ժամերը, այնքան էլ կարհուրելի էր դառնում նրաց սրտամաշ ներկան և հիւսաթափութիւն յառաջ բերում նրանց սրտերում: Բաղդատին յատուկ կրղիչ արեք երբէրերի էր գեղածիծաղ գէմքով չէր ժպացել այդ զժբաղդներին: Միայն մի քանի նկուզներում, ուր հեծում էին դատապարտւած իշխանազունք, մերթմերթ թափանցում էր արեկի շողի վախկոտ սիւնը, որը մի երկու ժամից յետոյ, անհետ կորչում էր, և զարձեալ ծանրատաղտուկ խաւարը ամեն ինչ զժոխային թերի տակն էր առնում: Այդ երկ-

ըոտ լոյսի սիւները զարթեցնում էին նրանց մէջ հազարաւոր սրտամորմոր լիշողութիւններ, որոնք ասես կապում էին նրանց կեանքի խռովագոյզ ովկեանոսի հեա: Այդ երկուալոյսի փոքրիկ կտորը լիշեցնում էր նրանց, որ զրսում կեանքը իր շլացուցիչ գերի մէջն է: Բանաի փոքրիկ նկուղներից մէկում շղթալակապ ընկած էր մի մարդ: Լոյսի բարակ շողքը առնիքի նեղ անցքից անցել էր և ուղիղ նրա առաջի պատի վրայ ընկել ու աղօտ ճանանչներով լուսաւորում էր այդ ահարկու միջավայրը: Կալանաւորի դէմքը սոսկալի տպաւորութիւն էր զործում շրջթայի կապանքների տակ: Նրա սպիաականէր գլուխը դրւած էր իր կողքին գտնւած մի խոշոր բարի յրայ, և զայրովթով լի աչքերը անփոյթ անապրերութեամբ անշեղ ուղղւած էին մի կէտի: Ստէպսէկ փոխիստակի զգացմունքները յանախակի այլայլում էին նրա տեսքը, և նա յուսահատ բարկութեամբ դիտելով իր շաւրչը, վերսախն զեւեղում էր զլուխը իր բարեայ բարձի վրայ: Ներքին խուլ կուխը մի առանձնակին թափով բոնկւել էր նրա մէջ, և նրա քաշարի ողին մաքառում էր յաղթական փառքի գուրս գալ այլգուեցից: Նրա հսկայ մարմինը հալւել էր և, մաշւել և սուր-սուր շղածգական ցնցումներ էր զործում այդ յուսահատ կուխի միջոցին: Ներքին ալէկութութիւնը խռովայոյզ ալիքներով օր ու գիշեր անվերջ ժփում էր նրա մէջ և իր ահեղ կահակներով բշում, տանում նրան դէպի այն բաղցրիկ հեռուն, որը անբաշին փութկոտութեամբ

կորել էր նրա համար: Այդ սոսկալի խռովութիւնների ժամերին նրա հալրենասէր հոգին յուշիկ շարժումներով խորտակում էր իր ամսուր կապանքները և սրաթուի թեւերով բարձրանում դէպի բիւրեղանման եթերը, ճեղքում-անցնում նրա լայնածաւալ տարածութիւնը և հրաբորբոք տենչանքներով տոգորւած՝ գրկախառնութեամբ համբուրում իր հայրենի քար ու թուփը, սար ու ձորը, հող ու ջուրը և աղի արցունքներ թափում: Ինքնամուացութեան այդ ժամերին հայրենի երկրի իւրաքանչիւր խուլ անկիւնը բաղցրախօս լեզու էր առնում և իր վիշտ ու ցաւը նրան շշնչում, իր գառնազին բողոքներն էր նրան արտայայտում: Եւ այդ հայրենասէր հոգին անհուն ցաւի տակ տանչուում էր հայրենի երկրի խոցերով և խուլ մոնչիւններ արծակում, որոնք ահեղ թնդիւնով զղրդացնում էին այդ գժոխալին մթնոլորտը: Այսպիսի ըռպէներին հիասթափութիւնը շուտ չէր յաշորդում, և նա առաւելեաս առաջ էր խաղում իր ինքնամուացութեան նաւի վրայ, մինչ նրան կաշկանդող ծանը շղթաները իւրանց ողբագին շառաչիւնով չէին ուշքի բերում նրան: Երկու ոտները ամրացրած էին հաստ շրջթաների մէջ ալնակէս, որ նա անկարող էր ուաքի կանգնելու: Ազ ձեռքը նոյնակէս ամրացրած էր շրջթայով: Անկողին չը կար: Նորա փոխարէն կար միայն յարդ, որը մի շաբաթւայ ընթացքում ծծւում էր խոնաւութեամբ ալնակէս, որ նստել կամ պառկել նրա վրայ և վտանգաւոր էր գառնում և

անկարելի: Այդ պատճառով շարաթ մի անգամ փոխւում էր և նրա փոխարէն նորը ածւում: Այդ անբաղդ կալանաւորը Սմբատ Բաղրատունին էր, հայոց սպարապետը:

Հասնելով Բաղդատ, նա՝ փոխանակ երազած փառք ու պատւի որոնց խօստացել էր Յուղան, շղթայակապ եղաւ և նետւեց այդ բանար, ուր օր ու գիշեր աղի արցունքներով քաւում էր իր մեղքը, որը ակամայ դործել էր, լինելով դործիք Բուղալի հանկերում: Մինչ սպարապետը գտնւում էր իր սովորական ինքնամոռացութեան մէջ և երերում էր հայրէնի երկրի խոցերով, նրա նկուղի դուռը գառն ճռուցով յեշցրեց նրան, որ մարդ է մուտք գողծում նրա մօտ: Նա գլուխը բարձրացրեց և արհամարանքով նայեց մանողի երեսին, որը ձէմի ճրազը ձեռքին մօտենում էր նրան:

Դա բանատապետն էր:

— Ողջոյն հայոց քաջարի սպարապետին,— հեղնական ժպիտը երեսին արտասանեց նա:

Սպարապետը իր գառնութհամբ լցւած աչքերը ու զղեց դէպի նրան և լուռ մնաց:

— Ի՞նչու չէ խօսում Բաղրատունեաց արիագոյն զաւակը: Սպարապետը գարծեալ լուռ մնաց:

— Ի՞նչու էր լուռ. չը լինի միները այսօր լաւ հարսանիք չեն պատրաստել հայոց սպարապետին գւարնացնելու: Սակայն, իշխան, հարսանիքին զգոյշ եղէք՝ ձեր ալեոր վարսերը և մուրուքը շատ չխղուէք, եթէ ոչ նրանք փառաւոր հունձ կը կատարեն նրանց մէջ:

Սպարապետը ոչինչ չը խօսեց:

— Երեխ այդ անզգամները շատ են պար ածել ձեզ. չը լինի յոզնել էք: Եթէ ալդպէս է, ես ձեզ հանդիսա կը թողնեմ:

— Շատ էլ լաւ կանէք, —խորին դառնութեամբ լցւած սպարապետի դողդոչիւն ձայնը արւեց նրան իր պատասխանը:

— Դուք, հայերդ, սիրում էք միայնակեաց կեանք, զարմանալի է, ինչ էք անում այդ միայնութեան մէջ:

— Կրինում եմ քեզ, վերջ տուր քո լրութիւններին:

— Ես հայոց զօրագնդերը չեմ, որ կատարել կարողանամ ձեր հրամանը: Եթէ կուզէք, ես ձեզ կը տանեմ նրանց մօտ:

— Սպարապետի դէմքը մռայլւեց և երկու կաթիլ խոշոր արցունքներ գլորւեցին նրա թախծալի դէմքի վրայով:

Բանտապետը գարծեալ շարունակեց.

— Ուզիղն եմ ասում, որ ես եկել եմ ձեզ տանելու, սակայն ոչ թէ դէպի քո զօրաբանակը, այլ ածիրապետի գիւտանը. գէ՛հ, վերկացէք:

Նա իր ձեռքի բանալիով բաց արեց թեփ շղթալի կապերը: Սպարապետը հազիւ-հազ ոտքի կանգնեց. ոտքերի օղակները չէին թողնում նրան ազատ շարժելու:

— Գէ՛հ, հետեւեցէ՛ք ինձ, —հրամացեց բանտապետը

Սպարապետը՝ ժանր-ժանր շառաչիւններ ար-

ծակելով իր շղթաներով՝ բանտապետի հետ անցան  
մի քանի նեղ ու մուժ անցքերով։ Վերջապէս, նրանք  
ամիրապետի դիւնումն էին։

Փառահեղ գահի վրայ իր ծիրանազոյն զգեստ-  
ներով բազմել էր ամիրապետը, Սրաբալի տէրը.  
Նրան շրջապատել էր զինուորների բազմութիւնը,  
որոնք մերկացրած սրերը ծեռքերին՝ պաշտպանում  
էին նրան նոյնիսկ վատ հայեացըներից և ահ ու  
սարսափ տարածում իրանց շուրջը։ Գահից ոչ հե-  
ռու շղթայակապ բնկած էին գետնին հալոց կա-  
լանաւոր իշխանազունք, որոնց արդէն հարց ու  
փորձի էր ենթարկել ամիրապետը։ Կալանաւորնե-  
րից շատերը առերես խօստացել էին ընդունել իս-  
լամի կրօնը և վերապառնալ Հայաստան, իսկ մնա-  
ցածները, որոնց թւում ուշագրաւ էին Ստեփան-  
նոս կոնը՝ Տուս աւանի իշխանը, և Գրիգոր Մամի-  
կոնեանը, Տարօնի Մամիկոնեանների վերջին շառա-  
ւիդը, անխախտ էին մնացել իրանց հաւատի մէջ։  
Սրանք երկուսն էլ, անսասան հաստատամտութեամբ  
խօստավանելով Քրիստոսի վարդապետութիւնը, ան-  
խախտ էին մնացել իրանց հաւատի մէջ։

Բոլոր ներկայ եղողները յառեցին իրանց հայ-  
եացըները հալոց ծեռունի և շղթայակապ սպարա-  
պետի վրայ։

— Սպարապետ, արդեօք զգաստացել էր, թէ  
դարձեալ յամառ տղիտութեամբ ծեր նախկին մրտ-  
քէ՞րն էք վայիփալում, — հարցըրեց նրան ամիրապետը։

Բագրատունին ուզեցեց նրան իր արհամարան-  
քով լի աչքերը և պատասխանեց։

— Տէր ամիրապետ, եթէ ես զգաստ լինէի և  
գիտենալի թէ ուժ հետ դործ ունեմ, այսօր չէի  
տանջւի ծեր անողորմ կապանքներում։ այո՛, եթէ  
ես զգաստ լինէի, հէնց սկզբից խորին և անկեղծ  
հայրենսասիրութեամբ կը փայլփայէի իմ նւիրական  
զգացմունքները։ Սակայն ես այդ չարեցի, ես հլու  
դործիք դարձայ Բուզալի ծեռքում, և ամեն տեղ  
առաջնորդեցի նրան, բայց այսօր չեմ տրտմում, որ  
ծեր երախտակորոյս իշխանութիւնը հասկանալ չը  
կարողացաւ այդ։

— Մէր խելացի իշխանութիւնը ամեն բան  
հասկանում է ոչ այնպէս, ինչպէս ծեր աղքատիկ  
խելքն է ծեղ թելալրում, այլ նա ամեն տեղ, ամեն  
վայր անշեղ ընթացքով հետեւում է իր նախնիք-  
ների բռնած ընթացքին և նրա քաղաքականու-  
թեանը։ Ես մինչև օրս հաւաստիացել էի, թէ մեր  
շղթաները ուշքի կը բերեն ծեղ և կը զգաստացը-  
նեն։

— Թող ամիրապետը այնքան միամիտ չը  
լինի. նրա տւած հարցերին ես առաջ էլ, այժմ էլ  
տւել եմ աւելի քան կշռագատած պատասխաններ,  
որոնք իմ զգաստ հոգու հարազատ արդիւնքն են  
եղեւ։ Այո՛, ծեր նենդամիտ ողին հէնց առաջի օր-  
ւանից պարզեց ինձ, որ ես գործ ունեմ մոլեռանդ,  
ոխակալ իսլամի երկրպագուների հետ և նրանց  
տւել եմ արժմանի պատասխաններ, որոնց ոչ մի ժամ  
և ոչ մի վայրկեան փոխել անկարող է իմ հողին։

— Ուրեմն զու, յանդուզն պառուտախօս, դար-  
ձեալ անսասան ես ծեր սին հաւատի մէջ։ Խելքի

Եկ, թէւ մեր հաստակուռ շղթաները անկարող եղան ձեզ սթափեցնելու ձեր ցնորքներից, այն կանէ արաբացու երկսալրի սուրբ: Եւ ալդ սրի տակին դու կը յայտնես քո ապաշաւանքը. սակայն թերեւս ուշ լինի ալդ: Այժմ չափի՛ր, ձեփի՛ր և խոհուն լրջութեամբ վախճան տուր քո աղայամիտ թեթեւամառներին: Երգւում եմ, պսակելու քեզ փառքով և պատով և հայաստան առաքել քո իշխանական գաւազանով:

— Այդ փառք և պատիւր, ամիբապետ, անմիտ խոստումներ են: Ես ոչ մի բանով չիմ կարող փոխարինել այն, որը տւել է ինձ իմ հայրենիս սուրբ հաւատը: Ոչ մի բան չէ կարող այնքան հոգեկան հրճւանք, այնքան ներքին զւարծութիւն ու սիոփանք պատճառել ինձ, որքան իմ ազգային նիրական սրբավայրը իրանց բիւրաւոր սրբագործութ լիշողութիւններով: Այդ լիշողութիւնները անթիւ ու անհամար արմատներ են արծակել իմ հոգուս և սրախ բազմատեսակ խօրշերում, որոց արմատախիլ անել անկարող են աշխարհին փառք ու պերանքը, հրապուրանքը, և քաղցր վայելքները: Այդ բոլորից առաւել գերազոննը տւել է ինձ իմ հայրենի հաւատը, որին ուրանալ, ինչպէս և լինի, անզօր է իմ հողին. թող թնդան, թող ահազնազրդորդ որոտումներով ալէկոծւի համայն Արարիան և զէնք ու նիզակներ ուղղի գէպի իմ կուրծքը, իմ սիրուր, դարձեալ ալդ բոլորը անկարող կը լինեն մազի չափ առաջ բերել իմ մէջ: Այդ բոլորը ոչ մի սարսափի, ոչ մի ահարեկող երկիւղ չէ կարող շարժել:

Իմ մէջ: Դրանց զարհուրանքը, զրանց ամբարտաւան բոհմունքը խելացնոր կանեն միայն իրանց աէրերին և ոչ ինձ, որի գլխի իւրաքանչիւր հերը փոխել է իր գոյնը իր սիրասուն հայրենիքի նւիրական զգացմունքների տակ:

— Սթափւի՛ր, սպարապետ, քո մէջ խօսում է Բագրատունիներին յատուկ բմբոստ ոզին. սթափւի՛ր և, եթէ սիրում ես այդ հայրենիքը, որի մասին խօսում ես, թող ձեր սին հաւատը յօգուտ այդ հայրենիքիդ: Այս, յօգուտ այդ հայրենիքի, չէ որ զրանից յետոյ, ես ձեզ լացուցիչ փառքով վերագրծնելու եմ ձեր երկիրը, ուր դու կարող ես անձնատուր լինել քո հայրենիքի կարիքներին և անխոնչ եռանդով ամոքել նրա վերըերը և բուժիչ սպեղանի պատրաստել նրա խոցերի համար: Իսկ եթէ մեւնես, ինչ կը շահէ քո այդ տարաբաղդ հայրենիքը: Զեր երկրի շահն է սախալում ինձ այդպէս վարւել ձեզ հետ: Ես սիրում եմ այդ հողը և նրա բարգաւաճման համար ոչինչ չեմ խնայի: Մի խնայիր և դու, տէր սպարապետ: Քեզ հետ քո հայրենիքի շրթունքներով խօսում է համայն Արարիայի գլուխը: Կարծատե է այս աշխարհի մեր կեանքը. սակայն նա անվախճան է մնում, երբ դարձանում է մերձաւորի վէրքերը և բարեգործ շրջանի մէջ է ապրում:

Սպարապետը հասկացաւ, որ ամիբապետը ծգտում է շղողքորթութիւններով որսալ իրան և ձգել իր նենգամիտ ծուղակը, ուստի պատասխանեց:

— Ամիբապետ, քո այդ քաղցրալեզու բառերը

շփոթեցնել անկարող են ինձ: Տակաւին մանկական որրանիս մէջ լսելու դժբաղդութիւն եմ ունեցել, որ հագարացին և պարսիկը ինչ անկարող են զէնքով անելու, անում են լեզուի: Զեր կեղծաւոր, ձեր շողոքորթ լեզուն ծիծաղ է յառաջ բերում իմ մէջ, որ փորձում էք խարելու Բաղրատունեաց ծերունի զինւորին: Այս, եթէ գուք, իրօք, սիրում էք իմ տարարադդ հայրենիքը, արձակեցէք իմ կապակները և այդպէս առանց կրօնի հարց ու փորձի իմ երկիրը ուղարկեցէք: Միայն լաւ գիտցէք, որ հայոց անբաղդ սպարապետը ուրանալ իր նախնիքների հուատը երբէք-երբէք անկարող է: Ուրանալ հայրենիքիս հաւատը, կը նշանակէ ուրանալ հայրենիքս, իսկ այդ վեր է իմ ոյժերիցս. ուրեմն խելքի եկէք:

— Եւր շուն, ես քեզ խելքի կը բերեմ:

— Ամբարտաւան խալիֆը այդ անկարող է անելու:

— Տարէք զրան և բազմացրէք զրա կապակները:

— Ինչ էլ անէք, ես չեմ կարող թողնել իմ Քրիստոսը:

— Կը թողնես, կամ շան մահով կը սատկես:

— Դիտցիր, ո՞վ ամբարտաւան խալիֆ, մահից յետոյ չէ շարունակում քո դարշանքով լի իշխանութիւնը, ուստի ինձ լաւ է մեռնել, քան այս անդամ և անողորմ կապանքներում մնալ: Միայն եղի՛ր աներկմիտ, որ ես Քրիստոսից չեմ կարող հեռանալ, որը ուել է ինձ իմ սուրբ գաւազանը:

— Ահա քեզ Քրիստոս, ահա քեզ գաւազան. —

այս խօսքերի հետ լսւեցին ամբարտաւան ամիրապետի հարւածները նրա երեսին: Անբաղդ սպարապետի աչքերը լցւեցին բարկութեան կատաղի բոցով. նա խուլ մոնղիւն արծակեց և մի հուժկութափով շարժեց իր կարող բազուկը. սակայն երկաթի շոնչիւնը ուշը բերեց նրան, և նա զայրոյթով լի դառնութեամբ գոչեց.

— Սլդպէս վարւում են ոչ թէ գահակալներ, այլ տպականութեամբ լցւած փողոցացին անիմացչիւներ և վայրագ խոզեր...

— Տարէք զրան, — գոչեց ամիրապետը:

Մի քանի բոսէից յետոյ, դժբաղդ սպարապետը դարձեալ իր նկու զումն էր, ուր մի քանի տարի էր, ինչ հեծում էր խորին վշտի գառնութեան տակ: Այսանդ նա ծունկ չոքեց և բարձրացնելով իր արտասւաթոր աչքերը զէպի վեր՝ խորունկ չերմեռանգութեամբ աղօթել սկսեց, որը մերթ ընդ մերթ ընդհաւաւում էր նրա հունգուր-հոնգուր լացով: Նա ողբում էր իր անցեալը, նա սգում էր իր հարազատների և հայոց երկրի վիճակը, որոնք կենդանի ուրասւականների նամա՝ իրսնց աղիողորմ կերպարանքով ցցւում էին նրա առաջը և երերում, տակն ու վրայ անում նրա ամբողջ կութիւնը: Մահարաւէր խաւարը աւելի նպաստեցուցիչ դեր էր կատարում այդ գործում:

— Ո՞հ, թշւառ իմ հայրենիք, — սգում էր նա, — իմ ծերացած, իմ յովնածութեամբ լցւած ոսկորներս անարժան գտնեցան քո հարազատ վրկում հանդստավայր գտնելու: Ես մեռնում եմ, բայց

պապանձւած շրթունքներս հագարացոց բռնակալի ամբարտաւան գահի առաջ և այս խուլ ու մուժ նկուզում խոստովանում են քո հաւատի, քո կրօնի երանականութիւնը։ Թո բոցակէզ սէրը, սիրասուն զաւակների տեսնելու չերմ բաղծանքը թե ու թիկունք, ոյժ և կարողութիւն տւին ինձ, և ես հոգայս անսասան մեծութեամբ արհամարեցի անարդ բռնակալի ապշեցուցիչ խոստումները։ Թողիմ գողարրիկ հայրենիքը և քաղցրաբորոյ զաւակներս ներեն իրանց անրազդ զինուորին, որը հեռու հայրենի փափկառուն օժե անից՝ հեծում է ամբարտաւան բռնակալի ճիրաններում։ Ների՛ր ինձ, տարաբազդ ազդ իմ, ների՛ր ինձ, անտէր հայրենիք իմ. ևս մեռնում եմ, բայց և քո նէրական սէրը անհուն երանութեամբ առաջնորդում է ինձ դէպի Քրիստոսի ահեղ աթոռը, ուր անարժան շրթունքներովս պիտի պազատեմ խորտակել քո անողորմ կապանքները։ Թո՞ղ այդ ահեղ աթոռը զթա՛ այն հազարաւոր անտէրունչ սգազգեաց այրիներին և վեր առաքէ նրանց լացի, նրանց դառնազին հեծեծանիքի և աղեխարշ հառաչանքների ծախները, որոնք իրանց խուլ մրմունչներով օր ու գիշեր անդադար թնդացընում են հայրենի սար ու ծորը։ Թո՞ղ հայրենի երկրի անթիւ ու անհամար անձնւէր զոհերի դիակների արևակէզ ճերճերոցը իրանց լի գարշանքով և մռալլ կերպարանքով զարթեցնէ հայոց անդուժ Աստծուն իր զարաւոր կործանիչ մրափից։ Թո՞ղ բաց անէ Նա իր քնէած ազքերը և տեսնէ, թէ որքան անմեղ արեան, որը յորդահաս գետերի նման ոռոգեց հայոց հողը և ներկեց նրան ամենուրեք իր շառագունած երանդներով։ Ո՞հ, հայրենի աշխարհը, հոգոյս մշտաբաց աչքերով՝ թռչում էմ դէպի քո արծաթափալ լեռնալանչերը և անյոյս սգաւորի նման գիտում քո աղետալի վշտերը։ Ո՞հ, հայրենի նէրական վայրեր, ծեր անմահ քաղցր լիշտակները ամեն ժամ, ամեն րոպէ սնունդ են մատակարարում իմ տարակաչ հոգոյս։ Ո՞հ, բանի ամ է, ինչ ես բուռն տենչանքներով առչորւած շրթունքներովս տւի իմ վերջին հրաժեշտը քո անտէրունչ երեսին և թողի քեզ։ Սղաչում եմ, Տէր իմ, Տէր, կամ խորտակիր այս քարասիրտ մարդկանց ծանր կապանքները, կամ առ հոգիս, որ լուն իմ մէջ ահաւոր վշտի սրտամորմոք ցաւերը։ Թո՞ղ այսուհետեւ անէծք ու նղովք ժանրանան իմ յետազայ զաւակներիս վրայ, որոնք խօսքի, երգումի ազնւութիւն են փնդուում հագարացու մէջ։ Թո՞ղ անարժան զաւակներ լինեն նրանց իրանց նախնիքների, որոնք ընդ միշտ համոզւած են թէ այդ ամբարտաւան ազդի մէջ չն մեռել մարդկալին ամեն վեհ զաղափարները։ Թո՞ղ այսուհետեւ հայոց խւզնուկ Աստուածը լցւի վրէժինդրութեան անշեղ կրակով և նրանով բորբոքէ հայոց յետազայ զաւակների սրտերը։ Թո՞ղ մեռնեմ ես, որ հաւատի սրբութիւն ընծայեցի այդ բռնակալի ցեղի ներկայացուցիչներին։ Թո՞ղ ապագայ սերունդը վկայ լինի, որ իմ երկարատե կա զանքնե-

անէ Նա իր քնաթաթախ աչքերը և աստածներին յատուկ դթութեամբ խղճայ այդ անմեղ արեան, որը յորդահաս գետերի նման ոռոգեց հայոց հողը և ներկեց նրան ամենուրեք իր շառագունած երանդներով։ Ո՞հ, հայրենի աշխարհը, հոգոյս մշտաբաց աչքերով՝ թռչում էմ դէպի քո արծաթափալ լեռնալանչերը և անյոյս սգաւորի նման գիտում քո աղետալի վշտերը։ Ո՞հ, հայրենի նէրական վայրեր, ծեր անմահ քաղցր լիշտակները ամեն ժամ, ամեն րոպէ սնունդ են մատակարարում իմ տարակաչ հոգոյս։ Ո՞հ, բանի ամ է, ինչ ես բուռն տենչանքներով առչորւած շրթունքներովս տւի իմ վերջին հրաժեշտը քո անտէրունչ երեսին և թողի քեզ։ Սղաչում եմ, Տէր իմ, Տէր, կամ խորտակիր այս քարասիրտ մարդկանց ծանր կապանքները, կամ առ հոգիս, որ լուն իմ մէջ մէջ ահաւոր վշտի սրտամորմոք ցաւերը։ Թո՞ղ այսուհետեւ անէծք ու նղովք ժանրանան իմ յետազայ զաւակներիս վրայ, որոնք խօսքի, երգումի ազնւութիւն են փնդուում հագարացու մէջ։ Թո՞ղ անարժան զաւակներ լինեն նրանց իրանց նախնիքների, որոնք ընդ միշտ համոզւած են թէ այդ ամբարտաւան ազդի մէջ չն մեռել մարդկալին ամեն վեհ զաղափարները։ Թո՞ղ այսուհետեւ հայոց խւզնուկ Աստուածը լցւի վրէժինդրութեան անշեղ կրակով և նրանով բորբոքէ հայոց յետազայ զաւակների սրտերը։ Թո՞ղ մեռնեմ ես, որ հաւատի սրբութիւն ընծայեցի այդ բռնակալի ցեղի ներկայացուցիչներին։ Թո՞ղ ապագայ սերունդը վկայ լինի, որ իմ երկարատե կա զանքնե-

բովս քաւեցի ես իմ ակամալ յանցանքս: Տէր  
իմ, գթա՛ քո անարժան ծառալիդ, գթա՛ նրա տա-  
րաբաղդ հայրենիքին... Երկար այսպէս հոգեզմալ  
երևակալութեամբ ողբում էր հայոց անբաղդ սպա-  
րապետը, մինչեւ անվերծանելի թուլութիւնը կաշ-  
կանդեց նրա լեզուն, և նա լոեց յաւիտենական  
լռութեամբ: Նա մեռաւ բանտում, խոստովանելով  
Քրիստոսի Աստուածութիւնը և վաստակելով „Խոս-  
տովանող“ պատւանունը: Նրա մարմինը ամփոփեցին  
Բաբիլոնի այն գրի մէջը, ուր մի ժամանակ ծրդ-  
ւած էր Դանիիլ մարգարէն:

Նրա մահից փոքր ինչ առաջ Մամիկոնեան  
Գրիգոր իշխանը փախել էր բանտից և Բագրեանտ  
դռաւառում եօթն օրից յետոյ կնքել էր փախ-  
ճանը:

Ամիրապետը խստիւ պատւիրեց Աղքաղատա-  
կանի Մահմէդ ոստիկանին՝ ինչպէս և լինի բռնել  
նրան և իրան առաքել:

Սմբատ բազրատունու որդի Աշոտը սրա հրա-  
մանին համաձայն կտրեց նրա զլուխը և ուղարկեց  
նրան տսելով, որ նա կտրել է նրա զլուխը այն  
ժամանակ, երբ նա կամենում էր անցնել Յունաս-  
տանը: Այս պատճառով ամիրապետը բարեկամական  
աչքերով նայեց դէպի Աշոտի այդ հաւատարմու-  
թիւնը և կարգեց նրան Բագրեանտ գաւառի վրայ  
իշխան և տւեց նրան հինգ ըիւր արծաթ: (30,000  
ֆրանգ):

### XIII.

«Ի տես հասեալ միշակութեան բաշա-  
հասակ էր նա և անձնեայ և թիկնաւետ...»

Յան. Հայ. Պատրէ.

Ուրախալի էր Շիրակաւանի տռաւօտը. բայց  
այդ ուրախութիւնը զուրկ էր կարող ոյժերից՝ վա-  
նելու այն արտաճութեան շղորշը, որով պքողւած  
էր Բագրատունեաց իշխանների ազարանքը, որը  
մի քանի ժամ էր, ինչ ոտքի էր ելել. սակայն նրա  
մէջ եղող բոլոր թէ իշխանազունը և թէ սպասո-  
ւորք լցւած էին մի վհատեցուցիչ թախծալի գտո-  
նութեամբ: Բոլորից առաւել մուալլած էր մի հա-  
տիկ մարդ, որը ապարանքի ծիրանաղարդ դակի-  
ճում խորին վրդովմունքով երերւած անդաղար անց  
ու գարծ էր անում նրա մէջ և ստէպ-ստէպ խոր  
հոգոց հանում, նման այն հրաբուխների, որոնք եր-  
կարատե լռութիւնից յետոյ, ե՞րկար-ե՞րկար տա-  
րուբերում են և ներքին խուլ գղրդոցով թնդաց-  
նում ամբողջ իրանց շրջակալքը:

Այսպէս էր և այդ մարդը, որի մէջ ներքին խուլ կռիւր սարսափահար փոթորիկներ էր բարձր- րացրել և անդադար երերումների էր ենթարկում նրա տակաւին գեռափթիթ հողին. Նա լուռ էր, սակայն նրա զիմագծերի յանախակի փոփոխու- թիւնը՝ լի ալլալութեամբ վկայում էին, որ այդ մարդը գտնւում էր հոգեկան խորին խռովու- թիւնների մէջ և անխնայ տանջում է և տառա- պում նրանց անողոք նանկերում: Այդ ըոպէին նրա հոգետանչ էր թիւնը ալէկոժում էր. ալիքները իրանց ահագնագործ կոհակներով անվերջ ծփում էին և մրրկայոյզ հուժկու հողմերի հոսանքին մատնում նրան: Նրա ներքին աշխարհը խռովայուղ դրութեան մէջ էր գտնւում: Սակայն հոգեկան այդ փոթոր- կալի տագնապների մէջն էլ նա գեղեցիկ էր: Նրա յաւէրժ գւարթ և քաղցրածպիտ երեսը այդ օր նման էր երբներանդ այն դաշտավայրերին, որոնք բնութեան օրհասին էլ պաշտպանում էն իրանց վայելուչ կերպարանքը: Նրա մրայօն և գեղեցկա- տեսիլ աչքերը, որոնց մէջ աննշմարելի արեան կա- թիւնները հեռաւից փայլում էին, որպէս կարմիր յա- կինժ՝ քանդակւած մարգարիտների մէջ, այդ օր ահ ու սարսափ էին սփռում իրանց շուրջը: Նրա մեծիմաստ և քաղցրաբան լեզուն այդ օրը վաղ ս- ուաւուից ոչ մի բան չէր արտասանել: Խոնարհու- թեամբ նա ընդունում էր այն մեծարանքը, որոնք տրում էին նրան իրեւ իշխանի. բայց իր հոգու վում մեծութեամբ զիտէր և արհամարել անար-

գանըը և միշտ բարի և առաքինի զործերով էր վարժեցնում իր հոգին: Սակայն այդ օր նա ոչ մի բանի վրայ ուշադրութիւն չէր դարձնում: Զը նա- յած նրա իշխանական իրաւունքներին, նա բոլոր իր շրջապատաղների սերտ սէրն ունէր գրաւած և երբէք իր թշնամիների կամ հակառակորդների հետ չէր մաքառում կուռվ, այլ առաքինի զործերով իր կամքին էր նրանց բերում և այդպէս ուղղում նրանց: Առատածեն էր դէպի իր մերձաւորը և միշտ խոյս էր տալիս սին զործերից: Բոլոր իր շրջապատաղների հետ նա վարւում էր եղբայրաբար և նւաստագոյններին չը գիտէր արհամարել: Սա- կայն այդ օր նա անտարբեր էր զէպի տմբն բան: Այդ մարդը Աշոտ Բաղրատունին էր, Սմբատ Խոս- տովանողի որդին: Վաղ առաւոտից Բաբիլոնից նա մի բօթաբեր լուր էր ստացել, և այդ լուրը հոգեկան խռո- վութիւնների և տաղնապների էր մատնել նրան: Նրա անձնւէր և հալրենասէր հոգին երերում էր խորին վրդովմունքների մէջ և անկարող էր ունէ ելք զրա- նել: Եւ այդպէս, նա շարունակում էր անզգայ անց ու գարձ անել գանիճի գեղեցկագարդ միշավայ- րում: Սատանալով հօրից իշխանական սուրը և նրա հետ երկրի կառաւարութեան իրաւունքները, նա օրէ ցօր անհամբեր սպասում էր թէ հայրը կը վե- րադառնայ Բաղրատից մեծ փառք ու պատւով: Բայց այդպէս չեղաւ. նա այդ օր հօր եղերա- կան մահն էր լսել: Եւ այդ էր պատճառը, որ նա գանւում էր հոգեկան խորին տագնապների մէջ այդ

էր պատճառը, որ նրա միշտ զւարթ հոգին այդ օր ծփում էր թախծալի երերումների տակ: Այդ տակաւին սակաւ էր: Նա լուր էր ստացել, որ հայոց ու շաղրաւ նախարարները, իշխանազունք, երկնչելով ամիրապետի սպառնալից պատիմներից և տանջանքներից, ուրացել էին իրանց հայրենի զարաւոր սրբագործւած հաւատը և ընդունել հագարացոց կրօնը: Եւ այդ բանը սգոյ թախծալի խոցեր էր բացել նրա հայրենանէր կրքում: Երկար տնց ու զարծ տնելուց յետոց, վերջապէս, նա ինքն իրան սկսեց խօսել և մխիթարել:

— Խելակորոյս գաղանի ննան այլես սրէտք չէ ինձ մունչալ, այլ անհրաժեշտ է զալոց աղետների առաջը պատնշներ կազմել: Այդ բանը մեր արգի կացութեան մէջ, մեր արգի պարագաներում միմիայն ինձ վրայ է ժանրանում: Եւ ես կուրծքս ընդդէմ պիտի կանգնեցնեմ մեր նենդամիտ թշնամու առաջը: Սակայն ի՞նչպէս—դէմ յանդիման մենք անկարող ենք թշնամու առաջը փակել, այլ խոհուն սիրով պէտք է ծեռք բերել նրա համոլքը, որից յետոյ դիւրին է ինձ նրան մատներիս վրայ կաքաւել տալ: Անբաղդ հայրս գասաւ նրա առաջ հանջութիւն, սակայն միամտութեամբ ընկաւ նրա գոռ որոգայթների մէջ: Այդպէս չի լինի որդին...

Եւ նա այդ օրւանից ճիշտ որ սկսեց իր բըռնաւոր թշնամու հետ քաղցրութեամբ վարւել, աւազակամիտ մարգկանց հետ զգաստ հնարներ էր գործ գնում և խելացի կերպով իր ցանկալի նպա-

տակին հասնում: Վերկացու Շեխին որդիական չերմ զգացմունքներ էր տածում և օր բստօրէ նրա հետ մտերմական կապեր ամրացնում և նրա սիրելիների շարքը մուտք գործում ալնպէս, որ նրա անունը սիրելի գարձաւ ոչ միայն Շեխիի և նրա զերգաստանի մէջ, այլ և նրա և իր տաելեաց ու թշնամեաց մէջ: Եւ այսպէս, օր բստօրէ ամենքն սկսեցին պատկառել նրանից և ակնածել ու դրւատել նրա իմաստութիւնը և քաջութիւնը: Մինչ սա զանիթնում հեծում էր խռովութեան ալիքներով, նես մտաւ նրա սպասաւորներից մէկը և, խոր գլուխ տալով, կանգնեց վրան մօա: Աշոտը մի բույէ կանգ առաւ, լուռ նախեց նրան ոաից զլուխ, տալա խորին գտանութեամբ հարցրեց.

— Ասելիք ունիս, Մանաս:

— Այս, աէր իմ, քո ծառան ասելիք ունի:

— Դու հենց բուի նման այս վերշերս մի մրխիթարական բան չես պատմել ինձ, թերեւս այսօր մի նոր բան բուաս: Հը, ի՞նչ կայ:

— Տէր իմ, Բաղդատից պատգամաւորներ են եկել և թախանձում են ձեզ տեսնել:

— Ի՞նչ մարգիկ են, Մանաս, մի բան իմացած կը լինես: Ես պատգամաւորների չեմ սպասում, ես միայն գժբաղդ հօրս էի սպասում, մեծ իշխանիդ, նա էլ հօ լայտնի է, թէ ինչ աղեաալի վախճան է ունեցել:

Աշոտի աչքերը լցւեցան արատասուքի կաթ՛լ-ներով, և նա հաղիւ կարողացաւ հրամացել նրան-

— Այս բոպէիս կանչի՛ր եկողներին:

Մի քանի բոպէից լետոյ, ներս մտաւ մի բարձրահասակ մարդ, որի արտաքինը աւելի հայի էր նման, քան հագարացու: Նրա հայրը հայ էր եղել և իր ամբողջ դերգաստանով ուրացել լր քրիստոնէութիւն և ընդունել հազարացու կրօնը: Նրան կոչում էին Ալի-էրմանի, որը տեսնելով դահլիճի շքեղազարդ փարթամութիւնը, փալրկենաբար ցնցը-ւեց, ապա ուշըի գալով, խոր երկրպագութիւն արեց Աշոտին և նկատեց.

— Տէր իշխան, ծեր նւաստ ծառան արքայից-արքայի հզօրափայլ ողջոյնը ունի ծեղ հաղորդելու:

Աշոտը, սրօղելով իր արհամարական հայեաց-ըլ, պատասխանեց.

— Թող տիեզերքի Խնամակալը իր ահեղ աչով անսասան պահէ մեր վեհապանծ ամիրապետի առողջութիւնը: Ստկայն ինչով եմ ես, արդեօք, այդ արժանաւորութիւնը գտել նրա առաջ: — Այս տաելով Աշոտը հրամայեց նրան նստել:

Նորեկը բազմեց շքեղազարդ գահաւորակի վրայ: Միւս գտհաւորակի վրայ, նրանից ոչ հեռու, նստեց Աշոտը:

— Ձեր բարի համբաւը ամեն ժամ յալանի է ամիրապեախն, և նա զիտէ առատօրէն վարձատրել իր ստորագրեալներին:

— Թող Տէրը օրհնէ նրա կեանքը:

— Մեր բաշայաղթ ամիրապետը միթէ, կար-

ծում էք, մոռացել է այն, ինչ գուք, իշխան, արիք նրան:

— Ես պարտական եմ իմ հլու պարտականութիւններս կատարելու և կատարուծ եմ:

— Միթէ, իշխան, այն քիչ էր, որ զուք կատարեցիք այս վերջերս: Զէ՞ որ ոչոք չէր կարող այնպիսի ծառալյութիւն մատուցանել ամիրապետին, որպիսին զուք մատուցիք: Հեշտ բան էր, միթէ գտնել Մամիկոննեան Գրիգորին. այդ տակաւին բաւական չէ, զուք բացի այդ՝ ձեր անկեղծ հնազանդութիւնը ապացուցիք, կտրելով նրա զլուխը և արքունիքը ուզարկելով: Այս, ապացուցիք: Այդ բանը շարժել է ամիրապետի սէրը դէպի ծեզ:

— Իւրաքանչիւր անկեղծ և հլու ստորադրեալ պարտական է այգակս ծառայելու իր տէրերին: Այդ արեցի և ես:

— Աւելի շատ զուք հաճոյացել էք ամիրապետին, որ թող չէր տւել նրան փախչել Յունաստան և նրա Ճանապարհին կտրել էք նրա զլուխը: Ով զիտէ, ինչեր զուրս տար այդ թշւառականը, երբ յունաց արքունիքը հասնէր: Ահա, թէ ինչ էք զուք արել: Դեռ չեմ խօսուծ ձեր խելացի նիստ ու կացի, ձեր կենցաղավարութեան մասին, որը ունէք դէպի ամիրապետի հպատակները:

— Ես այգակս էլ կը մնամ:

— Այդ քաջ իմանալով ամիրապետը, նա ձեղ իշխանաց-իշխան է կարգել համայն հայոց վրայ... ահա հրովարտակը:

Աշոտը ութի ելաւ և խոր երկրպագութիւն

տւեց հրովարտակին, որը Աղի-Երմանին յանձնեց նրան:

— Ահա՝ այն շքեղաշուք զգեստները և պարզեները, որոնց նոյնպէս ընծալել է ձեզ ամիրապետը: Բայց այդ նա ձեզ է յանձնել և ձեր աշխարհի հարկը, որը ինքներդ այսուհետեւ պարտական էք ժողովել և արքունիք առաքել: Գիտէք, որ այդ պատիւներին ոչ ոք չէ արժանացել մինչև օրս: Եւ այս օրւանից և եթէ կը լինեն ոստիկաններ, սակայն նրանք լոկ վերակացւի և տեսչի պաշտօններ կը կատարեն ձեր երկրում: Իսկ ես դնում եմ Յունաստան պատերազմելու լոյների հետ: Այս ասելով, նա սփոռեց Աշոտի առաջ այն իշխանաց-իշխանի զգեստները, որոնց նա պարտական էր կրել իր վրայ:

— Ես իմ չերմ գոհունակութիւնս եմ յայտնում այդքան ուշադրութեան համար, որոնց ես, կրկնում եմ, արժանի չեմ:

— Իշխան, ձեզ է յանձնւում և Աղուանեց և Վրաց երկիրների տեսչութիւնն էլ:

— Տէր ոստիկան, արդեօք արբայից-արբային մեր վսեծափայլ ամիրապետին, հաճոյ կը լինի իմ սպարապետութեան պաշտօնը եղրօս, Արասին, յանձնելու, որովհետեւ եթէ ես սրբութեամբ կատարեմ արքայի շնորհ արած իշխանութիւնները, անկարող կը լինեմ հետամուտ լինելու սպարապետութեանս պաշտօնին:

— Եթէ ձեր եղբայր Արասը արժանի է այդ

պաշտօնին, ամիրապետը ոչ մի արգելք չի յախնի. արէ՛ք, ինչպէս զիտէք:

— Տէր ոստիկանապետ, ես նրան գովաբանում եմ ոչ իրու եղբօր, այլ իրու քաջ, անձնեալ, առողջանձն, կորովի և յաջողակ պատերազմասէրի, որը միայն կարող է արդարացնել մեր արքայի և իմ լոյսերը: Նա պատերազմներում յահախ է ապացուցել իր ռազմիկ ոգին և դիտէ ժառայել իր հայրենիքին անձնւեր հայրենասէրի ջատագովութեամբ:

— Եւ, իշխան, թող օրհնւած լինի ձեր կամքը: Այդպիսին աւելի քան արժանի է սպարապետութեան պաշտօնին:

Այդ օրւանից Աշոտը սկեց իր խելացի քաղաքականութեամբ կառավարել իր երկիրը, յանձնելով հայոց սպարապետութեան պաշտօնը իր եղբօր Արասին, որը ամենուրեք արդարացնում էր դէպի իրան տաժած յոյսերը:

#### XIV.

Դեղեցիկ էր Դուին քաղաքը:

Տրգատի մահից յետոյ, հիմնեց նա մի տափարակ բլրակի վրայ հայոց հին մալրաքաղաքից, Աշտիշատից, ոչ հեռու և 500 տարի էր, ինչ նա համարւում էր հայաստանի առաջին քաղաք, ուր նստում էին հագաւացոց ոստիկաններ, պարսից մարզպաններ, հայոց իշխաններ և հայրապետներ: Գեղեցիկ էր նա իր բազմամարդութեամբ, իր շացուցիչ

հարստութեամբ և շռապութեամբ։ Գեղեցիկ էր նա և հայոց հայրապետների շքեղաղարդ բնակարաններով և փառահեղ զիհարանով, ուր գեղեցիկութիւնը առաւելեա հրապուրիչ . և զսեմ կերպարանք էր առնում այնտեղ տիրող վանական անարատ պարզութեամբ։

Զը նորած Արարատի տափարակին յատուկ  
բոցակէղ արեգակին, հայոց հայրապետների վեհա-  
րանը պահպանում էր խիստ ախորժելի, խիստ  
սրտապարար զովութեան մէջ և թւում էր, որ  
մարդկացին ամբարտաւան ոտք երբէք, երբէք չէր  
շօշափել նրա անարատ պարզութիւնը: Երբեմն-եր-  
բեմն հայոց աշխարհին յատուկ քաղցրախօս ծիծեռ-  
նակն էր համարձակում չափել այդ շինւածքի եր-  
կարութիւնը իր սրաթուիչ թեւերավ և կանգ առնել  
նրա լուսամուտների շրջանակների մօտին և իր ա-  
նուշ գալարիկներով խանգարել այդ շինւածքի վե-  
հապանծ տէրերի անդորրութիւնը և խոռվել այն-  
տեղ տիրող խորին լուսթիւնը:

Զը նայած վեհարանում տիրող խորին լուս-  
թեան, այնաեղ մի գողարիկ բանդակներով գահա-  
ւորակի վրայ բազմած էր մի պատկառելի դէմքով  
հոգեօրական, որը խորասուցւած էր ըստ երևոյ-  
թին դառն մտածութիւնների զրկում։ Ոչ ձիմեռ-  
նակի քաղցր երգը, ոչ աներես ճնճղուկների ծրւ-  
ծըւոցը, ոչ ագռաւների չարագուշակ կոկոսցը և  
փողոցի մարդկանց անց ու զարձը, ծիչ ու աղա-  
ղակը չէին կարող գուրս բերել նրան իր մաշող  
մտշերի զրկից։ Նա զբազւած էր իր առարձնակի

խոկումներով։ Նրա հազուսաթը կրօնաւորի զգեստի պատկառելի ձև ուներ։ Այդ մարդը Զաքարիա Զաղեցին էր, հայոց կաթողիկոսը։ Զաղեցու գէծքը զո՞ն արտայալառներուն չուներ, միայն երկնալին մխիթարութիւնը շաղղողում էր նրա խորիմաց աչքերում։ Թւում էր, որ այդ աչքերը վաղուց ընտելացել են վանականի աննախանձելի վիճակի հետ։ Նրան տանջում էր այն միտքը, որ հայոց գերւած նախարարները և իշխանազունքը, երկնչելով ամիրապետի սարսափահար պատիժներից, ուրացել էին իրանց նախնիքների հաւատը։ Նրան խովում էր այն միտքը, որ սխակալ Յունաստանն էլ իր անախորժ կրօնական հազար ու մի կնճռոտ հարցերով այդ տագնապալի պահուն հանդիսաւ չէ տալիս իրանց, այլ քստմնելի տառչարկութիւններ է անում իր Փոստ պատրիարքի միջոցով, որը իր անամօթ վարք ու բարքով անթիւ ծաղրական անուններով էր մկրտում հայերին, որոնց թւում աւելի նախատական էր համարում „Ծանծալիկեաններ“ անունը։ Նրան բորբոքում էր Հայաստանի աղետալի ներկան, նրան զարհուրեցնում էր նրա ողբալի ապագան, եթէ իրերի դրութիւնը հայոց աշխարհում ալղպէս անփոփոխ ընթանալ։ Նա տակաւին տեղեկութիւն չուներ հայոց զօրքերեց, որոնք Աշոտի եղբայր, սպարտապետ Աբասի, առաջնորդութեամբ ուղարկւած էին Սևաղալի որդի Զահարի վրայ, որը լսելով Հայաստանում տիրող հանգամանքների մասին, 80 հազար զօրքով մտել էր

մեր սահմանները և անխնայ կատարում էր իր աւերածութիւնները:

Այս բոլորը գիտէին երկու մարդ՝ կաթողիկոսը՝ Զաքեցին և իշխանաց-իշխանը՝ Աշոտը: Այս երկուսն էլ իրանց անկեղծ հոգու խորին դառնութեամբ տանջում էին հայոց աշխարհի աղեխարշ դրութեամբ և յարատե խուլ կոխների մէջ մաքառում էին մի խաղաղ ելք, մի ցանկալի փրկութիւն զտնել իրանց տարաբաղդ հալրէնիքի համար:

Այդպիսի մաքերով էր այդ օր տանջում Զաքարիա Զաքեցին, որը իր բաց լուսամուտի կողքին անշարժ նստած նախում էր դէպի այն կողմը, ուր զրկւած իրանց փառք ու պատից, շուք ու զարդից, գերութեան ճանկերում հեծում էին մի քանի հարիւր իշխանազունք և հայոց ծերունազարդ սպարապէտը: Նախում էր դէպի այն հեռաւոր հինաւուրց վանք ու մենաստանները, որոնք իրանց կիսակործան աւերակներով ասես ողբում էին իրանց սոսկալի անկումը և իրանց անտէր մնացած և ցան ու ցրիւ եղած հօտի դառնազին կօրուսար: Այդ հոգեկան խռովութիւնների ըոպէին նրա հայեացքը վեհանձնական էր: Փառաւոր մօրուքի վարսերը փայլում էին ծիւնի նման: Աչքերի մէջ մերթակի բռնկւում էր յուսահատութեան բարկ կրակը: Իբրև հալրապէտ, նա հրեշտականման էր, իսկ իբրև հալրէնիքի զաւակ՝ նա անձնւէր էր և զայլեցուցիչ եռանդով կառավարում էր իր թշւառ երկրի գործերը և նրանց անհրաժեշտ պահանջը կատարում:

Իր զօրաւոր ծեռքով նա գիտէր արմատախիլ անել իր հօտի մէջ եղած տարածայնութիւնը: Այդ պատճառով իւրաքանչիւր կննուու խնդիրների միջոցին միշտ նրան էին դիմում և նրանից խորհուրդ հալցում: Այդպէս էր և Սիւնեաց Վասակ իշխանը (Գաբուռը), որը գտնւում էր նրա մօտ, նրա հարեան սենեակում:

Երկար Զաքեցին պիտի տանչւէր այդ տաղնապալի խորհրդով, եթէ ներս չը մտնէր Վասակ-Գաբուռը, որը, մօտենալով նրան, առաւ նրա աչը և բազմեց նրանից ոչ հեռու մի ուրիշ գահաւորակի վրայ:

— Վեհափառ տէր, իզուր էր գուք տանջում այլեալլ ենթագրութիւններով: Դեռ երեկ զուք անհանդիստ էիր լինում մեր զօրքերի և մեր նորդնուտիր սպարապէտ Արասի մաւին, սակայն այժմ, փառք Աստուծոյ, մահթարիչ լուրեր կան, որոնք ապացուցում են, թէ ձեր կասկածը ապարդիւն է եղել:

Զաքեցու դէմքի վրայ փայլեց ուրախութիւն և նա զգաստացած հարցրեց:

— Ի՞նչ կայ, իշխան:

— Մեր կտրիչ և խորիմաց սպարապէտը չարդ ու փշուր է արել թշնամու զօրքը:

— Միթէ:

— Այն, նա անսպասելի կերպով անցել է կաղզւանու կողմերը և արիաբար յարծակւել Զահարի վրայ այն ժամանակ, երբ նա հանդիստ է վայելիս եղել և չէ էլ սպասել, որ հայոց զօրքը

իր քթի առկին է գտնել... Եւ այդպէս, վեհափառ տէր, նո չարդել է մեր ամբարտաւան թշնամու ոլժը և ցան ու ցրիւ է արել նրան այնպէս, որ ոմանք ընկել են մեր սրերից, ոմանք գետն անցնելու ժամանակը՝ չուր են ընկել և խեղդւել, շատ քչերին է աջողւել փախչել, որոնց թւում և Զահարին, որը հաղիւ հաղ 16 մարտով աղատւել է և ամօթահար իր երկիրը վերադարձել:

— Ուրեմն մեր 40 հազարը այդպէս չնշել է թշնամու 80 հազարը:

— Իսկ և իսկ այդպէս, վեհափառ տէր:

— Եթէ այդպէս է, ես այնաեղի անունը, ուր մեր գոռ թշնամին զտաւ իր արժանի պատիժը, անւանում եմ „Քառասունք“, և թող այսուհետեւ մեր սերունդը այդպէս կոչէ այդ տեղի անունը: Բայց արդեօք մեր Աշոար այդ կուի համար չի տուժի: Զէ՞ որ ամիրապեար կարող է կատաղել:

— Ոչ, վեհափառ տէր, չէ՞ որ Զահարը ամիրապեաի հրամանով չէր տիրել մեր երկրի այն մասը. Էլ ինչո՞ւ համար նա կարող է խոժոռւել մեր իշխանաց-իշխանի վրայ: Մեր իշխանը այնքան խոհուն քայլեր է անում, որ ես տարակոյս չունեմ, որ ոչ ոք արտունչ յայանէ նրա մասին:

— Բացի քեղանից, Վասակ:

— Իմ էլ այնքան մեծ արտունչ չէ, վեհափառ տէր, միայն մեր իշխանը յամեցնում է իմ խնդիրը: Սակայն ես կուղելի, որ նա շուտ վճռէր այն հարցը:

— Իշխան, դա հասարակ բնաւորութիւն կրող

հարցերից չէ. դա ամուսնութիւն է, որի մասին անհրաժեշտ է շատ լուրջ խոկալ: Դրանից է կախւած ամուսիների երջանկութիւնը, նրանց զաւակաց յարատե բազգաւորութիւնը:

— Ես դրան հակառակ չեմ, վեհափառ տէր, սակայն ի՞նչ կարող է տեղի ունենալ երբ ես և Մարեմը սիրում ենք միմեանց մեր հոգու ամբողջ էութեամբ, Էլ ինչո՞ւ նրա հայրը չէ անապարում մեր բուռն տենչանքներին կատարում տալ:

— Դեռ նա պիտի սառւգէ, կարծում եմ, թէ որքան անկեղծ է ձեր սէրը, որ ամուսնական խնդիրներում, անշուշտ, պիտի զեկավարիչ գեր կատարէ: Սակայն երբ նա երիտասարդ հոգիներին յատկանիշ կաղմող գիւրաբորբոք կայծերի բնաւորութիւն է կրում, ամուսնութիւնից յետով մի առժամանակ բորբոքւմ է և ապա հանգում, որից յետով դժոխքը իր սոսկալի գոյներով մուտք է զործում թէ ամուսիների, թէ նրանց զաւակների մէջ և թէ նրանց խաղաղ յարկի տակ: Ես բիւրաւոր օրինակներ կարող եմ բերել այնպէս, որ գուք համոցւէր, որ անաշող ամուսնութիւնը խորտակում է մեր օշախների հիմքերը:

— Ես դրա մասին ոչինչ չունեմ տսելու, վեհափառ տէր. բայց չէ՞ որ մեր սէրը բղխում է մեր երկուսի հոգու անկեղծ խորշերից, որը ինձ համարձակութիւն է տալիս թախանձելու ձեզ, որպէսզի գուք միջնորդէք իշխանաց-իշխանի տաաչ:

— Այս մօտերս ես այդ անշուշտ կանեմ

և ինքս էլ կը պսակեմ ձեզ: Միայն պարաք եմ համարում վերստին զգուշացնելու ձեզ: Գիտէ՞ք քանի՞-քանի՞ ծիծաղերես, ուրախ ու դւարթ դէմքեր են անաջող ամուսնութիւնից յետոյ մուալլում և արամութեան սև թախմով լի՛ ամպերով յաւերժ սքօղում իրանց ցաւատանչ տեսքը: Գի՞տէք, որքան ցցւած, հպարտ հասակներ են կորանում և լոռութեան ովկեանոսի անյատակ վիճը ընկնում ու այնտեղ անվախճան հեծում և ողբազին սղում, երբ անաջող ամուսնութեան ճանին են զլորում, ուր խոռվախոյզ կեանքի չարաբաստիկ հանգամանքները օր բատօքէ բարդում են նրանց պարանոցին, և ամեն ժամ, ամեն ըոպէ խորացնում նրանց անողոք վէրքերը: Գիտէ՞ք, քանի՞-քսնի՞ անարատ յարկեր են ապականում կեանքի հաղաք ու մի ախտերով, երբ անաջող ամուսնութիւնը իր դիւային կերպարանքն է երեան հանում այդ անրիծ շէնքերի տակ. զիտէ՞ք, որքան արիւն-արցունքներ են հեղեղի նմտն հոսում այդպիսի շէնքերի միջով և իրանց սրտառուչ հառաչանքներով յնցում լսողի սիրտն ու հոգին: Այն, այդպիս է ամուսնութիւնը, որը գիտէ երկնալին բարձունքների անսահման տարածութեան մէջ ծգել իր զոյգերին, ուր կեանքը իր բիւրաւոր նրապուրիչ վայելքներով ծփում է ամենուրեք. գիտէ և այդ անհուն տարածութիւնից վայր զլորել անբազութեան այն խորխորատը, այն խաւարապատ անդունզը, ուր թագաւորում է տանշանքների, լաց ու հեծեծանքի, սուգ ու շիւանի, վայ ու կոծի, հառաչանք ու արցունքների բարտ-

սիրտ իշխանութիւնը: Այն, ինչ մեր անմահ նախնիներն են ասել թէ՝ հազար չափ է՝ մէկ ձւ է, անտարակոյս միայն ու միայն ամուսնութիւնն զիրներից է առել իր սկիզբը: Ամեն ինչ ուզգելի է կեանքի մէջ, բայց անաջող ամուսնութիւնը, կարծում եմ, ոչ: Ճիշտ է, կարող է աեղի ունենալ և երբեմն ապահարզան, սակայն զրանից յետոյ միթէ այն կեանքը՝ կեանք կարելի է համարել:

— Վեհափառ տէր, շնորհակալ եմ ձեր սիրալի՛ ընդունելութեան և հոգացողութեան համար, սակայն, կրկնում եմ, եղէք աներկբայ, որ իմ և Բագրատունեաց նրեշտակի մէջ ալդպիսի դժբաղդութիւններ չեն կարող ունենալ:

— Եւ թո՛ղ Ամենաբարձրեալը օրհնէ ձեր այդ ամուսնութիւնը: Կրկնում եմ, ես շուտով կը խօսեմ այդ առիթով Աշուա իշխանի հետ:

— Ես այս տարի անշուշտ պիտի ամուսնամ, կամ ընդմիշտ ձեռք վերցրած լինեմ այդ մաքից:

— Յուսահատւելու կարիք չըկայ, իշխան: Մինչ սրանք այսպէս խօսում էին, յանկարծ զզումաց ամբողջ մթնոլորդը՝ ատես երկինքը խորտակւում էր: Սուր-սուր քամիների շոյը, տիեզերքի օրհասական գոռում-գոչումը, ամպերի անրսպասելի օրոտը մի չըտեսնած դժոխալին սարսափ էին սփոռում ամենուրեք: Ամեն արարած ահ ու զողով պաշարւած՝ մի-մի անկիւն էր վնդուում իր համար: Երկիւղը սարսափելի էր: Յանկարծ լուեց մի անդնդալին որոտ, և գեալինը սկսեց դողդողաւ

և երերակ: Հազարաւոր բերաններ անդիտակցարար  
բայցականչեցին: „Երկրաշարժ է, երկրաշարժ է“ և  
դուրս թափւեցին: Միայն Զագեցին էր, որ այդ  
ըսպէին ոգեւորւած աստուածալին մխիթարութեամբ,  
իրան բարձր էր պահել կենսական գժբաղդ ար-  
կածների վնատութիւնից և յարատե անվեհեր վրո-  
տահութեամբ հաւատում էր իր ճակատազրին: Նա  
միայն շշնչալ կարողացաւ.

— Սիւնեաց տէր, փրկի՛ր քեզ, տիեզերքի  
զայրովթը օրհասական է. քեզ առորել է պէտք քո  
Մարեմի համար: Դու տակաւին երիտասարդ ես.  
մեր տարաբաղդ հայրենիքը թերես սպասելիքներ  
ունէ քեզոնից:

— Ո՞չ, վեհափառ տէր, որքան իմ կեանքն  
է պէտք հայրենիքի համար, այնքան տուաել ան-  
գնահատելի է ձեր կեանքը այս խորհրդաւոր պատ-  
մական բոպէներին: Ձեր սուրբ ազօթքը անխոր-  
տակելի վահանի նման կը պատապարէ ինձ մեր  
խուժագուժ թշնամիներից և տարերալին տագ-  
նապներից: Նախախնամութեան աջը կը փրկէ ձեզ,  
մեր գժբաղդ հայրենիքի պաշտպանին և նրա նր-  
ւաստ ծառալին:

— Լսի՛ր ինձ, Վասա՛կ:

— Ո՞չ, վեհափառ տէ՞ր:

Հուժկու հողմերը տաշեզների նման այստեղ  
այնաեղ էին նետում հազարաւոր շինութիւնների  
տանիքները, իսկ երկրի երկարաւեւ տատանումը  
հիմնալատակ կործանում էր Դուինի փառահեղ շեն-  
քերը իրանց փարթամակերտ ապարանքներով:

Կործանւեցաւ և քաղաքի պարիսպների մի մասը.  
12,000 աւելի գժբաղդներ մնացին փլատոկների  
տակը, իսկ մնացածները շանթահար եղածի նման  
գուրս թռան և երկար-երկար քաղաքի հրապարա-  
կում էին ապրում, ուր ձմեռը տակաւին իր գերի  
մէջն էր: Մեծ պահոց սկիզբներին էր այդ, երբ  
Հայաստանի ձմեռը մերթ-մերթ խոժոռ կերպա-  
րանք է առնում: Այդպէս էր և այդ տարին:

Միւս օր երկրաշարժը դարձեալ կրկնւեց:

Սարսափահար ժողովուրդը զլուխ կորցրածի  
նման չը զիտէր, ինչ անէր, մտնել իր բնակարան-  
ների տակ՝ նա երկնչում էր, իսկ զուրօ՞ բաց եր-  
կնքի տակ՝ ցուրան էր իր անողոք մանգաղը շար-  
ժում նրանց մէջ: Վերջապէս, Զագեցին զգաց, որ  
իր թշւառ հօտին հոգեկան ասպար է հարկաւոր,  
այդ պատճառավնա յոյժ բազմութեան հետ հսկում-  
ներ կատարեց, որով ժողովուրդը փոքր ինչ զգաս-  
տացաւ և տակաւ առտակաւ ծօտեցաւ իր բնա-  
կարաններին: Դրան առաւելես ոյժ տւեց նրա այն  
ազօթքը, որը ինքը հրատարակեց հաւատացելոց  
համար: Շուտով Դուինի աղեափ լուրը տարածւեց  
ամենախուլ վայրերն անգամ, և ժողովուրդը հազար  
ու մի պատճութիւններ ստեղծեց այդ առիթով:  
Աւելի շատ ուշազրաւ էին Երկրակաւանի բնակիչների  
պատճառածքները, որոնք ամեն բան կազում էին  
երկրի տէրերի կեանքի հետ:

— Խաչիկ, Դուինի երկրաշարժը մեր կաթո-  
ղիկոսը, զիտմաս, ասել է ինչից է պատահել:

— Ի՞նչից է պատահել, Յուսիկ:

— Ասում են, նա ասել է, թէ մեր իշխանացիշխանը չի ուզում իր Մարեմին կնութեան տալ Սիւնեաց իշխանին՝ Վասակ-Գաբուռին։ Դրա համար էլ Աստուած բարկացել է և երկրաշրժ է ուղարկել մեր քաղաքը ջնջելու։ Է՞հ, ի՞նչպէս կարելի է, չ՞որ, ասում են այդ իշխանը և ըքնաղ Մարեմը սիրում են միմեանց։

— Ելի դու քո ճառերի տօպրակը բաց ես անում, Յուսիկ, հա՞։ Անցեալներումն էլ, լիշում ես, ասում էիր, որ վեհափառը եկել է մեր մեծ սպարապետին թաղաւոր օծելու։ Հիմի էլ թաղաքան ես հնարել։

— Ինչի՞ն, սուտ եմ ասում, մի՞թէ։

— Ի՞արկէ։

— Ժամք ոչ թէ միայն Դուինումն է պատահել, այլ Կ.-Պոլսումն էլ և ուրիշ շատ տեղերում։ Միթէ մեր իշխանաց-իշխանի մեղքը այնքան մեծ է, որ յոյներին էլ է ծածկում։ Իր մեղքի համար ինքը և իր երկիրը պիտի տուժեին և ոչ թէ յոյներն էլ։

— Ով գիտէ Աստուծոյ բանը։

— Մեր իշխանաց-իշխանը ոչ թէ՝ չէ տալիս իր Մարեմին Վասակին, այլ նա տակաւին սուզի մէջ է. չէ՞ որ մեծ սպարապետը, նրա հալքը, ամիրապետի շղթաներում անվերջ հեծում է. շատերն էլ ասում են, որ մեռել է. էլ ի՞նչպէս մեր իշխանը կարող է հարսանիք անել։ Ուրիշ բան է, եթէ կաթողիկոսը միջամտէ։

— Ասում են, կաթողիկոսը ճանապարհ է ըն-

կել միջամտելու և զլուխ բերելու այդ աձուսնութիւնը։

— Աստուած աշողէ, թող նա այդ սիրահարների փափազը կատարէ։

— Հարսանիքը անպատճառ լինելու է, միայն ասում են, փեսայացուն երկրաշրժից սաստիկ վախեցել է և այժմ ինչոր հիւանդութիւն է ստացել և գուցէ երկար չապրի։ Ափսոս։ Ասում են, երկրաշրժից ժամանակը կաթողիկոսի մօտն է եղել. որքան վերջինս ստիպել է գուրս փախչել, նա չի լսել նրան, բայց վերջն էլ ինքը տուժել է։

— Խեղճ իշխան, խեղճ Գաբուռ։

— Ա՞յ, ի՞նչ է նշանակում մեծին չը լսել։

— Է՞հ, այդ մի ասի, փորձանք է, փորձանք։ Եթէ նա իմանար, այդպիսի դժբաղվութիւն կը գոր իր գլխին՝ առանց կաթողիկոսի հրամանի դուրս կը թռչէր։

Այսպէս խօսում էին երկու շիրակաւանցիներ, որոնցից մէկը՝ Յուսիկն էր, որին մենք տեսանք Սմբատ Բագրատունու Շիրակաւանից մեկնելու ժամանակ, երբ նա դարձեալ վէճի էր բռնւած իր այժմեան խօսակից, Խաչիկի հետ, որոնք նման գէպէրում, միշտ աշխատում էին իրար համդիպել և իրար հաղորդել այս ու այն լուրը, ի հարկէ համեմած իրանց ասէկոսէներով։ Եւ այդ լուրը օր բատօրէ ժողովրդի խօսակցութեան առարկան դառձաւ, թէ Սիւնեաց իշխանը՝ Վասակ-Գաբուռը, երկրաշրժի ահեղ սարսափի տակ հիւանդութիւն է վաստակել։

Արա հետ խօսում էին և նրա մօտաշուտ ամուսնութեան մտսին:

XV.

«Արդ 'ի թագաւորել անդ վասլի՛ տեղեկացեալ նրա 'ի վահանայ եպիսկոպոսէն Նիկիոյ, կած ըստ վարդանայ եպիսկոպոսէն Տարօնայ, թէ Բագրատունիք թագագիր էին Արշակունի թագաւորաց 'ի հայս, առաքեաց հրեշտակ զԱրքանաս առ մէջն Աշոտ Բագրատունի իշխան-իշխանաց՝ հանգերձ բազում պարգևօք և խնդրեաց ընդունիլ 'ի նմանէ զթագ...»

Զամշւան

Մի քանի շաբաթից յետոյ, Զագեցին Շիրակաւանումն էր: Իշխանաց-իշխանը ցոյց էր տւել նրան ամենասրտառուչ ընդունելութիւն: Առաւոտեան նախաճաշիկից յետոյ, Զագեցին, նկատելով Աշոտի հոգեկան ուրախութիւնը և լաւագոյն արամագրութիւնը, հետզհետէ խօսակցութեան միշոցին մերժենալ սկսեց իր այցելութեան բուն նպատակին:

— Տէր իշխան, մեր փափկասուն օրիսրդներին՝ մեր սիրասուն զաւակացը, այնպիսի խիստ կրօնական դաստիարակութիւն էք տւել, որ ես տարակոյս ունեմ, թէ նրանք շուտով կառանձնա-

նան մեր մենաստաններից մէկն ու մէկում միանձնաց կեանք վարելու:

— Վեհափառ տէ՛ր, այդ նիշա է, որ նրանք կրօնական խիստ դաստիարակութիւն են ստացելք բայց մի՞թէ այս նշանակում է, թէ նրանք անշուշտ պիտի միանձնաց կեանք վարեն:

— Այս ես ի՞նչ կտրող եմ ենթագրել, երբ նրանք արդէն հասունացել են. սակայն գուք տակաւին, ըստ երեսլթին, ոչ մի փեսայացւի աչքի առաջ չը՛նէք. չէ՞ որ, կարծում եմ, որ ժամանակ է, զրա վրայ կանխապէս խոկալու: Ով Մարեծին մի անգամ տեսնում է և ծանօթանում նրա հոգու վսիմ գաղափարների հետ, չեմ տարակուսում, որ նա էլ ինձ նմտն չասէ թէ՝ նա բուռն տենչանքներ և վառ հակում ունի դէսի միանձնաց կեանքը:

— Է՞հ, ի՞նչ կորուստ կունենանք մենք. մեզ համար աղօթողների թիւը մի մարդով էլ կաւելանայ այդ գէպըում:

— Սակայն, տէր իշխան, երբ նրա այդ քայլը գժբաղգութեան տարտարոսը զլորէ բոլորովին կողմնակի անձնաւորութիւններին և, նա այն ժամանակ, կարծում եմ, որ ինքներդ կը պախարակէք ձեր զստեր և կաշխատէք հեռու պահել նրան այդ ձաքից:

— Այժմ նա, հօ այդպիսի չերմ երկրպագուներ չըւնի:

— Ինչից զիտէք, իշխան, որ նա չերմ երկրպագուներ չըւնի:

— Այդ պիտի հարցնէք ձեր զստերը: Թէրեւս նա

ունի երկրպագուներ. սակայն, կարծելով, որ անյօւսալի է նրա մասին խոկալ, ինքն յանձն կառնէ վանական միանձանց կեանք վարելու:

— Վեհափառ տէր, դուք այնպիս դրական ծայնով էք խօսում, որ ես մնում եմ տարակուսութեան մէջ: Ես դիտեմ, որ շատերն են խօսել իմ լսութաց մասին, բայց թէ արդեօք նրանք ունեցել են ուեէ ցանկութիւն ամուսնանալ նրանց հետ, ևս այդ հաստատապէս չը դիտեմ:

— Տէր իշխան, ունեցել են և այժմ էլ ունեն:

— Բայց ինչո՞ւ այդ մասին ինձ ոչինչ չեն ասել:

— Մէր տարաբաղդ աշխարհի աղետալի խոռովութիւններն են մասամբ պատճառ դարձել, որ նրանք լոել են այդ մասին: Նրանց հայրենասէր հոգին չէր կարող այդ ժամանակ զբաղւել իրանց անձնական հաշիւններով: Իսկ այժմ, փառք Աստուծոյ, հետզհետէ մէր երկրեն պատաժ սև մշուշները անհետանում են, և նրանք կարիք են զզում իրանց ամբողջ էռութեամբ նւիրել իրանց սրտերին և նրանց խորշերում դիզւած բոցակէզ զբացմունքներին:

— Գովելի հայրենասէրներ են եղել զրանք, որ խեղդել են իրանց սրտերի վառն տենչանքները երկրի խռովութիւնների ժամանակը:

— Կար և մի այլ պատճառ, տէր իշխան:

— Ի՞նչն է:

— Նրանք դիտէին, որ ձեր հոգին տանջւում է մի տաղնապալի ալէկոծութեամբ և զտնւում է խորին վրդրվմունքի մէջ մէր դժբագդ սպարապետի

գերութեան պատճառովի: Ալո՞, նրանց մասամբ յետ էր կանգնեցում այդ դիտաւորութիւնից և ձեր հօր աղետալի դրութիւնը:

Սշուր զլուխը խոնարհեցրեց և ոչինչ չը խօսեց: Հօր եղերական դրութիւնը բորբոքեց նրա որդիական չերմ զգացմունքները, և նա վառւեց հոգեկան գառն տաելութեամբ գէպի հազարացոց ամբարտաւան արարքը: Բարկութեան զայրովթի անշիշանելի վառ կրակը փայլեց նրա դէմքի վրայ և նա, մի աղեխարշ հոգոց արձակելով, մնաց լուս:

— Տէր իշխան, այն, որ անուղղելի է և անդարձ կորած է մեզ համար, չը պէտք է տրասունչ առաջ բերէ մեր հոգեկան աշխարհում: Ալլ նրանց նւիրական լիշտակները անչնչելի պահելով մեր սրտերում, մենք պիտի չը դադարենք ներկալի և ապագալի մասին խորհելուց:

— Թող օրհնեալ լինի Տիրոջ կամքը:

— Տէր իշխան, նո՞ւ ով այժմ գերւած է ձեր դստեր Մարեմից, դարձեալ կորած հայր ունի, բայց և այնպէս ծեռք չէ վերցնում կեանքից և դիտե հրապուրւել նրա հմայիչ վայելքներով:

— Վեհափառ տէր, ով է այդ:

— Սիւնեաց իշխանը՝ Վասակ-Գարուոր:

— Վասակ... ես այդ մասամբ դիտէի, բայց չէի կարծում, որ նա սիրահարւած է և ամուսնանալու դիտաւորութիւն ունի:

— Դրան, տէր իշխան, ես պիտի վերջնական պատասխան տամ Մարեմի մասին: Դուք ի՞նչ կամք ինձ:

— Ես զբան, վեհափառ տէր, հակառակ չեմ:  
Սյո հակառակ չեմ, երբ Մարեմը, ինչպէս ասացիք,  
անտարբեր չէ դէպի նա:

— Ե՞րբ սկսենք հարսանիքի և պսակաղրու-  
թեան պատրաստութիւնները տեսնել:

— Ես, վեհափառ տէր, մի քանի ժամանակից  
յետով, լինելու եմ Արշարունեաց կողմերն, երբ վե-  
րադառնամ, իսկոյն և եթ սկսենք:

— Բարի, բարի:

Մինչ սրանը այսպիսի խօսակցութիւններով  
էին զբագւած, իշխանի պարտիքում, ծառերի տե-  
րեալիտ մացառներում, ծածկւած էր մի երիտա-  
սարդ և վառ տենչանքներով բունկւած՝ անխաղ աչ-  
քերով նայում էր մի հրեշտականման արարածի  
վրայ, որը իր տիրուհու հետ զբանում էր պար-  
տիզում: Տիրուհին իշխանադուստր Մարեմն էր,  
իսկ նրա հետ հրեշտականման արարածը՝ նրա նա-  
ժիշտներից աւագագոյնը, որը զրեթէ միշտ անբա-  
ժան էր իր աիրուհուց: Նրա անունը Երանեակ էր:  
Իսկ երիտասարդը ծեզ վաղածանօթ, Կարէնն  
էր, որը իր հոգու ամբողջ էութեամբ սիրում էր  
Երանեակին: Մի անգամ պատահմամբ հանդիպելով  
նրան, երբ նու իր տիրուհու հետ սովորական զրօ-  
սանք էր կատարում Ախուրեանի երբներանդ ափե-  
րում, նա տւեց նրան իր սիրան ու հոգին իր  
ամենաշերժ զգացմունքներով, և այն օրից նրա զե-  
ղանի պատկերը չէր հեռանում նրա երկակայու-  
թիւնից: Այն օրից նա սիրում էր նրան:

Անտարբեր չը մնաց և Երանեակը: Կարէնի

առնական կերպարանքը մի անշիշանելի կայժ թո-  
ղեց նրա կուսական անարատ կրծքում, որը օր  
ըստօրէ բորբոքեց և պաշարեց նրա սիրտն ու հոգին:

Իւրաքանչիւր անդամ, երբ նա լսում էր, որ  
վեհափառի սպասաւոր՝ Կարէնը, այս է արել,  
այն է արել, այս ապշեցուցիչ քաշագործութիւնն  
է գործել, նրա կուրծքը լցուում էր մի հմայիչ  
հրձւանքով: Նրա կրծքում բուն գրած սրբագան  
հուրը առաւելես ուժեղ կալծեր արծակեց մանա-  
ւանդ սկսած այն օրից, երբ Կարէնը սպասագին-  
ւած՝ անցնելով հագարացոց զօրքերի ամենի շար-  
քերը, սուրհանդակի պաշտօն էր կատարել՝ Յով-  
հաննէս կաթողիկոսի մահւան լուրը հաղորդելով  
Սմբատ Բաղրատունուն և որա Երազգաւորսի ժո-  
ղովի հետեանքը Զաքարիա Զաքեցուն տեղեկացնե-  
լով: Այդ օրից Կարէնը ամեն ինչ էր Երանեակի  
համար:

Իմանալով, որ հայոց կաթողիկոսները յաճա-  
խակի այցելութեան են ենում իրանց իշխանաց-  
իշխանին, որտեղ միայն կարելի էր իր սիրոյ արա-  
րածին տեսնել, Կարէնը վնասել էր մտնել կաթողի-  
կոսների սպասաւորների մէջ և զրաւել հայոց  
հայրապետների սրտերը: Եւ այսպէս, նա սիրելի  
էր եղել Յովհաննէս Ովայէցուն և Զաքարիա Զա-  
քեցուն, որի հետ, այդ օր զալով Շիրակաւան, այժմ  
ծածկւել էր պարտէզի մացառներում և զմալլուում  
էր իր սիրոյ առարկայով:

Մարեմը և Երանեակը անվրդով զբօսանք էին

ատարում, յանկարծ այն կողմից, որտեղ թագ էր կացել Կարէնը, լսւեց սարեակի քաղցր գեղգեղանքը:

— Տիրուհի, դուք սպասեցէք այստեղ ևս անցնեմ մաշտառների այն կողմը, գուցէ սարեակի ծագեր լինեն, որոնք իրանց բնից ընկնելով, այժմ անկարող են բարձրանալ, — այս ասելով նա կորաւ թփերի մէջ. իսկ Մարեմը շարունակեց իր զրօսանքը: Թփերի միշից երկու ուժեղ բազուկներ իրանց զիրկն առան Երանեակին և ամուր սեղմեցին իրանց կրծքում, և չերծ համբոյները անվերջ շարւեցին նրա գեղանի այտերին: Երանեակը երկու եղնիկի նման դողդողում էր նրա գրկում և աւելի ևս հպւում նրան: Նրա հարուստ, սեաթոյր և ծփան վարսերը սև ամպի նման սքողել էին Կարէնի գէմքը, որը իր գլուխը փարելով նրա ծիւնափայլ պարանոցով, Երազների աշխարհումն էր կարծում իրան և ուշացնոր եղածի նման ինքն էլ չը գիտէր, թէ ինչպէս յագուրդ տար իր հոգու անյագ ժարաւին: Վերջապէս, նրանք երկուսն էլ ասես հարբած բազի այգ քաղցրաշունչ բուրմունքներով, անշարժ սեղմւած էին իրար և կենդանութեան նշոլներ չէին արտայալտում: Երկար այսպէս պիտի մնալին, եթէ Մարեմի աղիողորմ հիշը ուշքի չը բերէր նրանց, որից յետոյ Երանեակը այդպէս այլայլած մի ակնթարթում թռաւ դէպի իր տիրուհին: Սակայն այստեղ մնաց զարհուրած՝ մի գորշագոյն օձ ցցւելով, ասես պատրաստում էր մի ոստոյնով յաւիտենականութեան աշխարհը համպելու իշխանակարները: Շանթահար եղածի

նման Մարեմը բարացել էր տեղն ու տեղը և չէր համարձակւում փախուստ տալ աներես սողունից եւ ամբողջ մարմնով գողդողում էր: Յանկարծ մացառների ետեկից դուրս թռաւ մի վայելչակազմ երիտասարդ և իր ձեռքի փայտի մի քանի հարւածներով սատկեցրեց սողունին և, վերցնելով նրան իր փայտի ծալրով, դուրս նետեց նրան պարտէզից:

Մինչ իշխանազուստը ուշքի եկաւ, նա կորաւ մացառների մէջ և դուրս եկաւ պարտէզից:

— Ո՞վ էր այդ ինձ փրկողը, — շնչասպառ հարցրեց Մարեմը, — և ուր կորաւ:

— Տիրուհի, երեխ վեհափառի սպասաւորներիցն է և հաւանական է եկել էր ծաղիկներ փրնչելու իր տիրոջ համար:

— Դու չե՞ս նանաչում նրան:

— Ոչ, տիրուհի, — պատասխանեց Երանեակը ոտքից ցվուխ կարմրելով, — միայն եթէ չեմ սխալում, ես մի անդամ նրան տեսած պիտի լինիմ վեհափառի սպասաւորների թւում:

Մարեմը ոչինչ չը խօսեց. սակայն ինչ որ է մի կասկած ընկաւ նրա սրտում և պաշարեց նրա ամբողջ էութիւնը: Նա լութեամբ շարունակեց իր ճանապարհը և դուրս եկաւ պարտէզից: Նրան հետեւում էր Երանեակը, որը գողութեան պահուն բռնւած յանցաւորի նման դանդաղ քայլերով գնում էր նրա ետեկից: Մի երկու օրից յետոյ Զագեցին վերադարձաւ Դուրին: Նրա հետն էր և Կարէնը:

Մի առաւօտ, երբ կաթողիկոսը նոր էր զար-

թել և կաթի բաժակը առաջին դրած՝ մէկ ըմպում  
էր, մէկ կարգում, ներս մտաւ. Կարէնը և, խոր զլուխ  
տալով, կանգնեց դռան մօտին: Վեհափառը,  
զլուիր բարձրացնելով, մի փոքր լռութիւնից յետոյ,  
հարցրեց:

— Ի՞նչ ունես ասելու, Կարէն:

— Վեհափառ տէր, տեղեկութիւն ունեմ իշ-  
խանաց-իշխանի մասին:

— Ի՞նչ տեղեկութիւն ունես, երբ նա այժմ  
Արշարունեաց աշխարհումն է:

— Գիտեմ այդ, վեհափառ տէր:

— Խոկ այլես ի՞նչ կարող է լինել, պատմիր...

— Վեհափառ տէր, յունոց Վասիլ կայսրը իր  
ընդուժիներից մէկին՝ Նիկիտաս անունով, պատգա-  
մաւոր է ուղարկել մեր իշխանաց-իշխանի մօտ և  
թաղ է խնդրել նրանից:

— Այդ Վասիլը մեր Արշակունեաց ցեղիցն է  
հօր կողմից և սիրւած է մեր պարթևներից. Երեխ  
նա՝ ըստ Արշակունեաց սովորութեան, որոնց թա-  
գաղիրներն էին Բագրատունիք, այժմ հետեւում է  
իր նախնիքների վաղեմի սովորութեանը:

— Այս, այդպէս էին պատմում: Ես շատ ան-  
գամ եմ այդ լսել:

Այդ Վասիլը, վեհափառ տէր, բազմաթիւ ըն-  
ծաներ է ուղարկել մեր իշխանին, որը այժմ Ար-  
շարունեաց Զարեհւան գիւղումն է, և սիրելի որդի  
է անւտնել մեր իշխանին և դաշն է կապել նրա  
հետ:

— Ի՞նչ ընծաներ կարող է ուղարկած լինել:

— Նա ուղարկել է իշխանական փառաւոր  
հանդերձներ, գեղեցկագոյն նժողովներ, խոկ աւելի  
ուշագրաւ են Բիւզանդական մի զլխի պսակ, որը  
ասում են, թագի ձեւ ունի, և խաչափայտի մի  
մասը: \*)

— Տայ Աստուած, որ Ճիշտ լինեն ասածներդ,  
Կարէն, սակայն ես շուտով պաշտօնական տեղե-  
կութիւն պիտի ստանամ մեր իշխանից գրանց մասին:

— Մեր իշխանն էլ կատարել է յունաց կայսրի  
խնդիրը և թագ է ուղարկել նրան փոխազարձ բաղ-  
մադիմի ընծաներով:

— Երեխ, Կարէն, գու ուրիշ տեղեկութիւն-  
ներ էլ ստացած լինես:

— Ոնշուշտ, վեհափառ տէր, յունաց պատ-  
գամաւորը պատմել է, որ նրանց ս. Երրորդութեան  
եկեղեցում, որ գտնւում է Կ.-Պոլսում, գտնել են  
անսպասելի կերպով մեր սրբերի մասունքները իրանց  
հետ թաղւած վկայագրերով:

— Տօ, այդ ի՞նչ ես ասում, Կարէն, չը լինի  
թէ հարբած ես գու այսօր:

— Քաւ լիցի, վեհափառ տէր, նա պատմել է  
որ նրանց իշխանների պատանիներից մէկը՝ Սկլա-  
ւիկ անունով, որը երկար ժամանակ հիւանդ է եղել  
անբուժելի հիւանդութեամբ, մտել է այդ եկեղեցին  
աղօթելու մի գեսանի հետ: Աղօթքի ժամանակ  
յանկարծ պատանու վրայ այլայլութիւն է եկել, և  
նա ներշնչւած գոչել է. «Ով մէծդ Գրիգոր, ով ս.

\*) Որը ժամանակով կոչեց Հոռոմայրի ս. Կշան.

Հոխիսիմե, ս. Գալիանէ, ինչու էր եկել հայոց աշխարհից: Այս բանից յետոյ, պատանին առողջացել է: Եւ երբ կայսրի հրամանով բաց են արել այն մարմարեալ հին գերեզմանը, որ եկեղեցու պատի տակին է եղել, գտել են նրա մէջ ս. Կրիդորի նշխարքը, որոնք հսկայի ոսկերաց պէս մեծամեծ են եղել, գտել են և ուրիշ նշխարներ իրանց առանձնակի-առանձնի գրւածքներով և վկայութիւններով:

— Ուրեմն ս. Կրիդորի և սուրբ կուսանաց մասունքներն են եղել:

— Այո՛, վեհափառ տէր:

— Ես դարձեալ տեղեկութիւն չունեմ, Կարէն:

— Ես, վեհափառ տէր, հաստատ աղբիւրից գիտեմ այդ բոլորը և յոյս ունեմ, որ շուտով կը ստուգւի իմ ասածք:

Շուտով ճիշտ որ վեհարանում և ամբողջ Դուխնում ու նրա շրջակալքում տարածւեց, որ իշխանաց-իշխանը խաչափայտի մի մասը, Բիւզանդական գլխի մի պատկ և բազմազիմի պարզեներ է ստացել Վասիլ կայսրից, որի թախանձանց զիշելով մեր իշխանը նրան թագ է ուզարկել զանազան ընծաներով և մի պատկառելի գումարով, որ այն գտնւած սրբերի նշխարքների տեղը նոր եկեղեցի կառուցանեն:

## XVI.

Պատուեցաւ և յիշխանէն այլազգեաց, որ առաքեցաւ ի նոյն աւուրս յամբապետէն՝ 'ի հայս, այն է Յիսէ' որդի Շեխեայ ոստիկանին, որց 'ի մերձենալ 'ի Դուռին քալաք՝ գնաց ընդ առաջ նորս Զաքարիա Կաթողիկոս, և նա մեծապէս պատաւեալ զհայրապեան, ևս նմա հրաման բառնալ առաջի իւր գրօշակ խաչանշան....»

Յով. Հան. պատճ.

Մ'ի քանի օր էր, ինչ մի արտակարգ իրարանցում էր տիրում Հայաստանի այս ու այն ժայրերում: Շփոթութեան մէջ էր իշխանաց-իշխանը, շփոթւած էին միւս նախարարները և կաթողիկոսը: Բոլորն էլ պատրաստում էին ուղղեորելու գէպի հայոց երկրի սահմանները, որովհետեւ այնտեղից պիտի մուտք գործէր մեր աշխարհը հագարացոց նոր ոստիկանը՝ Շեխի վերակացւի որդին, որին Յիսէ էին անւանում և որը ամիրապետից կողմնակալ էր ուղարկւած Սոորոց երկրից մինչեւ Պաղեստին և միանդամայն վերատեսուչ հայոց վրայ: Հայոց ա-

ւագանին բատ նախնի սովորութեան պիտի լ'նդ  
առաջ ելներ իր նոր սստիկանին և բարի ոտնա-  
մուտք մաղթէր նրա համար: Այդ պատճառով նա  
պատշաճաւոր պատրաստութեամբ էր զբաղւած  
առաւելես նոր սստիկանի հաճուքքը գրաւելու: Երբ-  
որ Յիսէ սստիկանը մերձենում էր Դուխն քաղա-  
քին, նրա առաջ մեծ փառք ու պատւով դուրս  
ելաւ Զաքարիա Զագեցին, որը իր ազգու բարե-  
մաղթութեամբ զգալի տպաւորութիւն գործեց  
Յիսէի վրայ: Վերջինս զգացւած նրա սրտառուչ  
քարոզով տւեց նրան րնդունելութեան այնպիսի  
մեծարանք և յարգանքներ, որոնց մինչեւ այդ օր  
մեր կաթողիկոսներից ոչ ոք չէր արժանացել: Նա  
իր հանդէսի զրօշներից (ալամ) մէկը պարզեց Զա-  
գեցուն, տարով նրան իշխանութիւն, որպիսին ու-  
նէին հայոց հայրապետները Սրչակունեաց ժամա-  
նակը—որ նրա վրայ խաչ կանդնեցնէ և միշտ իր ա-  
ռաջից տանի, ուր որ հանդէսի դուրս զալու  
լինի: Նոյնպէս արտակարգ մեծարանք ցոյց տւեց  
Յիսէ և մեր իշխանաց-իշխանին, զառնալով նրան  
կողմնակից, ընկեր և բարեկամ:

Դուխնում երկար չը մնաց Յիսէ սստիկանը.  
Նա մեր կողմերից մեկնելով՝ անցաւ Հայ-Աղուանից  
երկիրը՝ Պարտաւ մայրաքաղաքը, որը Դուխնի նման  
հագարացոց սստիկանի աթոռ էր այդ ժամանակ-  
ներում: Այսաւել նա իրան փախանորդ թողեց մի  
և մենցի արար՝ Մուհամէտ էպիւլիքա անունով,  
որին յաճախ անւանում էին և Եմիմիկ, կամ Հա-  
մանիկ-Մահմետ, որդի Ապրիլստայ: Երբ Յիսէն հե-

ռազաւ այստեղից, Եմիմիկ-Մահմետը, միաբանւելով  
տեղացի իշխանների հետ, ապստամբւեցաւ նրանից:  
Այս բանը կատաղութեամբ լցրեց Յիսէի սիրտը,  
և նա՝ այս մասին յայտնելով մեր նախարարներին  
և իշխանաց-իշխանին, առաջարկեց սրանց պատե-  
րազմի ելնել իր հետ ապստամբի վրայ: Յիսէն,  
մեր իշխանաց-իշխանը և միւս նախարարները պա-  
շարեցին Պարտաւ քաղաքը, ուր ապաստան էր  
գտել ապաստամբը. սակայն անաջող երկրի ցըր-  
տերը և աննպաստ սառնամանիքը ստիպեցին նրանց  
առժամանակ ձեռք վերցնել պաշարումից: Նյոպէս  
էլ արին: Բայց մի քանի ժամանակից յետոյ, դարձ-  
եալ պաշարեցին այդ քաղաքը, որը տեսեց 13 ա-  
միս, բայց զարձեալ անաջող քաղաքը մնաց ա-  
նառիկ, չը նայած, որ ոչինչ չէին խնայել նրան  
զրաւելու համար: Վերջապէս, Յիսէն ստիպւած ե-  
ղաւ հեռանալու այնակից, որովհետեւ անտար-  
ռում էր իր պաշտօնավայրը՝ գործերի զեկը  
ստանձնելու: Նոյնը արեց և մեր Աշոտը, որը եկել  
էր միմիւն նրան օգնելու և ամիրապետին իր հա-  
ւատարմութիւնը ցոյց տալու և ոչ թէ ինքնակամ  
պատերազմելու ապստամբի հետ: Սակայն այդ բանը  
բաւական եղաւ ապստամբի և սրա մէջ թշնամու-  
թիւն առաջ բերելու: Այդ պատճառով, երբ Յիսէն  
հեռացաւ, նա սկսեց որոզայթներ լարել՝ իշխանաց-  
իշխանին նրանց մէջ զլորելու: Բայց այդ դիւրին  
չէր՝ Աշոտը նրանից տւելի խորապէտ և խորա-  
մանկ էր:

Եմիմիկ-Մահմետը փորձեց թուղթ - թղթի,

գեսպան դեսպանի վրայ առաքել հայոց իշխաններին, որ նրանք իրան ընդունեն Հայաստանի ոստիկան։ Սրա համար նա բազմազան դիւրութիւններ էր խոստանում մեր իշխաններին։ Սակայն անկարող եղաւ որսալ նրանց, որովհետև նրանց վրայ աչարութչ հսկողութիւն էր գրքում Աշոտի հեռատես և խելացի աչքը, որը, հասկանալով նրա խարդախ խորածանկութիւնը, միաբանեց բոլոր հայոց իշխաններին և թուղթ զրեց ամիրապետին՝ ոստիկան ուղարկելու իրանց երկրի վրայ Ահմատին, Համագալի որդուն։ Ամիրապետը հաւանեց հայոց առաջարկութիւնը և Ահմատին ոստիկան կարգեց հայոց վրայ։ Սա ճանապարհ ընկաւ, և երբ հասաւ Բաղէշի սահմանները, մերձակայ երկիրների իշխանները նրա առաջ ելան։ Սրանց մէջ ուշագրաւ էին Գր. Դերենիկ Արծրունեաց տէրը, Աշոտ Կուրապարզը՝ Տարօնոյ տէր և պատրիկ Բագրատի որդին։ Մէր իշխանաց-իշխանը իր կողմից ուղարկել էր իր Շապուհ որդուն և շատերին։ Սրանք բացի բազմազան թանկազին ընծաներից բազմաթիւ զօրք էլ էին վերցրել իրանց հետ։ Եմիմիկ Մահմետն էլ մի պատգամաւոր էր ուղարկել առանձին թղթով, որով նա նորեկ Ահմատ ոստիկանին զրգում էր հայերի գէմ։ Նորեկ Ահմատը առանց երկար մտածելու հաւանութիւն տւեց նրա առաջարկութեանը և մի թղթով պատասխանեց նրան, որ նա զօրք պատրաստէ և իրան թշնամի ձեացած գայ իր վրայ, երբ ինքը հայոց իշխանների և զօրքերի հետ Դուին կը հասնէ և կսկսէ հարկ պա-

հանջել նրանից, այդ ժամանակ ինքը և նա հայերին իրանց մէջ կառնեն և իրանց ցանկացածը կանեն։ Հայաստանի պահապան հրեշտակը՝ իշխանաց-իշխան Աշոտը, որը իր զգաստ հոգու յատկութեամբ լաւ ըմբռնած էր մեր հարեան ալլազգիների հաւատարմութեան անջրապետը և Եմիմիկ-Մահմետի հոգու գարշելի խարդախութիւնները, իր երկրի իւրաքանչիւր գլխաւոր Ճանապարհները և անցքերը փակած էր իր հաւատարիմ ընդոժիներով, որոնց մէջ էր և Զագեցու սպասաւորը՝ Կարէնը, որը, քաջ ծանօթ լինելով մեր երկրի ամեն մի ծակ ու ծկի հետ, նոյնպէս ընտրւած էր հսկելու երկրի անցքերը։ Թէև մեր ամբարտաւան թշնամիները՝ Եմիմիկ-Մահմետը և նորեկ-Ահմատը, հնարներ էին գործ գնում, որ իրանց նամակները չընկնեն մեր իշխանների ձեռքը և չը բռնւեն։ Սակայն Աշոտի աչալութչ լրտեսներից նրանք չազաւուեցան, և նրանց թուղթ ու թղթատարը բռնւեցին։ Իշխանաց-իշխանը առանց աղմուկների թղթատարը բանտարկեց, թղթերը իր մօտը պահեց և նորեկ ոստիկանի մօտ եղած մեր իշխաններին գաղտնապէս զգուշացրեց, որոնք հետպհետէ մէկ-մէկ իրանց զօրքերի հետ փախուստ տւին ոստիկանի մօտից և իրանց աեղերը վերադարձան։ Նորեկ ոստիկանի մօտ ոչ ոք մնաց, և նա այդպէս միայնակ, խալտառակւած եկաւ մտաւ Դուին։

Երբ նորեկ Ահմատ ոստիկանը Դուին հասաւ, Աշոտը ընծաներով այցելութեան գնաց նրան։ Սակայն շուտով ուշքը եկաւ, որ ոստիկանը լցւած է

գէպի հայերը կատաղի չարութեամբ և ոխով և  
ամեն ժամ, ամեն րոպէ պատրաստ է իր բարկու-  
թեան թոյնը իրանց զլխին թափելու: Սակայն երբ  
Ահմատ ոստիկանի սպառնալիքները կորցրին իրանց  
համեստութեան չափը, Աշոտն էլ կատաղեցաւ և  
անվախ բաշութեամբ սկսեց կշտամբել նրան, որ  
նա իրեւ վերակացու է եկել հայաստան և ոչ  
անկախ ոստիկան, այդ բաւական չէ նա նրան երես  
առ երես խարդախ, դաւաճան անւանեց:

— Դուք, իշխան, օձի խորամանկութեամբ  
ցան ու ցրիւ արեցիք ինծանից ձեր իշխաններին,  
որոնք ընդ առաջ էին եկել ինձ, և այժմ էլ ձեր  
ընծաներով կամենում էք հանոյանալ ինձ,—բար-  
կութեամբ նկատեց նրան Ահմատը,

— Ես այդ պարտական էի անելու, Ահմատ,  
այդ դուք ինքներդ էիք թելադրում մեղ անելու:  
Մենք խարդախ գալիքի դէմ առայժմ պիտի օձի  
խորամանկութեամբ զինւենք:

— Ես այդ օձերի պլուխները չախչախել կը  
տամ, նրանց լպիրշ աներեսութիւնը որոշ սահմանի  
մէջ զնել կը տամ, նրանք նոր կը հասկանան, որ  
իրանց անարդ խորամանկութիւնը ամեն անգամ  
ընդունակ չի լինի սքօղելու իրանց լրբութիւնը.  
Նրանք շուտով կը համոզւեն, որ ամեն անգամ  
իրանց անկարող կը լինեն պատսպարւել իրանց  
օձալին խորամանկութիւնների տակ:

Աշոտի գեղանի դէմքը ծածկւեց բարկութեան  
խորշոմներով և մոալլեցաւ: Սակայն նա շուտ  
ուշը եկաւ և պատասխանեց:

— Ես շատ եմ թափառել, ես շատ եմ տա-  
ռապել, Սհմատ, ես տեսել եմ պարսից իշխան-  
ներին, ես տեսել եմ պարսից կոռողամիտ տէ-  
րերին, ես տեսել եմ մեր վեհապանծ ամիրա-  
պետի ոստիկաններից շատերին, սակայն ձեզ  
նման տղայտմիտ և ստահակ սանձարձակ նենգա-  
միտներին՝ երբէք տեսնելու դժբաղդութիւն չեմ  
ունեցել: Դուք տակաւին մեր վերան երկիրը ոտք  
չոխած, ուշացնոր մանկան նման դաւաղրու-  
թիւններ էք նիւթում մեր դէմ և ինչու. ինքներդ  
էլ չէք հասկանում, ինքներդ էլ հաշիւ և համար  
չէք տալիս ձեզ: Ի՞նչ էին արել ձեզ հայոց տարա-  
բաղդ իշխանները, որոնք փութացել էին ձեր ա-  
ռաջ ելնել միմիայն իրանց բուռն յարդանքը ար-  
տակալուելու: Սակայն հասկացաք դուք այդ — ոչ,  
դուք շշմած տղայի նման փութացիք խոկալ՝ պատ-  
մելու այդ իշխաններին: Միթէ նրանք էլ ձեզ նման  
իրանց զիուխը կորցրել էին, որ զրանից յետոյ  
մնալին իրանց դաւաճնորդէին  
նրան զէպի իր հանգստավայրը: Այդ միայն թերեւ  
ձեզ նման իշխանները անէին: Թող Տէր Սմենակալը  
լսէ մեր տարաբաղդ երկրի աղերսանքը և զժան իր  
հաւատարիմ ծառալի՝ մեր վսեմափայլ ամիրապե-  
տի վրայ, և փրկէ մեղ ձեզ նման տէրերից:

Ահմատը ալեկոծւեց, սակայն զսպելով իրան  
պատասխանեց.

— Մի ժամանակ ձեր հայրն էլ ալզպիսի  
փքուն ոճ ունէր, նա այդ ոճը բանեցրեց և ա-  
միրապետի տառաջ ստակայն վերջն էլ իր գոռողու-

թեան արժանի պատիմը ստացաւ: Զեղ քաջ յալտնի է, թէ ի՞նչպէս եղաւ նրա վախճանը: Տիեզերքի Ամենակալը եթէ լսելու լինէր, անշուշտ, նա կը լսէր և ձեր հօր աղերսանքը: Իմ իւրաքանչիւր քայլը դուք քննադատում էք և տղայամիտ էք անւանում: Ապա ի՞նչ անուն տալ ձեր վարմունքին, որ առանց ստուգելու թէ ի՞նչ է եղել իմ յանցանքս, թոյլ էք տալիս ձեղ անւանել ինձ զաւաճան:

Ելս ասելուց յետոյ, նա վեր կացաւ և սկսեց անց ու դարձ անել սենեակի մէջ: Նա մի առանձին սոսկումով նայում էր իր շուրջը և չէր համարձակում գլուխը բարձրացնել և Աշոտի աչքերին նայել, երկիւղածութեամբ լցւելով թէ՝ մի գուցէ նա հասկանայ իր դաւաճանութեան պատճառը: Վերջապէս, նա ասես յոգնեց և հաղիւ-հազ մօտեցաւ բազմոցին և իր վաստակաբեկ մարմինը թողեց նրա վրայ: Խորին լուսութեան մէջ մի սրտատոչոր խռովութիւն տանջում էր նրան: Նրա խղճի խթանը հանգիստ չէր: Ապաշաւութեան կրակը յամառութեամբ այրում էր նրա սիրտը. նա խղճահարում էր, որ իր անխօնիմ քայլերով զինել է իր դէմ մի հաւատարիմ ազդի տէրերին. նա ցաւում էր, որ իր անկումը ինքն է պատրաստել:

— Եթէ գիտենալի, որ դուք յոխորտախօսութեամբ դեռ կաշխատէք արդարանալու, ես այսքան անագան չէի պատռել ձեր ամբարտաւանութեան դիմակը: Այո՛, ձեր ամբարտաւանութեան դիմակը հարկ էր աւելի շուտափոյթ պատռել: Ո՞վ է մեղ զինել ձեր դէմ: Զեր դժխեմ աչքերը, սիրտն ու

հոգին տարակոյս չունեմ, որ իսկոյն հասկացան, թէ ի՞նչ է կատարւել: Կարծեմ ինքներդ էլ հասկացաք, որ դուք դաւաճանում էք ձեր պաշտօնին. այդ մենք գիտենք,— այս ասելով, Աշոտի զօրեղ ձայնը զզրդացրեց սենեակի ամբողջ միջավայրը,— խօսի՛ր, պատմիր, այս ի՞նչ խաղ էր, որ դուք փորձում էիք խաղալ մեղ հետ: Ի՞նչ է, կարծում էք, որ մենք այնքան միամիտ կը լինէք, որ չենք հասկանալ, թէ ում հետ գործ ունենք: Դեռ դուք Բաղդատումն էիք, ես ձեզ ոտքից զլուխ ճանաչում էի, ճանաչում եմ և ձեր ներքինը: Ես իմ նախատեսութեան մէջ չը սխալւցի. Աստուած օդնեց ինձ, և ես կարողացայ քաջութեամբ պատռել ձեր ամբարտաւան դիմակը: Այժմ, դէ՛հ թափեցէք ձեր վրէժինդրութեան բոլոր թոյնը մեր վրայ, այդ կարող էք անելու: Հը, ի՞նչ էք որոնում, երեկ տատանւում էք կանչելու ձեր սպառազինւած ուտիկանների ստւար բազմութեանը: Երեկի կամենում էք կանչել ձեր արնախում դահիճներին: Խելքի եկէք, որ նրանց սրերը անկարող են խղղողելու իմ պարանոցը: Հայոց տառապեալ երկրի տէրը գիտէ ի՞նչ է անում. նա գիտէ փրկել և իր գլուխը: — Ահմատը երբէք չը կարծեց որ իր թուղթը բռնւել է և պատասխանեց.

— Հեռացի՛ր այստեղից: Ես միշտ նողկանքի դառնութեամբ ատելով ատել եմ այս երկրի վայրահաջ, յանգուղն աէրերին և այժմ էլ հոգոյս անհուն զզւանքով ատում եմ և ձեզ: Ինձ անտանելի է տեսնել ձեր գարշելի երեսը, որը ալժմ աւելիես

սնասնելի է գարձեալ ինձ համար: Զեր այդ անտ-կրնկալ վարւեցողութիւնը խորին ալէկոծութեան և լուզմունքի մէջ է զրել ինձ: Ի նչ էք ձեր թունալի հայեացըր և շւարած ոչքերը յածում ձեր շուրջը, կրկնում եմ, ես ձեզ տեսնելու ցանկութիւնը չու-նեմ: Ի՞նչու երկիւղի ամենաթոլ նշաններ անգամ չէք արտայալում, չէ որ ես կարող եմ ձեզ այս-տեղ ձեր չափը հանաչացնել տալ:

— Այդ ինձ է վրդովեցնում, այդ ինձ հոգ չէ, ես իմ տառապեալ հայրենիքիս համար արել եմ այն, որը պիտի անէր տմբն մի անձնւէր հայրենա-սէր: Իսկ այժմ ձեր բոհմոնքները ոչ մի սարսուռ, ոչ մի ցնցում չեն առաջ բերում իմ երակներում: Թող ես կորչեմ, թող ես ոչչանամ, թող իմ ան-ձուկ գոյութիւնը չնշւի երկրի երեսից, բայց միայն իմ հայրենիքը, իմ տարաբազդ Հայաստանը մնայ, թող յարատեէ նա գէթ իր սեւոր զրութեան մէջ: Թերես անցնեն գարեր, անցնեն մարդկանց յարուցած ամբարատաւան փոթորիկները, և նա վերստին ուրքի կը ենէ հալածելու ձեզ նման նենդամիտրոնակալներին:

— Հեռացի՛ր, կրկնում եմ...

— Ես կը գնամ այն ժամանակ, երբ լիովին տեսնեմ ձեր ամօթահար երեսը: Վրդովելու կարիք չը կայ, ձեզ մօտ ոչ ոք չի մնայ, ձեզանից ապա-կանութեան հոգմեր են փչում: Ես կը գնամ իսկոյն, ես տեսայ ձեր ամբողջովին...

— Լի՛րբ, բաւական չեղաւ...

— Աւագակ, հայնոյանքի էք դիմում, ինչու իմ ներկայութիւնը երերում է ձեզ: Ասացի, ես կը

գնամ: Այս, կը դնամ, բայց պարաք եմ համարում թքով պատկելու ձեր անիրաւ երեսը: Ահա, այն...

Այս ասելուց յետով Աշոտը խորին զանու-թեամբ լցւած՝ թքեց նրա վրայ և գուրս ելաւ, ուշադրութիւն անդամ չը դարձնելով իր ետեից լուսող լպիրշ հայնոյանքների վրայ:

Անցաւ մի քանի ժանրատաղառուկ շաբաթ: Հա-սան հագարացոց հանդէսների օրերը: Անհրաժեշտ էր մի առանձնակի շուք ու զարդով տօնելու այդ հանդէսները: Մի քանի օր էր, ինչ նորեկ ոստիկա-նի ապարանքում պատշաճաւոր պատրաստութիւն-ներ էին տեսնուում արժանաւոր տօնելու այդ հան-դէսները: Վերջապէս, հասսու հանդէսի օրը: Ահմատը մի շլացուցիչ շքով ու փառքով գոռողացած՝ ա-ռաւատից իջաւ իր իշխանական վրանի տակ և սկսեց ընդունել այն մեծամեծներին, որոնք փութա-ցել էին շնորհաւորելու նրան այդ աօնը և արե-շստութիւն բարեմազթերւ ոստիկանի համար: Ան-ցաւ երկար ժամանակ, սակայն հայոց իշխանաց-իշխանը չը կար: Եւ Ահմատը անհամբերութեամբ լցւած՝ անդադար անց ու զարձ էր անում վրա-նում և Աշոտի հանապարհը սպասում, կարծելով, որ մի քանի օրւայ տեղի ունեցած վիճաբանու-թիւնը լուրջ տպաւորութիւն չէ թողել նրա վրայ, այդ պատճառով նա անշուշտ այցելութեան կը գնայ իրան: Ասկայն այլպէս չեղաւ:

Աշոտի փոխարէն անսպասելի կերպով եկաւ նրա եղբայրը՝ երիտասարդ սպարապետը Աբասը՝ լի սպարապետական յանդզնութեամբ՝ սպառազին-

ւահ, կալտառ և ահարկու կերպարանքով: Տեսնելով սրա արտասովոր այցելութիւնը և սպարազինութիւնը, Ահմատը մնաց ապշած ու շւարած և կարողացաւ մինչև անգամ բարկանալ նրա վրայ, երբ տեղեկացաւ, որ վրանից դուրսն էլ զինւած պատրաստութիւն կայ: Երկիւղը առաւելես պաշարեց նրան, ահ ու սարսափը առաւ ելես սարսեցրեց նրան, և նա ցցեց իր ականջները, երբ լսեց զէնքերի և վահանների շառաչիւնը, ծիերի արոփիւնը և խրխինչը ու մարդկանց փսփսոցը, ուստի զրեթէ մերենաբար կաւ կառեց իր ձեռքը դէպի սպարապետը... սակայն վերջինս այդ բոլէին մի թուղթ էր մեկնում նրան... Մի ցրտահար դող զգաց նա իր երակներում և ամբողջ մարմնով ցնցւեց: Աչքերի առաջը սեացաւ, և երկիւղածութեամբ լի զունաթափութիւնը վայրկենաբար իր սրտամաշ երանդով ներկեց նրա անձոռնի դէմքը, երբ նկատեց, որ այդ այն մատնութեան թուղթն է, որը ինքը զրել էր Եմիմիկ-Մահմետին: Բոսպէ առօսպէ նա սպասում էր, թէ ահա Աբասը իր երկսալը սուրը կը բարձրացնէ և գետին կը տապալէ իրան: Սակայն այդպէս չեղաւ:

Նա ուշացնորի նման հազիւ-հազ էր սոտքի վրայ պահել իրան, բայց սպարապետի ահազնազզորդ ձայնը իր ահարկու շեշաերով ուշը բերեց նրան.

— Իծ ազնիւ ճակատամարտների սուրը չը պիտի սատկեցնէ ձեզ: Թուք արժանի չէք այդ սրից մահ ստանալու: Հայերը զիտեն իրանց խարդախ թշնամիներին հոգու վեհութիւն և մեծու-

թիւն ցոլց տալ նոյնիսկ այն ժամանակը, երբ նրանք ամբողջովին նրանց ճանկերումն են լինում: Ես չը պիտի վերջ տած ձեր կեանքին:

Ահմատը ահ ու գողով պաշարւած հազիւ-հազ շշնչաց.

— Թո՞ղ Ալլահը օրհնէ ձեղ, սպարապետ:

— Խարդախ գալիք բերանով Ալլահը չը զիտէ օրհնել մարդկանց: Ես այդ օրհնութիւնը չեմ ցանկանում: Ձեր այդ նենգամիտ հոգու բարեմազթութեան բարբաշանքը այժմ չէ կարող փրկել ձեղ:

Ահմատը խոնարհւեց նրա առաջ և, երկրպագելով նրան, կրկնեց.

— Տէր սպարապէտ, խղճա՛ ինձ..

— Տուր ձեռքբդ...

Ահմատը մեկնեց նրան իր ձեռքբը: Աբասը, բոնելով նրա ձեռքից, դուրս բերեց նրան վրանից, ուր նրանից ոչ հեռու պատրաստի կանգնած էր մի չորի:

— Տղայք, զուաց սպարապետը իր զինւորներին,—նստեցէք այս նղովեալ անիրաւին չորու վրայ:

Մի քանի կարիք բազուկներ իսկոյն կատարեցին նրա հրամանը:

— Ահա, անզգամ, այն ճանապարհը, որով դուք մուաք գործեցիք իմ տարարազդ հայրենիքը: Գնա, զլուխզ քնազ եմ պարզեռում, գնա՛, բայց վայ ըեզ, եթէ մէկ էլ դառնալու լինես: Այն ժամանակ հայոց սպարապետի սուրը կը պղծէի քո ամբարտաւան արիւնով...

Խորին լուսահատութեամբ լցւած՝ այդ մեր

հայրենեաց գաւաճանը շարունակեց իր հանապարհը, չը համարծակելով ճանապարհին մի բան անդամ խօսել: Նա իրան երազի մէջ էր կարծում: Թախմալի ասղաշաւանքը կաշկանդել էր նրա լեզուն, և նա կարկամած էլ. ինքն էլ չը զիտէր, ուր են տանում իրան: Մի քանի օրից յետոյ, նա աչքերը բարձրացրեց և աեսաւ, որ իր հետ եկած արարական զօրագունդն էլ զինաթափ է արւած և մերկ է: Առուելելս բարգւեցին նրա տանչանքները. Երբ նա նկատեց, որ իր այդ զօրագունդը դէպի Մանազկերտ ճանապարհուեց, շրջապատւած հայոց զօրբերով, իսկ նրան՝ դէպի Վասպուրական ուղղերեցին, ուր իշխանաց իշխանի որդին՝ աշխոյժն Շապուհ, մի պահապան զնդով քշեց տարաւ նրան Հայաստանի սահմաններից գուրս, Ասորեստանի անապատը, որտեղից միայն վերաբարձաւ դէպի իր հայրը, որը սիրալիր կերպով ընդունեց նրան և նրա հետ եղող կարէնին:

— Կարէն, սիրելի զաւակս, մեր հայոց աշխարհը իր այս ազատութեամբ քեզ է միայն պարտական, — նկաս եց նրան Աշոտը:

— Տէր իշխան, մեր նւաստ ծառան ոչինչ չէ արել:

— Ո՛չ, Կարէն, եթէ դու աչալրջութեամբ չը հսկէիր մեր երկրի ճանապարհները, չը բռնէիր մեր ամբարտաւան թշնամու թուղթը և թղթատարը, մեղ գժւարին կը լինէր այս անել, ինչ այժմ արեցինք:

— Ինչպէս թշւառ Հայաստանի զաւակ, ես այդ պարտական էի անելու, տէր իշխան:

— Թո՞ղ Ամենաբարձրեալլը օգնէ ինձ՝ ըստ արժանւոյն քեզ վարձատրելու:

— Թո՞ղ անսասան պահէ նա մեր տէր իշխանին:

XVII.

Լուսինը հապնեալ քայլերով լողում էր չինչ երկնակամարի երեսին, ուր հետղետէ չքանում էին երեկոյեան արեկի թողած բոսորալին հետքերը: Նա սահում էր դէպի Գեղ լեռան լանչերը, որոնք ընկղմւած էին դժոխալին թախմալի մթութեան մէջ: Նրա լուսափալլ երեսը այդ երեկոյ աւելի քան գժգոհութեամբ էր ծածկւած, և նա ասես փութացնում էր իր քայլերը հրաժեշտ տալու այն գեղեցիկ վայրերին, որոնք Գեղարքունեաց աշխարհին տալիս էին սքանչելի պատկերներ: Լուսինի կիսապայծառ թեկրի տակ անդադար ծփում էր Գեղամայ ծովակը: Նա ծփում էր որպէս մի խռովւած մայր, որը շուտով պիտի բաժանւի իր սիրասուն զաւակից: Խելտկորոյս և անդուսպ մայրական գդւանքով զրկել էր նա երկնից զշխոյի գունաթափ շողերը և բուռն տենչանքով տոգորւած՝ հտմբուրում էր նրանց և իր յուշիկ ալէկոծութեամբ անվերջ մրմնչում. «առանց ծեզ ապրողը չեմ, մի գնացէք»... Մոլակի արեմտեան բարձունքների վրայ տակաւին նշմարւում էին հինաւուրց ապարանքների աւերակներ: Երեկոյեան սրտամաշ խաւարի թեկրի տակ այդ վայրեմի ապարանքները ներկայա-

նում էին որպէս մի անլեզու պառաւ, որը իր յօւղիչ լուս թեամբ տակաւին գեղեցիկ էր մնացել և հաղարաւոր պերճաւոր լեզուներից շատ բան էր շնչում ծեղ: Այդ ապարանքների փառահեղ սենեակներում մի ժամանակ այդ աշխարհին լատուկ հավառն զեփիւռով դւարճանում էր այդ երկրի հայազգի անդրանիկ իշխանը. Գեղամը, որը այնքան սիրեց այդ զրախտանման աշխարհը, որ իր անունով անւանեց նրան Գեղարքունիք: Այդ փաղեմի օրից շատ տարիներ, շատ դարեր էին անցել. այդ երջանիկ ժամանակներից շատ բան էր փոխւել, բայց դժբաղդ իշխանի աշխարհը անփոփոխ պահել էր իր տիրոջ անունը միայն և անթիւ ու անհամար աւերակներ, որոնք լուս վկաների նման մի սրտատոչոր հիասթափութիւն էին առաջ բերում մարդու երակներում: Ահա՛ և լուսինը կորաւ Գեղ լեռան լանջերի մէջ և թանձր խաւարը իր մթիւ սաւանով սրօղեց թէ՛ ծովակի մակերևոյթը և թէ՛ Գեղարքունիաց աշխարհի երեսը: Ամեն բան լռութեան ծոցը մտաւ. միայն ստէպստէպ լուելի էին լինում ալէկոծ ծովակի խուլ հառաչանքը, որը այդ միապազաղ լռութեան մէջ մի ահարեկող երկիւղ էր սփոռում իր շուրջը և որդեկորոյս մօր հեծեանքի ձայներ արծակում:

Գիշերային այդ մթութեան մէջ հեռւից ծովակի ծոցում, անփոյթ անտարբերութեամբ ընկած էր մի խոշոր սև զանգւած, որի վրայ անվերջ սլրլապը լուս էր մի հրեղէն ճրագ, ասես մի ահարկու վիշապ լինէր, որը իր սև գլուխը հանել էր շրերի ան-

դունդից, որի վրայ ալդ մթութեան մէջ փալում էին նրա ազքերը: Սակայն վիշապներ չին սնւում ծովակի զրկում, իսկ սև զանգւածը իր վառուող ճրագով անշարժ կանգնած էր ծովի մակերևոյթին: Դա Սևանայ կղզին էր:

Ճրագը նրա վրայ բնակւողին էր:

Այսուեղ խստակրօն միանձանց միաբանութիւն էր հասաւաւած և բբեմն: Այդ մենաստանում տալրում էր ալժմ մի խստակրօն մարդ: Այդ մենաստանը, որը ալժմ չէ մնացել իր նախկին փալման, սրբութեան և զիտութեան մէջ՝ զանազան զիութեածների, աղետալի արկածների և փոթորիկների է ենթակայ եղել Հայաստանի զանազան արշաւանքների ժամանակ: Սակայն չը նայած զրան, զրեթէ մեր վանքերից ամենաչինն է մնացել աշխարհի մէջ: Յարմար առանձնութեան և մտքի աշխատութեան մի անփոխարինելի վայր է դա ներկայացրնում, որը առաւելես յարմարագոյն կը լինէր, ևթէ ծովակի մէջ տեղը գտնէր: Սակայն նա եղերքից այնքան է հեռու, որ բաւական է բարձր ձախ արձակել և խանգարել միանձանց անդորրութիւնը: Այսուեղ, ինչպէս և Հայաստանի ուրիշ կրդգեփանքերը, չաստւածների նա իրւած վայրեր էին, որոնք նոյնպէս փոխարինում էին անառիկ ապաստանների, բերդերի: Այսպէս էր և Սևանը, ուր ս. Լուսաւորիչը կործանեց կոսց մեջեանները և նրանց տեղ ս. Յարութիւն անունով առաջին բրիստոնէական մատուռը հիմնեց:

Հագարացոց ամբարտաւան արշաւանքի ժա-

մանակը այս մենաստանն էլ նոյնպէս ասպասակութեան ենթարկւեց և աւերւեց:

Ալդ սրտամաշ մթութեան մէջ կղզու ճրագի առաջ չոքել էր մի մարդ և խորին չերմեռանդութեամբ աղօթում էր: Աղօթողի համար մի այնպիսի տռանձնացած, մոռացւած և ամայի վայր էր հարկաւոր, և նա տասն տարուց աւելի էր, ինչ այդպէս միայնակ կենակցում էր իր Աստուծոյ հւտ: Իր շնորհալի վարքը, խօսքը, զիտութիւնը հոչակցին նրա անունը, և նա տնկարելի եղաւ մարդկանց մէժարանքից և յարգանքից ազատւել:

Կղզին ալդ ժամանակներում գտնուում էր Սփ. նեաց իշխանների տէրութեան տակ: Իսկ նրա վրայ ապրողը Մաշտոց երկրորդն էր:

Աղօթողը, Մաշտոցը, վերջապէս զլուխը բարձրացրեց, ապշած աչքերով նայեց իր շուրջը՝ շրջակայքում լսուում էր աղմուկ և խռովութիւն. Նրա ականջներին համարում էին ստէպ-ստէպ ոտքերի խուլ տրոփիւններ, խառնածայն աղաղակներ: Նու չը սարսեց, այլ փորձեց բարձրանալ պատու հանին ու դուրս նայել: Գեղամայ ծովակի կապուտակ հայելին չէր երկում. մութը ամուր կերպով գրկել էր նրան: Աղմուկը հետզհետէ սասականում էր: Մաշտոցը մնաց զարմացած և անդպայ մրմնչաց.

— Աստուած իմ, այս ի՞նչ շփոթութիւն է... Առաքինի մարզը լոեց: Բայց անդնդհատ կրկնող աղմուկը դարձեալ խօսեցրեց նրան.

— Աստուած իմ, միթէ մեր ամբարտաւան և լիր թշնամին, խուժագուժ հաղարացին, վերստին

ուզում է կղզին մտնել. Էլ ի՞նչ լիոդեցիր, անստուած գազան...

Մաշտոցը լոեց: Նրա ամբողջ մարմնով մի ցուրտ սարսուռ անցաւ, և անդորր դէմքի վրայ նշմարւեցին անորոշ ցնցումներ. նա խորին վրզովմունքի մէջ ընկաւ և մի փոքր լոռութիւնից յետոյ, գարձեալ մրմնչաց.

— Ննիրաւ թշնամի, դու աւերցիր իմ հայրենի եկեղեցիները, դու կործանեցիր իմ հայրենի վանքերը ու շանքեր լարեցիր քո իսլամական տրուֆանքով լի կրօնը տարածել իմ տարաբաղդ հայրենիքում: Դու դաւաճանեցիր հայոց աղ ու հացին և ոտնատակ արիր այդ աւանդական սրբութիւնները. դու դաւաճան կրակով և արիւնով ներկեցիր հայաստանի քար ու թուփը և այդպէս ոչնչացրիր ու խպառ բնաշինչ արիր նրան՝ իմ հայրենի երկիրը, և դու միայն անէծքի ես արժանի... Ալո՛, անիծուս են քեզ հազարաւոր մայրեր, անիծում են քեզ հազարաւոր տմուսիներ, թքում, հայնոյում են քեզ հազարաւոր բոլոր, եղբայրներ և թոթովախօս մտնուկներ, որ քո արիւնարբու սրով զրկւեցան իրանց սիրելիներից: Եւ քանի որ քո թոպած աղեխարշ հետքերը կը տեսն հայաստանի հողի վրայ, քեզ կս'նիծէ ալդ տարաբաղդ աշխարհի ապագայ սերունդը և լի գառնութեամբ կը լիշէ քո նզովեալ անունը... Նրա վշտակի ծայնը լոեց: Եւ անցեալի եղերական պատկերները ցնորդների նման եկան ու անցան նրա գլխով: Ատելութիւնը, անզուսպ վրէխնդրութիւնը մաքերի, լոյզերի տարտարոսը նետե-

ցին նրան... զիշերւայ այդ տաղնապալի պահուն Գեղամայ ծովակի արևմտեան ափերին ընկած Ճանապարհով, կղզուց ոչ հեռու, եթէ կարելի լինէր նշմարել, դանւում էր մի ստար տապախումբ, որի առաջից մի փառաւոր պատգարակ էր ընթանում, ուր բազմել էր մի գեղեցկատեսիլ, մի չնաշխարհիկ գեղեցկուհի, որը զիշերւայ այդ ժամին զիցուհու տպաւորութիւն էր զործում նախողի վրայ, ասես ծովային յաւերժանարս էր, որը այդ մթութեան մէջ, հեռու անհամեստ հայեացրից, զիշերացին զբօսանք էր կատարում, նրա հետ գտնուում էին և նրա նաժիշտները, որոնք ամեն վայրէան անբաժան էին իրանց տիրուհուց: Պատգարակի չորիները համաշափ և հանգարու քայլերով մօտենում էին ծովակի այն ափին, որի մօտին գտնուում է կղզին:

Վերջապէս, նրանք հասան կղզու մօտի ափին և վայր եկան իրանց նժոյզներից: Մի քանի բուկէ-ից լետոյ, այնուեղ կանգնեցրին մի շքեղաղարդ վրան, որի տակը մտաւ պատգարակում եղած գեղեցկուհին իր մի նաժիշտով: Մնացածները պատապարւեցին իրանց համար պատրաստած առանձինառանձին վրաններում: Պատգարակում եղած զեղեցկուհին իշխանաց իշխանի Աշոտի դուստր Մարեմն էր և Սիւնեաց Վասակ-Գարուռի կինը, որը մի քանի ժամանակ էր, ինչ ամուսնացել էր: Ստեկայն ամուսնու, Վասակի, պարբերաբար կրկնող հիւնդութիւնը վառել էր նրա մէջ իր բնածին ըրիստոնէական ջերմ հաւատը, և նա ծովակի երեքները զարդարում էր նորաշէն վանքերով և եկե-

զեցիներով, որով գէթ նախախնամութիւնը խզճար իր վրայ և թեթեռութիւն, առողջութիւն պարզեւէր իր սիրելի ամուսնուն, որը նոյնակս թախանձել էր իր կնոջը կառուցանել իր երկրում 40-ի չափ վանքեր, մէնաստաններ և եկեղեցիներ...

Եւ այսուէս, Սիւնեաց իշխանուհին շրջում էր ծովակի եղերքներին և եկեղեցիներ կառուցանում: Լուլով Մաշտոցի համբաւը և Սևանալ միացնութիւնը, նա եկել էր գրանց ալցելելու և այնաեղ էլ եկեղեցիներ հիմնելու:

Նրա հետ էր և Երենեակը, նրա սիրելի նաժիշտը:

Իսկոյն և եթ Մարեմը մի քանի իշխաններ ուղարկեց Մաշտոցի հետ բանակցելու:

Մինչ Մաշտոցը ախուր մտածութիւնների մէջ խորասուզւած տանչւում էր, նրան մօտեցաւ այն նաւակը, ուր դանւում էին բանակցող իշխանները:

Մաշտոցը դուրս ելու իր խցից և նաւակի մօտ, ափը իշաւ: Պատշաճաւոր ընդունելութիւնից լետոյ, նրանք բոլորը եկան Մաշտոցի հետ նրա խուցը, ուր սկսւեց երկար ու բարակ խօսակցութիւն:

— Հայր Մաշտոց, միթէ ապարդիւն կը լինի Սիւնեաց տիկնոջ զալը. չէ՞ որ նա բուռն փափագ ունի ծեղ և ծեր ապաստարանը ալցելելու և թերես այսաեղ էլ վանքեր հիմնելու, — նկատեց եկող իշխաններից աւելի աւագագոյնը:

— Իշխան, ես հակառակ չեմ Սիւնեաց տիրուհու այստեղ ժամանելուն, սակայն այն, ինչ աւան-

դաբար գոյութիւն է ունեցել մեր կրօնական սովորութիւնների մէջ, այն, ցաւում եմ, որ խախտել անկարող եմ: Մեր կրօնական աւանդապահութիւնը պահանջում է, որ կին երբէք չը պիտի մուտք գործէ այն վայրերը, որոնք ճգնաւորանոց են եղել և համարում են,—վրաբերեց Մաշտոց:

— Միթէ, հայր սուրբ, բայցառութիւններ երբէք չը պիտի լինեն մեր այդ նախնաւանդ սովորութիւնների մէջ: Սիւնեաց տիրուհին իր կը թուժեամբ ուշացրաւ տեղ կառող է բռնել մեր կրօնաւորների մէջ, բացի այդ նրա կառուցած տասնեակ վանքերը ու ձենաստանները պարզ ապացուց են կազմում նրա պարկեցած հոգու մասին:

— Սիւնեաց տիրուհու առաքինութիւնների մասին ես վազուց աներկեաց եմ, սակայն բացառութիւններ մտցնել մեր կրօնական առօրեալ կեանքի մէջ՝ անկարող եմ:

— Ուրեմն ի՞նչ է մնում մեղ անել: Սիրտս զգում էր, որ ապարդիւն յոյսեր էր տածում Սիւնեաց տիրուհին դէպի իր փայփայած այժմեան ծըրագիրը: Եւ, գժրազգաբար, իրագործւում են այդ երկմտութեանս վախերը:

— Իշխան, ես ի՞նչ կարող եմ անել, երբ այդպէս են մեր կրօնական պարագաները: Բայց, եթէ Սիւնեաց տիրուհին ցանկանում է եկեղեցիներ կտուցանել իմ այս մենավայրում, նա զարձեալ կարող է այդ անել: Նա թող հոգատարութիւն ունենալ դէպի այդ անել: Նա թող հոգատարութիւն ունենալ դէպի այդ անել:

նրանց նիւթական ծախսերը, բայց միայն մուտք գործել անձամբ՝ անկարելի է:

— Հայր սուրբ, ես ձեր այդ ցանկութիւնը այս բոպէիս կը մեկնեմ և կը յայտնեմ նրան: Բայց տեսնել այս մենավայրը նա փափազում է իր հոգու կութեամբ:

— Յայսնեցէք, ես լիայոս եմ, որ այդ առաքինասէր տիկինը չի վշամանալ, որ ես հակառակ մեր կրօնական սովորութիւնների անկարող եմ նրան ընդունել այս իմ մենավայրում: Եկող իշխանները իսկոյն վերապարձան ափը և յայտնեցին Սիւնեաց տիրուհուն Մաշտոցի կամքը:

Ոչ մի բան չէր կարող այնքան դառն ազդել թշւառ կնոջ սրտի վրայ, որքան Մաշտոցի մերժումը՝ մուտք գործել նրա մենավայրը:

Յուստիատութեամբ թշւառ կինը առանձնացաւ իր վրանում, հեռացրեց այնտեղից և երանեակին և սկսեց յորդահոս արտասուբների հետ լալ սպալ և չերմեռանդ աղօթել, որ Ամենաբարձրեալը գութ, ողործութիւն զցէ Մաշտոցի սրառում, որ նա խղճալ իրան և ընդունէ իր մենավայրում: Նրա շքախումբը վազուց, շատ վազուց Մորփէոսի աշխարհում ծանր-ծանր խռմփացնում էր, մինչգեռ այդ ժամին յուսահատ և հոգետանց կինը ծընկաչօք խուլ արտասուբների հետ հոգեշունչ աղօթքներ էր մրմնչում և ողբում իր զրութիւնը: Մինչ Սիւնեաց տիրուհին այգաէս չերմեռանդ աղօթում էր, Մաշտոցը խոր քնի մէջ էր ընկղմւած, սակայն նրա արտակարգ ցնցու մները, դէմքի ստէպ-ստէպ

ալլալւելը և անընդհատ կրկնւող չղածգական շարժումները պարզ ապացուցանում էին, որ նա գտնում է անուրջների աշխարհում և հոգեկան ալէկոծութիւնների մէջ է: Թէ ի՞նչ էր նրան տանչում, ի՞նչ էր նրան ենթարկել հոգեկան ալգալիսի երերումների և աղէկառուր փոթորիկների զիրկը, դժւարին է դուշակել: Միայն նրա հոգեասանչ կրծքից լսող խուլ հառաջանքները, ազեխարշ հեծկտանքը որոշակի ասում էին, որ նա տառապում է անլայտ կռւի մէջ և ձաքառում է այնտեղ փրկել իր կետնը: Վերջապէս, նրա բորբոքւած կերպարտնքը դունաթափւեց և մեռելալին տեսք ստացաւ, որից լետով լսեց Մաշտոցի սրտամորմոք բայցականչութիւնը, «Աստուած իմ և Տէր, Օրհնեալ է կամք քո...»

Եւ այսպէս, ալլալւած նա վեր ցատկեց քնած տեղից: Սրշալոյսը նոր էր շառագունել: Վազորդեան հովասուն զեփիւոր յուշիկ շնորհապալով շոյում էր ծովակի արծաթափայլ երեսը, ասես սիրալիր մրմնջում էր նրան՝ վե՛ր, վե՛ր, առաւօտ է...»

Սակայն ծովակը չէր լսում նրա սրտառուչ կոչը և տակաւին անշարժ մրտփում էր, իսկ մնջիկ զեփիւոր չէր դադարում իր կոչը կրկնելուց:

Զարթնելուց լետով, Մաշտոցը նոյն րոպէին տեղեկութիւն տւեց Սիւնեաց տիկնոցը, որ նա փութա իր մենավայրը: Սիւնեաց տիրուհին, որը այդ դիշերը երբէք չէր փակել իր աչքերը, անհուն ուրախութեամբ լցւած՝ իր շքախմբով կատարեց այդ սուրբ մարդու կամքը:

Մաշտոցը ընդառաջ դուրս եկաւ և սիրալիր

ընդունելութիւն ցոլց տւեց նրան. ապա առաջնորդեց նրան նրա համար սկասարաստւած առանձին բնակարանը:

— Սուրբ է, Սիւնեաց տիրուհի, ձեր գալուստը այս մենավայրը և աստւածահաճոյ մի այցելութիւն է այդ, որին նւաստո անկարող եղայ հակառակել:

— Հայր սուրբ, ես մի անարժան կին եմ, անարժան ձեր տեսութեան, անարժան և ձեր սրբբավարերին: Սակայն ամուսնուս հիւանդութիւնը ինձ այստեղ է բերել ձեր օրհնութիւնը հայցելու:

— Թող Սիւնեաց առաքինասէր տիկինը ապահով լինի, այս զիշերը Ամենաբարձրեալի հրեշտակը ինձ մի այնպիսի տագնապալի զրութեան մէջ էր զրել իմ մերժման առիթով, և Տիրոջը հաճելի է եղել ձեր այստեղ գալը, այդ պատճառով ես անկարող եղայ պնդել իմ սրոշմանս մէջ:

— Աստուած, քաւեա՛ զիս զմեղաւորս...

— Տիրուհի, Ամենաբարձրեալը հրամայել է ինձ ձեղ յալտնելու, որ դուք կարող էր ձեր զիտաւորութիւնը՝ ի կատար ամելու և այս մենավայրում, այն է՝ այստեղ ևս կարող էր կառուցանել երկու եկեղեցիներ՝ մէկը յանուն ժր. Առաքելոց, իսկ միւսը՝ յանուն ս. Աստուածածնի:

— Թող օրհնեալ լինի Տիրոջ կամքը: Ես արդէն հրամայել էի, որոշ բանակութեամբ պատրաստութիւնների ձեռք զարկել, միայն սպասում էի ձեր համաձայնութեանը: Երեկ, երբ ձեր մերժումը ստացայ, ցաւեցի հոգոյս ամենայն էութեամբ և

ամբողջ զիշերը անփակ աչքերով ողբում էի իմ տնարժանաւորութիւնը:

— Բարեգութ Աստուածը լսեց ձեր աղօթքի ծալնը, ես այս զիշերը զգացի այդ անրշալին առութիւններիս ժամանակը:

— Շուտով ես, նւաստս, կը կատարեմ Նրա բարձրեալ կամքը՝ այդ սրբավայրերը շուտով կը կառուցեն:

— Թո՞ղ Տէրը օրհնէ քեզ և քո համայն գերգաստանը:

### XVIII.

Խորին թախծութեամբ լցւած՝ լուս հեծում էր հիւանդի մահնում Սիւնեաց տէրը՝ Վասակ-Գաբուռը:

Սոսկալի հիւանդութիւնը օր ըստօրէ քայլքայում էր նրա մարմինը: Նա իրան միսիթարում էր, որ մասամբ իր սրտի բաղձանքը կատարւել է, և Բագրատունեաց Գեղանի Մարեմը իր ամուսինն է. սակայն այն օրից որքան ցաւալի դէպքեր պատահեցան, որքան գժբաղդ իրողութիւններ կատարւեցան: Հայաստանի տարաբաղդ հողը ամենուրեք ներկւց իր հարազանների արիւնով. հալքենիրի անձնազոհ զաւակները ընկան կուի դաշտում: Բայց ինքը իր անակնկալ հիւանդութեամբ կորցրեց այդ երանելի ժամանակը և անմասն մնաց այդ կուներից, ուր այնքան փառք, այնքան անուն ստացան նրա ընկերները: Բայց անողոք ճակատագիրը այդ օրից անվճականութեան մէջ տանջում էր իրան՝

ոչ թոյլ էր տալիս կազդուրւած մարմնով, առողջ հոգով ոտքի ելնելու, շարունակելու իր առօրեայ կենցաղը, ոչ զրկում այդ տաղտկալի կեանքից: Եւ այդպէս, իւրաքանչիւր ժամ, իւրաքանչիւր ըռպէ սահտկանում էին նրա վշտերը և աւելիս խոր խոցեր բացանում նրա վիրաւոր սրտում: Նրա հայրենասէր հոգին հիւանդութեան մահնի ծիրաններումն էլ գարձեալ սոսկալի պատերազմի մէջ էր: Մի խուլ, ներքին կոփւ լոելեան կատարւում էր նրա սրտում: Եւ այդ կոփւը աւելիս զարհուրելի էր, քան իր գժբաղդ հայրենիքի լեռներում որոտացող լեռների շառաչիւնը: Նրա հեռանկատ հոգին զգում էր, որ իր աներ Աշոտի խելացի կառավարութիւնը առանց վարձատրութեան չի մնալու, նա գիտէր, որ նրան սիրում են թէ ամիրապետը, թէ յունաց կայսը և թէ Հայաստանի իշխանները. նա գիտէր, որ այդ ամենը ապարդիւն անցնելու չէ. նա գիտէր, որ շնորհիւ այլպիսի տոկուն կառավարութեան Հայաստանը շուտով պիտի պստկւի մի առանձին փառքով իր սիրելի Աշոտի հետ. նոգիտէր, նա զգում էր այդ ամենը և իր հոգու ամբողջ թափով ցաւ ում էր, որ անողոք ճակատագիրը զուցէ չարժանացնէ իրան այդ օրւայ տեսութեանը և խոր զերեզման պատրաստէ իր համար: Նա գիտէր իր հիւանդութեան մահաշունչ հետեւանքը: Այդ պատճառով ինքն իրան լարատե մաքառման կուի մէջ էր: Եւ այդ հիւանդը իր սրտի խոռվութեան տագնուպների մէջ՝ միշտ հայոց աշխարհի մասին էր խօսում և միշտ նրա մասին տանջում: Հիւանդ

իշխանից անրաժման իր հաւատարիմ սպասաւորների  
մէջ գտնուում էր մէկը, որը իր մասաղ հոգու ամ-  
բողջ էռութեամբ սիրում էր իր տիրուհու նաժիշտ-  
ներից ամենաքնքով Երանեակին և օր ու գիշեր  
տանջուում էր նրա սիրով: Սակայն մինչեւ այդ օր  
նա լրութեամբ տանում էր իր սրտում այդ ծանր  
հարւածը:

Ո՞չ հայր ունէր և ոչ մայր, և յայտնի չէր,  
թէ որտեղից էր նա Սիւնեաց տէրերի ապարանքը  
սպասաւորութեան մտեր: Այդ օրը նա դտնուում էր  
յուզւած կրքերի ալեկոծութեան մէջ, որը նրան  
տեսդային շփոթութիւնների մէջ էր զրել: Այդ օրը  
նա վճռել էր մի յանդուզն բայլ, որը պիտի իրա-  
գործէր մի քանի բուգէից յետոյ:

Սիւնեաց տիրուհին, Մարեմը, տեսնելով իր  
ամուսնու դէպի լաւ ընթանալը և հաւատացած  
լինելով, որ նա մի բանի օրից յետոյ կատարեալ  
կազդուրելու է, յանձնեց նրան իւրայինների խնամա-  
տարութիւնը և ուղղեորեց դէպի Սեանայ մե-  
նաստանը: Այդ օրից այդ ճարպիկ սպասաւորը  
աւելիկաս գրաւեց իւր հիւանդ իշխանի ուշադրու-  
թիւնը, որ իշել էր իր տիրական բարձունքներից,  
և տիրոյ ու սպասաւորի մէջ մի առանձին մաեր-  
ժութիւն էր առաջ եկել: Եւ այժմ աշխատում էր  
օգուտ քաղել իր տարած յաղթանակից: Նա, ամեն  
արգելառիթ պատնէները փշրելով իր չերմ սիրոյ  
առաջ, մտաւ իշխանի մօտ: Հիւանդը շուռ եկաւ  
դէպի նրան և երկար առանց շարժւելու դիտում էր  
նրան: Տեսնելով իշխանի մաշւած և գունաթափ

գէմքը, որը ոչինչ բարեաջող ապագայ չէր գուշա-  
կում, նրա ցաւերը աւելի ևս սաստկացան: Իշխա-  
նի սրտամորմոք զրութիւնը որքան դառն էր, այն-  
քան առաւել հաստատեց նրա մէջ այն բաղծանքով  
լի խորհուրդը, որը վաղուց ձնւել էր իր սրտում:  
Տակաւին ուշ չէր նա համարում: Այդ պատճառով  
նա մօտեցաւ իր տիրոջը և ամուր գրկեց նրա ոտները  
ու սկսեց չերմ համբուլներով ծածկել նրան: Հի-  
ւանդը ցնցւեց և հաղիւ կարողացաւ շնչալ.  
— Ի՞նչ է պատահել, Խորէն:

— Տէր իմ, խղճա ինձ, գթա, որ ժառադ հա-  
մարծակում է խանդարելու իր տիրոյ հանգիստը  
և հոգու անդորրութիւնը: Ես ալես անկարող եմ  
տանել: Վշտերի, արցունքների շտեմարան է դար-  
ձել իմ եղկելի անձը. Փրկել ինձ միայն դուք կարող եք:

Վաստկը լուռ նայում էր նրան և չը գիտէր  
թէ ինչ պատասխանէ: Մի փոքր լուռթիւնից  
յետոյ, վերջապէս, նրա շրթունքներն շարժւեցին, և  
նա դողդոց ծայնով հարցրեց:

— Խորէն, մի՛ վրատիր, ի՞նչ է պատահել,  
պատմիր ինձ, ես տակաւին լսելու և ըմբռնելու  
կարողութիւն ունեմ:

— Տէր իմ, օր ու դիշեր իմ հանգիստը վրր-  
դովում է մեր տիրուհու նաժիշտներից աւագը՝ Ե-  
րանեակը. նրա սէրը հեռացրել է աչքերիցս գիշե-  
րային նինջը: Ես անկարող եմ չը մտածել, չը տանջ-  
ւել, խելացնոր չը լինել նրա անունը լսելիս:

Իշխանը փորձեց ժպտալու. սակայն նրա մե-  
ռելալին գէմքը չարտայալտեց այդ:

— Տէր իմ, հաւատարիմ ծառադ ամեն ուղից  
յովսու կորած և, վատահ լինելով ձեր մեծահոգու-  
թեան վրայ, վճռել է ձեզ զիմելու, որ դուք բու-  
ժէք նրա վէրքերը: Եթէ ոչ, կեանքը ինձ համար  
ոչ մի նշանակութիւն ունենալու չէ:

— Խորէն, այդ գժւարին չէ:

— Ո՞չ տէր իմ, գժւարին է և աւելիևս  
զարհուրելի՝ մեր աիրուհին իմ մասին չէ մտածում,  
նա ուրիշ փեսալացւի աչքի առաջ ունի երանեա-  
կի համար: Երբ իւրաքանչիւր անգամ լիշում և  
այդ, սիրտս տակն ու վրայ է լինում, և ես փոր-  
ծում եմ վերջ տալ իմ այս բաղմատանչ կեանքին:

— Ո՞վ է այդ բաղմատորը, որի մասին հոգա-  
ցողութիւն ունի քո տիրուհին:

— Կարէնն է, Զագեցու սպասաւորը:

— Արժանի է...

— Արժանի է, տէր իմ, բայց ես հաւատա-  
ցած եմ, որ երանեակը երբէք իր սիրտը չէ տւել  
այդ կոշտ ու կոպիտ լեռնեցուն: Տէր իմ, ների՛ր  
ծառալիդ համարծակութեանը. մենք իւրաքանչիւր  
օր, գրութէ իւրաքանչիւր ժամ աւսնում էինք  
միմեանց, և ես երանեակի հայեացքներից շատ բան  
եմ գուշակել...

— Գուշակել ես, որ նա քեզ սիրում է, չէ...

— Այո, տէր իմ:

— Բարի, ալն ժամանակ ես կը փործեմ խօ-  
սել տիրուհուդ հետ. նա շուտով վերազառնալու  
է: Բայց այժմ հանդիսաւ եղի՛ր. Եթէ այդպէս է  
երանեակին ոչ ոք չէ կարող բեզանից խլեր:

Խորէնը արտասուբների հետ դրոշմեց նրա ոտ-  
քերին բաղմաթիւ սրտառուչ համբոյրներ: Բուռն  
վառ սէրը անսանծ կրբեր էր բացել թշւառ սպա-  
սաւորի կրծքում, մանաւանդ, երբ նա լսել էր, որ  
Կարէնը նոյնպէս անտարբեր չէ դէպի երանեակը:

Մինչ Խորէնը գտնւում էր այս դրութեան  
մէջ, այնտեղ Դուինում, հայոց վեհարանի շրեզա-  
զարդ սրահում, անդադար անց ու դարձ էր ա-  
նում Կարէնը: Նա նոյնպէս գտնւում էր մըրկայուղ  
դրութեան մէջ, և նրա ալէկոծւած ներքին աշ-  
խարհը ծփում էր խոռոված ալիքների ահազնա-  
զդորդ տարափի տակ: Նա նոյնպէս լսել էր Խորէ-  
նի զգացմունքների մասին և այժմ աւնդային տագ-  
նապով բռնկւած՝ վճռել էր նոյնպէս զիմել Զագե-  
ցուն՝ նրա օդնութիւնը և միջնորդութիւնը խնդրել:

Վերջապէս, սիրոյ բոցակէղ հուրը խորտակեց  
ամօթխածութեան և կրքերի պատնէները, և նա  
առանց աշ և ահեակ զիաելու, բաց արեց Զագեցու  
ննշարանի դուռը, ուր այդ ժամին առանձնացած  
նա հանգստանում էր:

Կաթողիկոսը գեռ չէր լաւ ուշքի եկել, թէ  
ով է մտնողը, երբ նա խելակորոյս գտղանի նման  
իրա ոտքերը ընկաւ և յորդահոս սրցունքների հետ  
կրկնեց միկանյն խնդիրը, որը կրկնել էր Խո-  
րէնը իր տիրոջը երանեակի վերաբերեալ: Զագեցին  
չը զարմացաւ, նա զիտէր, նա հաշակել էր նակա-  
տագրի այդ գառն բաժակը և զիտէր նրա ահուելի  
խորութիւնը: Նա մի սրաթուիչ արագութեամբ սա-  
ւառնեց դէպի իր անցեալը, դէպի իր երիտասարդ

հասակը, ուր ճակատագիրը իր քաղցրաշունչ վայելք-ներով այնքան կարծատե ժպիտներ էր տւել նրան, որից յետոյ նա իր մռայլ կերպարանքն էր երեան հանել, երբ նրա աննման Սանդուխտը գերեզման էր իշել: Այժմ նա ըմբռնում էր թշւառ կարէնի դրութիւնը. այդ պատճառով արհամարական ոչինչ չասաց նրան, այլ խոստացաւ իր միշամութիւնը: Եւ այսպէս, խոստումների զգացմունքների տակ երջանիկ էին իրանց համարում երկու միանման սիրահարներ.

Մէկը՝ Խորէնն էր,  
Միւսը՝ կարէնը:

XIX.

Աշոտի իշխանապետութեան ժամանակ վրաց այն զլխաւոր իշխանները, որոնք միմեանց ազգական էին և Բագրատունեաց ցեղիցն էին սերւում, ճանաչում էին Աշոտի իշխանապետութիւնը, ինչպէս Սիւնեաց և Վասպուրականի տէրերը: Վրաց այդպիսի իշխաններից՝ Քարթիլի Կուրապաղատն-Գուգարաց տէրը, Սամցիսէի \*) և Արտանուչաց իշխաններն էին: Սրանք, երբ չայսատանում ոստիկան չէր լինում, իրանց երկիրների հարկերը Աշոտին էին յանձնում: Ստէպ-ստէպ սրանց և Եղերաց \*\*) թագաւորի մէջ խռովութիւններ էին տեղի ունենում,

\*) Ախալցխայի

\*\*) Ափխաղաց

որովհետեւ Եղերաց թագաւորը լարատե չանքեր էր դորժում տիրելու դրանց երկիրները:

Երբ Ահմատ ոստիկանին հալածեց, Աշոտը իր խելացի և խոհուն կառավարութեամբ սկսեց նրա թողած խառնակութիւնները կարգի բերել և նրա կուսակիցներին զապել: Այս ժամանակներում Տրփիսին տիրում էր Կապլուզ անունով մի իշխան, որին պատմիչները համարում են մեր Աշոտի ազգական: Ահմատը իր ոստիկան եղած ժամանակը փորձում էր յափշտակելու Կապլուզից նրա երկիրը. սակայն երկարատե չեղաւ նրա իշխանութիւնը՝ ինքը հալածւեց, այդ պատճառով և անկարող եղաւ իրագործելու իր վաղեմի տենչանքները: Դժբաղդաբար, երբ Ահմատը այլևս չը կար, Կապլուզը յանդուզն ստահակութեամբ սկսեց ինքնիշխանաբար վարել իր երկրի զեկը և հակառակել ոչ միայն վրաց, այլև մեր իշխանաց-իշխանին: Երկար Աշոտը փորձեց համոզելու նրան հնազանդութեամբ իշխելու իր երկրի վրայ և ապարդիւն արիւնների պատճառ չը զառնալ. սակայն զլուխ կորցրած Կապլուզը երեկը ուշադրութիւն չը դարձրեց նրա առաջարկութիւնների վրայ:

Վերջապէս, Աշոտի համբերութեան բաժակը լցւեց, և նա վՃռեց զէնքի ուժով խելքի բերելու այդ յանդուզն իշխանին: Ինչպէս միշտ, նոյնպէս և այս նւագ հեռատես Աշոտը զաղանի զաշն կապեց իր հօրաքրոջ ամուսնու՝ Գորոմայ իշխանի հետ, խոստանալով Կապլուզի երկիրը սրան յանձնելու: Եւ այսպէս, ապահովելով իր զէնքի յաջողութիւնը,

խելացի իշխանը պատերազմի ելաւ Կապլուղի դէմ:  
Երկու կողմիցն էլ զօրքերը խմբւեցին ճակատ առ  
ճակատ Կուր գետի ափերին, և արիւնահեղ կռիւր  
սկսւեց: Հայոց գնդերը բաժանւած էին երեք մա-  
սերի. առաջին թևի վրայ իշխում էր ինքն իշխա-  
նաց-իշխանը, երկրորդի վրայ Դորոմայ եղբօր որդի  
Դաւիթը, իսկ երրորդի վրայ, որը համեմատաբար  
փոքրամասնութիւն էր կազմում՝ Աշոտի ազդակա-  
նը, որին օգնում էր Կարէնը, որի ճարպիկութիւն-  
ների մասին աներկբայ էր Աշոտը, և որը նման պա-  
րագաներում թախանձում էր իրան էլ վերցնել  
հետները, և Աշոտը սկսած Ահմատ ոստիկանի  
թղթատարին կալանաւորելու օրից սկսած մի առան-  
ձին ուշը էր գարծնում այդ բաշարի երիտասարդի  
վրայ և միշտ էլ յարգում էր նրա թախանձանը:

Մինչ արիւնը հեղեղի նման հոսում էր և ներ-  
կում կուր գետի ջրերի երեսը, երկու կողմի գրն-  
դերն էլ կատաղի կերպով շարունակում էին իրանց  
երկսալքի սրերի հարւածներով գետին տապալել  
իրանց հակառակորդներին, որոնք յուղիչ հառա-  
չանքներ արձակելով, թաւալում էին իրանց արեան  
մէջ և իրանց սիրելիների անունը վերջին անգամ  
մրմնալով՝ փակում էին իրանց աչքերը յաւիտե-  
նականութեան ընոփ: Տեսարանը ցնցող տպաւո-  
րութիւն էր գործում: Այստեղ աղեխարշ հեծեծանը-  
ների մէջ գալարւում էր վիրաւոր զինւորը և մահ-  
ւան տագնապալի տեսդով բռնկւած՝ մի ապշեցու-  
ցիչ ագահութեամբ լիզում էր իր սեփական արիւ-  
նը, որով աշխատում էր մեղմել իրան խեղդող ծա-

րաւը: Այնտեղ՝ միւսը սողում էր դէպի արիւն-  
փրփուր գառած կուր գետը, որը իր զովաշունչ  
ալիքներով քերում էր իր հարազատ ափերը և դէ-  
պի իրան գրաւում վիրաւոր զինւորին. բայց ա-  
ւազ, նա աղահաբար ընկնում էր նրա ափերին և  
ծծում նրա վճիտ չուրը և այլևս չէր բարձրանում՝  
ընկնում էր նրա ջրերի գրկում և, անէծք ու նզովք  
կարգալով իր անողոք նակատագրին՝ խորասուզուում  
նրա անգունդը և այնտեղ իրան համար գերեզման  
գտնում: Խսկ գետը կծիկ-կծիկ յործանք էր տալիս և  
խեղդում իր անվերջ շառաջների մէջ մահւան ճի-  
րաններում հեծող անբաղդ զինւորի վերջին օրհա-  
սական ճիչը և այդպէս առաջ ընթանում: Մի ու-  
րիշ տեղ հաղարաւոր կենդանիների խառնինազանձ  
ծայները ահ ու սոսկում էին տարածում մերծակայ  
լեռնալանչերում, ուր անդրադարձ էլեկչներով ար-  
ծագանք էին առնում նրանք և գրգացնում ամ-  
բողջ այդ մթնոլորար: Այնտեղ, հեռւում, վիրաւոր  
զինւորն է գալարւում իրանից վազող արեան մէջ,  
ամուր ծեռքով գրկելով իր սուրը և իր նժոյգի  
սանձը, խսկ թշւառ կենդանին չէ էլ փորձում հե-  
ռանալու իր տիրոջ աղեկառը սուզ ու շիւանից,  
այլ տիսուր կանգնած՝ լսում է նրա իւրաքանչիւր  
մրմունչը և իր գեղանի զիլսով շոյում վիրաւորածի  
ծեռքերը, վիրքերը, ասես մնչիկ շշնչիւնով կրկնում  
է. «Մի՛ յուսահատւիր, այսպէս պիտի անէին քո  
հարազատները. նրանց փոխարէն ես եմ ողբում քո  
վաղաժամ մահը...»

Այս բոլորը տեսնում էր հալրենասէր իշխա-

նաց-իշխանը և տխուր յոչկերի գերեր ընկնում խորին ալէկոծութեածք լցւած: Յանկարծ նրան շրշապատեցին մի քանի հսկաներ, որոնց միջից Կապուղով կատաղութեամբ բորբոքւած՝ մերկացրած սուրը ծեռին՝ դէպի նրան վաղելով՝ բացականչեց.

— Աշոտ, հնազանդութիւն էիր պահանջում, ահա այն... Այս ասելով, սուրը անդրադարձ շողերով վայրիշաւ: Սակայն այդ իսկ վայրկեանին մի ոլորուն պարան իր նեղ օղակով նրա պարանոցը ընկաւ, և հսկայի բազուկները մի առանձնակի թափով գետին զլորեցին ստահակ Կապուղին:

Աշոտը աչքերը բարձրացրեց և ի՞նչ... իրանց ոչ հեռու բարկութեան հուրը աչքերին՝ փրփրուած կորիւնի նման խեղդում էր իր զոհին Կարէնը:

— Կարէն, Կարէն, ուշըի ե՛կ, մի՛ սպանիր,— արտասուքը աչքերին՝ յուղւած ձախով կրկնեց Աշոտը, երկու ծեռքով զրկելով Կարէնին և համբուրելով նրա ճակատը:

Կարէնը ուշըի եկաւ և սթափւեց:

— Դէ՛հ, շուտ կաշկանդի՛ր այդ նզովեալի ծեռքերը և ոտքերը. այն էլ բաւական է զրան. դա մեր գերին կը լինի, — նկատեց նորից իշխանը:

Կարէնը պատկառալից փութեամութեամբ իսկոյն կատարեց իշխանապետի հրամանը: Տեսնելով իրանց զլխաւորի կալանաւորւելը, Կապուղի զօրքը փախուստ տւեց, և այդպէս վերջացաւ այդ պատերազմը: Յանկանալով աւելին զրտել յունաց Վասիլ կալսեր սիրտը, որը մեր իշխանապետին յաճախ «սիրելի որդի» էր անւանում և յարգանք ար-

տայալտում, Աշոտը կալանաւորւած Կապուղին յունաց երկիրը առաքեց: Իսկ նրա երկիրը յանձնեց Գործակ եղբօր որդի Դաւթին, որի փոխարէն ստացաւ նրանից նրա Աշոցք գաւառը, որը անձիշապէս սահմանակից էր իր բնիկ Շիրակ գաւառին: Այսպէս, մի քանի անգամ պէտք եղաւ մեր իշխանապետին անցնել վրաց աշխարհը և դադարացնել այնտեղի խոսվութիւնները, որոնք պարբերաբար կրկնւում էին այնտեղ՝ Վերջին անգամ, երբ Աշոտը վերազառնում էր վիրահայ Տաշրաց գաւառից, անցաւ Գեղամայ ծովակի այն ժայրը, ուր գտնւում էր Սևանայ կղզին, որի գէմ-յանդիման՝ Բանակատեղ կոչւած տեղը, բանակ զրեց: Այստեղ հալրենասէր իշխանը փափակեց տեսնել մեծանձն և հաչակաւոր Մաշտոցին: Յարմար առիթ էր այս երկու մեծանշան անձանց տեսակցութիւնը, որը ինընըստինքտն ներկայացաւ՝ ճանաչացնելու ազդի այդ երկու հզօր ներկայացուցիչներին:

Աշոտը ցանկանում էր տեսնել այդ սրբակրօն և գիտնական միայնակեացին, որի մօտ ասպնչականութիւն էր գտել իր Մարեմը: Իսկ Մաշտոցը, որ լսել էր Աշոտի մեծահռչակ զործերի՝ նրա քաջութեան, արդարութեան, հալրենասիրութեան և խելացիութեան համբաւը, աւելիես բաղձանք էր յայտնում զրկելու այդ իշխանին և համբուրելու նրան ոյժ և կարողութիւն պարզեսղ այն խաչը, որը ընծայ էր ուղարկւած Վասիլ կալսը իր նրան և որը նա միշտ իր հետն էր պահում: Երբ Մաշտոցը տեսաւ իշխանաց-իշխանի զօրաբանակը, փու-

թաց ալցելելու նրան։ Նա դուքս եկաւ կղզուց և  
գիմաւորեց իշխանապետին Բանակատեղի մօտքերը,  
ուր հանգստանում էին հայոց զօրքերը։ Սրտառուչ  
էր ազգի ալդ երկու զօրեղ սիւների տեսակցու-  
թիւնը։

— Որդիկան տենչալից ողջովնս ձեզ, հայր  
սուրբ, փաղենի կարօսա ալսօր լցում է ձեր տե-  
սութեամբ, — նկատեց Աշոտը, որը անկեղծութեամբ  
համբուրեց Մաշտոցի լուսափառ երեսը և ացր:

— Ողջայն հայոց պաշտպան հրեշտակին, ողջոյն տառապեալ աղզիս անծնւեր դաւակին, — արտասուբ աչքերին, գողգոզիւն ձայնով պատասխանեց Մաշտօցը, խոնարհելով և երկրպագելով Աշոտի բազուկները և կուրծքի զարդ կազմող սրանչելափոյն խաչը, որը առաւ և դրեց աչքերին և համբուրելուց չէր յագենում:

Վաեմամիտ իշխանը, տեսնելով սուրբի սրաա-  
ռուչ փափազը դէպի այդ խաչը, ըստ ցանկացաւ  
այլևս զրկել նրան այդ նէփրական սրբութիւնից և  
պարգևեց նրան այդ կալսերատուր, ոսկեկապ և  
մարգարտազարդ խաչը:

— Զեզ եմ պարզեում, հայր սուրբ, այդ սրան-  
չելագործ խաչը, որ առաւելիս սրտառուչ աղօթէ էք  
թէ իմ և թէ իմ տառապեալ հայրենիքի համար:  
Ոչ մի բան չէր կարող անշատել ինձ այդ աստուա-  
ծային պարզեից. սակայն, երբ այդ խաչով ա-  
ւելիկ ոյժ և կարողութիւն պիտի ստանան ձեր  
աղօթքները Տիեզերքի ահեղ Աթոռի առաջ, որը  
միայն կարող է իր բարեխնամ աջով պաշտպանել

իմ տարաբաղդ հայրենիքը իր առօրեալ արհաւերք-ներից և անսպասելի վտանգներից, այդ պատճառով էլ ես անկարող եմ չը զրկւել այդ կենարար սրբութիւնից և այն ձեզ ծիամն պարզել 'ի յարատեռութիւն և 'ի պայծառութիւն դժբաղդ իմ հայրենիքի:

— Թող օրհնւած լինի քո սերունդը, տէր իշխանապետ, համայն ազգերի մէջ և թող նրանից ծագէ Հայաստանի արեգակը։ Այժ, թող ծագիկ Բագրատուննեաց պայծառ արեր Հայաստանի հօրիզոնում։ Փառք և գոհութիւն Տիեզերքի ահեղ Աթոռին, որ պարզեց ինձ, անարժանիս, երջանիկներից ամենաերջանիկ լինելու վիճակը։ Մեռած հոգիս վերստին այս երանաւէտ պարզեով ոյժ և կարողութիւն է ստանում. մահացած կեանքս այս փրկարար խաչով կարող թռիչքներ է գործում, և ես կապրեմ, կապրեմ ու կազօթեմ սիրելի հայրենեաց և բեց համար, գթառաւ իշխանապետ։

Որպէս մի մարմնացած առաքինութիւն կանգնած էր Աշոտը և լուսնամբ լսում էր այդ սրբակրօն մարդի հոգեշունչ խօսքերը. իսկ հեռվից մենաստանի անձայն առանձնութիւնը առաւելեան հետաքրքիր էր գարճնում նրա անձնաւորութիւնը: Իշխանապետը անդադար նայում էր դէպի մենաստանի կողմը, ուր ափերի պղտոր լեռնազոյն ալիքները վազում էին դէպի կղզու երեսը, մի առանձին թափով զարնուում նրա ապառաժ գէմքին, չարդու փշուր լինում, խորտակւում, ապա յուսահատ

ճշում, դժոխալին աղաղակներ սրծակում և վերստին իրանց հարազատ շրերի ծոցը խորասուզւում:

— Այս սուրբ, ես կուղեի աւելիկո բար-  
ւոքել ծեր կացութիւնը: Ես կուղեի այս հինաւուրց  
մենաստանը վերստին իր նախկին շուք ու զարդի  
մէջ գնել: Այս, ես կուղեմ, որ այս կղղին դիտու-  
թեան լոյս մատակարարէ իմ թշւառ աղդալիննե-  
րիս համար: Իզուր չէր մեր Աստուածարնտիր հայ-  
րապետք՝ ո. Լուսաւորիչը, քրիստոնէութեան լոյսի  
սեղան կանգնեցնում այս լուսութեան, այս առանձ-  
նութեան մէջ, որոնք համապատասխան են, որ այդ  
կղղին դիտութեան կայան լինելու գերը իր վրայ  
վերցնի: Այս, պէտք է վայելուչ, պատշաճ կացու-  
թեան մէջ գնել այդ վազեմի դիտութեան կայանը:  
Եթէ ոչ վազը, միւս օրը իսպառ կը ջնջէի, կանհե-  
տանայ ձեր գոյութիւնը այս սրբավայրերից, և  
կղղին վերստին իր անյալտութեան մէջը կընկնի:

— Օրհնում եմ, իշխանապետ, ձեր քաջարի  
դիտաւորութիւնը: Թող Ամենակարող Տէրը ովհ և  
կարողութիւն պարզեւէ ձեր բազուկներին: Թող նա  
իր լուսաւոր աչքերով առաջնորդէ ձեզ դէպի այն  
բարձրագոյն բարին, որի հիմնական գծերից զուրկ  
չէ հայաստանի պահապան հրեշտակի՝ ձեր սիրար:

Այս, որ ինքնակալը, որ իշխանը ունի այնքան  
հեղ և քաղցր վարձունք, կատարեալ համբերութիւն,  
մեծանձնութիւն և խոնարհութիւն. որ անհատը  
ունի այնքան շլացուցիչ քաղաքավարութիւն, ան-  
շահասիրութիւն, հեղութիւն, աննենդ սիրտ և ուղ-  
ղութիւն: Այդ առաքինութիւնները մղում են ձեզ

դէպի մարդ կոչման կատարելութեանը և մերձե-  
ցնում են ձեզ այն անարատ աստիճաններին, որոնք  
ներշնչում են հասարակ մահկանացուներին նմանւել  
Արարչին իրանց այդ յատկութիւններով: Եւ ձեր  
այդչափ անրիծ և անարատ յատկութիւնների  
պատճառով, վկացում է իմ տառապեալ սիրտը,  
հայաստանը պիտի պսակւի իր վաղեմի թագ ու  
պսակով:

— Որպէսզի ես լիովին կարողանամ, սրբակ-  
րօն հայր, իրազորձել իմ փալփալած ծրագիրները  
և նիւթապէս ապահովել կղզու գրութիւնը, ես  
ընծայում եմ այդ մենաստանին հետեւեալ կալւածք-  
ներ, որոնք կրում են այս անունները՝ Յամարա-  
բերդ<sup>1)</sup> Գևամածոր, Բերդը և Ռւուեաց-ատափ գիւղե-  
րը, որոնց տարեկան և կամուտառվ պիտի դպրոց հիմ-  
նել կղզում և կրթել մեր ծառաղ սերունդը, և այդ-  
պէս բազմացնել լուսամիտ մարդկանց թիւը թէ  
կղզում և թէ հայաստանի հեռաւոր հողի վրայ: Այս,  
այդ կղղին ես ուզում եմ այն կեղրոնը  
դարձնել, որտեղից պիտի սփուրի իմ տարաբազզ  
աշխարհում գիտութեան և լոյսի ճառապայմները  
և բազմացնէ լրջահայեաց և բանիմաց միաբանների  
թիւը: Այս, զրանից յետով հաւտացած եմ, որ  
կղզին ծառայած կը լինի իր կոչմանը:

— Իշխանապետ, գովում եմ և օրհնում ձեր  
հայրենասիրութիւնը, այս, զժբաղդ չէ հայաստա-

<sup>1)</sup> Զըռ Զըռ:

նը, որ ունի ձեր նման անձնազոհ զաւակներ. թող  
օրհնւի ձեր կամքը:

— Այդ տակաւին բաւական չէ, սուրբ հայր,  
որպէսզի թէ՛ ծիաբանները և թէ դպրոցի մատա-  
ղահաս մանկափրը նիւթական կարիքի ամենաթոլ  
նշով անգամ չը զգան, ես այդ մենաստանին պար-  
գևում եմ այդ կղզու շրջակալքում բռնւող ձկների  
մի մասը, որը մինչեւ այսօր արքունական տուրք  
էր համարւում. բացի այդ՝ պարզեւում եմ և այն  
արքունական ալզիները, որոնք գտնւում են Երեա-  
նի և Գառնիի կողմերը: Իսկ ձեզ յանձնում եմ  
հիմնելու և կարգի բերելու ու դեկավարելու այդ  
դպրոցը թէ այժմ, թէ՝ ապագայում: Փութացէ՛ք 'ի  
կատար ածելու իմ այս բազմանքը:

— Տէ՛ս իշխանապետ, ձեր այդ բոլոր բաղ-  
ձանքները ամենաճշտիւ կը իրազործի:

— Իսկ այժմ, հայր սուրբ, ինձ յանկալի է  
անձամբ անցնելու կղզին գիտելու այն սրբավայրե-  
րը, որոնց կառուցել է իմ Մարեմը: Թէրևս լինեն  
այնպիսի կարիքներ, որոնց զոհացումն կարողա-  
նամ ինքս լցուցանել:

— Թող օրհնւած լինի ձեր ոտնամուտը այդ  
մենաստանում:

Շուտով պատրաստւեցան մի քանի նաւակներ,  
ուր բազմեցին Աշոտը և Մաշտոցը և մի քանի  
իշխաններ և անցան կղզին: Արանց հետեւում էր  
իշխանների շքախումբը: Ճանապարհին Աշոտը խօ-  
սակցում էր Մաշտոցի հետ և հաւասարիացնում  
նրան, որ երբ մենաստանը ունէ կարիք կունենալ,

իսկոյն և եթ տեղեկութիւն տրւի իրան:  
Մաշտոցը խոստանում էր:

XX.

Գիշերից բաւականին անցել էր: Գեղամալ ծո-  
վակը երկոտ փսխոցով անդադար ողողում էր իր  
յեղյեղուկ ափերը: Գարնանալին յորդութիւնների  
ժամանակ ծովակը դտնւում է մի տեսակ ալէկո-  
ծութիւնների մէջ, և ահարկու խռովութիւնը ա-  
զմկալի է գարձնում նրա ամբողջ էութիւնը: Նա  
յոգւում է, և փրփրատէզ ալիքները չարագուշակ  
բռւի նման անվերջ ծփում են ու անվերջ զարդը-  
ւում իրանց ափերին և իւրաքանչիւր անգամ լսե-  
լի են գարձնում իրանց հոգու հառաջանքը և ծան-  
րագին անքոցը, որոնք գիշերալին խաւարի հետ մի  
ահարեկաղ սարսուռ են տարածում ամենուրեք և  
պարբերաբար կրկնում: — Վայ-վուչ, վայ-վուչ...

Սակայն այս գիշեր այդպէս չէր: Այս գիշեր  
նա գիշերալին հանգիստ էր վայելում: Ծովակը  
խաղաղ էր: Նա կծկւել-կուճ էր եկել և թողնելով  
իր աւաղուտ ափերը, բռնկւել էր գիշերալին նինջով:  
Գիշերւալ այդ պահուն Սևանալ մենաստանում մե-  
տաղեալ բարձր աշաւանակի վրայ անդադար պլար-  
լում էր արծաթեալ ճրագը և սփռում իր շուրջը  
միջնաշող լոյսի ճանանչներ, որոնք հազիւ աեսանելի  
էին գարձնում այն միջավայրը, ուր վառում էր  
ճրագը: Ճրագը գտնւում էր մի անշուք և պարզ  
խուցի մէջ, որի վերի մասում, մի փայտեալ մահնա-

կալի վրայ, երեսում էր մի կանացի կերպարանք: Այդ կինը մտախոհ էր: Նա դանւում էր իր գիշերային զգեստի մէջ, որը ինքնուրոյն պարզութեամբ մի առանձին զրաւչութիւն և վայելչութիւն էր ընծայում նրա գեղանի իրանին: Նա պատրաստում էր անկողին մտնելու և գիշերային հանդիստ վայելելու: Գլուխը հերարծակ էր, առանց ուեւ պատշաճաւոր զարդարանքի. հոլանի բազուկները նոյնպէս զուրկ էին պերանքներից, որը աւելի քան համապատասխան էր նրա մուայլած դէմքին: Թախծալի էր այդ կինը. նրա խոռվատես կերպարանքը առաւելես ալէկոծում էր և ալլայլում, երբ նա ստէպ-ստէպ կարդում էր մի թուղթ: Այդ թուղթը ասում էր նրան, որ նրա ամուսինը դանրում է անյուսալի զրութեան մէջ, և նրա հիւանդութիւնը սուր կերպարանք է ստացել, որ անհրաժեշտ է իր ներկայութիւնը:

Այդ կինը Մարեմն էր, Միւնեաց տիրուհին: Նու եկել էր այդ մենաստանը, որ իր ձեռքով սկսէ ժք. Սոաքելոց և ս. Սատուածածնի սրբավայրերի հիմնարկութիւնը, ապա մեկնէ գէպի իր հիւանդ ամուսինը: Սակայն այժմ պէտք էր փութալ գէպի տառապող ամուսինը: Այդ պատճառով նա կարգագրել էր, որ վաղ առաւօտեան սկսուի այդ եկեղեցիների հիմնարկութիւնը, որից յետոյ ինքը պիտի աճապարեր գէպի Միւնեաց կողմերը իր ամուսնու մօտ: Ոչ հեռու կանգնած, Երանեակը սպասում էր իր տիրուհու պառկելու: Որ ինքն էւ հեռանալ հանդասանալու:

Մինչ սրանք այս զրութեան մէջ էին գտնրում, կզզուց ոչ հեռու երեսում էր մի թեթև նաւակ, որի վրայ գիշերային այդ մթութեան մէջ նշմարում էր մի հատիկ մարդ, որը ամենայն զգուշութեամբ մերծենում էր կզզուն: Միայնակ թիավարում էր, միայնակ զեկավարում և, երբ յոգնածութիւնը ուժասպառ էր անում նրան, նա կանգնում էր, մի կողմ նեառում թիերը և զեկը և իր սքանչելի ձայնով երգում, փոքր ինչ խանգարում տիրող մեռելային լրութիւնը, ապա, երբ թեթեւութիւն էին զգում նրա վաստակաբեկ անդամները, նա նորից վերցնում էր թիերը և առաջ ընթանում: Որքան մօտենում էր կզզուն, այնքան աւելի մի ներքին անշէջ հուր բորբոքում էր նրա կրծքում և առաւելես ոյժ և կարողութիւն պարզեւում նրա բազուկներին: Այդ երկնային հուրը իր բոցակէզ կայծերով երբեմն այնպիսի սուր բռնկուծներ էր առաջ բերում նրա կրծքում, որ նա մօռանում էր, թէ ուր է գտնւում և ինչ է գործում: Եւ այսպէս շարունակում էր տակաւ առտակաւ մերծենալ կզզուն, որի վրայի վառ ձրագը մի փայլուն ասողի նման առաջնորդում էր այդ ստահակ լուզորդին:

Մարեմը պառկեց ընելու: Ուղիղ այդ ժամին Երանեակը լսեց ծովակի ծիչից մի քաղցրաշին երգ, որի սքանչելի ձայնը ցնցեց նրա ամբողջ հութիւնը: Մի յուրա սարսուռ անցաւ նրա երակներով, երերեց նրա մարծինը: Այդ գիւթիչ և լիանչիւն ձայնը չը ստրափացրեց նրան՝ նա վազուց էր ընտելացե,

Նրա բարձրագոչ և գողարիկ ելեէջներին. Նրա իւրաքանչիքը շեշտերը վազուց էին ծանօթ նրան: Եւ այդ ծայնը հետզհետէ մերձենում էր կղզուն: Խորամանկ ազջիկը գուրս եկաւ զզուշութեամբ իր տիրուհու մօտից և զիշերային շրջիկ ոզու նման առաջ ընթացաւ դէպի այդ ծայնը, որը անդադար կրկնում էր.

Հայոց աշխարհի գողարիկ չըրերում,  
Լուռ ամայութեան ամեհի երկրում,  
Անշարժ կանգնած էր կղզին սրբասուն,  
Տարաբաղդ հողի ահեղ մենաստուն:

Եւ կղզու անշուք քարեալ խցիկում,  
Դարաւոր կուռքի մեհեանն էր պարտկում,  
Հայոց սև հողին հղոր թեւերով  
Սնվերչ խնամում ու պահում սիրով:

Բիւր գարեր անցան ալսպէս ահաւոր,  
Սլու հողը ծլեց-ծաղկեց բեղմնաւոր.  
Երգ ու ծեղեղի, թրմքիահար պարեր,  
Թնդում էին կղզու խնկավառ սարեր:

Ալսպէս պիտ անէր կղզի-մենաստան,  
Թէ չը որոտար համայն Հայաստան  
Քրիզորի ծայնը՝ ծայն լուսաւորչի,  
Քրիստոնէական սիրոյ՝ այն ահեղ կոչի:

Եւ այդ շինչ սիրոյ մուրնի հարւածով  
Խորանեց մեհեան և նետեց վիճ ծով.

Եւ այս է սուրբ վան, անունը Սևան,  
Եւ այս պիտ լինի իմ հօր օթեան:

Ալսպէս աւանդեց Պարթևի որդին,  
Հայոց աշխարհին՝ իր հետեռորդին,  
Ալսպէս էլ մնաց Սևան մենաստան  
Նոր լոյսի պաշտպան և չերմ ապաստան:

Իսկ այժմ այդ սուրբ վառ մենաստանում  
Յաւերժմահարսունք են զրւարժանում,  
Զրւարժանում և կերտում նոր վայրեր,  
Հայոց այդ հողին տալիս նոր փայլեր:

Ալդաեղ է իմ կեանքն, հոգին ու արե,  
Որին ես պիտ տամ ըղծալի բարե,  
Կամ շուտ պիտ նետեմ անզունդը ծովի,  
Թէ չեմ տեսնելու եղնիկն այն ծովի:

Դէ՞հ, զարթիր, զարթի՛ր, ժամ է զարթնելու.  
Քո այդ ցուրտ նինջով վէրքս է բարգւելու.  
Ո՞խ, ինչպէս վէրքը իմ թշւառ երկրի,  
Խոր խոցեր կապած, ոհ, էլ չէ բերկրի:

Ո՞խ, իմ սուրբ Սևան, աշխարհ Հայաստան,  
Սիրոյ սուրբ օրքան, վշտի ապաստան.  
Դէ՞հ, քո սև կապանք, եղնիկիս նինջը,  
Խախտի՛ր մի թափով, թող տիրէ շինչը...

Չալնը լուց:

Չանցաւ շատ ժամանակ, երբ նաւակը կանգնեց կղզի այն ափին, ուր սպասում էր նրան

Երանեակր: Մի փոքր ես, և ահանաւակից դուրս  
եկաւ մի հզօր կազմւածքով երիտասարդ և իր հո-  
գու ահեղ թափով գրկեց նրա վայելչագեղ իրանը:  
Գրկախառնութիւնը նախանձեի էր: Խորին մթու-  
թեան մէջ ոչինչ չէր լսւում, բացի այդ սիրահար  
զոյզի մեղմ և հանդարա փսփսոցը: Վերջապէս,  
Երանեակր շուտ ուշքի եկաւ և հաղիւ լսելի ծայ-  
նով շշնչաց.

— Կարէն, 'ի սէր Աստուծոյ, ալստեղ մեղ  
տեսնողներ կը լինեն:

Գիշերային այդ ստահակ նաւափարը և վառ  
սիրոյ երգիչը կարէնն էր, որ այդ վերջերը շատ  
երկար էր բացակաչում վեհարանից, որովհետեւ Զա-  
գեցին օր ու զիշեր զբաղւած էր զրականութեամբ,  
նա գրում էր զանազան ճառեր և ուշքի անգամ  
չէր առնում, թէ ինչ է կատարւում վեհարանում  
և չէր հետաքրքրւում իւրայինների առօրեայ կեն-  
ցաղով: Կարէնին էլ այդ էր հարկաւոր: Եւ այդ-  
պիսի ժամանակներում նա յանախ երեսում էր այն  
վայրերում, ուր զտնւում էր Երանեակր իր տիրո-  
հու հետ: Ալսպէս էր և այս անդամ:

— Ոչինչ իմ աննման Երանեակ, ես լիսալոյս  
եմ, որ ոչոք չէ կարող մեղ տեսնել: Գիշերւայ այս  
պահուն ով է իր զլիսից ձեռք վերցրել: Ինչ էլ որ  
պատահելու լինի, երգւում եմ քո այդ գեղեցիկ  
աչքերով՝ ինձ չէ կարող սարսեցնել: Ես միան տաճ-  
շում եմ, թէ մի գուցէ այդ անիրաւ Խորէնը խոր-  
տակէ ամեն խոչընդոտներ և ինձ աւելի դժւար

կացութեան մէջ զնէ: Այդ գէպըումն էլ ես զիտեմ  
իմ անելիքը:

— Ի՞նչ կանես:

— Ի՞նչ.—եկեղեցումն էլ, նրա անկողումն էլ  
լինես, կը յարձակւեմ ու քեզ կառնեմ կը թռչեմ:  
Իթէ նոյնիսկ դա պահանջէ իմ մահը:

— Ի՞նչէր ես խօսում, Կարէն:

— Ես տակաւին խելացնոր չէմ եղել:

— Մեզ զեռ չը պատահած դժբաղդութիւն-  
ների ներբոյ, Կարէն, այնպիսի սոսկալի բաներ ես  
մտածում, որ ես մի ցուրտ սարսուռ և մ զգում  
մարմնովս: Ի՞նչու ես այնքան շուտ լցւում թախի-  
ծով և յուսահատութեամբ պղտորում թէ՛ քո և  
թէ՛ իմ սիրոր: Մեծ է Աստուծոյ գթութիւնը:  
Նա մեղ միշտ իր հովանի աչքերով կը պահէ ա-  
մեն աեղ:

— Երանեակ, իմ հոգեակ, դու ամեն դործում  
այդպէս քաջ ես: Միթէ մեծ բան է այդպիսի զո-  
հեր տալ քեզ համար: Զէ՛ որ քո հրեշտականման  
գեղեցկութիւնը զոհեր է պահանջում, և այդ զոհե-  
րեց առաջինը ի՞նչու չըսկիաի ես լինեմ: Ես, որ  
ամեն ժամ, ամէն ըոպէ հալւում եմ, մաշւում քո  
միակ անունը լսելիս, և ես առաջինը կանեմ այդ  
քայլը, եթէ երբ և իցէ իմ անողոք նակատագիրը  
երես զարծնէ ինձանից և քեզ այն անիրաւ Խորէնի  
գիրկը գցէ:

Դժբաղդ սիրահարը խօսում էր իր հոգու բո-  
լոր անկեղծութեամբ: Զոհաբերութեան այդ վսեմ

գաղափարը կազմւել էր նրա մէջ լնդհանուր մարդասիրական զգացմունքից:

Նա դիտէր զոհւել ընկերի, եղբօր, քրոշ, ժանօթի և անձանցթի փրկութեան համար. իսկ որչափ առաւել իր հոգու չերմ անկեղծութեամբ պաշտածի համար...

— Ես, կարէն, ոչ մի զոհաբերութիւն չեմ խնդրում քեզանից, և ծանր է այդ ինձ համար:

— Իսկ ինձ համար ոչ: Ես նախ կաշխատեծ օրինաւոր կերպով իմ սրտի խորին բաղձանքը կատարելու և արգէն գրա համար մի քանի քայլ գործել եմ. ես զիմել եմ մեր վեհափառին՝ իր միջնորդութիւնը չը խնայելու: Տարաբաղդաբար, նա էլ այս վերջերս յանախ հիւանդութիւնների է ենթարկւում: Ինչ և իցէ, սա խոստացել է միջնորդեր:

Թշւառ երիտասարդը չը դիտէր, որ այդպիսի խոստում տւած է և իր ախոյեանին: Նա չը դիտէր, որ Վասակը արգէն յայտնել է Մարեմին Խորէնի հետ ունեցած խօսակցութիւնը:

— Մի՞թէ, կարէն, դու այդքան յանդզնութիւն ես ունեցել կաթողիկոսի անդորրութիւնը վրդովելու: Դա անախորժ բան է:

— Ինձ համար ոչ. մի բան անախորժ չէ, երբ նա ծառայում է այլոց երջանկութեան համար, որից ես էլ անմասն չեմ: Քո մանուկ սրտում թագնած այն կալծը, որը յանկարծ է բոցավառում, երեկ տակաւին սուր. կերպով չէ բորբոքւել, եթէ ոչ դու այդպիս չէիր դատի:

Երանեակը ժպտաց: Գիշերային այդ սպառ-

նալից տեսակցութիւնը և կարէնի հրաբութոք սէրը դրել էին նրան մի տեսակ հոգեղւարճ յափշտակութեան մէջ և նա խօսում էր ամօթխածութեամբ լըւած:

— Վաղը թերես իմ տիրուհին մեկնէ այստեղից. նրա ամուսնու հիւանդութիւնը վտանգաւոր կերպարանք է ստացել: Այսօր նա տեղեկութիւն ստացաւ այս մասին և անհանգիստ է: Երբ նա հեռանալ ալստեղից, ի՞նչպէս կարող ես դու լայտնրւել Սիւնեաց աշխարհում և ինձ փրկել:

— Ի՞նչպէս, — ես վաղը, երբ քո տիրուհին մեկնէ այստեղից, կանցնեմ Դուին և, եթէ կաթողիկոսի հիւանդութիւնը սաստկացած լինի, այս այնուեղ անկարող կը լինեմ մնալ, այլ կը հետեւմ ամենուրեք քեզ և քո դժբաղզութեան նզնաժամին կալծակի արագութեամբ փրկութեան ձեռք կը կարկառեմ քեզ. եղի՛ր միամիտ: Այժմ վեհաբանում մնալը ինձ համար ձեռնատու չէ: Երբ փոխւեն հանգամանքները և արտակարդ կերպարանք ստանան, այն ժամանակ կը փոխւէ և իմ ծրագիրը:

— Այդ լաւ ես մտածել:

— Ես թերես փորձեմ մեր վսեմամիտ իշխանակետին էլ դիմելու: Դու հօ դիտե՞ս թէ որքան է նա ինձ սիրում:

— Ես քեզ խորհուրդ տալ անկարող եմ: Միան իմ հանութեամբ ձեռքս Խորէնին տալ նոյնպէս անկարելի բան է:

— Այդ ես քեզանից լաւ դիտեմ:

Յանկարծ լուեցին առաւտեան կոչնակի ձայները: Երշանիկ սիրահարները սթափւեցին և մի մի փոխագարծ չերմ համբոլըներով աւեցին միմեանց հրաժեշտի ողջոյնը և անյատացան տակաւին տիրող խաւարի մէջ: Մէկը վերադարձաւ դէպի իր բնակարանը, իսկ միւսը՝ յետ ցատկեց իր նաւակը և հետզիետէ հեռացաւ կղզու ափերից:

Առաւտօտեան ժամերգութեան ժամանակն էր: Արեւելքը շառագունւած էր, և փոքր թանձր խաւարը վերանում էր երկրի երեսից: Կղզում գեռոչ ոք չէր ելել. միայն մի մարդ էր զարթնել և խորին չերժեռանգութեամբ ազօթում էր. զա Մաշտոցն էր:

## XXI.

Ութերորդ դարում, երբ հադարացոց խուժադրուժ բանակը կործանում էր, տակն ու վրայ անում հայաստանը, Վանայ ծովակի հիւսիսալին կողմերը՝ մինչև Ամկու երկիրը մի կողմից, իսկ միւս կողմից՝ գէպի արեւմուտք՝ մինչեւ մեր հարք գաւառը՝ գտնում էին արարական Քայս, կոմ Քայսիկ անունով մի ցեղի տիրապետութեան տակ: Ժամանակով այդ երկիրը բաժանեցաւ երկու գլխաւոր մասերի, արեւելեան և արեւմտեան: Արեւելեան մասում գտնում էին Խլաթ, Արճէշ, Բերկրի՝ հանգերծ Ամիւկ բերդով և իրանց անունով երեք գաւառներ, իսկ արեւմտեան մասում կալին նոյնպէս երեք գաւառներ՝ Կորի, Հարք և Ապա-

հունիք: Այս վերջին գաւառի արևմտեան սահմաններում գտնուում էր մեր քաղաքներից թերեւս ամենահինը, որը կառուցել է հայկ նահապետի Մանաւաղ որդին, այդ իսկ պատճառով այդ քաղաքը անւանում է Մանաւազկերտ, կամ Մանազկերտ: Մեր պատճութեան ժամանակներում այս քաղաքում ապրում էր Արլաբաս Քայսիկ ամիրան, որը կոչում էր Ապահունեաց կամ Մանազկերտի տէր: Սա Խլաթայ և միւս իշխաններից աւելի զօրաւոր էր, այնպէս որ հարեան հայ իշխաններն անգամ պատկառում էին սրանից: Սա նոյնպէս գտնում էր մեր իշխանաց-իշխանի տիրապետութեան տակ և, ինչպէս միւս՝ թէ՛ հայ և թէ՛ ալլազգի իշխանները, հարկ էր տալիս մեր իշխանապեա Աշոտին: Այս ցեղը վերին աստիճանի զոռող և յանդուգն էր և իրան համարում էր սերւած Արրահամի Խմայլի զաւակից: Այս ցեղը տւել էր իր աղքին և գիտնական աստղեր, որոնց մէջ աչքի էր ընկնում Խպն-Քայս: Թէ՛ այս ցեղը վճարում էր Աշոտին հարկ, սակայն այդ բանը այնքան էլ դուր չէր դալիս նրա իշխան Արլաբասին: Բայց երես առերես հակառակել մեր իշխանապետին և թօթափել այդ ծանր լուծք, նա չէր համարձակւում: Խորամանկ Եմիմիկը և Ահմատը չը կարողանալով խորտակել իշխանապետի ոյժը, այժմ ըսկսեցին խարդախ միջոցներով բարեկամական յարաբերութեան մէջ մտնել Արլաբասի հետ և համոզել, որ թօթափէ Աշոտի լուծք և գագարէ նրան հարկ տալուց: Անիրաւ Արլաբասը ոտքի ելաւ Ա-

շոտի դէմ: Այս բանին աւելի նպաստեցին և հայ ազգի մի քանի ամբարտաւան իշխաններ, որոնք խելքահան արեցին նրան, ուռեցնելով և փքայնելով Արլաբասին իրեւ անլաղթ զօրապետի և իշխանի:

Քաջարի Աշոտը այս անգամ էլ խոհական ընթացք ցանկացաւ տալ գործին և մի քանի անգամ զգուշացրեց ամբարտաւան իշխանին, որ նա խելքի դալ և վայր դնէ իր զէնքերը: Սակայն գոռող իշխանը միշտ էլ անսասան մնաց իր դաղանաբարոյ համոզմունքի մէջ: Անճարացած՝ իշխանապետը վճռեց զէնքով լուծել այդ հարցը և զէնքով խելքի բերել ապստամբ իշխանին:

Հայոց զօրքերը, իրանց զլուխ ունենալով Աշոտին, յաղթական փառքով մտան Վանայ ծովակի հիւսիսային կողմերը և սարսափահար արին այդ տեղի բնակիչներին:

Տեսնելով երկրի այդպիսի տղետալի և իր անել գրութիւնը և ոյժ չունենալով զէնքով դիմագրութիւն ցոյց տալ հայոց, այդ երկրի՝ Խլաթալ և Բերկրու տէրը՝ Ապղերթը աճապարեց իր հպատակութիւնը ցոյց տալ իշխանապետին և վերստին հաստատեց իր իշխանութեան մէջ: Սակայն այդպէս չը վարւեցաւ Ապահունեաց տէր, Արլաբասը սա գոռոզութեամբ լցւած՝ ամրացաւ Մանազկերտի բերդում: Աշոտը իր խելացի տակտիկայով սկսեց նւաճել նրա անտէրունչ մնացած միւս երկիրները. իսկ երբ իրան ապահովեց այդ կողմերից, եկաւ և պաշարեց Մանազկերտի բերդը, բե-

բելով իր հետ այն գերիներին, որոնց վեցրել էր այն նւաճած երկիրներից և որոնց մէջ գանւում էին Արլաբասի մերձաւոր ազգականները և նրանց կանայք և աղջկերքը: Մի քանի շաբաթ և ս, և բերդը գլխովին անծնատուր պիտի լինէր:

Բայց այդ ժամանակներում քաղաքական հօրիզոնում կուտակւեցին նոր տմպեր, որոնք իրանց վրայ գարձրեցին հայրենասէր իշխանապետի արծրւաես հայեացըր, և նա վճռեց փութացնել իր քայլերը գէպի այդ նոր մռաված հօրիզոնը, ուր շնորհիւ իր անհանգիստ փեսալին անընդհատ աիրում էր խռովութիւն: Այդ փեսան նրա միւս զըստեր Սօփիի ամուսինն էր, որը վազաժամ ալրիանալով, ամուսնացել էր իշխանապետի այդ գստեր հետ: Դա Արծրունեաց իշխան Դերենիկն էր, Վասպուրականի տէրը, որը այժմ բանարկւած էր Վասպուրականի Սեան բերդում և որին աչալուրչ հսկում էր նրա քրոջ որդիին, Հասանիկը, որը և բանարկել էր իր քեռուն: Մինչ Մանազկերտի բերդը մօա էր իր անկման, և օրէ յօր սպասում էին նրա անծնատուր լինելուն, մի զիշեր հայոց բանակը մտաւ մի անվեհեր սուրհանդակ, որը մի քանի օր առաջ ճանապարհ էր ընկել Դուկինից: Արան իսկոյն առաջնրդեցին իշխանապետի մօա: Գիշեր էր: Աշոտը տակաւին չէր պառկել և մտայովզ դրութեան մէջ ընկղմւած՝ ծանր խոհերի զիրկն էր ընկել թէ՝ ինչ վախճան կունենալ բերդի պաշարումը:

Սուրհանդակը լռութեամբ մտաւ իշխանապետի մօտ և խորին երկրագութիւն արեց նրան:

Իշխանապետը գլուխ բարձրացրեց և ի՞նչ՝ իր առաջը կանգնած էր կարէնը:

— Կարէն, քո այս պահու այցելութիւնը, երդում եմ, ոչ մի մխիթարական բան չի խոստանում ինձ: Ասա, ասա, տեսնեմ, ի՞նչ է պատահել: Զէ որ զու այս վերջերս յաճախակի չէիր երեսում ինձ: Ուր էիր:

— Տէր իշխանապետ, վրդովելու այնքան բան չըկայ, հանգիստ եղէք: Այս վերջերս ևս հեռացել եմ վեհարանից, բայց երբ կարիք եղաւ ծեզ տեղեկութիւն հաղորդելու, փութացի իմ ծառալութիւնը մատուցանելու թէ՛ ծեզ՝ իմ տիրոջը, և թէ՛ կաթողիկոսին: Ինձ կաթողիկոսն է ուղարկել:

— Ի՞նչ տեղեկութիւն. զու այդ չասացիր ինձ: Ի՞նչու է քեզ կաթողիկոսն ուղարկել: Ասա.

— Տէր իմ, Դերենիկ իշխանի և Տարօնի տէր Աշոտ կուրազատի <sup>\*)</sup> մէջ այս վերջերս ապրածայնութիւն էր ժադել: Եւ Դերենիկը խարդախութեամբ բռնեց իր ախոյեանին, Աշոտ կուրապազատին, և Սևան բերդում բանտարկեց, կարգելով սրա վրայ հսկող իր ըրոշ որդի Հաստանակին: Այդ բաւական չէ, նա կուրապազատի երկիրը յանձնեց նրա եղբայր Դաւիթ-Արքայիկին, իր ըրոշ ամուսնուն, իսկ Ահմատը իր գրութեամբ հաստատե այս իշխանութիւնը...

<sup>\*)</sup> Պատրիկ Բագրատի որդին

— Այս ի՞նչեր եմ լսում. ի՞նչ է յանկանում այդ ըմբոստ Արձրունին:

— Այդ տակաւին բոլորը չե, տէր իշխանապետ, կուրապազատը բանափց յայտնեց կաթողիկոսին իր աղետալի դրութիւնը: Կաթողիկոսը փութաց Դերենիկի մօտ անձամբ նրան ազերսելու, որ արձակէ իր սիրելիին բանափց: Սակայն Դերենիկը անընկնծելի մնաց, և կաթողիկոսը տրամութեամբ վերադարձաւ Դուին և ուզում էր ձեզ տեղեկութիւն տալ: Ահա այդ զերը ևս ստանձնեցի...— Կեցը ևս զու, ազնիւ կարէն:

— Տէր իշխանապետ, ևս տակաւին չեմ վերջացրել: Բանտարկւած Կուրապազատը ճարր կարգած՝ սկսեց զբաւել իր հսկողի՝ պատանի Հասանիկի սիրոր, և հեշտութեամբ խաբեց այդ անփորձ պատանուն՝ իբր թէ Դերենիկը զիտաւորութիւն ունի և իրան՝ Հասանիկին էլ բանտարկելու: Այդ պատճառով անփորձ պատանին հիւանդ է ծեանում և, երբ իր քեռին՝ Դերենիկը, սրան այցելութեան է զալիս, իր զինւած գարանակալներով վրայ է հարձակւում և բռնում նրան և բանտարկում Սևան բերդում, արձակելով այս-տեղից Աշոտ կուրապազատին:

— Աստուած իմ, և այսպէս անվախնան շփոթութիւն այդ շրջակալքում և ում նախածեռնութեամբ... Իշխանապետը լուց: Տրտմութեան ամպերը հետզհետէ ծածկեցին նրա զւարժ դէմքը, որը մռայլւեց և լցւեց լի զայրովթով: Նա իրան յատուկ փութկոտութեամբ և ճարտարութեամբ

սկսեց ծրագիրներ կաղմել՝ փրկելու իր անհանդիստ փեսալին և թեթեացնելու իր դստեր վիճակը: Նա պատւիրեց՝ ոչ ոքի չը հաղորդել այդ լուրը, որ պաշարւած Արլաբասը ոչինչ չիմանաց, եթէ ոչ, աղես չի մտածի անձնատուր լինելու մտսին: Ապա վնաց վաղ առաւօտեան բանակցութեան մէջ մտրնել Արլաբասի հետ և, ինչպէս և լինի, հասնել իր նպատակին, այն է՝ համոզել նրան՝ անձնատուր լինել, որից յետոյ ճանապարհ ընկնել գէպի Սևան բերդը Դերենիկին փրկելու, վերցնելով իր հետ կաթողիկոսին, որ երկուսով կարողանան առանց զէնքի խելքի բերելու պատանի հասանիկին:

Եւ այսպէս, վաղ առաւօտեան սկսեցին բանակցութիւններ Աշոտի և Արլաբասի մէջ: Վերջինս մօտեցաւ բերդի պարսպին, իսկ Աշոտը բաղմէց պարսպի ստորոտում մի թեթև բազմոցի վրայ, որտեղից կարող էին լսել միմեանց ձախները:

Առաջինը խօսեց Աշոտը, որը իր ազդում ծայնով տպաւորութիւն էր գործում Արլաբասի վրայ:

— Ողջոյն հարոց իշխանաց-իշխանին,—պատասխանեց Արլաբասը:

— Ապահունեաց տէր, մենք զիտենք թէ՝ ինչ ենք գործում, մեզ երկուսին էլ յայտնի է այս անողոք պատերազմների հետեանքը. զիտենք, որ պիտի չլաւաւեն թէ՝ մեր և թէ՝ մեր ոլժերը, որոնք կարող են երկրի դժւար պարագաներում ծեռք-ծեռքի տալ և ընդհանուր ոլժով թշնամու առաջ կանգ-

նել: Այս, այդ բոլորը մենք զիտենք, բայց գարձեալ անտարբեր սառնարիւնութեամբ շարունակում ենք այս զգւելի պատերազմը: Ես ընտրում եմ երկու չարեաց փոքրագոյնը. քանի որ մեր յարաբերութիւնները այնքան սուր կերպարանք չեն ստացել, ես վճռում եմ վերջ տալ այս պատերազմին: Զեզ, քաջ յայտնի է, որ չըկան բերդեր, չըկան ամրոցներ, որոնք չընկնեն երկարատև պաշարումից յետոյ: Իմանալով բերդերի այդ ընդհանուր օրէնքը, ես դարձեալ չեմ կամենում շարունակել այս պաշարումը:

— Տէր իշխանապետ, ձեր վսեմամիտ հողին ես վաղուց զիտեմ. սակայն երկնչում եմ, որ անձնատուր լինելուց յետոյ, ձեզ շրջապատողները կարողանան տրամադրել ձեզ՝ զրկել ինձ իշխանութիւնից: Ես դրա համար երկմիտ եմ, ուստի և պիտի շարունակեմ ամրանալ այս բերդում, որը իմ վերջին յոյս է: Ես ինձ յանձնում եմ ճակատագրիս:

— Ապահունեաց տէր, դուք, կրկնում եմ, իգուր էք յուսագրւում, որ պաշարումով կը կարողանաք փրկել ձեր գոյութիւնը. ընդհակառակը, դուք դրանով առաւելես կը զրդոէք թէ իմ և թէ՝ մերալինների զայրոյթը գէպի ձեզ, որից յետոյ ամեն բան դժւարին կը լինի: Ճակատագրին երբէք, երբէք մի՛ ընձայէք հաւատի ամենաթոյլ նշոյլ անդամ. Խաբուսիկ է նրա գոյութիւնը. յանուխ նա սուր ու շիւան է սփռում իր շուրջը փոխանակուրախութեան, որին ակնապիշ և լիայոյս սպա-

սում էք տպագայի և նակատագրի լոյսով։ Ես չեմ  
կարող չը վրդովւել, որ դուք տարակուսու-  
թեան մէջ էք թէ իմ շրջապատողները իմ վրայ  
ազգելու կարողութիւն կունենան, և ես ձեզ ձեր  
նախկին շուք ու զարդի և իշխանական փառքի  
մէջ չը պիտի պահեմ։ Այդ ինձ զարմացնում է։

— Տէր իշխանապետ, կշտամբում էք ինձ, որ  
ես իդուր լոյսեր չը դնեմ նակատագրի վրայ։ Բայց  
չէ որ խեղգւողն անդամ ծեռք է, մեկնում յարդի,  
տաշեղի ամենաչնչին կտորին, շանալով գէթ նրանով  
փրկել իր գոյութիւնը, իր կւանքը։

— Ապահունեաց աէր, չեմ կարող չը ժպտալ՝  
խեղգւողը այդ ժամին կիսախելագար դրութեան  
մէջ է լինում և նա յաճախ ոչ թէ տաշեղների  
կտորների, այս չը երեսի փրփուրներին էլ է  
ձեռք մեկնում, որի մէջ ինը խեղգւում է։ այդ  
բաւական չէ նա նոյնիսկ այդ օրհասական վայր-  
կեանին իր աշ ձեռքով ամուր բունում է և իր  
ծախ ձեռքը, յուսալով նրանից փրկութիւն գտնել։  
Բայց միթէ դուք էլ այդ խելակորոյս, դրութեան  
մէջ էք գտնուում։ Փառք Աստուծոյ, դուք այժմ  
կարող էք և խոհել և կշռել և գատել և որոշ  
եղբակացութեան գաբ։ Կարող էք լոյսը խաւարից  
որոշել և ամեն բանին իր արժեքը տալ։ Ես կրկը-  
նում եմ, որ դուք գարձեալ տէր կը մնաք ձեր  
երկրին, միայն պիտի վճարէք ձեր վրայ ծանրացած  
հարկերը, ինչպէս անտրատունց այդ անում էիք իւ-  
րաքանչիւր տարի։ Դուք իդուր էք լսում Եմիմի-  
կին, Ահմատին և այլ մէր երկրի զզւելի թշնա-

միներին, որոնք ցանկանում են ձեզ էլ իրանց վի-  
ճակի մէջ դնել։ Ես ինչ կրկնում եմ ձեզ, նոյնը կը  
վաւերացուցանեմ և իմ ստորագրութեամբ և դա-  
շինք կը կապեմ ձեզ հետ։

— Տէր իշխանապետ, Եմիմիկը, Ահմատը և  
ուրիշները չեն կարողացել ազգել իմ վրայ։

— Ուրեմն այդ բղխում է լոկ ձեր սեփական  
համոզմունքից, բարի. այդ գէպքում ես կը վարւեմ  
ձեզ հետ այնպէս, ինչպէս պիտի վարւէի ծի տա-  
րակալ մարդու հետ։ Ես այս բոպէիս կը հրամայեմ  
այստեղ բերել ձեր հարազատներին, որոնք գերի են  
ընկել իմ ձեռքը և որոնց ես մինչեւ այսօր պահում  
և խնամում էի փառքով և պատւով։ Ես այդ գե-  
րիներին կը հրամայեմ ձեր աչքի առաջ խեղգաման  
անել, որից յետոյ դուք խելքի կը գաք, բայց չէք  
կարող փրկել ձեր գոյութիւնը և կեանքը, և կը  
մեռնէք դրանց մահով, որոնց մահւան պատճառն  
էք դառնում այժմ։

Աշոտը այս ասելուց յետոյ գարձաւ դէ-  
պի իր թիկնապահները և հրամայեց բերել իր  
մօտ գերի բռնւած Արլաբասի հարազատներին։  
Աշոտի այս վարձունքը բերդում ընդհանուր  
իրարանցում առաջ բերեց և խորին հիսութա-  
փութիւն և ապաշաւանք զարթեցրեց Արլաբա-  
սի մէջ, որը սկսեց տատանւել ներքին խուլ մա-  
քառման տակ, ուր մռայլ ալէկոծութիւնը ամեն  
ժամ, ամեն բոպէ նորանոր փոթորիկներ էր երե-  
ւան հանում նրա գէմ, որից յետոյ նա պարզ տես-  
նում էր, թէ ինչ է լինելու իր ապագան, եթէ

հայոց իշխանաց-իշխանը իրագործէ իր բոհմունք-ները և խեղամահ անէ իր հարազատներին:

Մինչ սա գտնւում էր այսպիսի տարակուսութեան մէջ, նրա ականջին զարնւեցին գերիների յուսահատ ծիչն ու աղաղակը, սուգ ու շիւանը, լաց ու հառաչանքը, որոնք արծագանք աւտժ՝ թնդացըին այդ ամբողջ մթնոլորտը և կարեկցութիւն զարթնեցրին թէ բերդում և թէ բերդից դուրս եղողների վրայ: Վերջապէս, նրանցից աւելի հասակաւոր մի կին, զուխը բարձրացրեց, դէպի Արլաբասը նայեց և մի աղերսալի ծախով նկատեց.

— Արլաբաս, բաւական է յամառութեամբ շոյէս քո վայրագ կրքերը. լսիր ինձ, անմահ աստուածներին է յայտնի մարդկանց ճակատագիրը և նրանց գայոցն ու ապագան. քեզ յանձնի՛ր այդ մուշ ճակատագրին և անձնատուր եղիր ու փըրկի՛ր թէ քեզ և թէ մեզ: Հայոց իշխանապետի սիրալիր վարմունքը մեզ հետ պարզ առհաւատչեալ է նրա մեծահոգութեանը: Մարդկանց երջանկութիւնը և զժբաղդութիւնը դտնում են միենոյն սանդուխքների վրայ և այնուեղ են ելեէջ անում նրանք: Մի՛ յուսալատւիր, այլ փութա կատարել իշխանապետի պահանջը. այդ կրկնում ևնք մենք բոլորը գերիներս մեր անտէրուչ մանկահասակ զաւակների շրթունքներով:

Ապա նա դառնալով դէպի հայոց իշխանապետը, նկատեց.

— Տէր իշխանապետ, քո մեծահոգութիւնը,

քո սիրալիր վարմունքը դէպի մեզ և հայրական լի խնամքը միշտ անմոռաց կը մնան մեր սրտում, և քո այդպիսի արդարադատութիւնը, մեծահոգութիւնը խղճահարութիւնը գէպի ընկածը, անարգւածը, թելաղրում են ինձ կարծել, որ երկինքը առաւելես բաղդաւորութեամբ կը պասկէ քեզ յերշանկութիւն և 'ի փառս հայոց աղջի: Այս, հողիս վկայում է, որ ձեր ազնւութիւնը պիտի վարձարւի երկնքից: Այս անակնկալ խօսակցութիւնները և գերիների ներկայութիւնը այնպի՛սի աղդեցուցիչ տպաւորութիւն գործեցին Արլաբասի սրտի վրայ, որ նա բացականչեց վերելից.

— Տէր իշխանապետ, որպէս հանոյ է քեզ, այնպէս էլ արա: Մենք ամենքը քո ձեռքումն ենք և քեզ ենք պատկանում: Միայն դու կարող ես մեզ կեանք շնորհել: Այս, մեր կեանքը և մահը քո ձեռքումն է:

Սշուր խղճահարւեց և հրամայեց գաշնագիր պատրաստել, որին և ինքը ստորագրեց, խօստանալով Արլաբասին գարծեալ իր նախկին իշխանութեան մէջ պահել, միայն թէ նա ըստ նախնի սովորութեան պիտի վճարէ իր վրայ ժանրացած հարկերը և ճանաչէ հայոց իշխանապետի գերիշխանութիւնը: Ապա արձակելով գերիներին, նա տեսնեց Արլաբասի հետ և, առնելով հարկերը, փութաց դէպի Սևանալ բերդը Դերենիկին փրկելու:

Շուտով նրան միացաւ և հայոց կաթողիկոսը, որ երկուսով ազգել կարողանան Հասանիկի վրայ:

Ուր եկեալ և մեծի հայրապետին Գէորգաց՝  
առեալ տարաւ զնա հանդերձ մեծամեծօք  
յեկեղեցին և անդ օրհեաց զնա և էօծ թա-  
գաւոր հայոց յամի տեառն 885։ Զայս լը-  
ւեալ կայսեր Վասիլ' ուրախ եղե ոյժ և  
ինքն ևս առաքեաց նմա թագ պատահան  
և զարդ մեծագին համարելով զնա ար-  
ժանի այնմ պատույ և ետ նմա զամենայն  
անւանս պատույ իշխանութեան, որ 'ի թա-  
գաւորութեան յունաց և զորդի սիրելի  
զնա անւանեաց...»

### Չաճական

### XXII.

Կացեալ Զաքարիա կաթողիկոսի 'ի հայ-  
րապետութեան ամս 21 և ամիսս իբր 8 'ի  
Դյուին քաղաքի, վախճանեցաւ 'ի 876 թը-  
ւականի և յաջորդեաց 'ի տեղի նորա 'ի  
նմին քաղաքի հաւանութեամբ Աշոտց՝  
տէր Գէորգ երկրորդ 'ի Գառնւոյ 'ի յուն-  
արի 13 այր՝ զգաստ և զւարթ՝ սնեալ  
'ի տան կաթողիկոսարանի...

Յայսպիսեաց ասաի յորդորակիու լըալ  
նախարարացն հայոց և կաթողիկոսին իսկ,  
խորհուրդ արարին 'ի մէշ իւրեանց՝ թա-  
գաւորացուցանել զԱշոտ 'ի փերաց ազ-  
գին: Եւ ապա 'ի ծեռն սստիկանին Յիսէլ  
որդւոյ Շեխեայ ծանուցին ամբապետին  
զկամս իւրեանց և բազում թափանձանօք  
աղաչեցին զնա՝ կատարել զինդիք իւրեանց...

Զայս ինդիք նախարարացն յօժ արու-  
թեամբ ընկալաւ տմիրապետն, զի և ինքն  
լւեալ զիմաստութենէ և վաւութենէ  
Աշոտց՝ կամեր մեծացուցանել զնա, սմին  
իրի վաղվաղակի առաքեաց առ նա թագ  
արքայական, ընդ նմին և զայլ թագաւու-  
րական զգեստս և զարդս, զէնս և զերի-  
րական զգեստս և զարդս, մեծամեծու: Զոր ա-  
զարս, ևս և զպարգես մեծամեծու: Զոր ա-  
ռեալ երեր սստիկանն Յիսէ 'ի քաղաքն  
Անի՝ որ և 'ի Շիրակ գաւառի, և եղեալ  
զթագն 'ի գլուխ Աշոտց՝ զարդարեաց զնա  
թագաւորական զարդու յապարանս նորին:

Մի գեղածիծազ և ուրախ օր էր: Գեղարքու-  
նեաց աշխարհի մառախլապատ երկինքը մի քանի  
շաբաթ էր, ինչ իր չինչ կապուտակ երեսը ազատ  
ու համարձակ բաց էր արել և անթարթ աչքերով  
զւարձանում էր այդ աշխարհի բազմազան քաղց-  
րաժպիս տեսարաններով: Այստեղ-այնտեղ կեանքը  
մի արտասովոր շարժման մէջ էր և ամենուրեք եռ  
էր գալիս իր խոռվալովզ պատկերներով: Այս ու-  
տան լեռնալանչերի կատարներին, խոր մթին ծորե-  
րի միջին և սուր-սուր բարձրաւանդակների գա-  
գաթներին գեղեցիկ փառահեղութեամբ երեան էին  
եկել բազմաթիւ վանքեր ու սրբավուրեր: Սիւնեաց  
տիկինը, Մարեմը, տակաւին չէր գոհացում տեղ  
իր քրիստոնէական չերծ զգացմունքներին և անդա-  
գար չատագովութեամբ շարունակում էր իր շի-  
նարարական կառուցումները: Այդ վանքերից իւ-  
րաքանչիւրում օրէ յօր ծաղկում էր հակոց զպրու-  
թիւնը, և առանձին-առանձին միարանական խրմ-  
քեր էին հաստատում, որոնց վրայ առանձնակի

խնամք, սէր և հոգատարութիւն ունէր Մարեմբ։  
Նա մալրական զթառատութեամբ յաւերժ յառած  
էր պահում իր չքնաղ հայեացը զէպի ալդ մե-  
նաստանները և ոչինչ չէր զլանում նրանց բարւոր-  
ման և զարդացման համար։

Ալդպիսի մենաստաններից առաւել ուշազրաւ  
էր Մաքինեաց սրբավայրը, որը ալդ օր մի արտա-  
կարդ շարժման և իրարանցման մէջ էր։ Թւում էր՝  
վանքը ժամանել է մի բարձր հիւր, որ ալդ-  
պիսի խառնաշփոթութիւն էր առաջ բերել ալդ  
խաղաղ մթնոլորտում։ Ամեն անգամ, երբ այդանու-  
ժամանում էին հայոց հայրապետները, հայազդի  
իշխանները և Սիւնեաց երկրի տէրերը, խեղճ միա-  
բանների օրը աննախանձելի էր գառնում։ Պէտք  
էր, որքան հնաւոր է, վայել և պատշաճաւոր ըն-  
դունելութիւն ցոյց տալ իրանց բարձր հիւրերին։  
Ալդպիս էին Մաքինեաց սրբավայրի վարդապետ-  
ները։ Եւ ալդ օրը իզուր չէին նրանք խառնա-  
շփոթութեան մէջ ընկել նրանց մօտ հիւր էր Սիւ-  
նեաց տիկինը, Մարեմբ, իր հիւանդ ամուսնու  
հետ, որին ըստ երեսվթին, ուխտի էին բերել։

Վանքի սենեակներից ամենաշքեղները պատ-  
րաստւած էին Սիւնեաց իշխան-ամուսինների հա-  
մար, որոնք ըստ երեսվթին պիտի մի քանի օր  
հանգիստ վայելէին վանքում։ Ալդ սենեակներից  
մէկում մի փարթամ մահճակալի վրայ օրւայ ալդ  
պահուն պառկած էր Վասակ-Դաբուռը։ Նրանից  
անբաժան էր ալդ վերջերը Մարեմբ։

Հիւանդ Վասակը մէրթ բաց էր անում իր

զրեթէ մարւած և խորընկած աչքերը ու ինչ որ  
ասում տիկնոջ, մերթ անփոլթ կերպով փա-  
կում և երկար-երկար անշարժ լռում։ Վերջապէս,  
նա դարձեալ բաց արեց աչքերը և, դառնալով դէ-  
պի Մարեմբ, հարցըրեց։

— Մարեմ, գի՞տես, որ այսուհետեւ, եթէ  
մեռնեմ, այլևս ոչ մի յաւ, ոչ մի տանջանք չի ան-  
հանդսուացնի ինձ դերեզմանում։

— Ես քեզ չեմ հասկանում, Վասակ։

— Ի՞նչպէս. այդպիսի միտսիրտ և միաբերան  
գործունէութիւն, եթէ չեմ սխալում, ո. Տրդատի  
օրերից մինչեւ այսօր մեր տարաբաղդ պատմութեան  
մէջ տեղի չէ ունեցել։ Եթէ չը լինէր ալդ համե-  
րաշխ գործունէութեան ընթացքը, որով շարժւե-  
ցին մեր ազդի մեծամեծները, նախարարները, իշ-  
խանները և կաթողիկոսը, գժւարին թէ՛ ըս հայրը  
կարողանար պսակւել թագւորական թագով՚ի  
փառս և՚ի միխթարութիւն մեր տանջւած հայ-  
րենիքի։ Միթէ ալդ պակաս բան ես համարում,  
որ չես հասկանում ինձ, ես ճիշտն եմ ասում, որ  
այսուհետեւ ինձ հոգեոր տառապանք չունեմ։ Ես  
ամենաերջանիկն եմ մարդկանցից, որ կարողացայ  
տեսնել տանջւած հայտստանի թագն ու պսակը։

— Այս, հայտստանի անթիւ ու անհամար  
զաւակների անմեղ արիւնը, վերջապէս, կարողացաւ  
բաց անել Տիեզերըի Աթոռակալի գոյցւած ականչ-  
ները, և նա լսեց նրանց լաց ու հառաչանքը, սուդ  
ու շիւանը և տանջւած օրհասական մրմունչները։  
Մակալն ալդ բանում մենք և մեր հայրենիքը մա-

սամբ պարտական ենք իմ հօր խելացի կառավարութեանք:

— Իհարկ է, քո հայրը իր խոհուն քաղաքականութեամբ կարսդացաւ մի կրծքի մէջ խմբել մեր հայրենիքի հեռաւոր անկիւններում ցան ու ցրիւ եղած սրտերը և մի նէրդաշնակ բարախմունք առաջացրել: Իր ալգակիսի գործունէութեան շնորհիւ չէր միթէ, որ Վասիլ կալսրն էլ ցանկութիւն յալտնեց տեսնել նրա հետ, խօսել նրա հետ և բերկրել նրանով, չէ՞ որ սքանչելի էր այդ դէպքում քո հօր խելացի քաղաքավարութիւնը, հանճարեղ էր նրա խրաքանչեւր քալը, որպիսի հանդարտութեամբ նա նորոգեց մեր հայրենիքում խանդարւած բաղմազան կարգերը, որպիսի հեռատեսութեամբ նա մտցրեց մեր թշւառ երկրում արքայական տարագի վայելչութիւնը, թէ զարգի, թէ պաշտօնական դասակարգի, թէ իշխանական աստիճանների, թէ դատաւորական ատեանների, թէ դինորական մարդերի, թէ դրսի և թէ ներսի հանդէսների վերաբերեալ իր որոշ ժամանակամիջով: Ո՞հ, նա մեր համայն երկիրը լցրեց բարութեամբ և անգործ ու դատարկ վայրեր չըթողեց, որ առատ և անբաւ պտուղ չըտան: Եւ որ ամենազիստըն է և ոչ յատուկ մարդկալին կեանքի ընթացքին, նա բնաւ այնպիսի բան չարեց, որ հանոյ չը լինէր բոլորի աչքին՝ թէ օտարների և թէ ազգալինների: Եւ վերջապէս, նա տւեց հայաստանին թագ և պսակ, որոնք առաջն անդամ դրւեցին նրա զիսին և հակատին: Ո՞րպիսի խելացիու-

թեամբ նա շահեց օտար ինքնակալների սրտերը, որ նրանք զանազան պարզեներով հանդերձ՝ թագաւորական թագ ուղարկեցին նրան: Ո՞վ կը սպասէր, որ ամիրապեար թագաւորական թագ ուղարկէ մեզ: Ո՞վ կը սպասէր, որ Վասիլ կալսրը կը հետեւ ամիրապետի օրինակին Սական, վերին նախամնամութեան կամքով դրանք տեղի են ունեցել: Փառք և պատիւ մեր սիրեցեալ թագաւորին:

— Ա՛ֆսոս, հազար ափսոն, որ իմ հօր սիրեցեալ հայրապեար չը տեսաւ այդ: Ո՞րքան բուռն տենչանքներ ունէր դրա վերաբերեալ տարաբազդ ջագեցին. սակայն անողոք ճակատագիրը տարաւ նրան դէպի սև գերեզմանը, և նա չը կարողացաւ իր աչքերով տեսնել Բագրատունեաց անլրանիկ գահակալին, իր սիրելի Աշոտին, և իր ծեռքերով օծել նրան թագաւոր: Ուղիղ տասն տարուց աւելի է անցել այն երշանիկ օրից, երբ Սնիփում եղած ժամանակ, նա ուրախ-ուրախ կրկնեց, — բաղծանք ունեմ սրտում, սերեցեալ իշխան, այն է՝ երանի այն օրին, որ էս քեզ պսակւած կը տեսնեմ հայաստանի թագովն ու պսակովր... Եկաւ սրբանման հայրապետի տենչանաց օրը, բայց նրա բաղծանքը լիովին չը կատարւեց, և դժբաղդ կաթողիկոսը չը տեսաւ այդ օրը:

— Մարեմ, զիտես ի՞նչ կայ, այսօր վանահայրը պատճեց, որ լուրեր են պտաւում, թէ թագաւորը մտագիր է գնալ Կ.-Պոլիս և տեսնել կալսր հետ: Զը զիտեմ, որքան ճիշտ է այդ:

— Նա վաղուց է ուղում Կ.-Պոլիս գնալ:

ըեկ մի բան կայ, էթէ ոչ, նա ալսպիսի ճանապարհորդութիւն ապարզիւն յանձն չէր առնել:

— Վասիլ կայսրը վախճանւել է, երեկ դնում է նրա որդի և նորոնտիր լեռն կայսեր միմիթարելու, որին իմաստնասէր էլ են կոչում:

— Միան միմիթարելու համար գժւար թէ ալտպիսի բան լինի:

— Կը լինեն ինարկ է և քաղաքական հարցեր:

— Անշուշտ:

— Տեսնես ամիրապետը՝ Մոթամիտ-Պիլալը, ինչպէս կը վերաբերւի դէպի այդ Ճանապարհորդութիւնը:

— Միթէ կարող է նախանձել:

— Գուցէ:

— Զէ որ 17 տարուց աւելի է, ինչ տեսել և ճանաչել է մեր թագաւորի քաղաքականութիւնը. չէ որ նա տեսել է նրա հաւատարմութիւնը. չէ որ նա գիտէ, թէ ի՞նչպէս նա սանձահարում էր ամիրապետից ապատամբած նրա կրօնակիցներին: Էլ ի՞նչու պիտի վատ կարծիք անէ:

— Ո՞վ գիտէ. գրանց գաւանանք չը կայ:

— Ոչ, մեր թագաւորը, փառք Աստուծոյ, այժմ էլ ինչպէս իր երիտասարդ եղած ժամանակ, ոչ իր թագի վրայ է ուշադրութիւն դարձնում և ոչ իր ծերութեան վրայ և իր սպարապետութեան ժամանակի նման անդադար անաչառ դործունելութեան մէջ է, կարդի և խաղաղութեան բերելով խոռվեալներին և զրդուեալներին և իբրև երիտասարդ նահատակ ամեն մի վտանգի մէջ ա-

ռաշին բայլը ինըն է գործում և միշտ էլ լաղթող է գառնում:

— Այդ ես գիտեմ և հաւատացած եմ, որ միայն մահը կարող իը լինի գակարեցնել նրա բեղմնաւոր գործունէութեան ընթացքը:

— Եւ թերեւ այդ մահն էլ նրա բարեկարգիչ արշաւանքի ժամանակ տեղի ունենայ:

— Անշուշտ, որովհետեւ նա ամեն ժամ, ամեն ըոպէ խնամատար հօր նման չերմ սիրով տարուծում է իր արքայական գաւազանը նրանց վրայ, որոնք հասկանում են խաղաղութեան օգուար. իսկ նրանք, որոնք տակաւին յարակից են խոռվութիւնների և բռնութիւնների, նա նրանց այդ գաւազանի հետ զէնք էլ է ցոյց տալիս, սպառնալով, որ տակաւին ընկունակ է իր քաջակորով ձեռքով զէնք կրելու:

— Եւ զարմանալու էլ չէ, որ մի օր նա ալտպիսի արշաւանքների ժամանակ, որոնք անդադար տեղի են ունենում, ինքէ իր մահկանացուն:

— Վասակ, թողնենք այդ. մեր Խորէնը, ինչպէս ես նկատում եմ, չերմ մտերմութիւն է հաստատել քեզ հետ:

— Զարմանալու մի բան չը կայ, Մարեմ, խեղճ տղան բանի տարի է կյու հնագանդութեամբ ծառայում է մեղ և ամենուրեք ցոյց է տւել իր անձնազո՞ն հաւատարմութիւնը դէպի մեղ. պարզ բան է, որ ալտպիսիներին պիտի սիրել:

— Ոչ, այդ փոփոխութիւնը ինձ զարմացնում է. որքան ես նկատում եմ, այդ փոփոխու-

թիւնը տեղի է ունեցել իմ բացակայութեան ժամանուկ:

— Նա, հա լաւ լիշեցի. ևս մոռացութեան եմ տւել թշւառ տղալի խնդիրը:

— Ի՞նչ խնդիր:

— Շատ խոշոր խնդիր, որ կեանքի և մահու նշանակութիւն ունի նրա համար:

— Ի՞նչ է:

— Նա իր բոլոր զգացմունքներով պաշտելու չափ սիրում է մեր Երանեակին. նա անցեալներում արտասւաթոր աչքերով դիմել է ինձ և թախանձել, որ ես խղճամ նրա վրայ և կատարեմ նրա բաղձանքը:

— Եւ դու ի՞նոք ես տւել:

— Այս, տւել եմ և երդւել՝ իրանց փափած նպատակին հասցնելու: Ես պիտի պսակել տամ նրանց, կամ եթէ մեռնեմ, սուրբ պարտականութիւն եմ զնում քեզ վրայ կատարել այդ տղալի խնդիրը և Երանեակի ձեռքը նրան տալ: Այդ ես կտակում եմ այժմեանից, և դու պիտի կատարես այդ կտակը:

— Իսկ Երանեակի համաձայնութեան մասին ի՞նչ կասես:

— Խորէնը պնդում էր, որ նա էլ աչք ունի իր վրայ:

— Դժւար թէ, ես տարակուսութեան մէջ եմ, որ այդ աղջիկը նողկանքի դառնութեամբ առում է Խորէնին: Ես զեռ Շիրակ եղած ժամանակս գիտեմ, որ նա հրձւանքով էր խօսում Կարէնի մա-

սին: Այս, ես տարակոյս ունեմ, որ նա Կարէնի հետ է կապել իր սիրու նրա ամբողջ զօրութեամբ:

— Այժմ հօ, փառք Աստուծոյ, Կարէնը այլ ես խոչընդուռ չէ կարող լինել նրա այդ Ճանապարհի վրայ: Զէ՞ որ նա այս քանի ժամանակ է, անյայտացել է, թէ ուր է, յայտնի չէ: Ասում են, ինչ որ խմբերի գլուխ անցած, միշտ անհանգիստ զբութեան մէջ է պահում թէ՛ մեր զրոի և թէ՛ ներսի թշնամուն:

— Բայց կարող է յանկարծ յականւել, և այն ժամանակ...

— Այն ժամանակ Խորէնը պսակւած կը լինի:

— Եւ կարծում ես թէ՛ նա այն տեսակ պտուղներիցն է, որ անվրդով ծեռք վերցնէ նրանից, հո՞: Որքան թոյլ կերպով ականջովս է ընկել, նա դիմել է այդ հարցի առիթով և Զագեցուն ու նրա միջնորդութիւնը թախանձել. սակայն գմբազզ կաթողիկոսի մահը արգելը դարձաւ, և Զագեցին չը կարողացաւ իրագործել նրան տւած խոստումը:

— Միթէ՞:

— Այս, նա դիմել է Զագեցուն, մտադիր է դիմել թուգաւորին, հօ գիտես, որքան է սիրում նրան հայրս:

— Ինչպէս և լինի Երանեակը աւելի երջանիկ կը լինի Խորէնի հետ:

— Ես չեմ պնդում:

— Ես այս քանի օրս կամ պիտի նշանեմ, կամ պսակեմ նրանց:

— Ես անմասն եմ:

— Դու կարող ես:

Այսպէս խօսում էին Սիւնեաց տէրերը, որոնք Շիրակից վերադառնալով, այժմ հանդստանում էին այդ մենաստանում: Շիրակ նրանք զնացել էին ներկայ լինելու թագաւորի օծման, ուր մի քանի ամիս մնալուց յետով, այժմ վերադառնում էին իրանց հայրենիք: Մի քանի օրից յետով նրանք ճանապարհ ընկան դէպի Սիւնեաց աշխարհը, ուր Վաստակը կատարեց իր խօստումը՝ հիւանդութեան տագնապի ժամանակ, երբ ամենքը ըսովէ առառողէ սպասում էին նրա մահւան, նա յանկարծ կանչեց իր մօար Խորէնին և Երանեակին և առանց սովորական հարց ու փորձի հրամայեց իր տան քահանացն նշանել նրանց: Եւ այսպէս հիւանդ իշխանը հիւանդութեան դառն փոթորիկների ժամանակ ինքնաբերաբար լուծեց այդ մահ ու կեանքի խնդիրը: Նշանւած զոյզերից և ոչ մէկը չը համարձակւեց այդպիսի տագնապալի պահուն մի բառ անդամ արտասանել և թերեւս վիրաւորել իշխանի սիրտը: Այսպէս նրանք սիրում էին իրանց մերձիմահ իշխանին, որ երբ վճռւում էր իրանց ճակատագիրը, իրանք անկարող էին տէր հանդիսանալ իրանց սեփական ճակատագրին, որը մեր արդի հանդամանքներումն էլ միթէ կախւած չէ լիովին իրանց տէրերից:

Յակալն, ընթերցող, մենք ժանօթ ենք այդ զոյզի սրտերի հետ և քաջ գիտենք, թէ տուժողը նրանցից որն է:

Այդ նշանագրութեամբ ճակատագիրը իր փայլուն հարւածով բանում էր Խորէնի համար նրա երազած վայելքների ու երջանկութիւնների գուոր. իսկ թէ ի՞նչ էր բացւում Երանեակի համար, այդ թողնում ենք դատելու սիրահար սրտերին. թերեւս նրանք միմիայն կը հասկանան Երանեակի վէրքերի խորութիւնը:

XXIII.

Եւ այսպէս ապա զպիտառոցեալ պէտո  
արտաքնոցս (ստացւածս) 'ի մաքրութիւն  
նորոգման ներքին մարդոյն անտեսաբար  
կեսանցուցաներ Յետ որց բարւոք ձերու-  
թեամբ ըստ բուսոյ բարեզդեաց բարուց՝  
հանգեաւ 'ի Քրիստոս...

Յակ. Հան.

Յետ զամենայն ինչ ըստ Աստուծոյ հաս  
տառելց՝ փոխի 'ի կարու սուրբ թագա-  
ւորաց..

Առաջ. Անեցի

Աշոտի թագաւորելուց անցել էր մօտաւորա-  
պէս հինգ տարի: Մութը նոր էր սկսում իր ու-  
շղարշը հետզիետէ տարածել երկրի վրայ, մէկ-մէկ  
հոգատար մօր նման իր թեւերի տակ առնելով Գե-  
ղարքունեաց աշխարհի սար ու ծորը, զաշտ ու  
մարդագետինը: Լութիւնը սակաւ առսակաւ աի-  
րապետող էր դառնում ասեն տեղ: Միայն ստէպ-  
ստէպ Գեղամալ ծովակն էր խոլ հառաջանքներ  
արձակում և անվերջ ալեկոծում ու ժիում:

Սպա ժամին ծովակի արեելեան լեռների բար-  
ձունքների կատարներին երկեցաւ մի բոցավառ և  
հրաշէկ գունդ, որը ճիգ էր գործ դնում ազատւե-  
լու այն ուեւ թուղպերի զրկից, որոնք խանդոս  
սիրահարի նման ասես դարանակալ եղած նրա  
հանապարհին ծգտում էին հանապագ իրանց զրկում  
պահել այդ երկնալին գունդը և ալզպէս յագուրդ  
տալ իրանց կարօտագին տենչանքներին: Աական  
այդ հրեղէն գունդը իր հոգու ահեղ թափով ամե-  
նուրեք գուրս էր պրժնում նրանց զրկից և  
վերստին շարունակում իր նտնապարհը. բայց դար-  
ձեալ թուղպերի նոր շերտեր էին յալտնուում և  
կտրում նրա ուղին, որից յետով նա կորչում էր  
նրանց զրկում և երկար-երկար երեւան չէր հանում  
իր լուսափայլ երեսը: Այսպէս յարատե պիտի շա-  
րունակւէր այդ տենդալին մաքառումը և գոյու-  
թեան կատաղի կուրը, եթէ այդ ժամին ծովակի  
լայնարձակ մակերեսութի վրայից չը փէք աշ-  
խարհին յատուկ հովասուն քամին, որը բարկու-  
թեան բոցով լցւած մի ակնթարթում ցան ու  
ցրիւ արեց թուղպերի լեռնանման շերտերը, որից  
յետով այդ հրեղէն գունդը իր սովորական կերպա-  
րանքն ստացաւ և լուսնի ձեպընթաց քայլերով և  
փառահեղ տեսքով շարունակեց իր ընթացքը: Երբ  
լուսինը բաց արեց իր մշտափայլ երեսը և հետզհետէ  
ցոլաց կապոյտ երկնակամարի վրայով, արձակելով  
ալստեղ-այնտեղ իր ազօտ լոյսը, ծովակը համբուր-  
ւել սկսեց նրա հետո: Ուղիղ լուսնի տակ ծովակը  
իր երեսը այնպէս էր ուրախ ու զւարթ բաց ա-

րել և նրա ընթացքին նախում ու գւարժանում, որ  
թւում էր թէ վազուց, շատ վաղուց նա բացակայ  
է եղել այդ աշխարհից և այժմ եկել է նորանոր  
խարրիկներով։ Սակայն լուսինը չունէր նոր խար-  
րիկներ տարաբաղդ ծովակի համար. նա իր սովո-  
րական ընթացքն էր կատարում։

Ուղիղ այդ պահուն Մաքինեաց վանքի գէմ-  
յանդիման ծովակի երեսին երեսում էր մի նաւակ։  
Նրա մէջ հազիւ նշմարում էին քսանի մօտ զին-  
ւած մարդկի, որոնք մի չը տեսնւած անհամբերու-  
թեամբ լցւած աճապարում էին ափը գուրս գալ։  
Նրանք այնպէս էին լուզւած, որ մի բառ անգամ  
չէին արտասանում, այլ ծգտում էին ինչպէս և լինի  
ափը գուրս գալ։

Մինչ սրանք այսպիսի տագնապալից դրու-  
թեան մէջ էին, Մաքինեաց սրբավայրում արեմբ-  
տեան բլրակի վրաց զբոսնում էին երկու շահիլ տ-  
բեղաներ և զրոյց անում միմեանց հետ։

— Գիւանս, Ղեռնդ, ինչու Սիւնեաց տիրուհին  
երեկ այնպէս աճապարում էր նիրակ հասնել ժամ  
առաջ։

— Ի՞նչ կար, Բիւզանդ։

— Լսւում է, որ թագաւորը սաստիկ հիւան-  
դացել է. Երբ Կ.-Պօլսից, ուր ալցելութեան էր  
գնացել Լեռն կայսեր, վերադարձել է և նիրակ գա-  
ւառի Քարսպառ ապառաժ կաչած տեղնէ հասել,  
շատ սոսկալի զրութեան մէջ է ընկել և հրամայել  
է իր մօտ կանչել թէ կաթողիկոսին և թէ իր հա-  
րազատներին։ Այդ պատճառով էլ նրա ալրիացեալ

գուսարը՝ Մարեմը, երեկ այնպէս ժանր թախծու-  
թէամբ լցւած՝ աճապարում էր նիրակ հասնել։

— Մի՞թէ. իսկ կաթողիկոսին ինչու պիտի  
կանչած լինի։

— Կանչել է հաղորդւելու և կտակներ անելու։  
— Ի՞նչ կտակներ։

— Կտակել է, որ իր սեփական գանձերի կէսը  
բաժանել աղքատներին, տնանկներին, եկեղեցիներին,  
վանքերին. նաև հիւանդանոցներ և աղքատանոցներ  
կառուցանելու նպատակով. բացի այդ մի խոշոր գու-  
մար էլ լանձնել է կաթողիկոսին՝ իրան համար  
պատարագ մատուցանելու և իր հոգու փրկութեան  
համար աղօթելու։

Մի՞թէ հիւանդութիւնը այնքան սաստիկ է,  
որ առօղանալու լոյսը պէտք է կտրել։

— Երեխ սաստիկ է եղել։

— Էլ ո՞րտեղից մենք նրա նման թագաւոր  
կունենանք։

— Գուցէ չի վախճանւում։

— Աստուած քո ծայնը լսէ։

Մինչ սրանք այսպիսի խօսակցութեան մէջ  
էին, նրանց մօտեցաւ մի ուրիշ վարդապետ, որը՝  
աւանելով սրանց, նկատեց։

— Ի՞նչու ընդհատեցիք ծեր խօսակցութիւնը.  
Ճի՞թէ գաղտնիք է. չէ՞ որ միաբանակից եղբայրները  
միմեանցից չը պիտի զաղանիքներ ունենան։

— Ոչ, հայր Հմալեակ, գաղտնիքներ չունենք.  
մենք խօսում էինք Սիւնեաց տիկնոջ, մեր արքայա-

գստեր Մարեմի գալստեան և թագաւորի հիւանդութեան մասին,—նկատեց աբեղաներից մէկը:

— Ել ի՞նչ հիւանդութիւն, ասա՞ մահւան մասին, պատասխանեց հայր Հմայեակը:

— Միթէ:

— Այո՛, հայր Բիւզանդ: Այսօր սուրհանդակ կար. նա հաղորդեց, որ թագաւորը վախճանւել է, և պիտի մեծ յուղարկաւորութեամբ նրա մարմինը փոխագրեն թագաւորանիստ Բագարան քաղաքը: Այդ պատճառով հրամայւած է, որ մեր տարաբաղդ հայրենիքի հեռաւոր վանքերը փութան ուղարկել իրանց ներկայացուցիչներին: Ասում են, կաթողիկոսը կարգագրել է, որ բոլոր նախարարները, զօրքի ստւար մասը, բազմաթիւ եպիսկոպոսներ, վարդապետներ, սարկաւագներ, կղերիկոսներ, կրօնաւորներ և ժողովրդի բազմութիւն մասնակցեն այդ յուղարկաւորութեանը և դագաղի հետ դան մինչև Բագարան: Բայցի թագաւորի երեք որդիներից՝ Դաւիթից, Սահակից և Շավուհից, որոնք այժմ ներկայ են, հաղորդւած է և նրա աւագ որդուն՝ Սմբատին, որը այժմ Գուգարաց կողմերն է դժնւում իր զօրքերով այնտեղ ծագող խռովութիւնները դադարեցնելու: հաղորդւած է և սպարապետ Սբասին, որը Վանանդաց խռովութիւնների պատճառով նոյնպէս բացակայում է. սակայն գժւար թէ նրանք կարողանան հասնել թաղմանը:

— Աւազ, —միաբերան կրկնեցին երկու աբեղաները, —իսկ մեր վանքից ով է գնալու:

— Մեր վանքից վաղ առաւօտեան մեկնելու է վանահայրը:

— Թագաւորի մահւան առիթով ես այնքան չեմ արտօնում, այլ մի բան ինձ անհանգստացնու մէ, որ վերսախն մեր թշւառ հալրենիքում կը ծագեն ներքին խռովութիւնները և եղբայրասպան կռիւները, —նկատեց Ղեոնդ աբեղան:

— Ի՞նչ խռովութիւններ կարող են ծագել, —հարցրեց հայր Հմայեակը:

— Ո՞րքան ես ճանաչում եմ մեր սպարապետին, գժւար թէ նա թով տայ Սմբատին թագաւորելու: Օ՛, Սբասին ես լաւ եմ ճանաչում:

— Սբասը ծեր է. գժւար թէ վճռէ այդպիսի բան անելու, —նկատեց Բիւզանդ աբեղան:

— Ի՞նչու է ծեր. նա բաւականին փոքր է իր եղբօրից, որը այժմ 71 տարեկան հասակումն է վախճանւում: Այժմ 889 թւականն է. Եթէ մենք իմանանք քանինի տարի է Սբասը թագաւորից փոքր, հեշտ կը լինի որոշել, թէ որ թւականին է ծնւել Սբասը, —վրայ բերեց Ղեոնդը:

— Այդ հեշտ է որոշել վանահայրը. այդ գիտէ. գնանք հարցնելու, —ասաց Հմայեակը:

Այս ասելով նրանք եռեքն էլ ուղղեցին իրանց քայլերը գէպի վանահօր խռոցը: Մինչդեռ այդ ժամին, նրանցից ոչ հեռու, ուր տեղի ուներ այդ խռակցութիւնը, ծածկւած էր մի մարզ, որը բառառ բառ լսում էր նրանց խօսակցութիւնը: Վերջապէս, նա էլ հեռացաւ գէպի վանքի գիւղը, որը այնքան էլ հեռու. չէր այդ տեղից: Մանելով գիւ-

զր, նա երկար խօսակցութիւն ունեցաւ գիւղի քահանալի հետ: Եւ այդ խօսակցութեան ըուն նպատակը այն եղաւ, որ նա, չը զիտէմ ինչով, արածալրեց քահանալին՝ հէնց այդ զիշերը պատկել իրան:

Դա Խորէնն էր, որը Երանեակի հետ մինչեւ այդ մենաստանը ուղեկցում էր իրանց տիրուհուն: Սակայն այդ տեղ Մարեմը, ենթագրելով, որ իր հօր հիւանդութիւնը կարող է երկարել, այդ պատճառով նա իր սպասաւորների և սպասաւորուհիների մի մասը թողել էր վանքում, իր հետ առնելով միայն մի քանի հոգու: Այդ մնացեալների թւի մէջ էին Խորէնը և Երանեակը: Լոելով վարդապետների խօսակցութիւնը, Խորէնը մնացել էր տարակուսւած, որ թագաւորի մահւան պատճառով իրանց տիրուհին կարող է ուշանալ, և այդ ժամանակներում թերեւս անակրնկալ կերպով լալտնեէ Կարէնը, որը հեշտութեամբ կը փշըէ իր երջանկութիւնը, առեանդելով Երանեակին, որը օր ու զիշեր աղի արտասուք թափելով, սպասում էր նրա նանապարհը: Իսկ այժմ գնալով դիւղի քահանալի մօտ, նա նրան համոզեց՝ հէնց այդ զիշեր պատկել իրանց: Քահանան իր աշակցութիւնը խօսացաւ և փութաց եկեղեցին: Իսկ Խորէնը վերազարձաւ վանքը և, իր ընկերների օգնութեամբ Երանեակին էլ իրանց հետ առնելով, զուրս եկան իրը զբօսնելու:

Այդ ժամին ծովակի վրայ գտնող նաւակը, երկար քափ ու քրտինք թափելով, վերջապէս, կա-

րողացաւ ափը դուրս գալ: Այսաեղ նրա վրայ գտնւող նաւաստիները կապեցին նաւակը ծովեղերքին թաղւած ցցերից, իսկ իրանք անցան գէպի մերժակալ ձորակը, ուր նրանց համար պատրաստի սպասում էին մի քանի թամբած նժոյգներ: Խօմբապետը բազմեց իրան նժոյգի վրայ և ուղղերւեց գէպի Մաքինեաց վանքը: Նրա ընկերները հետեւում էին նրան: Ճանապարհին իրանց մարդկանց միջոցով Մարեմի շքախմբից տեղեկանալով, որ Երանեակը նրանց մէջ չէ, ալլ գտնւում է այդ մենաստանում, Խորէնի հետ, նա իր խմբով փութացել էր ժամ առաջ օգնութեան հասնել նրան:

Մինչ այս, մինչ այն՝ Խորէնը իր ընկերների և Երանեակի հետ սկսեցին փոքր մերժենալ զիւղի եկեղեցուն: Երանեակը տակաւին ոչինչ չէր կասկածում: Երբ նրանք մօտեցան եկեղեցուն, և Երանեակը կամենում էր անցկենալ նրա մօտով, Խորէնը առաջարկեց նրան մտնել եկեղեցին:

— Ի՞նչ հարկ կալ զիշերւալ այս պահուն եկեղեցի մտնել:

— Այդ ես կամենում եմ:

— Բո կամքը ինձ համար տակաւին այնքան պարտ ու պատշաճ լարգութիւն չունի:

— Ինչպէս, չէ՞ որ մենք նշանադրւած ենք:

— Բայց ոչ պսակւած:

— Ես ցանկանում եմ, որ մեր պսակը հէնց այս զիշերը կատարւի, որի համար և առաջարկում եմ քեզ գէպի եկեղեցին ընթանալ:

— Այդ իմ հաճութեամբ երբէք չի կարող

տեղի ունենալ, ինչպէս իմ հաճութեամբ չէ եղել և  
մեր նշանագրութիւր:

— Բայց դուք նշանագրւած էք և այժմ ըն-  
դունախախօսութիւն է ձեր այդ տատանւելը:

— Իմ նշանագրութեամբ ես միայն կամեցայ  
իմ հիւանդ և մերձի մահ իշխանին չը վիրաւորել,  
և մի խոհուն անհատ ալզպէս պիտի վարւէր, ինչ-  
պէս ես վարւեցի: Լաւ ըմբռնեցէք, որ ես չեմ նշան-  
ւել ձեզ հետ ամուսնանալու գիտաւորութեամբ, այլ  
մի տկար մարդի ինքնասիրութիւնը չը ալէկոծելու  
գիտակցութեամբ, և վերջապէս, ով է եղել այդ  
ժամին իմ կամք հարցնողը: Ես մարդասիրական  
բուռն զգացմունքի տակն եմ միայն այդ անունը  
վերցրել ինձ վրայ, իսկ այժմ ես ինձ բոլորովին  
ազատ եմ ճանաչում:

— Ես ձեզ կրկին առաջարկում եմ հետեւել  
ինձ դէպի եկեղեցին:

— Ոչ եղբէ:

— Եթէ դուք շարունակէք ալզպէս յամառ  
հակառակութիւն ցոյց տալ ինձ, ես ստիպւած կը  
լինեմ բռնութեամբ ձեզ եկեղեցի քարշ տալ:

— Մի՛ համարձակւէք:

— Խելքի եկէ՛ք:

— Այդ ձեր դործը չէ. Եթէ իմ հանգուցեալ  
իշխանը հիւանդութեան տագնապի մէջ չը լի-  
նէր, նա երբէք այն քայլը չէր դործի: Ես այդ  
լաւ էի ըմբռնում. այժմ էլ լաւ եմ ըմբռնում իմ  
դերը՝ ես կամենում եմ, որ այն իշխանը հանգիստ

լինի իր դերեզմանում: Ես երբէք ձեր առաջարկու-  
թեամբ խելքի չեմ կարող դալ, որը դուք դտնում  
էք ձեզ հետ եկեղեցի մտնելում:

— Բաւական է:

— Եթէ այդ զգում էք, հեռացէք և ինձ նա-  
նապարհ տւէք:

— Ես ձեզ խելքի կը բերեմ.—այս ասելով նա  
թշւառ աղջկայ վրայ վազեց և, բռնելով նրա եր-  
կայն զիսամիւրից, սկսեց քարշ տալ դէպի եկեղե-  
ցին, ուր ուրախութեամբ լցւած՝ սպասում էին  
նրան ընկերները:

Անպաշտական զոհը մի սուր ճիչ արձակեց և  
թռուլացած վար ընկաւ նրա զրկում:

Յանկարծ փողոցում լսւեցին ծիանների ոտքե-  
րի տրոփիւններ, և մի խումբ մարդիկ շրջապատե-  
ցին Խորէնին: Տեսնելով, որ վտանգը ահաւոր է,  
նա վազրի Ճարպիկութեամբ փողոցի պատերի սար-  
ւերների օգնութեամբ կամեցաւ իր զոհի հետ փա-  
խուսաւ տալ: Սակայն այդ ժամին որոտաց խմբա-  
պետի ահարկու ծայնը:

— Թողէ՛ք այդ տարաբաղդ զոհին. Ես ձեր  
ամբարտաւան կեանքը ձեզ եմ բաշխում:

Խորէնը մի սուր ցնցում զգաց իր երակներում,  
նա ճանաչեց այդ ձայնը և արագացրեց իր քայ-  
լերը:

— Կրկնում եմ, վայր դրեցէք,—այդ ան-  
պաշտպան աղջկան,—որոտաց երկրորդ անգամ  
խմբի զլիսաւորի ահեղ ծայնը, որից թռուլացած զոհի

ամբողջ էռթիւնը փշաքաղւեց. մի ցուրտ սարսուռ,  
մի դիւթիչ դող անցաւ գժբաղդ աղջկայ մարմնով,  
և նա մի քանի չղածգական շարժումներ դորձե-  
լուց յետոյ հազիւ կարողացաւ իր աչքերը բաց ա-  
նել և ճչալ.

— Կարէն... նա վերստին թուլացաւ:

Միրած արարածի աղէկառուր ծիւլ երերեց Կա-  
րէնի սիրտը, և նա շանթահար եղածի նման մի  
կատաղի շարժումով գուրս բերեց իր սուրբ: Հզօր  
բաղուկների ուժեղ հարւածը գետին ատպալեց Խո-  
րէնին: Սպա Կարէնը թուլացան զոհը իր գիրկը  
առած՝ իր խմբի հետ գէպի նաւակը արշաւեց: Մի  
երկու ժամից յետոյ նրանք բոլորը միասին նստե-  
ցին նաւակը և լողացին գէպի Սևանայ մենաստանը,  
ուր մտալիր էր Կարէնը պասկւել:

Մինչ սրանք թիավարում էին, ծովակը սկսեց  
տառանել, որը հետզհետէ սաստկանում էր: Վերջա-  
պէս, ընդհանուր ալէկոծութիւնը մի արտակարդ  
խառնաշփոթութեան մէջ զրեց բոլոր նաւաստի-  
ներին, բացի Կարէնից, որը գրկած իր սիրելիի գե-  
ղանի զլուխը, ոչ մի բանի փրայ ուշադրութիւն  
չէր դարձնում: Իսկ քամին բանի գնում, այնքան  
առաւել զարհուրելի կերպարանք էր ստանում և  
իր գիւային ոռնոցով մի ահարեկող երկիւղ էր  
սփռում իր շուրջը: Կատաղած ալէկոները հուժ-  
կու թափով և ինքնուրոյն զզրդոցով զարնում  
էին նաւակին, որը թեթև տաշեղի նման թոչում,  
երկինքն էր բարձրանում, ապա մի յուսահատ ոս-  
տիւնով գէպի շրերի սիրտը առաջաւագալից փոթորիկը:

ում: Եւ ամեն անդամ, երբ կրկնուում էր այս զբ-  
ժոխային գործողութիւնը, Կարէնը ամուր կերպով  
գրկում էր գժբաղդ երանեակին իր բազուկների մէջ  
և ժամկում նրա գունաթափ երեսը անթիւ ու ան-  
համար համբուլներով: Սակայն փոթորիկը չէր գա-  
գարում և բոսկ առ բոսկ սոսկալի կերպարանք էր  
առնում: Իսկ փրփրագէզ կոհակները անվերջ խա-  
ղացնում էին նաւակին, մերթ երկինք նետելով նր-  
բան, մերթ ծովի խոռվւած վիճը, որից յետոյ ահ  
ու գողով պաշարւած նաւաստիները մի յուսահատ  
ճիչ էին արծակում:

Միայն Կարէնն էր, որը յնձում էր անսահ-  
ման երշանկութեամբ լցւած և ուշքի չէր առնում  
թէ՝ ինչ է կատարում իր շուրջը:

Վեշապէս, ուշքի եկաւ և երանեակը և, տես-  
նելով թէ ուր է գտնուում, երկու ծեռքով ամուր  
փաթաթւեց իր սիրելիի պարանոցով:

Այդ բոսկին մերծակայ լեռնանման ահուելի  
մի ալիք որոտաց մի զարհուրելի ծայնով, և նա-  
ւակը գէպի երկինքը թուաւ, ապա նոյնպիսի ոս-  
տիւնով ցատկեց գէպի շրերի խորխորաաը և յա-  
ւիտեան կորաւ նրա ցուրտ և փրփրագէզ կոհակ-  
ներում: Միթէ այդպէս չէ յարատե կեանքը:

Մի ժամ երշանկութիւն, այն էլ շրջապատւած  
խռովալոյզ կեանքի ահարկու ալէկոծութեամբ և  
փոթորիկներով: Այս, ուր կայ երշանկութիւն, այն-  
տեղ է և կեանքի տագնապալից փոթորիկը:

Մի բանի օրից յետոյ Գեղամայ ծովակի ան-

Հիւրընկալ զբերը գուրս էին նետել մի քանի դի-  
ակներ, որոնց մէջ ցնցող տպաւորութիւն էին գոր-  
ծում երկուամբ, որոնք մի սրտառուչ ձեռվ ամուր  
փաթաթւած էին միմեանց պարանոցով:

Դրանք կարենի և Երանեակի դիակներն էին:



ՆԿԱՏԻԱԾ ՍԻԱԼԵՐԸ

Էջ	Ներքեցից վերեւից տող	սխալ	ուղիղ
1	„	1	ցնցում
6	„	14	յատուկ
11	„	8	սփուեան
20	„	13	նա
40	„	8	արւած է
43	„	11	չարատաւոր է
63	„	12	անյատ
96	„	11	պատկառելի
132	„	5	ճերճերոցը
133	„	5	աշխարհ
139	„	10	նես
142	„	10	Աղուանեց
143	„	14	սկեց
151	„	2	չափ է. ձև է
162	„	2	ոստոյնով
164	„	12	սիրուած

125

ՀՀ Ազգային գրադարան



NL 0341380

34083

891.99  
n-27